

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՔՐԻՍՏՈՆՅԱ
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

JEREWANER STAATSUNIVERSITÄT

WILHELM BAUM

DIE TÜRKEI UND IHRE CHRISTLICHEN
MINDERHEITEN

Geschichte - Völkermord - Gegenwart
Ein Beitrag zur EU-Erweiterungs-Debatte

Aus der Deutschen übersetzt von

Dora Sakayan
und
Evelina Makarian

VERLAG DER STAATSUNIVERSITÄT JEREWAN

JEREWAN – 2010

ՎԻՆՆԵՐԻ ԲԱՌԻՄ

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՔՐԻՍՏՈՆՅԱ
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցյալը - Ցեղասպանությունները - Ներկյան
Նվիրված ԵՄ-ի ընդարձակման բանավեճին

Գերմաներենից թարգմանեցին՝

Դորա Սաքայան

և

Էվելինա Մակարյան

Խմբագիր՝ Արշակ Մադոյան
Կազմի տեխնիկական ձեռավորումը՝ Մարո Մանավեան

© ԵՊՀ հրատ., 2010

© Դորա Սաքայան եւ Էվելինա Մակարյան

Երկու խոսք հեղինակի եւ գրքի մասին

Սույն գրքի առաջին իսկ էջերում կարդում ենք, որ նրա ստեղծման բուն շարժառիթը եղել են վերջին տասնամյակում Թուրքիայի՝ Եվրոպային որպես լիիրավ անդամ միանալու եռանդուն ջանքերը: «*Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները*» գրքով նրա հեղինակ՝ պատմագիտության եւ աստվածաբանության դոկտորի գիտական աստիճաններին արժանացած Վիլհելմ Բաուլը ձգտում է բաց անել Եվրոպայի հասարակայնության եւ նրանց առաջնորդների աչքերը՝ բացահայտելով Թուրքիայի պատմության բազմաթիվ մութ եւ ամոթալի էջերը: Կարելուր մի խնդիր, որը դժվար թե կարողանար նույն հաջողությամբ իրագործել որեւէ այլ գիտնական, նկատի ունենալով, որ Վիլհելմ Բաուլը՝ Մերձավոր Արեւելքի պատմությանն ու մշակույթին վերաբերող իր բազմաթիվ արժեքավոր մենագրություններով իրավամբ համարվում է իր բնագավառի մեծ փորձագետը: Բաուլը բազմիցս ուղեւորվել է Թուրքիա եւ ամեն անգամ այնտեղ որոշ ժամանակ անցկացնելով՝ մոտիկից ծանոթացել է երկրին, նրա ժողովրդի բարք ու վարքին, ինչպես նաեւ քրիստոնյա փոքրամասնությունների հեռավոր եւ մոտ անցյալին:

Վիլհելմ Բաուլը իր «*Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները*» գրքի գերմաներեն բնագիրը հրատարակել է 2005 թ. իր իսկ հիմնած՝ Ավստրիայի Զլազենֆուրթ (Klagenfurt) քաղաքի հայտնի Զիթաբ (Kitab) հրատարակչությունում: Ընթերցողների է? լ ավելի մեծ շրջանակ ընդգրկելու նպատակով, 2006-ին նա լույս է ընծայել գրքի անգլերեն թարգմանությունը: Ներկա հատորը Բաուլի գրքի երրորդ հրատարակությունն է՝ այս անգամ հայերեն թարգմանությամբ:

Ընթերցողի ուշադրությունից չի կարող վրիպել, որ այս գրքում թեւեւ առանձին-առանձին քննարկվում է Թուրքիայի քրիստոնյա բնակչության բոլոր հատվածների ողբերգական պատմությունը, հայոց ցեղասպանությանը տրվում է հատուկ տեղ: Եվ դա պատահական չէ, քանի որ ա) հայերը Թուրքիայում բնաջնջման դատապարտված քրիստոնյա բնակչության առաջին զոհերն էին, բ) հայերի հալածանքներն ավելի զանգվածային բնույթ են կրել, եւ նրանց նկատմամբ թուրքերն օգտագործել են բնաջնջման ամենադաժան միջոցները, որոնք կիրառվել են անարգել կերպով, քանի որ հայերն իրենց թիկունքում չեն ունեցել պետություն՝ ինչպես, օրինակ, հույները, գ) հայերի՝ իրենց պապենական հողերից տեղահանումն ու նրանց ոչնչացումը թուրքերի համար մեծապես շահեկան է եղել: Դրանով թուրքերը ոչ միայն ազատվեցին քրիստոնյաների մի մեծ հատվածից, բայց եւ վերջնականապես ու դյուրությամբ տիրա -

ցան պատմական Հայաստանի, այժմ արդեն բնիկներից ազատված տարածքների, դ) թուրքերը հայերին օգտագործեցին որպես փորձադաշտ՝ իրենց երկրում քրիստոնյաների բնաջնջման եւ համատարած թրջացման ծրագիրն իրագործելու նպատակով: Տեսնելով, որ համաշխարհային հանրությունը վճռականորեն չի արձագանքում հայերի կոտորածների եւ Թուրքիային թողնում է անպատիժ, թուրքերն անցան մյուս փոքրամասնությունների՝ հույների, ասորիների եւ այլ քրիստոնյաների բնաջնջմանը: Գրքում Հայկական հարցի ավելի լայն քննարկմանն է նպաստել նաեւ հայոց ցեղասպանության մասին գոյություն ունեցող հարուստ օտարալեզու գրականությունը:

Այստեղ հարկ եմ համարում իմ եւ աշխատակցուհուս՝ Էվելինա Մակարյանի կողմից, խորին շնորհակալություն հայտնելու պարոն Վիլիելմ Բաումին՝ գրքի հայերեն թարգմանության երկրորդ եւ ավարտական փուլում՝ նրա ակտիվ համագործակցության համար: Նա գոհունակությամբ ընդունեց իր գիրքը հայերենի թարգմանելու մեր որոշման լուրը եւ համբերությամբ սպասեց նրա հրատարակմանը Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունում: Գրքի թարգմանության ավարտին նախորդող մի քանի ամիսների ընթացքում հեղինակը միշտ կապի մեջ է եղել ինձ հետ եւ պատրաստ՝ ամեն կերպ օժանդակելու, պատասխանելով բոլոր հարցերին եւ առաքելով բոլոր անհրաժեշտ նյութերը, ինչպես լուսանկարներ, գրականություն եւ այլն:

Պետք է ասել, որ գրքի հայերեն հրատարակությունը տեղ-տեղ շեղվում է գերմաներեն բնագրից: Դա պայմանավորված է նախ՝ պարոն Բաումի ցանկությամբ՝ հայերեն տարբերակը տեսնելու ավելի ամբողջական: Այդ նպատակով նա ժամանակ առ ժամանակ էլեկտրոնային փոստով ուղարկում էր ցեղասպանությանը վերաբերող գրականությունից քաղված լրացուցիչ տեղեկություններ պարունակող պարբերություններ, երբեմն նույնիսկ ամբողջ էջեր, խնդրելով, որ դրանք գերմաներենից թարգմանվեն հայերենի եւ ընդգրկվեն ներկա գրքի այս կամ այն գլխում: Հայերեն թարգմանության՝ գերմաներեն բնագրից տարբերվելու մյուս պատճառն էլ այն է, որ սույն գրքի թարգմանության վերջնական փուլում հարկ է եղել օգտվել նաեւ անգլերեն տարբերակից, որը՝ որպես ավելի ուշ հրատարակություն, պարունակում է որոշ բարեփոխումներ: Ու թեեւ հայկական հատորում գերմաներեն բնագրից շեղվող հատվածները այնքան էլ բազմաթիվ չեն, հայկական տարբերակը գերմաներեն բնագրի ճշգրիտ վերարտադրությունը չի կարող համարվել: Ուրախալի է նշել, որ Վիլիելմ Բաումի «*Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները*» աշխատության հայերեն հրատարակությունը գերմաներեն բնագրի վերանայված եւ ավելի կատարյալ տարբերակն է:

Դորա Սաքայան

ՆԱԽԱԲԱՆ

Եվրամիության ու Թուրքիայի միջեւ առաջիկա բանակցությունները՝ գերազանցապես Եվրոպայի մաս չկազմող երկրի լիիրավ անդամակցության շուրջ, բավարար հիմք են տալիս պատմական հայացք նետելու աշխարհիկ սահմանադրություն ունեցող միակ մուսուլմանական երկրի՝ Եվրոպայի հետ առնչության վրա: Թուրքիան ստեղծվել է բյուզանդական ու հայկական մշակութային աշխարհների ավերումով, որոնք միշտ էլ պատկանել են Եվրոպային եւ պատմականորեն քրիստոնեական մշակույթ կրող տարածաշրջանին: Ես տասնամյակներ շարունակ ճանապարհորդել եմ Թուրքիայում, խոսել Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնություններին պատկանող անհատների հետ, սկսած պատրիարք Դիմիտրիոս Առաջինից (Dimitrios I.) ու Բարդուղիմեոս Առաջինից (Bartholomaios I.) մինչեւ եպիսկոպոսները, աբբահայրերը եւ առանձին քահանաներն ու հավատացյալները: Իմ մեջ շարունակ հարց է առաջացել, թե արդյո՞ք Թուրքիան պիտանի է ընդունվելու «արեւմտյան» մշակույթի ընկերակցության մեջ, որը պատմականորեն քրիստոնեական դրոշմ է կրում եւ հենվում է լուսավորության դարաշրջանում նվաճված արժեքների վրա, ինչպիսին են ժողովրդավարությունը, կարծիքի ազատությունը, հանդուրժողականությունը, իրավական կանոնակարգերի ու ժողովուրդների իրավունքների մասին միջազգային համաձայնագրերի պահպանումը:

Այս գրքում տեղ են գտնում քննադատական խորհրդածություններ մինչեւ օրս չլուսաբանված՝ պայքարի, ստրկացման, մարդագողության եւ տեղահանության արյունոտ պատմության մասին: Եվրոպայի պատմության մեջ նույնպես եղել են կրոնական հետապնդումներ, ճնշում, կոտորածներ, մինչեւ իսկ ողջակիզում (Holocaust): Սակայն Եվրոպայում անցյալի այս հանցագործություններին անդրադարձել ու այսօր էլ անդրադառնում են բազմաթիվ հաստատություններ, ինչպես նաեւ ինքը՝ քննադատական պատմագրությունը: Այստեղ նվազ չեն եղել նաեւ վերազնահատումները, ինչպես օրինակ դա տեղի ունեցավ կաթոլիկ եկեղեցու՝ Վատիկանի երկրորդ ժողովում, քրիստոնյաների տիեզերական, դեռեւս թերի, երկխոսության ընթացքում, եւ կամ տարբեր կողմերից հրեականությանը ուղղված հայտարարություններում:

Այս գիրքը Թուրքիայում ապրող քրիստոնյաների ընդարձակ պատմությունը չէ: Շատ աղբյուրներ կորել են, հետազոտության համար անմատչելի դարձել եւ կամ արեւմտյան լեզուներով թարգմանված չեն: Այդ իսկ պատճառով հնարավոր չի եղել ամբողջությամբ ներկայացնել անցյալի ցավոտ

առնչությունները: Ուստի պետք է բավարարվել պատմության՝ հալածանքի ու ցեղասպանության մասին քիչ հայտնի գլուխների քննարկումով, որոնց մասին անհրաժեշտ է հասու դարձնել Եվրոպայի միավորման գործընթացի բոլոր մասնակիցներին: Այդ պետք է առիթ տա խորհրդածելու, թե ապագա Եվրոպան ինչպես է վերաբերվելու անցյալին եւ թե պատմության որ հատվածներն են, որոնք դեռեւս վերանայված չեն:

Փոքր Ասիայի քրիստոնեության ոչնչացումը թուրքերին հաջողվել է նաեւ այն պատճառով, որ քրիստոնյաները իրար հետ համերաշխ չեն եղել: Կաթոլիկ թե ուղղափառ, հայ թե ասորի քրիստոնյաներից յուրաքանչյուրը իր սեփական շահերն է հետապնդել՝ որոշ դեպքերում նույնիսկ պատրաստ լինելով համագործակցելու մուսուլմանների հետ՝ ընդդեմ մյուս քրիստոնյաների: Եղել են նաեւ թուրք քաղաքագետներ, որոնք փորձել են դիմագրավել անցյալը, ինչպես օրինակ Դամադ Ֆերիդ (Damad Ferid) փաշան, որը 1919-ին կարգադրեց Թուրքիայում պատերազմի հանցագործների առաջին դատավարությունները:

Մանրակրկիտ վերանայման կարոտ է նաեւ ազգային հերոս Զեմալ փաշա Աթաթուրքի դերը, քանի որ նա, ճիշտ է՝ չնայած բռնապետի իր քաղականության՝ հիմնեց առաջին աշխարհիկ մուսուլմանական պետությունը, սակայն ի՞նչ գնով: Փոքր Ասիայի քրիստոնյա բնիկ բնակչության ոչնչացումը պետք է բոլորի՝ եւ մանավանդ Թուրքիայի կողմից ընկալվի որպես հսկայական կորուստ: Եվրոպական պետությունները չպետք է երբեք մոռանան, որ քրիստոնյա Բյուզանդիան որպես «Նոր Հռոմ», Հայաստանի ու Վրաստանի հետ, միշտ էլ պատկանել է մշակութային նույն տարածաշրջանին եւ որ Եվրոպան շարունակում է սնվել վերջիններիս մշակութային ժառանգությունից:

Այսպիսով գրքի նպատակն է՝ վեր հանել մինչ օրս անպատասխան մնացած հարցադրումներ, որպեսզի ավելի լավ ճանաչվի հավակնորդ այն երկիրը, որը ձգտում է անդամակցել Եվրոպական արժեքներ ունեցող մի հասարակության, որին ինքը մինչ այժմ չի պատկանել:

Վիլիելմ Բաում

1. Փոքր Ասիայի գրավումը մուսուլմանների կողմից

Պարսիկների դեմ Յերակլ կայսրի (610-641) հաղթական արշավանքից քիչ տարիներ անց միայն՝ 634-ից արաբներն սկսեցին ներխուժել Փոքր Ասիա՝ այսօրվա Թուրքիայի տարածքը: Նախ նրանք գրավեցին Եփրատի ու Տիգրիսի վերին հոսանքի շրջանները, որոնք կազմում են այժմյան Թուրքիայի արեւելյան մասը: Յարմուքի մոտ (610-641) Բյուզանդիայի դեմ արաբների հաղթանակից հետո Սիրիան՝ Անտիոք մայրաքաղաքի հետ միասին, անցավ արաբներին, 638-ին՝ նաեւ Պաղեստինը Սիրիայի հետ, 639/40-ին՝ Միջագետքն ու Հայաստանը, իսկ 642-ին՝ Եգիպտոսը: Մինչեւ Յերակլի մահը Բյուզանդացիները կորցրեցին իրենց տիրույթների գրեթե երկու երրորդը: Կիլիկիայում Տավրոս լեռնաշղթան միայն կարողացավ կանգնեցնել արաբների ռազմական առաջխաղացումը: Բյուզանդիան իր տիրապետության տակ ուներ միայն Փոքր Ասիայի միջուկը, այսօրվա Հունաստանը ու Իտալիայի մի մասը, եւ ստիպված էր սահմանափակվել միայն դիմադրելով հետագա հարձակումներին:

Իսլամի առաջին հարյուրամյակում քրիստոնեական երկրների վրա մուսուլմանների ընդարձակումը չպետք է վերագրել միայն արագ առաջխաղացող արաբական ռազմական ուժին: Արեւելքի քրիստոնյաների երկպառակությունն էր, որ խանգարում էր համախմբված պաշտպանական ճակատի ստեղծմանը: Բյուզանդական կայսրությունն իրեն տեսնում էր որպես քրիստոնեական պետություն, որպես «Նոր Հռոմ» ուղղափառ պետական կրոնով: 1054 թ. Բյուզանդիայի պետական եկեղեցին վերջնականապես բաժանվեց պապականությունից եւ լատինական Արեւմուտքից («կաթոլիկությունից»): «Կայսերապապականության» շնորհիվ կայսրը («Բասիլետուս») իշխում էր նաեւ պետական եկեղեցու վրա: Կոստանդնուպոլսի պատրիարքն իր հեղինակությամբ երբեք չի հասել Հռոմի պապին: Երրորդ դարում Սասանյանների պարսկական նոր կայսրության սկզբնավորումից ի վեր պարսկական տարածքներում որպես ինքնուրույն ուժ Տիգրոն (Ktesiphon) մայրաքաղաքում ձեւավորվեց «Արեւելքի առաքելական եկեղեցին» (այսպես կոչված «նեստորական» եկեղեցին) իր կաթողիկոս հետ, որի վրա ազդեցություն չէր կարող ունենալ ո՞չ Հռոմի պապը, ո՞չ էլ Կոստանդնուպոլսի կայսրը: Խնդիրներ էին ծագում, երբ Բյուզանդիայի ու Պարսկաստանի մշտական պատերազմների հետեւանքով տեղաշարժվում էին պետությունների սահմանները, եւ Բյուզանդիայի քրիստոնյաներն ընկնում էին պարսկական լծի տակ, կամ Պարսկաստանի քրիստոնյաները բյուզանդականի: Նման իրավիճակներում հաղթողը

մշտապես փորձում էր նոր նվաճած հպատակներին անդամագրել սեփական պետության եկեղեցուն: Այսպես, պարսից մեծ արքա Խոսրով Երկրորդը 609 թվականից բյուզանդական գրավյալ տարածքներում նախ եւ առաջ նշանակել տվեց նեստորական եպիսկոպոսներ, որոնք բնականաբար 628 թ. Բյուզանդիայի հակագրոհից հետո վտարվեցին: Հետագայում այս երեւույթը բազմիցս կրկնվելու էր:

Նոր իրավիճակ ստեղծվեց, երբ 451 թ. Զաղբեղոսի եկեղեցական ժողովում պետական եկեղեցու կողմից հունարեն եզրութաբանության մեջ նորովի սահմանվեց Զրիստոսի բնույթը, մի բան, որ կտրուկ կերպով մերժվեց ասորախոս, հայախոս եւ ղպտիախոս տարածքներում: 5-րդ եւ 6-րդ դարերի ընթացքում այսպես կոչված «միաբնակ» եկեղեցիները հակառակ բյուզանդական կողմի բոլոր ճնշումներին ու միավորման փորձերի, վերաճեցին եկեղեցական ուժեղ կազմակերպությունների, որոնք մասամբ գործում էին ընդհատակում եւ կարողացան դիմանալ մինչեւ օրերս: Հունարենի կիրառությունն այդ տարածքներում զգալիորեն հետադիմեց: Դավանաբանական վեճերը, որոնք մի կողմից ծավալվում էին բառերի կամ սահմանումների շուրջ, մյուս կողմից սակայն երեւան էին հանում տարբեր մտածելակերպեր, այստեղ քննության առարկա չեն կարող դառնալ: Չնայած հանդուրժողականության եւ միավորման մասին խոսակցությունների որոշ փուլերին, նկատելիորեն սրվեց հակադրությունը «ջաղբեղոսականների» (ինչպես այսպես կոչված «միաբնակները» անվանում էին պետական եկեղեցու անդամներին) եւ ասորի, հայ ու ղպտի քրիստոնյաների միջեւ: Այսօր էլ, չնայած տիեզերական քրիստոնյաների բոլոր ձգտումներին, հիմնական տեսակետները քիչ են փոփոխվել: Դավանանքների միջեւ խոր տարածայնությունները նույնիսկ հասցրել էին դրան, որ «միաբնակները» արաբների ու թուրքերի կողմից որեւէ տարածաշրջանի նվաճումը երբեմն ընկալում էին որպես «ազատագրում», մինչեւ որ կյանքն իրենց, ցավոք շատ հաճախ, խելքի էր բերում: Իսլամի հանդուրժողականությունը միշտ էլ տեսում էր այնքան ժամանակ, որքան որ գոյություն ունեւ քրիստոնյա մեծամասնությամբ բնակեցված մի տարածք, որի վրա իշխում էր արաբական կամ թուրքական թեկուզ փոքրաթիվ մի վերնախավ: Հենց որ իսլամը ձեռք էր բերում գերազանցություն, արագ փոխվում էր իրավիճակը քրիստոնյա փոքրամասնության համար, որը շատ տարածքներում կատարյալ անհետացման էր հասցվում՝ ջարդերի, ճնշման եւ իրավական համակարգում խտրականության միջոցով:

Մուսուլմանական տիրապետության ոլորտում կային նաեւ «ուղղափառ» քրիստոնյաներ, որոնք ամուր կառչած էին բյուզանդական պետական եկեղեցուց, հունարենից եւ հունական մշակույթից: Մուսուլմանները նրանց անվանում էին «մելքիտներ» եւ ենթարկում տարբեր ձեւերի ճնշման: Պատրիարքների հինգ նստավայրերից (Հռոմ, Կոստանդնուպոլիս, Անտիոք, Ալեքսանդրիա եւ Երուսաղեմ) Կոստանդնուպոլիսի հետ մշտապես կապի մեջ մնաց Երուսա -

դեմի «մելքիտ» պատրիարքը: Սիրիայում եւս շատ քրիստոնյաներ «մելքիտ» մնացին: Այսօր էլ Սիրիայում մելքիտ քրիստոնյաների թիվն ավելի մեծ է քան «միաբնակներինը»: Ասորի «միաբնակ» եկեղեցին իր հիմնադիր Յակոբ Բարադեոսի (Jacob Baradeos) անունով կոչվել է նաեւ «հակոբիկյան»: Թեւեւ մարդիկ «նեստորական» կամ «միաբնակ» (մոնոֆիզիտ) օտար անվանումները որպէս հայիոյանք էին ընկալում եւ աշխատում էին չգործածել, արեւմտյան ասորի քրիստոնյաներն իրենց կոչեցին «հակոբիկներ»: Այսօր նրանք իրենց կոչում են (փոքր-ինչ թյուրըմբռմամբ) «Սիրիայի ուղղափառ եկեղեցի»՝ Աստիոքի պատրիարքութեան ավանդույթով:

Երբ 969 թ. Բյուզանդիան արաբներից ետ նվաճեց Աստիոքը (այժմ՝ Անթաքիա), այն կրկին դարձավ բյուզանդական պետական եկեղեցու ամրոցը: Աստիոքի «հակոբիկ» պատրիարքները թեւեւ կրում էին այդ տիտղոսը (ինչպէս մինչ օրս), սակայն որպէս կանոն իրավունք չունեին մնալու Աստիոքում եւ ապրում էին լեռներում գտնվող վանքերում: «Արեւելքի առաքելական եկեղեցու» կաթողիկոսները (պատրիարքները) նույնպէս համարվում էին Աստիոքի հետնորդները: Յոռմի պապականությունը մինչեւ մեր օրերն էլ փորձում է «հակոբիկների», «ուղղափառների», «նեստորականների», հայերի ու ղպտիների որոշ մասից կազմել այսպէս կոչված «միություններ» եւ դրանք իրեն կցել, որի հետեւանքը եղան լրացուցիչ պառակտումներ: Արեւելյան հին եկեղեցիների եւ ուղղափառների համար «միավորման հարցը» մինչ օրս Յոռմի հետ վատ հարաբերությունների է հանգեցնում: Այս պառակտումները շահեկան եղան միայն իսլամի համար: Եգիպտոսում այսօր էլ մնացել է միայն մեկ՝ փոքր թվով համախոհներ ունեցող ուղղափառ պատրիարքարան, ինչպէս ղպտիներինը Կահիրեում՝ որպէս «Ալեքսանդրիայի պատրիարքարանի» օրինական հետնորդը: Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների ավելի խորը ուսումնասիրման համար Կոստանդնուպոլսի պատրիարքարանի գլխավորությամբ հույն ուղղափառ եւ հայ եկեղեցիների կողքին ամենից առաջ կարեւոր է ասորի հակոբիկյան եկեղեցին: Այդ երեք եկեղեցիները ուշ անտիկ շրջանից մինչ օրս որոշիչ եղան քրիստոնյա Փոքր Ասիայի համար: Թուրքիայի արեւելյան շրջաններում քրդերենի կողքին իշխում է նաեւ արաբերենը, օրինակ Մարդինում, որը դարեր ի վեր եղել է ասորի հակոբիկյան պատրիարքների նստավայրը: Մելքիտների եկեղեցին եւս՝ սկզբնապէս լինելով ուղղափառ եկեղեցի Բյուզանդական կայսրությունից դուրս, այսօր մեծ մասամբ ընդունել է արաբերենը:

Արաբական նվաճումների առաջին ակիքը 636-ից սկսած դեռեւս անխաթար թողեց ժողովրդական կառույցները: Ուղղափառ հույները դարեր շարու - նակ գերակշռում էին արեւմուտքում, հոնիական ափերում եւ Պոնտոսում, մինչդեռ ասորի հակոբիկյան եկեղեցու ծանրության կենտրոնն էր Եփրատ ու Տիգրիս գետերի վերին հոսանքի շրջանները Ամիդ (այժմ՝ Դիարբեքիր) եւ

Եղեսիա (այսօր՝ Սանլի-Ուրֆա) նստավայրերով, ինչպես նաև արեւելյան լեռնաշխարհը, որտեղ գտնվում էին մեծ թվով ասորի վանքեր: Հայերը նախ քնակություն հաստատեցին արեւելքում, Վանա լճի եւ ներկայիս Հայաստանի շրջակայքում, հետագայում սակայն Տավրոս լեռներում, որտեղ ստեղծվելու էր «Փոքր Հայք» պետությունը, ինչպես նաև կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում եւ Սեւ ծովի հարավում:

2. Դիմի համակարգը եւ ջիհադը

Իսլամի եւ մյուս կրոնների միջեւ ամենահիմնական տարակարծությունն այն է, որ իսլամը երբեք չի ընդունել ուրիշ կրոնների հետ խաղաղ գոյակցության գաղափարը, եւ որ նրան կատարյալ օտար են «գահը եկեղեցուց» կամ «եկեղեցին պետությունից» տարանջատելու կամ այլ կրոնների նկատմամբ հանդուրժողականություն հանդես բերելու՝ արեւմուտքի աշխարհիկ պետության այնքան հիմնարար գաղափարները: Ըստ ղուրանի (սուրահ 2,62 եւ 105, ինչպես նաեւ՝ 5,68-69) քրիստոնյաները, ինչպես նաեւ հրեաները «գրքի ժողովուրդ («ahl al-kitab») են, որոնց թեւեւ երաշխավորված է ազատությունն ու սեփականությունը, սակայն նրանց վրա դրված են նաեւ որոշ պարտականություններ ու սահմանափակումներ: Այսպես, Օմար Երկրորդ (Omar II.) խալիֆի (717-720) «Օմարի համաձայնագրում» սահմանված է, որ քրիստոնյաները եկեղեցի ու վանքեր կառուցելու կամ նորոգելու իրավունք չունեն (հոդ. 1 եւ 2), որ նրանց վկայությունը դատարանում ուժ չունի (հոդ. 8), որ իրավունք չունեն հագնելու նույն զգեստը, ինչ մուսուլմանը (հոդ. 11), եւ որ արգելվում է թամբած ձի քշել եւ զենք կրել (հոդ. 13): Այդ «համաձայնագիրը» օրինակ է հանդիսացել նաեւ հետագա ժամանակների համար¹:

«Դիմի» հասկացությունը (արաբ. Dhimmī=պատիվ, խիղճ, պաշտպանություն, ապահովություն) նշանակում է պայմանագրային կապը կրոնների եւ իսլամական պետության միջեւ: Այն տարածաշրջանը, որտեղ իսլամն է իշխում, «Dar al-Islam» է, այսինքն՝ «Իսլամի տուն» է, աշխարհի մնացած մասը՝ «Dar del-Harb», «Պատերազմի տունը», որը պետք է նվաճվի: Չինադադարը («Hudna») կարող է միայն անցողիկ բնույթ ունենալ եւ ծառայել միայն ռազմավարական նպատակների: Ըստ ղուրանի 9,29 սուրահի, քրիստոնյաները, հրեաները եւ գիր ունեցող մյուս ազգերը «անհավատներ» են, եւ նրանց դեմ պետք է պայքարել, մինչեւ որ «ապահովության հարկ» (Djizya) վճարեն: Սրանով է բացատրվում նաեւ իսլամի արագ տարածումը, քանի որ վերջինիս անդամները սկզբունքորեն ազատված են եղել հարկերից եւ ապրել են ավարներով ու ապահովության հարկերով: Այս համակարգը ուժի մեջ էր մինչեւ 8-րդ դարի կեսերը, երբ իսլամի ընդարձակումը կանգ առավ:

Դիմի համակարգը հովանավորություն էր, թե՞ ճնշում: Նախ՝ արաբ -

1 Claude Cahen: *Der Islam I*, (=Fischer Weltgeschichte 14), Frankfurt 1968, 25f. u. 139f, Alain Ducellier: *Chrétiens d' Orient et Islam au Moyen Age VIle-XVe siècle*, Paris 1996, 89f u. Rudolf Grulich: *Konstantinopel. Ein Reiseführer für Christen*, Ulm 1998, 93.

ները գրաված երկրներում կազմում էին փոքրամասնություն, որն ստիպված էր քրիստոնյա կամ գրադաշտ մեծամասնության հետ ինչ-որ ձևով համաձայնության գալ: Դամասկոսի Ումայյադների (Umayyaden) խալիֆայության (661-750) հարաբերությունը մեծամասնություն կազմող քրիստոնյա ժողովուրդների հետ հիմնականում գործնական էր, այնպես որ հակոբիկները սկզբնական շրջանում շատ գոհ էին, որ ազատագրվել էին բյուզանդական ճնշումից: Չէ՞ որ նախապես անհնար էր կանխատեսել, որ դեպքերն ընթանում էին քրիստոնեական մշակույթի կատարյալ ոչնչացման ուղղությամբ: Հավատացյալներին հարկերից ազատելը նպաստեց, որ պատեհապաշտներից շատերը դիմեցին կրոնափոխության: Սակայն վերադարձը դեպի քրիստոնեություն խստորեն արգելված էր: Մինչև 20-րդ դարը իսլամական օրենքում ուրացողության համար սահմանված էր մահապատիժ:

Ոչ մուսուլմանների իրավական ստորակարգությունը ապահովում էր իսլամի իշխանությունը, նույնիսկ եթե այն փոքրամասնություն էր կազմում: Դամասկոսի Աբասիդների հարստության խալիֆայության ժամանակ (749-1258) գնալով ավելի խստացան քրիստոնյաների նկատմամբ կիրառվող օրենքները: Երկրի նվաճման ժամանակաշրջանին բնորոշ սահմանափակումները առավել եւս սրվեցին: Թեեւ ոչ բոլոր եկեղեցիներն ավերվեցին, սակայն արգելվեց նորերի կառուցումը, մի որոշում, որը մինչև 2005 թ. Թուրքիայում իրավական ուժ ուներ: Նման որոշումները կարելի էր երբեմն կաշառքի միջոցով շրջանցել: Նվաճումից հետո էլ դեռ կառուցվում էին եկեղեցիներ, բայց սկզբունքային անհավասարությունը մուսուլմանների ու քրիստոնյաների միջև անձեռնմխելի մնաց: Զրիստոնյաները պարտավոր էին հազնել իրենց հատուկ այն զգեստները, որոնցով նրանց փողոցում կարելի էր տարբերել, այստեղից էլ՝ «զոտիքավոր քրիստոնյաներ» հասկացությունը: Նրանք միայն էջ հեծնելու իրավունք ունեին եւ ոչ թե ձի, իսկ տների բարձրությունը չպետք է գերազանցեր մահմեդականներինը: Սա հանգեցրեց դրան, որ քրիստոնյաների թիվն աստիճանաբար նվազեց եւ նվաճողների լեզուն տարածվեց: Սկսած 683-ից Եգիպտոսի գրասենյակներում արգելվեց հունարենի գործածությունը: 693 թ. խալիֆ Աբդ-ալ-Մալիքը (Abd-al-Malik) որոշում ընդունեց, որ արձանագրությունները պետք է կազմվեին երկու լեզվով: Սակայն այդ որոշումից մի քանի տասնամյակ հետո էլ Եգիպտոսում քրիստոնյաներին պարտավորեցնում էին օգտագործել միայն տիրողների լեզուն:

Զրիստոնեական դավանանքների նվազման գործընթացը նպաստեց նրանց մեկուսացմանը: Նոր տերերն ամրապնդվեցին նախ քաղաքներում, իսկ գյուղական շրջանները մնացին քրիստոնյա: Անշուշտ պատահականությամբ է, որ Թուրքիայի «հակոբիկյան» քրիստոնյաները մինչև 20-րդ դարը մեծամասնություն էին կազմում միայն Տուրաբդինի (Turabdin) լեռնազանգվածներում եւ Իզալա (Izala) լեռներում, պահպանվելով նաեւ Վերին Միջա -

գետքում՝ Պարսկաստանի եւ Բյուզանդիայի սահմանամերձ լեռնային շրջանում, եւ որ «նեստորականները» պահպանվեցին ամենից առաջ Հակարիի լեռնաշղթայի արեւելյան շրջանում եւ Վանա, Ուրմիա լճերի ու Մոսուլի շրջակա լեռների եռանկյունում: Իսկ հայերը, հատկապես հայ առեւտրականները, ապրում էին այնպիսի քաղաքներում, ինչպես Կոստանդնուպոլիսը, Եդեսիան, Ամիդը կամ Տարսուսը: Հաճախ նրանց հաջողվում էր կառավարության շրջանակներում կամ խալիֆայի պալատում իրենց ունեցած կապերով կամ գրաված պաշտոններով, որպես բժիշկ կամ գիտնական, օգնել իրենց հավատակիցներին:

«Ինչպես հունական գիտությունն անցավ արաբներին»² գրքում Դե Լեյսի Օձերին նկարագրում է, թե ինչպես ասորի քրիստոնյաները անապատի որդիներին փոխանցում էին հունական կրթությունն ու մշակույթը: Որպես բազմաթիվ քրիստոնյաների ներկայացուցիչներ, որոնք իսլամի մեջ գիտությունների ու արվեստի հիմքը դրեցին, կարելի է նշել թեկուզ միայն Հունայն իբն Իշաք (Hunayn Ibn Ishaq) մեծ բժշկի կամ Բոխտիսո (Bochtiso) ընտանիքի անունները, որոնց հետ կապվում է Բաղդատում գիտության ծաղկման ժամանակաշրջանը: Քրիստոնյաների օգնությամբ իսլամի առաջին դարերում զարգացավ արաբական մշակույթը, որը համաշխարհային մշակույթի պատմության մեջ գրավում է առաջատար տեղ, ընդ որում՝ այն նշելիս հաճախ է անտեսվում քրիստոնյաների մասնաբաժինը:

Ձիհադը, ինչպես եւ Դիմի համակարգը, իսլամական մշակույթի հիմնական հասկացություններից է: «Հարբիներին» (Harbi), Դար-ալ-Հարբի (Dar-al-Harb) բնակիչներին, վիճակված է պատերազմի (harb) կամ դարձի միջոցով տարածել իսլամի օրենքը: Ձիհադը՝ որպես մշտական պատերազմ, բացառում է խաղաղությունը՝ թույլատրելով միայն ժամանակավոր զինադադար: Սրբազան պատերազմը բոլոր մուսուլմանների պարտքն է. բոլոր հավատացյալները պարտավոր են իրենց անձով, իրենց ունեցվածքով ու գրվածքներով նպաստել դրան: Ձիհադը կարող է իրագործվել նաեւ խաղաղ եղանակով՝ դարձի, քարոզչության ու կաշառման միջոցով: «Դիմի կեցությունը՝ որպես ջիհադի անմիջական արդյունք, հատուկ պայմանագրով վերացնում է նվաճողի նախնական իրավունքը հաղթվող անձի եւ ունեցվածքի նկատմամբ, եթե վերջինս համաձայնվի հարկ վճարել եւ իսլամին ենթարկվել»³:

2 De Lasy O'Leary: How Greek science passed to the Arabs, 2. ed. Delhi 2001.

3. Bat Ye'or: *Der Niedergang des orientalischen Christentums unter dem Islam (7.-20. Jahrhundert)*, Gräfelding 2002, 38.

3. Թուրքերը

Թուրքերի նախնիները 6-րդ դարում ապրում էին Կենտրոնական Ասիայում եւ իրենց կրոնով բուդայական էին, մանիքեցի (Manichäer) կամ նեստորական քրիստոնյաներ: Նրանք հնդեւրոպացի չեն, ոչ էլ հույների, ասորիների կամ հայերի ազգակիցը: Այսօրվա թուրքերը օղուզների հետնորդներն են, որոնք 10-րդ դարում ապրում էին ղազախական տափաստանում, Արալյան լճից հյուսիս: Յեծյալ ռազմիկների շարքերում, որոնք հաճախ նաեւ որպէս ստրուկներ (մամլուք) համալրում էին օտար տիրակալների ջոկատները, կային նաեւ թուրք սելջուկներ, որոնց գլխավորում էր քոչվոր խանը: Թուրքական տարբեր ցեղեր ժամանակի ընթացքում Սիբիրից քոչեցին Առաջավոր Ասիա: Երբ իսլամը մուսը գործեց թուրքերի մեջ, կռվազան քոչվորների շրջանում զարգացավ ղազիների դասը: Ղազիները ձիավոր քոչվորներ էին, որոնք պարբերաբար հարձակվում էին քրիստոնյաների բնակավայրերի վրա, կողոպտում եւ ասպատակում էին դրանք: Ղազիների միջոցով թուրքերին հաջողվեց ժամանակի ընթացքում նվաճել Փոքր Ասիան, որի բնակչությունը կազմալուծվեց եւ փախչելով ապաստանեց ամրոց-քաղաքներում: Սելջուկ սուլթան Ալի Արսլանի (Alp Arslan)՝ Ռոմանոս Դիոգինոս Չորրորդ (Romanos IV. Diogenes) կայսրի դէմ Մանազկերտի (19.8.1071) ճակատամարտի հաղթանակից հետո, սելջուկ ղազիները արշավեցին Անատոլական բարձրավանդակ, որի հետեւանքը եղավ քրիստոնյա գյուղական բնակչության զանգվածային փախուստը: 1071 թվականը նշանաբանում է թուրքերի կողմից Փոքր Ասիայի նվաճման սկիզբը, որն էլ իր հերթին քրիստոնեական մշակույթի վերջը հանդիսացավ: Չորավար Ալի Արսլանի շքախմբի թուրքմենները մնացին երկրում: Ինչպէս դա հաճախ պատահում է, օգնության կոչեր հղվեցին արտաքին ախոյան ուժերին: Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Դիոգինոս Չորրորդը, որին լքել էր իր իսկ ազնվականությունը, սուլթանի հետ բանակցեց մի պայմանագրի շուրջ, որով նա փրկվեց տարածքային կորուստներից: Նա հարկադրվեց փրկագին վճարել, գերիներին ազատ արձակել եւ սուլթանին օգնական զորք տրամադրել: Ընթացքում առաջատար պաշտոնյաները կայսրին գահընկեց արեցին եւ կուրացրին: Թուրքերն ալեւս կապված չլինելով պայմանագրով, հարձակվեցին Փոքր Ասիայի վրա, նախքան նոր կայսրի՝ Միխայել Յոթերորդի (Michael VII.), որեւէ բան ձեռնարկելը: Այժմ սելջուկ թուրքերը խուժեցին Անատոլական բարձրավանդակ: Միայն այդ ժամանակ է, որ Մանազկերտի պարտությունը վերաճեց աղետի եւ այնպիսի հարվածի, որից Բյուզանդիան այլեւս չկարողացավ ուշքի գալ: Բյուզանդիան բարձր գին էր վճարում նաեւ

այն բանի համար, որ ցրել էր հայերի գինուժը՝ իր բանակով հանդերձ: Այժմ սելջուկ թուրքերի պետությունը տարածվեց Կենտրոնական Ասիայից մինչև Անատոլիա: Ալփ Արսլանի հորեղբորորդի Սուլեյմանը Նախ Արեւմտյան Անատոլիայում մեծ սելջուկների սուլթանի գորավարն էր, իսկ 1080 թ. Նա տիրեց ամբողջ երկրին, Կիլիկիայից մինչև Յելլեսպոնտոս (այժմ՝ Մարմարա ծով) և հիմնադրեց «Ռում» անունով սելջուկյան պետությունը, հռոմեական սուլթանությունը: 1087 թ. սելջուկները նվաճեցին Եդեսիան, ինչպես նաև Ան - տիոքը, որտեղ բնակչությունը հիմնականում քրիստոնյա էր (հույներ ու հայեր):

Դրա հետ մեկտեղ քրիստոնեության միջնաբերդ Կեսարիայի (այժմ՝ Կայսերի) և Մելիթենեի (այժմ՝ Մալաթիա) շուրջ, որը հակոբիկյան պատրիարքարանի ժամանակավոր Նստավայրն էր, ստեղծվեց Դանիշմենդիդների սուլթանությունը: Եփրատի վերին հոսանքի շրջանում կազմավորվեցին Մենգուչեկիդների, Էրզրումի շուրջ՝ Սալտուկիդների, իսկ հակոբիկյան կենտրոն Մարդինի շուրջ՝ Օրտուկիդների (1107-1409) իշխանությունները: Սելջուկ մեծ սուլթան Մալիք շահի (†1092) մահից հետո նրա պետությունը բաժանվեց առանձին Էմիրությունների: Մարդինի Օրտուկիդների պետությունում ասորի քրիստոնյաների վիճակն այնքան լավ էր, որ պատրիարքը Նստավայրը Ամիդից այնտեղ տեղափոխեց: Մարդինի Դիոսկորոս Թեոդորոս (Dioskoros Theodoros) եպիսկոպոսի մեր օրերը հասած ավետարանը իր հարուստ զարդանկարներով արձանագրում է, թե մշակութային ինչպիսի ծաղկում են ապրել քրիստոնյաները դեռևս 13-րդ դարում:

Քոչվոր թուրքմենների թիվը 12-րդ դարում պետք է որ կազմեր կեսից մինչև մեկ միլիոն մարդ: Կենտրոնական Ասիայից թուրքմենների շարունակական ներհոսքի պատճառով Անատոլիան փոփոխություն կրեց⁴: Ղազիները քրիստոնյաներին դուրս բռնեցին Անատոլական բարձրավանդակից, և միայն առանձին վայրերում էր, ինչպիսին էր Պոնտոսն ու Կապադոկիան, որտեղ մինչև Առաջին աշխարհամարտը պահպանվեցին հույն ուղղափառ քրիստոնյաները: Գյորեմեի քարանձավային վանքերն ու գետնափոր քաղաքները ցույց են տալիս, թե ինչպես են քրիստոնյաները պատսպարվել ղազիներից, որոնք մուլեռանդորեն կիրառում էին ջիհադը: Ավելի ուշ՝ մոնղոլներից փախչելով, եկան ցեղային այլ խառնուրդներ, ինչպես նաև թուրքական ժողովուրդների կատկանող այլ փախստականներ, որոնք հետագայում՝ թուրքմենների հետ միախառնվելով, միաձուլվեցին՝ դառնալով մի ժողովուրդ: Այդ է պատճառը, որ Անատոլական բարձրավանդակում արդեն օսմանների հանդես գալուց առաջ, մոտավորապես 1280 թ., թուրքմենները բյուզանդացիների,

4 Josef Matuz: *Das Osmanische Reich. Grundlinien seiner Geschichte*, Darmstadt, 2. Aufl., 1990, 20.

ասորիների եւ հայերի համեմատությամբ մեծամասնությունն էին կազմում: Կայսր Ալեքսիոս Առաջինը (1081-1118)՝ բյուզանդական Կոմնենների հարստության հիմնադիրը, ստիպված եղավ, Էպիրոսում նորմանների եւ Դանուբի ափին պեչենեգների դեմ պատերազմի ընթացքում, ընդունել սելջուկներին, որոնք արդեն գտնվում էին Կոստանդնուպոլսից տեսանելիության սահմանում, որպես կայսրության դաշնակիցներ եւ դրանով իսկ գոնե երեւութապես պահպանել գերագույն իշխանությունը:

Թուրքերի ընդարձակման թափին հակահարված տվեց Խաչակրաց 1-ին արշավանքը, որի շնորհիվ 1097-ին խաչակիրները սելջուկների գրաված Նիկիան (այժմ՝ Իստիկ) ազատագրվեց: Լատին խաչակիրների հաջողությունը Փոքր Ասիայում իրավիճակը տեսանելիորեն շրջեց ի նպաստ քրիստոնյաների: Գոնե հայերի համար ողջունելի էր խաչակիրների հաջողությունը, որոնք 1098-ին գրավեցին Անտիոքն ու Եդեսիան եւ այնտեղ հաստատեցին քրիստոնյա մի իշխանություն, որը գոյատևեց մինչև 1144 թ.: Խաչակիրները, որոնք Կոստանդնուպոլսի կայսրին սատարելու երդում էին տվել, ի վերջո գրաված տարածքները նրան չվերադարձրին, այլ ստեղծեցին «լատին» խաչակիրների պետություն: Խաչակիրների հաջողությունն ամենից առաջ հնարավոր դարձավ այն բանի շնորհիվ, որ Աբասիդների խալիֆայությունը վաղուց քայքայված էր. իսկ թուրքերը, որոնք նախկինում որպես ռազմիկներ ու ստրուկներ ծառայում էին խալիֆներին, անկախացան եւ Անատոլիայից մինչև Կենտրոնական Ասիա Էմիրություններ ստեղծեցին:

Այնուամենայնիվ կայսր Ալեքսիոս Առաջինին չհաջողվեց Արեւելքում կորցրած տարածքները ետ սվաճել: Սելջուկները Անատոլիայում գնալով ավելի ամրացան, իսկ հույն բնակչությունը ետ մղվեց դեպի առափնյա քաղաքները: Հազարավոր հայեր փախան դեպի արեւմուտք, որտեղ հայկական մեծ գաղութներ ստեղծվեցին Կոստանդնուպոլիս, Թեսաղոնիկե եւ Վառնա քաղաքներում: Կայսրը կողմնակից էր քրիստոնյա բնակչության տեղաշարժին դեպի արեւմուտք, ընդ որում նրանց բնակեցնում էր Հունաստանում: Դժվարությամբ միայն նրան հաջողվեց Ֆիլադելֆիայի վրայով ցամաքային կապ հաստատել Փոքր Ասիայի հարավային ափերի հունական քաղաքների հետ: Դրանով կայսրության արեւելյան կեսի զգալի մասը 200 տարի մնաց բյուզանդացիների հսկողության տակ: Կայսրի որդին՝ Յոհաննես Երկրորդ Կոմնենոսը (John II. Komnenos) (1118-1143) հարավային ափամերձ շրջանը ետ գրավեց, ինչպես նաեւ Կիլիկիա երկրամասը, որտեղ հայ փախստականները ստեղծել էին այսպես կոչված Փոքր Հայքի իշխանությունը: Նրա որդին եւ հետնորդը՝ Մանուել Առաջինը (1143-1180) հարձակվեց ռում-սելջուկների սուլթանության վրա եւ ստիպեց սուլթան Մասուդ Առաջինին թողնել իր նստավայրը՝ Իկոնիան (այժմ՝ Կոնյա): 1159 թ. նա հասավ մինչև Անտիոք, որտեղ խաչակիրները ստիպված եղան ընդունել նրա գերիշխանությունը: Սակայն նրա փորձը՝ իրեն ենթար -

կելու Իկոնիումի սուլթանությունը՝ 1176 թ. սեպտեմբերի 17-ին Միրիոքեֆալոնի (Myriokephalon) մոտ ճակատամարտում ձախողվեց: Այսպիսով Բյուզանդիան հարկադրված եղավ վերջնականապես հրաժարվել Փոքր Ասիայի կենտրոնական մասը թուրքերից ետ գրավելու ծրագրից: 1180 թ. գարնանը սելջուկները հասան Աթալեիա (այժմ՝ Անթալյա)՝ Միջերկրական ծովի ափը:

Կայսր Իսահակ Երկրորդ Անգելոսի (Isaak II. Angelos) օրոք, 1190 թ. տեղի ունեցավ հաջակրաց 3-րդ արշավանքը, որը Նախկինների նման ձախողվեց: Խաչակիրաց 4-րդ արշավանքի ընթացքում 1204 թ. խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը: Այդ հարվածը բյուզանդացիների համար վճռական եղավ, թեեւ նրանք դեռ դիմանում էին պետության Նիկիայի ու Տրապիզոնի երկրամասերում եւ հյուսիսային Յունաստանում: Բյուզանդական աշխարհում կաթոլիկների այս հարձակումը մինչ օրս չի մոռացվել, եւ 2004 թ. 800-ամեակի կապակցությամբ ուղղափառ եկեղեցին իզուր էր սպասում հաշտարար մի ժեստի: 1204-1261 թթ. Կոստանդնուպոլիսը այսպես կոչված «Լատինական կայսրության» մայրաքաղաքն էր, հունական հողերում խաչակիրների արեւմտյան պետության մայրաքաղաքը: Փոքր Ասիայում Թեոդոր Առաջին Լասկարիսը (Theodor I. Laskaris) (1204-1222) կազմավորեց ուշ-բյուզանդական Նիկիայի կայսրությունը, որը շարունակեց Բյուզանդիայի ավանդույթները: Լատինների կայսրը 1209 թ. դաշինք կնքեց Իկոնիայի սուլթան Կաիկոսրու Առաջինի (Kaikosru I.) հետ: Զրիստոնյաները զարմանալիորեն պաշտպանում էին թուրքերին՝ ընդդեմ հույների: Բյուզանդական Կոմենների հարստության ներկայացուցիչները Սեւ ծովի ափին հիմնեցին Տրապիզոնի փոքր կայսրությունը, որի կենտրոնական տարածքները թուրքերը գրավեցին միայն 1461 թ.: Նիկիայի կայսրությունն ամրապնդվեց եւ խաչակիրներից կարողացավ նույնիսկ ետ գրավել Յունաստանի որոշ մասեր:

Մոնղոլների արշավանքը 1242 թ. Փոքր Ասիայի առաջ դրեց նոր խնդիրներ: Նիկիայի Յոհաննես Վատացես (John Vatatses) կայսրը դաշինք կնքեց Իկոնիայի հետ, որի սուլթանը ջախջախիչ հարված ստացավ մոնղոլներից, որոնք Կապադովկիայում գրավեցին Կեսարիան (այժմ՝ Կայսերի): Նիկիայի Միքայել Պալեոլոգոս (Michael Palaiologos) կայսրը (1259-1282) 1261թ. խաչակիրներից ետ նվաճեց Կոստանդնուպոլիսը եւ հաստատեց բյուզանդական վերջին Պալեոլոգների հարստությունը: Երբ մոնղոլները հարձակվեցին սելջուկների վրա, թուրքերից շատերը փախան բյուզանդական շրջաններ, որտեղ նրանք դիմադրության չէին հանդիպում: Մինչեւ 1280 թ. թուրքերը նվաճեցին Անատոլիայի հարավ-արեւմուտքը: Մագնեզիայի մոտ (1302) թուրքերի դեմ բյուզանդացիների պարտության ժամանակ հայտնվեց Ղազի-Էմիր Օսմանը (Ghasi-Emir Osman)՝ հիմնադիրը Օսմանյան կայսրության, որը կես դարի ընթացքում Դարդանելից ձգվեց դեպի Եվրոպա:

Երբ բյուզանդացիներն ու թուրքերը գրավեցին հայերի երկիրը, վերջիններս թողնելով նրանց իրենց հողերը տեղաշարժվեցին դեպի հարավ,

Տավրոս լեռնաշղթան: Դեռեւս 1080 թ. սկսած, Կիլիկիայում ապաստանած հայ փախստականները՝ Ռուբինյանների տան գլխավորությամբ, Սիսի (աժմ՝ Կոզան) շուրջ ստեղծեցին իշխանություն: Գրիգոր Երրորդ կաթողիկոսը (1113-1166) իր նստավայրը Անիից տեղափոխեց Յոնուկլա՝ Եփրատի ափին: Իշխան Լեւոն Առաջինը (Leo I.) 1198 թ. Տարսուսում կաթողիկոսի եւ Մայնցի արքեպիսկոպոսի կողմից թագավոր օծվեց⁵: Նոր դրամի հատումը Բյուզանդիայից անկախանալու նշան էր: 1226 թ. իշխանության գլուխ անցավ Յեթումյանների ընտանիքից իշխան Յեթում Առաջինը (1226-1270): Ռումի սուլթանի հետ դաշինք կնքելուց հետո, նա 1252-ին անցավ մոնղոլների կողմը, դրանով իսկ ապահովելով իր իշխանությունը: 1258 թ. Բաղդատի վրա մոնղոլների հարձակմանը մասնակցում էին նաեւ հայկական օժանդակ զորամիավորումները: Լեւոն Երկրորդը (Leo II.) (1270-1289) 1281 թ. կարողացավ մեծ դժվարությամբ Եգիպտոսի մամլուքների դեմ պատերազմից հետո ամրապնդել իր տիրապետությունը: 1291 թ. Պաղեստինում ի դեմս Ակոնի ընկավ խաչակիրների վերջին հենակետը: 1292-ին մամլուքները գրավեցին Յոնուկլան եւ քչեցին կաթողիկոսին: Սիսում նստող հաջորդ կաթողիկոսը կրկին կապի մեջ մտավ պապի հետ՝ արեւմուտքից օգնություն հայցելու նպատակով: 1307 թ. Սիսում Յոնուկլան հետ մի նոր միություն կազմելու միտք հղացան: Յեթում Երկրորդը (†1307) ընդունեց կաթոլիկություն՝ դառնալով ֆրանցիսկյան կրոնավոր: Փոքր Յայքի ու շրջանի նշանավոր անձնավորություններից է պատմիչ Յեթում Կորիկոսցին՝ (Hethum von Korykos) Յեթում Առաջինի եղբորորդին, որը 1307 թ. Պուաթելում (Poitiers) թելադրեց իր պատմական երկը «Արեւելքի ծաղիկը» (La Flor des estoires de la terre d'Orient), որի մեջ անդրադառնում է իր անձնական հանդիպումներին մոնղոլ խաների հետ:

Ֆրանսիացի կաթոլիկ Գվիդոն Լուսինյանը (Guy de Lusignan) 1342 թ. դարձավ Փոքր Յայքի թագավոր: Նրա հաջորդը՝ Կոստանդին Երրորդը, ստիպված էր միաժամանակ պայքարել հռոմատյաց հայերի եւ մամլուքների դեմ: 1375 թ. մամլուքները գրավեցին Սիսը՝ դրանով իսկ նվաճելով քրիստոնյա վերջին իշխանապետությունը Արեւելյան Անատոլիայում: Վերջին թագավոր Լեւոն Յինգերորդը՝ իր արքունիքի հետ միասին, մամլուքների կողմից Կահիրեում բանտարկվեց եւ ազատ արձակվեց միայն 1382-ին պապի եւ Վենետիկի վճարած փրկագնով, բայց միայն պայմանով, որ այլեւս երբեք ուտք չի դնելու հայկական հողի վրա: Եւ նա՝ որպես մուրացիկ ու փախստական, մինչեւ 1393 թ. շրջում էր Եվրոպայով մեկ⁶: 1400-ից Յայաստանի մեծ մասը գտնվում էր թուրքմենական Կարա-կոյունլու («սեւ ոչխարների ցեղ») հարստության բռնատիրության տակ, որի նստավայրը Վանն էր: 1433-ին Կոստանդ-

5 Anne Elizabeth Redgate: *The Armenians*, Oxford 2000, 257.

6 Aziz S. Atiya: *Kreuzfahrer und Kaufleute. Die Begegnung von Christentum und Islam*, Stuttgart 1964, 126.

Նուպոլսում հիշատակվում են հայ եպիսկոպոսներ Յովհաննեսը և Եսային, 1441-ին՝ մեկ հայ եպիսկոպոս Անկյուրայից, 1475-ին՝ հիշատակվում է մեկ հայ եպիսկոպոս Ամասիայում, իսկ 1485-ին՝ Սեբաստիայում (այժմ՝ Սվազ): 1438-ին Ֆլորենցիայի եկեղեցական ժողովին մասնակցեցին նաև հայ եկեղեցու ներկայացուցիչներ: Սակայն Եվգիանոս Չորրորդ (Eugene IV.) պապի՝ 1439 թ. Նոյեմբեր 22-ի հայերի մասին «Decretum pro Armenis» որոշումը Նույնքան իրականացվեց, որքան նրա՝ 1439-ին արած հայտարարությունը ուղղափառներին միանալու մասին: 1441 թ. կաթողիկոսարանը Սիսից կրկին փոխադրվեց Էջմիածին: Հայերի ճակատագիրն այսուհետև դարերով պիտի մնար թուրքերի, պարսիկների ու ռուսների ձեռքին:

4. Բյուզանդական կայսրության վերջին փուլը

Օսմանյան կայսրությունը սկզբնավորվել է Բյուզանդական կայսրության
???????????? մայրաքաղաք Նիկիայից մոտ 60 կմ հարավ ընկած
տարածաշրջանում: 1300-ական թթ. շուրջ Փոքր Ասիայում Բյուզանդիայի
ձեռքում էին մնացել միմիայն Նիկիան, Նիկոմեդիան, Բրուսան, Սարդեսը,
Ֆիլադելֆիան, Մագնեզիան և առանձին նավահանգստային քաղաքներ,
ինչպիսիք էին Յեռակլեյան՝ Պոնտոսում, Փոքրիան և Չմյունիան: 1304 թ.
Բյուզանդիան կարողացավ պաշարված Ֆիլադելֆիայի մոտ թուրքերի դեմ
հաղթանակ տանել: 1326 թ. Օսմանի որդի Օրհանին (1326-1360) հաջողվեց
գրավել Բրուսան (այժմ՝ Բուրսա), որը դարձավ օսմանների առաջին
մայրաքաղաքը: Զանի որ Բյուզանդական նվազած կայսրության կենտրոնը
տեղաշարժվել էր դեպի Յունաստան, վրա հասած քաղաքացիական
պատերազմի շրջանում 1331-ին ընկավ Նիկիան, իսկ 1337-ին՝ Նիկոմեդիան
(այժմ՝ Իզմիր): Օսմանները գրավեցին Անկյուրան (այժմ՝ Անկարա) և հասան
Փոքր Ասիայի հարավային ափերը: Բյուզանդիայում քաղաքական գործիչ՝
հետագայում կայսր, Յոհաննես Կանտակուզենոսը (John Kantakuzenos)
սելջուկների հետ համագործակցեց օսմանների դեմ: Օսմաններն արդեն
նավատորմ էին կառուցել և հարձակվեցին Յունաստանում բյուզանդական
տիրույթների վրա: Զաղաքացիական պատերազմի ընթացքում Կանտակու-
զենոսը փոխնիփոխ դաշնակցում էր օսմանների ու սելջուկների հետ:
Թուրքերը 1352 թ. հաստատվեցին Կալիպոլիսի (այժմ՝ Գալիպոլի) եվրոպա-
կան կողմը՝ Զիմելիք (Tzypre) ամրոցում: 1354 թ. սուլթան Օրհանի որդի
Սուլեյմանը գրա փց Կալիպոլիսը՝ ստեղծելով դեպի Եվրոպա տարածվելու
հենակետ: 1361-ին օսմանները գրավեցին Ադրիանուպոլիսը (այժմ՝ Էդիրնե),
իսկ երկու տարի անց Մուրադ Առաջինը (1360-1389) մայրաքաղաքն այնտեղ
տեղափոխեց: Բյուզանդիան արդեն երկու կողմից շրջապատված էր թուր-
քերով: 1395-1401 թթ. թուրքերն առաջին անգամ պաշարեցին Կոստանդնու-
պոլիսը: Կայսրը հարկադրված էր հովանավորչության և տուրքերի վերա-
բերյալ պայմանագիր կնքել, որով Բյուզանդիան դարձավ թուրքական հովա-
նավորյալ պետություն: Պաշարման ընթացքում՝ 1398 թ. ճենովական Գալա-
թայում գտնվող հայկական Ս. Սարգիս վանքում ստեղծվեց մի ձեռագիր, որի
մեջ մայրաքաղաքը անվանվում է Ստամպոլ, որը 12-րդ դարից գործածական
էր ժողովրդի շրջանում⁷: Սուլթան Բայազիդ Առաջինը (1389-1402) գրավեց

7 Martin Rahn: *Die Entstehung des Armenischen Patriarchats von Konstantinopel*, (= Studien zur Orientalischen Kirchengeschichte 20), Münster-Hamburg-London 2002, 103-105.

նաեւ Արեւմտյան Անատոլիայի Եմիրությունները: Կայսր Մանուէլ Երկրորդը, որպէս օսմանների վասալ, պարտավորվեց 1390-ին Բայազիդի կողմից մասնակցել բյուզանդական վերջին քաղաքի՝ Ֆիլադելֆիայի, գրավմանը: Թվում էր՝ Բյուզանդական կայսրությունը դատապարտված էր կործանման, երբ միջինասիացի տիրակալ Լենկթեմուրը (Թամերլան) 1402 թ. Անկարայի մոտ հաղթելով օսմանների սուլթանին, գերի վերցրեց նրան: Դրանով Բյուզանդական կայսրությանն ընծեռվեց վերջին կարճատեւ դադարի հնարավորությունը: Թեմուրը նախ Փոքր Ասիայի արեւելյան մասում եւ Վերին Միջագետքում կործանեց բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, ինչպէս, օրինակ, Տուրաբոլիի Հահ մեծ եկեղեցին: Վանում նա հրամայեց՝ հայերին քաղաքի պարիսպներից ցած գցել, Սվազում՝ հազարավորների կենդանի թաղել եւ կամ նրանց իր հեծելազորի ոտքերի տակ ճգմել: Ասորի երկու եկեղեցիներ այդ ավերիչ արշավանքից այլեւս երբեք չկարողացան ուշքի գալ:

1403 թ. Բյուզանդիայի եւ օսմանների միջեւ կնքվեց մի նոր պայմանագիր, որով վերացվում էին կայսրի վասալային պարտավորությունները: Մուհամեդ Առաջինը (1413-1421) վարում էր համագոյակցության քաղաքականություն: Միայն Մուրադ Երկրորդն (1421-1481) էր, որ ավերեց Հունաստանը, եւ նորից պաշարելով Կոստանդնուպոլիսը, 1430-ին այն կրկին հարկատու դարձրեց: 1430 թ. Թեսալոնիկէն նույնպէս ընկավ թուրքերի ձեռքը: Ֆլորենցիայում 1439 թ. հուլիսի 5-ին կայսրի ստորագրած ուղղափառ եւ կաթոլիկ եկեղեցիների միությունը եւս չկարողացավ փրկել Բյուզանդիան⁸: Արեւմուտքը կործանման եզրին հասած կայսրությանը գործուն օգնություն չցուցաբերեց. միությունը թեւեւ ծանուցվեց, սակայն ի կատար չածվեց: «Գերմանական ազգի հռոմեական սուրբ կայսրությունը» թեւեւ Թուրքերի հարցով զբաղվող մի շարք վեհաժողովներ կազմակերպեց, սակայն այդ մեծ օգուտ չտվեց: Երիտասարդ եւ փառամոլ սուլթան Մուհամեդ Երկրորդը (1451-1481) երկար պաշարումից հետո 1453 թ. մայիսի 29-ին գրավեց Կոստանդնուպոլիսը, որն այնուհետեւ դարձավ օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Գալաթա ճենովական գաղութը ստիպված եղավ հովանավորչական պայմանագիր կնքել սուլթանի հետ⁹: Գալաթան (Բերա) մինչեւ 19-րդ դարը մնաց քրիստոնյաներով բնակեց - ված, որպէս «ֆրանկների» թաղամաս, իսկ այսօր արտերկրյա քաղաքագետների բնակավայր է:

Քաղաքի գրավման ժամանակ զոհվեց Կոստանդին կայսրը: Մոտ 50.000 բնակիչներից սպանվեց 4000 հոգի, իսկ մեծ մասը գերեվարվեց: Սուլթանը քաղաքը թալանի մատնեց, լրիվ ոչնչացրեց կայսերական արխիվը, իսկ Ս.

8 Joseph Gill: *Konstanz-Basel-Florenz*, (=Geschichte der ökumenischen Konzilien 9), Mainz 1967, 316f.

9 Rehn (2002), 94-97.

Սոֆիայի տաճարը վերածեց մզկիթի¹⁰: Հայազգի Աբրահամ Անկյուրացին իր եղերերգության մեջ ականատեսի դերում նկարագրում է հույների կողմից որպես «*lwsħ*» Հալոսիս» (կլանում) ողբացած քաղաքի գրավումը: Ստեֆան Ցվալգը այդ օրվա նկարագրությունը տալիս է «Մարդկության աստեղային ժամերը» երկում: Այսպիսով, Փոքր Ասիայում հույների ձեռքում մնացել էր միայն Տրապիզոնի կայսրությունը: Սակայն Մեհմեդ Երկրորդը (Mehmed II.) 1461 թ. օգոստոսի 15-ին գրավեց հույների այս վերջին ամրոցը եւս: Դավիթ կայսրը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, իսկ ամբողջ արական բնակչությունը՝ գերեվարվեց: 1463 թ. կայսրը՝ իր յոթ որդիներից վեցի հետ բանտում մահապատժի ենթարկվեց: «Հույներին ոյուրին ապագա չէր սպասում: Նրանց խոստացել էին խաղաղություն ու արդարություն, նաեւ բարեկեցության հնարավորություններ: Այնինչ նրանք երկրորդ կարգի քաղաքացիներ դարձան: Ստրկությունն անխուսափելիորեն իր հետ է բերում բարոյալքում, եւ հույները չկարողացան խուսափել դրա հետեւանքներից: Հույների պատմությունը թուրքերի տիրապետության օրոք լի է տրտմությամբ ու դառնություններով: Այնուամենայնիվ, չնայած բոլոր իր սխալներին ու թուլություններին, հունական եկեղեցին գոյատևեց»¹¹: Առաքյալների եկեղեցին՝ Կոնստանդինի եւ այլ կայսրերի շիրիմների հետ ավերվեց. դրանց տեղում կանգնեց հաղթանակի մզկիթը: Բացի միայն մեկ եկեղեցուց՝ մնացած եկեղեցիները, գոնե ժամանակավորապես, մզկիթի վերածվեցին: Վանքերն ու գրադարանները ոչնչացվեցին: Կոստանդնուպոլսի անկումը ցավով ընդունեց ողջ քրիստոնյա աշխարհը, որը սակայն որեւէ ձեւով օգնության չհասավ: 1461-ին Պիոս Երկրորդ պապի՝ Փոքր Ասիայի նկարագրությունը (Enea Silvio Piccolomini) ցույց է տալիս, թե այն ժամանակ Եվրոպայում ինչքան քիչ բան գիտեին օսմանյան տիրապետության տակ ապրող քրիստոնյաների վիճակի մասին¹²: Միայն երբ թուրքերը 1526 թ. Վիեննայի մոտ կանգ առան, Արեւմուտքի կայսրը գիտակցեց վտանգի մեծությունը քրիստոնյա աշխարհի համար: 1472 թ. Չոի Պալեոլոգինան (Zoe Paleologina)՝ վերջին կայսրի եղբոր դուստրը, ամուսնացավ ռուս մեծ իշխան Իվան Երրորդի հետ, որն ստացավ ցարի տիտղոսը եւ կայսերական կնիքը՝ երկգլխյան արծվի զինանշանով: Մի ռուս վանականի որակավորումով՝ Մոսկովյան գաղափարախոսությունը դարձավ «Երրորդ Հռոմի» գաղափարախոսություն: Այդ թույլ տվեց ռուսական ցարին՝ որպես բյուզանդական կայսրերի ժառանգ, հետագայում պահանջելու Օսմանյան կայսրությունում գտնվող ուղղափառ եկեղեցին հովանավորելու իրավունքը:

10 David Stacton: *Der schwarze Dienstag Der Fall von Byzanz*, Wien-Hamburg 1967, 2911
 և Steven Runciman: *Die Eroberung von Konstantinopel 1453*, München 1977, 154f.

11 Նույն տեղում, 198. Հմտ. նաև. Friedrich Wilhelm Fernau: *Patriarchen am Goldenen Horn. Gegenwart und Tradition des orthodoxen Orients*, Opladen 1967, 67f.

12 Enea Silvio Piccolomini (Pius II): *Beschreibung Asiens*, hg. v. Wilhelm Baum, Klagenfurt 2005.

5. Զրիստոնյաները թուրքական միլեթ համակարգում

Ըստ Կրիտոբուլոսի (Kritoboulos) տարեգրության՝ սուլթան Մեհմեդ Երկրորդը 1466 թ. Նոր պատրիարք Նշանակեց վանական Գեորգ Սքուլարիոսին (George Scholarios), որը բյուզանդական եկեղեցու՝ պապականի հետ միության հակառակորդն էր: Վերջինս ընդունեց Գենադիոս (Gennadios) անունը¹³: Սուլթանը սահմանեց, որ այնուհետև հույն հպատակները կազմելու էին *միլեթ* (արաբ. «milla» = կրոն), կայսրության ներսում ինքնակառավարվող եւ պատրիարքին ենթարկվող մի համայնք, որը սուլթան Օրնաթից (Ornat) որպես պատվանշան ստանալու էր եպիսկոպոսական գավազան եւ լանջախաչ: Զանի որ բյուզանդացիներն իրենց անվանում էին «Rhomaioi» (հռոմեացիներ), թուրքերը ուղղափառ եկեղեցու համայնքը կոչեցին «Ռում միլեթ»: Պատմիչ Կեդծ-Սֆրանցի (Pseudo-Sphrantz) վկայությամբ՝ Մեհմեդը պատրիարքին հանձնել է փաստաթուղթ, որն ապահովում էր նրա անձի անձեռնմխելիությունը, ազատում նրան հարկերից, պաշտոնանկ լինելու վտանգից, տալիս էր տեղաշարժման ազատություն, ինչպես նաեւ այս բոլոր առանձնաշնորհներն իր հաջորդներին փոխանցելու իրավունք: Մետրոպոլիտի պարտականություններին վերաբերող կետերից մեկը այն մասին էր, որ վերջինս պարտավոր էր սուլթանին վճարել որոշակի գումար, քրիստոնյաների նկատմամբ կիրառել օրենսդրությունը եւ եկեղեցու կալվածքների, խաղողի այգիների, պարտեզների ու դաշտերի օգտագործման իրավունքը կիրառել նույն պայմաններով, ինչ որ իր նախորդը¹⁴: Եկեղեցական դատարանները պիտի լսեին ուղղափառ հավատացյալների կրոնական կարեւորություն ունեցող դատական բոլոր գործերը, ինչպես ամուսնություն, կտակ կամ խնամակալություն: Պատրիարքի Նշանակած դատարանները պիտի զբաղվեին ուղղափառների միջեւ քաղաքացիական գործերով: Իսկ մուսուլմանների հետ կապված քրեական գործերը, պիտի լսվեին թուրքական դատարաններում:

Միլեթ համակարգի շնորհիվ պատրիարքի հզորությունը անցյալի անկախ եկեղեցիների համեմատությամբ զգալիորեն մեծացավ, մի բան, որ չէր համապատասխանում եկեղեցական կանոնական իրավունքին: 1517-ից Ալեքսանդրիայի, Անտիոքի եւ Երուսաղեմի ուղղափառ պատրիարքությունները նույնպես ենթարկվեցին Կոստանդնուպոլսին: Եկեղեցին ծառայում էր պետությանը որպես «ռայա» (արաբ. ռայա=անասուն), որպես բնակչության քրիստոնյա հատվածի՝ Եժան ու լավ կազմակերպված վարչական գործիք: Զրիստոնյանե -

13 Rahn (2002), 103-105.

14 Ernst Werner: *Die Geburt einer Großmacht. Die Osmanen*, Weimar 1985, 334f.

որը սկզբունքորեն կարող էին իրենց եկեղեցիները պահել, բայց նրանց՝ խիստ պատժի սպառնալիքով, արգելվում էր նորը կառուցել¹⁵: Գյուղի ու գավառի պետերը պարտավոր էին հավաքել հարկերն ու հանձնել պետությանը: Յոգեւորականները հարկերից ազատված էին. միայն նրանք կարող էին մորուք պահել: Քրիստոնյաները զենք կրելու իրավունք չունեին եւ պետք է ճանաչվեին իրենց հագուստով: Տղաների հավաքագրումը՝ քրիստոնյա երեխաների պարտադիր զինվորական ծառայությունը ենիչերիների մոտ, պահպանվեց: Կոստանդնուպոլսում, որը հետագայում Ստամբուլ անունը ստացավ, քրիստոնյաները իրավունք ունեին բնակվելու չորս շրջաններում եւ միայն այնտեղ կարող էին պահել իրենց եկեղեցիները: Ավելի ուշ նրանցից աստիճանաբար իսլամացվեցին բոլոր եկեղեցիները, մինչեւ որ 18-րդ դարում մնացել էր միայն երեք քրիստոնյա եկեղեցի: Սկզբում պատրիարքի նստավայրը առաքելական եկեղեցին էր, իսկ 1454-ից՝ Պամակառիստոս (Pammakaristos) վանքը: Տրապիզոնից եւ հարեւան քաղաքներից 5000 քրիստոնյա ընտանիք բռնագաղթեցվեց Ստամբուլ:

«Դիմիների» դրոշմները Օսմանյան կայսրությունում համապատասխանում էր մոտավորապես քրիստոնյա երկրների ճորտերի կարգավիճակին: Նրանք պարտավոր էին գլխահարկ («harac») վճարել: Յովվական մի նամակում պատրիարք Գենադիոսը 1454-ին գովաբանում էր սուլթանին եւ հանդիմանում հավատացյալներին, որոնց մեղքերի պատճառով էր միայն, որ նրանց պատուհասել այդ ահավոր դժբախտությունը: Այն ժամանակ ուղղափառ պատրիարքի թիկունքին կանգնած էին Յերակլեիայի (Էրեզլի), Անկյուրայի (Անկարա), Եփեսոսի, Կեսարիայի (Կայսերի), Նիկոմեդիայի (Իզմիր), Պիսիդիայի եւ Կուզկոսի արքեպիսկոպոսները: 1475-ին հանձնես Ռաֆայելի առաջին անգամ ուղղափառ եկեղեցու պատրիարք դարձավ մի սերբ: Կոստանդնուպոլսում եւ Գալաթայում 1478 թ. տների հաշվառումը ցույց տվեց, որ Կոստանդնուպոլսում կար 8.951 մուսուլմանական, 3.151 հունական, 1.647 հրեական եւ 273 հայկական տուն. Գալաթայում՝ 535 մուսուլմանական, 592 հունական, 332 ճենովական եւ 62 հայկական տուն¹⁶:

1786 թ. հայ պատմագիր Միքայել Չամչյանը հաղորդում է, որ 1461 թ. Մեհմեդ Երկրորդը միլեթ էր կազմավորել նաեւ հայերի համար: Ըստ պատմիչի, սուլթանը բրուսացի հայ եպիսկոպոս Յովակիմին (Յոախիմ), որը նրան հաղթանակ էր կանխագուշակել, հանձնել էր կայսրության հայկական բոլոր եկեղեցիների վերահսկողությունը: Ժամանակի աղբյուրներով դա չի հաստատվում: Թեեւ 1438 թ. ճենովական Բերայում հիշատակվում է մի ոմն հայ եպիսկոպոս Յոախիմ, որը կապ է ունեցել Ֆլորենցիայի եկեղեցական ժողովի

15 A. Diomedes Kyriakos: *Geschichte der Orientalischen Kirchen von 1453-1898*, Hildesheim 1975, 6.

16 Rahn (2003), 109f.

հետ, սակայն հավաստի չէ, թե՛ նա նույն՝ 1469-ին հիշատակված Յովակիմն է, քանի որ 1459-ին Կոստանդնուպոլսում Մարտիրոս անունով մի եպիսկոպոս է հիշատակվում, որը 1474-ին նշվում է որպես արքեպիսկոպոս, իսկ 1478-ին՝ եպիսկոպոս Նիկողոս¹⁷: Պատրիարքի տիտղոսը, եթե այն իսկապես տրվել է Յովակիմին, այստեղ նշանակում էր ավելի շուտ քաղաքական պաշտոն քան թե՛ հոգեւոր տիտղոս: Քանի որ Էջմիածնի, Վանա լճում Աղթամարի եւ Սիսի կաթողիկոսների, ինչպես նաեւ Երուսաղեմի պատրիարքի նստավայրերը այն ժամանակ գտնվում էին օսմանյան տիրապետությանից դուրս, Մեհմեդ Երկ - րորդը հավանաբար փորձում էր իր տիրապետության տակ գտնվող հայերին սիրաշահել: Դեռեւս 1480-ին Կոստանդնուպոլսում նախկին բյուզանդական Պերիբլետոս (Peribletos) վանքը Կոստանդնուպոլսի հայ արքեպիսկոպոսի նստավայրն էր: Յետագայում այն կոչվեց «Սուլե վանք» եւ մինչեւ օրս պատկանում է հայերին: «Պատրիարք» բառը վավերագրերում առաջին անգամ հիշատակվում է 1480 թ., երբ Մեհմեդ Երկրորդը Մատթեոս Սեբաստացի եւ Աբրահամ Տրապիզոնցի վարդապետներին «հանուն պատրիարքարանի» բերեց Կոստանդնուպոլիս, սակայն երկուսն էլ տիտղոսից հրաժարվեցին: Ձեռագրերից մեկի գրիչը այդ կապակցությամբ նշում է, որ նրանք հրաժարվել են, «որովհետեւ նախընտրել են մենակեցությունը, քան թե մարդկանցից պատիվ ստանալը»¹⁸: Այս արտահայտությունը կարելի է մեկնաբանել հետեւյալ կերպ. այս երկու աստվածաբանները կարեւորություն չեն տվել այդ վատահամբավ պաշտոնին, որը նրանց կվարկաբեկեր հավատակիցների մոտ:

Մինչեւ 20-րդ դարը Արեւելքի ազգային եկեղեցիների դժվարությունն այն էր, որ դրանք մշտապես ստիպված էին հարմարվել աշխարհիկ իշխանություններին: Այդ է պատճառը, որ պատրիարքներից շատերը մինչեւ 20-րդ դարը սեփական ժողորդի կողմից դիտվում էին որպես դավաճաններ: Կոստանդնուպոլսի «հայ պատրիարքները» հավանաբար չէին համարձակվում այդ տիտղոսով իրենց հավատակիցների աչքին երեւալ: Ինչպես երեւում է, նրանք այն չեն կրել նաեւ դրսում, քանի որ Էջմիածնի, Աղթամարի եւ Սիսի կաթողիկոսների կողմից հայտնի չէ որեւէ առարկություն Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի կարգի բարձրացման դեմ: Ինչպես հիշատակվում է, առաջինը պատրիարք Աստվածատուրն էր, որ 1543-ին կրել է այդ տիտղոսը¹⁹:

Յայ պատրիարքն ավելի ուշ ստացավ վերահսկողության իրավունք նաեւ ասորիների, քաղղեացիների, ղպտիների եւ վրացիների վրա, որոնք չունեին իրենց սեփական միլիթը²⁰: Յետագայում հայոց պատրիարքարանը տեղավորվեց Կոստանդնուպոլսում Կում-Կապուի (Kum-Kapu = Ավագե դում) մոտ

17 Նույն տեղում, 37-61.

18 Նույն տեղում, 61-66.

19 Նույն տեղում, 69-71.

20 Aziz S. Atiya: *A History of Eastern Christianity*, London 1968, 336.

գտնվող շենքերից մեկում: Սուլթանի նպատակն էր հակակշիռ ստեղծել հունական պատրիարքարանի հանդեպ եւ թուլացնել Էջմիածնի կաթողիկոսությունը Հայաստանում, որը գտնվում էր պարսիկների գրաված տարածքում: Հայոց պատրիարքն ստացավ նաեւ հայերի նկատմամբ քաղաքացիական օրենքի ձեռնհասություններ, ինչպես օրինակ, ամուսնության, քրեական եւ ժառանգական հարցերում: Երբ Պաղեստինն էլ թրջացավ, պատրիարքի ենթակայությանն անցավ նաեւ Երուսաղեմի հայ պատրիարքը: Այսպիսով, հայկական միլիթը («Էրմենի միլիթ») 17-րդ դարի վերջին մի տեսակ «հայկական պետություն էր պետության ներսում, սակայն առանց բանակի»²¹: Բայց եկեղեցական հարցերում պատրիարքը տեսականորեն ենթակա էր Էջմիածնին: Շատ հայեր տեղափոխվեցին Կոստանդնուպոլիս, որտեղ նրանք ծառայում էին սուլթանին որպես մեծ վեզիրներ, գեներալներ ու սեղանավորներ: Հրեաների համար եւս Մեհմեդ Երկրորդը ստեղծեց նման կառավարչություն, որի մեջ ըաբի Մովսես Զապսալին նշանակվեց հրեաների ուսուցիչ եւ դատավոր: Հրեաները՝ Իսպանիայում կրած հալածանքներից հետո, օսմանյան տիրապետությունը դիտում էին որպես փրկություն:

Հուլյն ուղղափառ պատրիարքի նստավայրը 1586-ին Պամակարիստոս (Pammakaristos) վանքից տեղափոխվեց Զսիլոպորտայի (Xyloporta) Դեմետրիոս եկեղեցին, իսկ 1603-ին՝ Ֆանարի (Phanar) Գեորգի եկեղեցին, որտեղ եւ մինչ օրս գտնվում է պաշտոնատեղին: Ուղղափառ պատրիարք Մաքսիմոս Երրորդը (Maximus III.) 1480 թ. մի վավերագրում դրվատեց Մեհմեդ Երկրորդի հանդուրժողականությունը՝ այն համեմատելով Կրետե կղզու վրա վեներականականների վարած կրոնական քաղաքականության հետ²²: Այսպիսով, թուրքական տիրապետության սկզբնական շրջանում քրիստոնյաների վիճակը դեռեւս որոշ չափով տանելի էր: Պաղեստինի գրավման ժամանակ Սելիմ Առաջինը 1517-ին երաշխավորեց հայերի ունեցվածքի ու հաստատությունների ապահովությունը: Իսկ Արաբիայի նվաճումից հետո, իսլամի սրբավայրերի հետ միասին, թուրքական սուլթանն ընդունեց նաեւ «խալիֆ» տիտղոսը:

Սակայն ժամանակի ընթացքում Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների վիճակը գնալով վատթարացավ: Պատրիարք Յոսիփ Առաջինը 1502-ին պաշտոնանկ արվեց՝ եկեղեցի կառուցելու համար: Շարունակ մեծացավ պատրիարքների պաշտոնական ճանաչման համար պահանջվող գումարների չափը. սնանկացած եկեղեցուն պարտավորեցին 1000 դուկատ (ոսկեդրամ) ավելի վճարել՝ ընդհանուր գումարը հասցնելով 3500 դուկատի: Երբ 1475-ին Ռաֆայելը չկարողացավ հայթայթել այդ գումարը, նա պատժի ենթարկվեց: Նրան ստիպեցին շղթան վզին մուրալ Կոստանդնուպոլսի փողոցներում: Նա

21 Friedrich Heyer (Hg.): *Die Kirche Armeniens*, (=Die Kirchen der Welt 18), Stuttgart 1978, 166.

22 Werner (1985), 336.

մահացավ անվստահելի պաշտոնյաների բանտում²³: Իհարկե, քրիստոնյաները որպես թարգմանիչներ մեծ ազդեցություն էին ձեռք բերում կառավարչությունում: Թուրք-պարսկական պատերազմի ժամանակ (1548-1555) հայ կաթողիկոս Ստեփանոս Յինգերորդը եվրոպական պետություններից օգնություն խնդրեց: Նա դիմեց Պողոս Երրորդ պապին եւ նրա համար Տուրաբդինում ձեռագիր ընդօրինակել տվեց: 1554-ին թուրքերը գրավեցին Երեւանը ու այն հողին հավասարեցրին: 1578-ին Մուրադ Երրորդը գրավեց Արեւելյան Չայաստանը եւ մինչեւ Լեռնային Ղարաբաղ ավերեց բազմաթիվ քաղաքներ ու եկեղեցիներ, 60.000 հայ բռնագաղթեցնելով Արեւմտյան Անատոլիա: 1603 թ. Շահ Աբաս Առաջինը գրավեց Երեւան, Թավրիզ ու Էրզերում քաղաքները եւ հիմնովին ավերեց դրանք, իսկ Նահանջելիս բնակիչներին իր հետ տեղափոխեց Պարսկաստան: Չայ բռնագաղթյալների թիվը 300.000 էր²⁴: 1639 թ. թուրք-պարսկական հաշտության պայմանագրով Արեւելյան Չայաստանը անցավ Պարսկաստանին: Մինչեւ 1827 թ. իրադրության մեջ ոչինչ չփոխվեց: Ուղղափառ պատրիարքները բազմիցս անգութ վերաբերմունքի արժանացան. 1625-ից մինչեւ 1700 թթ. պաշտոնավարել էր 50 պատրիարք: Քրիստոնյաները իրավունք չունեին դատարանում որպես վկա ցուցմունք տալու մուսուլմանի դեմ. նրանք, բացառությամբ քահանայի, գլխահարկ էին վճարում: Նաեւ իրավունք չունեին ոչ միայն զինվորական, այլեւ հասարակական պաշտոններ զբաղեցնելու: Դարձը դեպի քրիստոնեություն արգելված էր մահապատժով: Քրիստոնեական եկեղեցիներին չէր թույլատրվում խաչ կրել, նրանց արգելված էր նաեւ զանգերը հնչեցնել:

1520 թ. սուլթան Սելիմ Առաջինը (Selim I.) հրամայեց Մեծ վեզիրին՝ քրիստոնեական բոլոր եկեղեցիները վերածել մզկիթների, արգելել քրիստոնեական ժամերգությունը եւ մահապատժի ենթարկել բոլոր այն քրիստոնյաներին, որոնք իսլամ ընդունելուց կհրաժարվեն²⁵: Պատրիարք Երեմիա Առաջինը (Jeremias I.) սուլթան Սուլեյման Առաջինի (Suleiman I.) (1520-1566) ուշադրություն նըհրավիրեց Մեհմեդ Երկրորդի խոստումների վրա եւ օրենսգետ Էբուսուուդ (Ebusuud) Էֆենդիի վկայությունից հետո ներկայացրեց երեք ծեր ենիչերիների, որոնք մասնակցել էին Կոստանդնուպոլիսի գրավմանը եւ կարող էին այդ հաստատել: Սուլթանը հրամանը վերացրեց, սակայն կարգադրեց Կոստանդնուպոլիսի բոլոր եկեղեցիները վերածել մզկիթների. քրիստոնյաներին թույլատրվեց նոր եկեղեցիներ կառուցել փայտից: Ակնհայտ է, որ հրամանը հետեւողական կերպով չիրագործվեց, քանի որ 1577-ին սուլթան Մուրադ Երրորդը (Murad III.) նորոգեց Սելիմի հրամանը: Անշուշտ այս անգամ

23 Nicolae Jorga: *Geschichte des Osmanischen Reiches*, Bd. III: bis 1640, ND Frankfurt 1990, 200.

24 Erich Renhart-Jasmine Dum-Tragut (Hg.): *Armenien*, Graz-Wien 1997, 39.

25 Kyrikos (1975), 9.

եւս հրամանի կատարումը վիժեցվեց՝ հսկայական կաշառքի շնորհիվ, որի գումարներն ստիպված եղան վճարել քրիստոնյաները: Սուլթան Մեհմեդ Երրորդի (Mehmed III.) (1595-1603) նմանատիպ մի միջոցառում եւս մեծ դժվարությամբ կասեցվեց Ֆրանսիայի դեսպանորդի միջամտությամբ:

Յրեաները՝ քրիստոնյաների համեմատությամբ, ավելի բարվոք վիճակում էին: 1492 թ. Իսպանիայից արտաքսվելուց հետո, նրանք Թուրքիայում հոծաբույությամբ ընդունվեցին եւ առեւտրի ասպարեզում մեծ ազդեցություն ձեռք բերեցին²⁶: Կտորեղենի առեւտուրը որոշ իմաստով հրեաների մենաշնորհն էր: Յրեաները գործում էին բոլոր մասնագիտություններով եւ կարելու դիրքեր գրավեցին սուլթանի պալատում, գլխավորապես որպես պալատական բժիշկներ: 16-րդ դարում Թուրքիան միակ երկիրն էր, որտեղ մարդ առանց վտանգվելու կարող էր հայտարարել, որ հրեա էր: Երբ 1556 թ. Յոնի պապը Անկոնայում (Ancona) սկսեց ձերբակալել մառաններին (Marran = բռնի քրիստոնեություն ընդունած հրեա), սուլթան Սուլեյմանը նրան թելադրեց ազատ թողնել թրքահպատակ մառաններին, սպառնալով, որ դիմադրության դեպքում բռնություն կգործադրեր Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյաների դեմ²⁷: Պաղեստինի թուրքական նվաճումից հետո (1517 թ.), այստեղ եւս ներգաղթեցին բազմաթիվ հրեաներ, որոնք մեծ մասամբ բնակություն հաստատեցին Գալիլեայում եւ Երուսաղեմում: Յրեաները՝ Օսմանյան կայսրության տեւողության ամբողջ ընթացքում, երբեք այնպիսի ճնշումների չեն ենթարկվել, ինչպես քրիստոնյաները:

Մեհմեդ Երկրորդին եւ նրա հաջորդներին հաջողվեց նաեւ նվաճել այսօրվա Թուրքիայի արեւելյան շրջանները՝ դրանով իսկ պետությանը միացնել սել՝ ջուկների եւ թուրքմենների տիրապետության տակ եղած հողերը: 15-րդ դարի կեսերին անատոլական շատ եմիրություններ օսմանների հսկողության տակ էին: Այսպես, 1466 թ. օսմանները նվաճեցին նաեւ Կոնիայի Կարամանների իշխանությունը: Այն ժամանակ աժմյան արեւելյան Թուրքիայի քրիստոնյաները դեռեւս բնակվում էին Կիլիկիայում՝ մամլուքների տիրապետության տակ, որոնց օսմանները վերջ տվեցին 1517-ին: Եդեսիան, Ամիդն ու Մարդինը 14-րդ դարի սկզբին դեռեւս պատկանում էին Պարսկաստանի մոնղոլական Իլխանների պետությանը, ավելի ուշ մի մասը՝ Վերին Միջագետքի Յամդանիդների պետությանը, եւ մասամբ՝ Պարսկաստանին: Սակայն 1520-ից ի վեր երկու մեծ տերություններ՝ Պարսկաստանն ու Օսմանյան կայսրությունը, դեռեւս միմիանց սահմանակից էին, եւ այդ սահմանը զանազան պատերազմների հետեւանքով տեղաշարժվում էր, որի հետեւանքով Յայաստանը մերթ ընկնում էր օսմանների, մերթ պարսիկների տիրապետության տակ:

26 Max Wurmbrand – Cecil Roth: *Das Volk der Juden, 4000 Jahre Kampf ums Überleben*, Wiesbaden 1989, 270-283.

27 Նույն տեղում, 275.

Շնորհիվ այն բանի, որ ֆրանսիացիները աշակցում էին թուրքական քաղաքականությանը, «Բարձր դուռ» կոչվող թուրքական կառավարությունը՝ Սուլեյման Փառապանծի գլխավորությամբ 1536-ին պայմանագիր («կապիտուլացիա») կնքեց, ըստ որի ֆրանսահպատակները Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի հյուպատոսի ենթակայության տակ անցան²⁸: Այս պայմանագիրը օրինակ հանդիսացավ այլ պայմանագրերի համար: 1740 թ. մի նոր պարտությունից հետո օսմանները իրենց կայսրության կաթոլիկների հովանավորության իրավունքը հանձնեցին Ֆրանսիային: Հովանավորության տակ անցան նաև ֆրանսիացի վաճառականները, ինչպես եւ նրանց ընկերակիցները: Այս կանոնակարգումը հնարավորություն էր տալիս, հարմար առիթներով հովանավորությունը տարածել նաև ոչ ֆրանսիացի քրիստոնյա ընտանիքների վրա: Սովորական դարձած դրամական ճնշումներով ուղեկցվող ընտրությունից հետո, պատրիարք Դիոնիսիոս Երկրորդի (Dionysius II.) օրոք (1537 եւ 1545-1555) թուրքերը հանեցին պատրիարքարանի խաչը եւ վերացրին սիրված ուխտավայր Դեմետրիոս եկեղեցին: Ուղղափառ եկեղեցիներից մնաց 7-8 եկեղեցի: Դրանցից էին Կոստանդնուպոլսի Սուրբ Նիկողայոսի, Սուրբ Գեորգի, Սուրբ Կոստանդինի եւ Գալաթայի՝ Պանագիայի եւ Խրիստփիզեի եկեղեցիները²⁹: Սինոպից եւ Տրապիզոնից բազմաթիվ հույների, նաև Կարամանից թրքախոս ուղղափառների Կոստանդնուպոլիս տեղափոխումից հետո դեռևս հունարեն էին խոսում գլխավորապես Տրապիզոնում, Բրուսայում, Նիկոմեդիայում, Չմյունիայում եւ Եփեսոսում, իսկ Ֆիլադելֆիայի ու Սվազի հույները միայն թուրքերեն էին խոսում: Հի կարելի անտեսել, որ միլեթ համակարգը տանում էր ներքին կարծրացման, քանի որ կրոնական խմբերը՝ իրենք-իրենց մեջ ամփոփված եւ առանձնացած, կտրված էին արտաքին աշխարհից:

Ռեֆորմացիայից հետո բողոքականներն ուղղափառներին առաջարկեցին դաշնակցել, որպեսզի պայքար մղեին պապի միսիոներական ձգտումների դեմ: Բարեփոխիչ Ֆիլիպ Մելանխտոնը (Philipp Melanchton) Վենետիկի հույն առաջնորդ Անտոնիոսի (Antonios) միջոցով կապեր հաստատեց ուղղափառների հետ: 1555-ին նա մտերմացավ Յակոբ Բազիլիկոսի (Jakob Basilikus) հետ, որը խոստացավ կապ ստեղծել պատրիարք Հովսեփ Երկրորդի հետ (1555-1565): Դեմետրիոս Միոս (Demetrios Mysos) անունով արեղաներից մեկը՝ նոր ուղղություններում կողմնորոշում ձեռք բերելու նպատակով, Վիթենբերգում ուսում ստացավ: Նա կապ հաստատեց Մելանխտոնի հետ, որը տեղեկություններ էր հաղորդում ուղղափառների մասին: «Աուգսբուրգյան դավանանքը» թարգմանվեց հունարեն, եւ Դեմետրիոսը այն՝ Մելանխտոնի մի

28 Matuz (1990), 122f.

29 Jorga, Bd. III (1990), 202.

Նամակի հետ պատրիարքին հանձնեց: Նամակում Մելանխթոնը գոհունակություն է հայտնում, որ հունական եկեղեցին մինչ օրս մնացել է անխաթար: Այնուհետև նամակում ասվում է, որ պատրիարքը չպետք է հավատ ընծայեր կաթոլիկների մեղադրանքներին լութերականների դեմ: Լութերականների եւ ուղղափառների միասնական հիմքը Ս. Գիրքն էր՝ Հին եւ Նոր կտակարաններով, ինչպես նաեւ նրանց նախահայրերի ավանդությունը եւ եկեղեցու կողմից նգովված ընդհանուր թշնամիների առկայությունը: Սակայն պատրիարքը շուտով տեսավ, որ լութերական ուսմունքը շատ տեսակետներից շեղվում էր ուղղափառից: Զաղաքական նկատառումներով նա ձգտում էր պահպանել լութերականների հետ կապը, եւ պատասխան չտվեց արեղա Դեմետրիոսին, որն այլևս Գերմանիա չվերադարձավ, քանի որ Մելանխթոնն այդ ընթացքում արդեն մահացել էր³⁰:

1569 թ. բողոքական աստվածաբան Դավիթ Խիտրեուսը (David Chytraeus) Ռոստոկ քաղաքում հետաքրքրություն արթնացրեց հայերի նկատմամբ: Վաղ շրջանի տիեզերական աստվածաբաններից, որը գտավ ճանապարհը դեպի Կոստանդնուպոլիս, կայսերական դիվանագիտության ներկայացուցչության քարոզիչ Ստեֆան Գերլախն (Stefan Gerlach) էր: Նա՝ 1570 թ. կայսերական դեսպան Դավիթ ֆոն Ունգնադի (David von Ungnad) շքախմբի հետ ուղևորեց Բոսֆորի ափ եւ սերտ հարաբերություններ հաստատեց բողոքական համալսարանների հետ: Բարեկամացավ զխալոր Նոտար Թեոդորոս Լիգոմալասի (Theodoros Lygomalas) հետ, որը նրան ներկայացրեց պատրիարք Երեմիա Երկրորդին (1572-1579, 1580-1584 եւ 1587-1595): 1574 թ. Թյուրինգենի աստվածաբաններ Յակոբ Անդրեան (Jakob Andreae) եւ Մարթին Կրուսիուսը (Martin Crusius), «Turcograecia libri octo»-ի (Basel 1584) աշխատության հեղինակը, Գերլախի թելադրանքով դիմեցին Երեմիա Երկրորդին (Jeremias II.), որն իր բազմաթիվ նախորդների ու հետնորդների նման բազմիցս պաշտոնակն էր արվել եւ բողոքական աստվածաբանության անհաշտ ընդդիմախոսն էր: Հրապարակված է նրա թղթակցությունը Վյուրթենբերգի կենտրոնական եկեղեցու հետ³¹: Պատրիարքն իր նախորդների նման որդեգրեց դանդաղ-ընթաց գործելակերպ եւ իր պատասխանում քննադատեց filioque-ը, այսինքն «եւ Որդւոյ» հատվածը Սուրբ Երրորդության գաղափարի մեջ, («Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ»), որն արեւմտյան քրիստոնյաները ավելացրել էին հավատամքի մեջ: Բացի դրանից նա հարեց հաղորդության խորհրդի յոթ թվին, բարեգործությունների կարեւորությանը, ինչպես նաեւ Սուրբ պատարագին, խոստովանությանը եւ սրբապաշտությանը: Երբ գրությունը

30 Grulich (1998), 97-99.

31 Dorothea Wendebourg (Hg.): *Reformation und Orthodoxie: Der ökumenische Briefwechsel zwischen der Leitung der württembergischen Landeskirche und Patriarch Jeremias II. in den Jahren 1573-1581*, Göttingen 1986.

1576 թ. Գերմանիա հասավ, 1577-ին աստվածաբանները նամակով պատասխանեցին: Պատրիարքը ցանկանում էր խուսափել դիրքորոշումն արտահայտելուց, սակայն Գերլախը պատասխան պահանջեց: Դրա մեջ պատրիարքը շարունակում էր մերժել լութերական ուսմունքը՝ կամքի ազատության իրավասության մասին, շեշտում էր սրբերի ու նրանց նշխարիների պաշտամունքը եւ հաղորդության խորհրդի յոթ թիվը: Գերմանացի աստվածաբանների պատասխանն այն էր, որ տարակարծություններն ավելի շուտ վերաբերում էին միայն եզրույթներին, ծեսերին եւ սովորույթներին: Երեմիաս Երկրորդը 1581թ. պատասխանեց, այնուհետեւ, սակայն, պահանջեց վերջ տալ երկխոսություններին: Երբ հիսուսականներից մեկը 1576-ին ձեռք բերեց եւ հրատարակեց պատրիարքի նամակի մի պատճենը, բողոքականները 1584-ին Վիթենբերգում հրատարակեցին ամբողջ թղթակցությունը: Հինգ տարվա ժամանակահատված ընդգրկող իր օրագրում Ստեֆան Գերլախը հետաքրքիր բնութագրումներ է տալիս ուղղափառ եկեղեցու վիճակի մասին: Նրա զրույցները արեւելյան եկեղեցիների առաջնորդների հետ իսկապես պատկերավոր են, կարծիքը սակայն ավելի շուտ՝ բացասական. «Մի խոսքով, նրանք գրեթե ամեն տեսակետից պապական են: ... Թեեւ խոստովանում են, որ մարդը միայն հավատի շնորհիվ է հասնում արդարության, սակայն միամտության եւ անգիտության պատճառով հիմնվում են նաեւ բարի գործերի վրա»³²: Սալոմոն Շվայգերը (Schweiger)՝ կայսերական դեսպանորդ Յոախիմ ֆոն Չինցենդորֆի (Jochim von Sinzendorf) պալատական քարոզիչը, գրել է «Ուղևորություն դեպի Կոստանդնուպոլիս» աշխատությունը, որը 1665-ին տպագրվել է Նյուրենբերգում: Այնտեղ նա մեջ է բերում իր զրույցները մի հայ վանականի հետ՝ կայսրության մայրաքաղաքի ուղղափառ եւ հայոց պատրիարքարանների հայացքների եւ կրոնական հարաբերությունների մասին³³:

Իր պաշտոնավարման ընթացքում Երեմիա Երկրորդին հաջողվեց բարձրացնել իր եկեղեցու կրոնական եւ մշակութային մակարդակը: Նա պայքարեց սիմոնիականության (հոգեւոր պաշտոնների ու իրերի առուծախ) դեմ, հոգաց այն մասին, որ հոգեւորականներն ունենան այցելություններ եւ լավագույն կրթություն, կատարեց որոշ բարեփոխումներ վանականների համար: Բողոքականների հետ իր բանավեճում նա հենվեց Գենադիոսի 1454 թ. դավանանքի վրա: Նա մերժեց Գրիգոր Տասներեքերորդ պապի ջանքերը՝ կապված օրացուցային բարեփոխումների հետ, սակայն ռուսաստանյան իր ճանապարհորդության ժամանակ (1588/89) հավանություն տվեց Մոսկվայում պատրիարքարանի հիմնելուն: Նույն ժամանակաշրջանում Ստեֆան Գերլախը՝ Թյուրինգենի համալսարանի եւ ուղղափառ պատրիարքի երկխոսության միջնոր-

32 Grulich (1998), 103.

33 Heyer (1978), 20.

դը, կապ հաստատեց նաեւ հայոց պատրիարք Յովհաննէս Առաջինի հետ. ավելի ուշ՝ 1585-ին, Կռուսիոսը իրատարկեց նրա 1576 թ. զեկույցը: Գերմանիայում արեւելագիտության սկզբնավորումը եւս կապված է 16-րդ դարի մարդասիրական ձգտումների հետ: Մովսէս ֆոն Մարդինը (Moses von Mardin) Յռոմում հումանիստ Յոհան Ալբրեխթ Վիդմանշթետերի (Johann Albrecht Widmanstetter) ուսուցիչն էր: Անդրեաս Մասիուսին (Andreas Masius) գրած նրա նամակները կազմում են Բեռլինի կայսերական գրադարանի ասորական նյութերի հիմնական պաշարը³⁴: Երբ Յռոմում չհաջողվեց ասորերենով գրված գիրք տպագրել, Վիդմանշթետերն ու Մովսէսը գնացին Վիեննա, որտեղ 1555 թ. իրատարակեցին «Liber Sacrosancti Evangelii de Ieso Christo Domino at Deo nostro» ասորերենով առաջին գիրքը՝ կայսր Ֆերդինանդ Առաջինի հովանավորությամբ:

Կիրիլ Լուկարիսը (Kyrill Lukaris), որը 1588-ից մինչեւ 1594 թ. ուսանել էր Պադուայում, եւ որպէս պատրիարք հինգ անգամ արձակվել էր պաշտոնից (1620-1623, 1623-1633, 1633-1634, 1634-1635 եւ 1637-1638), լրջորէն զբաղվել է բողոքականության հարցերով: Կոստանդնուպոլսում Յոլանդիայի դեսպանատան միջոցով նա կապի մեջ մտավ կալվինիզմի (լութերականության) հետ: 1616-ին նա գրեց Զենթերբերիի արքեպիսկոպոսին, որ նրա հավատակիցները թուրքերի տիրապետության տակ անասելի տառապանքի մեջ են³⁵: Կիրիլը բարենորոգեց պատրիարքարանի ակադեմիան, հույն աստվածաբաններ ուղարկեց Լոնդոն, Օքսֆորդ եւ Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսանելու եւ նախապատրաստելու հունական տպարանի հիմնադրումը Ստամբուլում: Վատիկանը մեծ ջանք թափեց՝ ուժեղացնելու Կիրիլի ուղղափառ ընդդիմադիրներին: 1609 թ. Ֆրանսիայի դեսպանորդին հաջողվեց, որ նա հիսուսականների համար ձեռք բերի Ստամբուլում մնալու թույլտվություն: Յայնրիխ Չորրորդ (Heinrich IV.) թագավորը պաշտպան կանգնեց հիսուսականներին՝ տեղեկանալով, որ հույն ժողովուրդը պատրաստվում էր դուրս գալու թուրք բռնակալների դէմ: 1615 թ. Ավստրիան կարողացավ Օսմանյան կայսրության հետ կնքված Վիեննայի հաշտության պայմանագրի 6-րդ հոդվածով կաթոլիկների համար եկեղեցիներ կառուցելու արտոնություն ստանալ: 1629-ին ժնեւում լույս տեսավ Կիրիլի «Confessio fidei» (հավատքի խոստովանություն) աշխատությունը, իսկ 1639-ին՝ դրա հունարեն թարգմանությունը: Այնտեղ նա իրաժարվեց ուղղափառ հիմնական դրոյթներից ի նպաստ կալվինիզմի (լութերականություն): Սակայն երբ նրան սուլթանի զինվորները սպանեցին, բողոքականները նրա սպանությունը փորձեցին բարդել հիսուսականների վրա: Ուղղափառների եւ Վիթենբերգի, ինչպէս նաեւ

34 Eduard Sachau: Kurzes Verzeichnis der Sachau'schen Sammlung syrischer Handschriften, Berlin 1885, VI.

35 Kyriakos(1975), 98.

ժնեւի, միջեւ երկխոսությունը դատապարտված էր ձախողման, որովհետեւ չափազանց մեծ էին դոգմատիկ տարբերությունները:

1622 թ. Բերա արվարձանում, Ոսկեղջյուրի մյուս կողմում, կար ինը կաթոլիկ եկեղեցի, բուն Կոստանդնուպոլսում՝ երկու եկեղեցի եւ չորս վանք (հիսուսական, ֆրանցիսկան եւ դոմինիկյան): 1623 թ. հիսուսականները Չմյուռնիայում եւս հիմնեցին քուլեջ³⁶: Հիսուսականների բարեկամ Աթանասիոս Պատելարիոսը (Athanasios Patellarios)՝ 1634-ին Կիրիլի հաջորդական անկումից հետո, դարձավ պատրիարք: Հիսուսականները Կիրիլի դեմ բողոք ներկայացրին սուլթանին, թե իբր նա Անգլիայում լույս տեսած մի աշխատության մեջ անարգել է իսլամը եւ ապստամբության կոչ արել հույներին: Վերջինս նույնպես տապալվեց, փախավ Անքոնա եւ պապից պաշտպանություն խնդրեց: Ավստրիայի եւ Ֆրանսիայի դրոմամբ պատրիարք դարձավ Կիրիլ Երկրորդ Կոնտարին (Kyryll II. Contari): Ի վերջո հիսուսականների լատինացմանը դիմադրող պատրիարքը, որը Ստամբուլում հունական առաջին տպարանի հիմնադիրն էր, 1636-ին Մեծ վեզիրի հրամանով խեղդամահ արվեց: Դա կատարվեց, երբ կայսերական դեսպանորդը նրան մեղադրեց՝ կոզակների կողմից Ազովի գրավմանը մասնակցելու եւ հույներին ապստամբության հրահրելու համար³⁷: Այստեղից ակնհայտ է դառնում, թե ինչպես Օսմանյան կայսրության մեջ դեռեւս այն ժամանակ եվրոպական պետություններն իրենց քաղաքականությունը վարում էին ի վնաս քրիստոնյաների:

Հույն ազնվականների («արխոնտներ») ազդեցությունը ուղղափառ պատրիարքարանի վրա ժամանակի ընթացքում ուժեղացավ: Միխայել Կանտակուզենոսը (Michael Kantakuzenos) յուրաքանչյուր մետրոպոլիտ նշանակելու համար պահանջում էր 500 դուկատ: Այդ իսկ պատճառով իրադրության հիմնական բարելավում տեղի չէր ունենում: Օսմանյան կառավարությունը շարունակեց իր քաղաքականությունը: Սուլթան Մուրադ Երկրորդը նորոգեց հրամանը, ըստ որի քրիստոնեական եկեղեցիները կարելի էր կառուցել միայն փայտից: 1600-ական թթ. թուրքերը դարձյալ մզկիթների վերածեցին ամենագեղեցիկ եկեղեցիները, որոնք կամարակապ էին եւ ունեին արճապատ տանիքներ: Ունենալով կապեր Ղրիմում, Գալիցիայում եւ Վենետիկում իրենց ցեղակիցների հետ, հայ վաճառականները ավելի լավ վիճակում էին, քան հակոբիկները կամ նեստորականները, որոնք Օսմանյան կայսրությունից դուրս աշխարհի հետ ոչ մի առնչություն չուներին: Սակայն այդպես չէր մարոնիտների վիճակը Լիբանանում, որոնք Արեւելքում միակ քրիստոնյաներն էին եւ որոնք միջնադարից ի վեր պապի ենթակայության տակ էին գտնվում: 1622 թ. Գրիգոր Տասնհինգերորդ պապը հիմնեց «Հավատքի տարածման

36 Ludwig von Pastor: Geschichte der Päpste, Bd. 13/1, 9. Aufl., Freiburg-Rom 1955, 108-110.

37 Նույն տեղում, 13/2, 751-760.

միաբանությունը» (Kongregation de Propaganda Fide), որը պիտի ստանձներ համաշխարհային միսիոներական գործունեություն:

Սուրադ Չորրորդի (1623-1640) օրոք Կոստանդնուպոլիսն ուներ 200.000 բնակիչ եւ 70 եկեղեցի: Մայրաքաղաքում աշխուժորեն գործում էին հիսուսականները: 1648 թ. Ինոկենտի Տասներորդ (Innozenz X.) պապը Ռավենայում հիմնեց մարոնիտների քոլեջ, որտեղ միսիոներական գործունեության համար նախապատրաստական աշխատանք պիտի կատարվեր: Ֆրանցիսկաններն ու հիսուսականները նույնպես փորձեր էին կատարում Օսմանյան կայսրությունում միսիոներությամբ զբաղվելու: Հայոց Փիլիպոս կաթողիկոս ը կաթողիկոսը 1655 թ. պապին հնազանդության երդում տվեց: Կովկասում գործում էին նաեւ կարմեյանները (Karmeliten), թեատինյանները (Theatiner) եւ կնզղակիրները (Kapuziner): Երբ ասորի ուղղափառ պատրիարքարանը 1662-ին թափուր էր, կաթողիկ եկեղեցուն հաջողվեց արքեպիսկոպոս Անդրեաս Ախիճյանին, որ համագործակցում էր Հռոմի հետ, սուլթանի միջոցով պատրիարք նշանակել³⁸: Հայոց կաթողիկոս Հակոբ Չորրորդը 1662 թ. 25 եպիսկոպոսների հետ ուղեւորվեց Հռոմ եւ ճանապարհին՝ դեռ Կոստանդնուպոլսում, լատին արքեպիսկոպոսի առաջ ճանաչեց կաթողիկ դավանանքը: Պապականությանը 1667/68 թթ. հաջողվեց նաեւ այսպես կոչված «նեստորականների» մի մասին իր կողմը գրավել: Ամիդի (Դիարբեքիր) մետրոպոլիտ Հովսեփը պապի հետ միավորվելու երդում տվեց եւ 1681-ին գնաց Հռոմ, որտեղ պապը Ամիդում մի երկրորդ «քաղդեական» պատրիարքարան հիմնեց, որը գոյատևեց մինչեւ 1821 թ.³⁹: Պապականությունը միացավ արեւելյան քաղաքականությանը. 1638-ին Ինոկենտի Տասնմեկերորդը կոչ արեց Պարսկաստանի շահին՝ հարձակվել Թուրքիայի վրա՝ դեպի Վիեննա առաջացող թուրքերի դիրքերը թուլացնելու նպատակով⁴⁰:

Ուղղափառ եկեղեցու վիճակը Օսմանյան կայսրությունում գնալով ավելի ողբալի դարձավ: Պատրիարքներին նշանակում էր Մեծ վեզիրը, իսկ թեկնածուները պարտավոր էին ներկայանալ լեցուն պարկերով: Տիմոթեոս Երկրորդը (Timotheos II.) (1612-1621) հարկադրված է եղել վճարել 8000 դուկատ⁴¹: Հռոդոսում պահվում էին պատրաստի բանտախցեր՝ պաշտոնից արձակված պարիարքների համար: Պատրիարքներից շատերը իրենց պաշտոնն ստանում էին միայն այն ժամանակ, երբ Մոլդավիայից կամ Վալախիայից որեւէ իշխան վճարել էր նրանց համար: Ազնվականների շնորհիվ էր, որ հուլյները 16-րդ դարում զերծ մնացին իսլամացվելուց: Բրիտանիայի դեսպանը 1662 թ. զեկուցեց արտաքին գործոց նախարարությանը, որ երկու տարի առաջ Կոստանդ-

³⁸ Ludwig von Pastor: *Geschichte der Päpste*, Bd. 14/1, 8. Aufl., Freiburg-Rom 1960, 146.

³⁹ Wilhelm Baum-Dietmar W. Winkler: *Die Apostolische Kirche des Ostens. Geschichte der sogenannten Nestorianer*, Klagenfurt 2000, 108f.

⁴⁰ *Նույն տեղում*, 14/2 (1960), 784.

⁴¹ Nicolae Jorga: *Geschichte des Osmanischen Reiches*, Bd.4: bis 1774, ND Frankfurt 1990, 22.

նուպոլսում եւ Բերայում ամբողջովին այրվել էին եկեղեցիները. որ հայերին, հույներին ու կաթողիկոսներին հաջողվել է ետ գնել իրենց հողամասերը ու նորոգել եկեղեցիները: Մեծ վեզիրը, սակայն, եկեղեցիները ավերել է տվել, իսկ պատասխանատուներին դատապարտել բանտարկության⁴²: Սիսի հայոց կաթողիկոսը 1663 թ. Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Տասնչորսերորդի դիմեց միջամտելու խնդրանքով: Դա օգնության մի աղաղակ էր, որն այդուհետեւ քանիցս պիտի ուղղվեր դեպի Եվրոպա:

Երբ Պետրոս Մեծը 1696-ին օսմաններից գրավեց ամրոց եւ առեւտրական կենտրոն Ազովը, իսկ 1700-ին այն պահելու իրավունք ստացավ, Ռուսաստանի ուշադրությունը աստիճանաբար շրջվեց դեպի Կովկաս, եւ Ռուսաստանը ընդգրկվեց տեղի իրադարձություններին: Եկատերիսա Երկրորդը ծրագրեց վերականգնել Բյուզանդական կայսրությունը որպես Ռուսաստանի վասալ պետություն: Ֆրանսիան պիտի ստանար Եգիպտոսն ու Սիրիան, իսկ Ռուսաստանը՝ Փոքր Ասիան եւ մինչեւ Յնդկաստան ընկած տարածքները⁴³: 18-րդ դարում Ֆանարիոթներ («Phanarioten») կոչվող հույն վաճառականները մեծ ազդեցություն էին ձեռք բերել օսմանյան քաղաքականության վրա, եւ ազգութայամբ հույն Ալեքսանդր Մավրոկորդատեսն (Alexander Maurokordates) էր, որը վարում էր քաղաքականությունը. նա էր նաեւ որոշողը, թե մեծ գումարների դիմաց՝ ով էր պատրիարք դառնալու: 18-րդ դարի սկիզբներից հույները սկսեցին հարմարվել օսմանյան համակարգին: Ամբողջական խմբեր, ինչպես Կարամանից Ստամբուլ եկած հույները, ընդունեցին նաեւ թուրքերենը: Նրանք շատ համակիր չէին 1711 թ. Ռուսաստանում Պետրոս Մեծի մշակած՝ Կոստանդնուպոլիսը թուրքերից ազատագրելու ծրագրին: Հատկապես հասարակ հոգեւորականությունը դիմադրում էր պապի միսիոներական նկրտումներին, որոնք Ֆրանսիայից ու Ավստրիայից հիսուսականների, միսիոնիստների ու կնզղակիրների (Kapuziner) օգնությամբ կիրառվում էին Օսմանյան կայսրության քրիստոնյաների նկատմամբ: Դա ներքրիստոնեական բնույթի բախում էր: 1730 թ. քրիստոնյաներին վերստին արգելեցին նոր եկեղեցիներ կառուցել: 1775 թ. Աստծո նորոգված տները ավերվեցին: Եկեղեցիների վրա հսկողություն սահմանվեց, եւ եթե մի նոր խփված մեխ կամ աղյուս էին գտնում, եկեղեցին քանդվում էր: Ըստ 1758 թ. Բրիտանիայի դեսպանի զեկուցման՝ քրիստոնյաների եւ հրեաների զգեստավորման հարցը խիստ հսկողության տակ էր: Եթե կանոնավոր հագուստով քրիստոնյա էր բռնվում, սպանվում էր⁴⁴: 1785-ին Բրիտանիայի դեսպանը հաղորդեց արտաքին գործոց նախարարությանը, որ ուղղափառ քրիստոնյաների այրված եկեղեցիների վերա-

42 Bat Ye'or (2002), 372.

43 Matuz (1990), 209.

44 Bat Ye'or (2002), 374.

կանգնված կառույցները վերստին քանդվել էին⁴⁵։ Միայն արեւմտյան մեծ տե-
րությունների ճնշմամբ ու պապի միջամտությամբ էր, որ հնարավոր էր լինում
վիճակը կարգավորել։

Յայերը նույնպես պահպանում էին իրենց ինքնությունը Օսմանյան կայս-
րությունում։ 1604 թ. Սպահանի մոտ Աբաս Առաջինի հիմնած հայկական Նոր
Ջուղա քաղաքում 1641 թ. տպագրվեց առաջին հայերեն գիրքը, մինչդեռ Էջմի-
ածնում՝ միայն 1771-ին։ Յայերի շրջանում հաճախ էր հաջողության հասնում
պապական միսիոներականությունն ու քարոզչությունը։ Մխիթար Սեբաստա-
ցին հիսուսականների ազդեցության տակ կաթոլիկություն ընդունեց եւ 1701
թ. հիմնեց Մխիթարյան միաբանությունը։ 1715 թ. Թուրքիայում կրած հալա -
ծանքներից հետո վանականները փախան Վենետիկ, որտեղ երկու տարի անց՝
ձեռք բերելով Սուրբ Ղազար կղզին, կառուցեցին իրենց վանքը՝ նշանանավոր
գրադարանով։ Մխիթարը 1749-ին հրատարակեց հայերեն բառարան։ Նա
իրենից հետո թողեց կրոնական մի հաստատություն, որը՝ շնորհիվ իր գրա-
կան, մշակութային, մանկավարժական ու գիտական գործունեության հայե-
րին բերեց հոգեւոր վերածնունդ՝ հոգալով նաեւ հայ ավանդույթների պահ-
պանման ու շարունակականության մասին։

1722-ին կառավարությունը վերահաստատեց հրամանը, որն արգելում էր
Ասիայի հույներին կաթոլիկությունն ընդունել⁴⁶։ Միաբան կաթողիկոս Միխա-
յել Կիլիկիացու մահից հետո, 1737-ին եպիսկոպոսները Կիլիկիայի կաթողիկոս
ընտրեցին Աբրահամ Արծիվյանին, որը 1740 թ. մեկնեց Ջոմ եւ ստացավ Բենե-
դիկտոս Տասնչորսերորդ պապի հաստատումը։ Մի քանի տարի անց Սիսի
«լուսավորչական» կաթողիկոսի հետ ունեցած լարվածության պատճառով
կաթողիկոս Արծիվյանը նստավայրը տեղափոխեց Լիբանան, Չմմառ (Bzom-
mar)՝ Բեյրութի մոտ, որն այն ժամանակ կիսաինքնավար դիրք ուներ։ Սակայն
պապերի վարած միավորման փորձերը չէին սահմանափակվում միայն
հույներով ու հայերով։ Ինոկենտի Տասնմեկերորդ պապը պատրիարքարան
հիմնեց «քաղղեացիների» համար, որոնք Ամիդում (Դիարբեքիր) գտնվող Ա -
րեւելքի «նեստորական» առաքելական եկեղեցուց Ջոմին միացած համա -
խոհներ էին⁴⁷։ Ըստ Դիարբեքիրի ավագերեց (ղեկան) Եշուի՝ 1749-ին գրանցած
կոլոֆոնի (հիշատակարան) քաղաքի հոգեւորականության մեջ կար 5
կարգերեց, 17 քահանա, 5 սարկավագապետ, 23 սարկավագ եւ 11 ուսուցիչ⁴⁸։

Քյուլչուկ-Քայնարջիի (Kütschük-Kainardji) հաշտության պայմանագրով
(1774) Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր ցարական պետությանը
տալ ուղղափառ քրիստոնյաներին պաշտպանելու իրավունք, իսկ ռուսներին՝

45. Նույն տեղում.

46 Jorga IV (1990), 393.

47 Ludwig von Pastor: Geschichte der Päpste, Bd. 15, 8. Aufl., Freiburg-Rom ND 1961, 270.

48 Hanna Aydin: *Die syrisch-orthodoxe Kirche von Antiochien*, Glane-Losser 1990, 97.

հյուպատոսություններ հիմնելու արտոնություն: Միաժամանակ ռուս դեսպա-
 նին տրվում էին միջամտության որոշ իրավունքներ ի նպաստ քրիստոնյա-
 ների⁴⁹: Պապականությունը հաճախ օգտագործում էր արեւելյան եկեղեցիների
 իշխանավորների փառասիրությունը, որոնք պատրիարքական ընտրություն-
 ների ժամանակ անտեսված էին լինում: Դրանով իսկ այն ճամփա էր հարթում
 միաբանությունների համար: Հակոբիկ պատրիարք Իգնատիոս Գեորգ
 Չորվերորդի (Ignatius Georg IV.) (†1781) մահից հետո Հալեպից Դիոնիսիոս
 Միխայել Գիարվե (Dionysius Michael Giarve) եպիսկոպոսը ուղեւորվեց Մար-
 դին եւ այնտեղ պատրիարք ընտրվեց՝ դավանափոխ չորս եպիսկոպոսների
 կողմից: Պիոս Վեցերորդը (Pius VI) նույնպես ճանաչեց նրան⁵⁰: Մարդինը
 դարձավ միաբան պատրիարքի նստավայր: 1782 թ. Չմյուռնիայում կար 3000
 կաթոլիկ, իսկ Ստամբուլում՝ 20.000, որտեղ կար նաեւ լատին տիտղոսակիր
 արքեպիսկոպոս: 1783 թ. Ռուսաստանը գրավեց Դրիմի խանությունը: 1795 թ.
 պարսիկները ավերեցին Թիֆլիսը՝ կոտորելով 50.000 բնակիչ: 1801 թ. Արեւե-
 ւյան Վրաստանի վերջին թագավորը իր երկիրը հանձնեց ռուսական ցարին:

Պարսիկների դեմ ռուսների տարած ջախջախիչ հաղթանակից հետո, 1828
 թ. ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքն անցավ Ռուսաստա-
 նին: Այդպիսով, հստակացան ազդեցության ոլորտները: Ռուսաստանը հովա-
 նավորում էր ուղղափառ քրիստոնյաներին, Ֆրանսիան՝ կաթոլիկներին: 1773
 թ. Թրիեստի Միսիթարյան վանքի վանականները, որոնք ունեին նաեւ տպա-
 րան, 1805-ին տեղափոխվեցին Վիեննա, որտեղ այսօր գտնվում է հայկական
 նշանավոր գրադարաններից մեկը: Հայ մշակույթը գոյատևեց գաղթավայ-
 րերի համայնքների շնորհիվ, Լեմբերգում, Դրիմում, Հնդկաստանում, Վենե-
 տիկում եւ Վիեննայում, որտեղ հայերը վայելում էին տվյալ պետությունների
 պաշտպանությունը: Այս եղանակով մեծ տերություններ Ռուսաստանը, Ֆրան-
 սիան եւ Ավստրիան սկսած 18-րդ դարի վերջից մինչեւ Օսմանյան կայսրու-
 թյան անկումը, կարողացան շարունակ ազդեցություն ունենալ երկրի ներքին
 իրավիճակի վրա: Հակոբիկների եկեղեցին, որն ի տարբերություն հույն-ուղղա-
 փառ, հայոց կամ մելքիսների եկեղեցիների, չունեւ նմանատիպ կապեր
 արտերկրի հետ, ամենաշատը տուժեց հոգեւոր հյուճախտից, մինչեւ որ 19-րդ
 դարում նրանք շփման մեջ մտան արեւմտյան արեւելագետների հետ: Թե
 որքան մեծ էր քրիստոնյաների թիվը, հայտնի է նաեւ հին ուղեգրություններից:

49 Jorga IV (1990, 511f. և Fernau (1967), 76

50 Ludwig von Pastor: *Geschichte der Päpste*, Bd 16/3, 8. Aufl., Freiburg-Rom 1955, 276f.

6. Քրիստոնյաները 17-րդ և 18-րդ դարերի ուղեգրություններում

1631 թ. ֆրանսիացի ուղեգիր Ժան Բապտիստ Թավերնիեն (Jean Baptiste Tavernier) գնաց Կոստանդնուպոլիս, որտեղ մնաց 11 ամիս, ապա Էրզրումի եւ Երեւանի վրայով մեկնեց Պարսկաստան: 1675 թ. լույս տեսավ նրա՝ Սերայլի շուրջ տիրող իրավիճակի նկարագրությունը: 1680-ին այդ աշխատությունը լուս տեսավ նաեւ գերմաներեն թարգմանությամբ: Թուրքերի՝ Եվրոպա կատարած առաջխաղացման կապակցությամբ անխուսափելիորեն մեծանում էր Օսմանյան կայսրության նկատմամբ հետաքրքրությունը: Սալոմոն Շվայգերը (Salomon Schweigger), որը 1577-ից մինչեւ 1581 թթ. եղել էր կայսերական հյուպատոս Յոախիմ ֆոն Չինցենդորֆի (Joachim von Sinzendorf) պալատական քարոզիչը, հեղինակն է «Ուղեգրություն դեպի Կոստանդնուպոլիս» աշխատության, որը 1665 թ. տպագրվել է Նյուրենբերգում: Դանիական ծառայություններում գտնվող գերմանացի Կարստեն Նիբուրը (Carsten Niebuhr) 1766-ին այցելել է Թուրքիա: Վերջինս Բրուսայի մասին վկայում է, որ 19.000 տներից 1200-ը բնակեցված է եղել հայերով, 700-ը՝ հույներով: Կոստանդնուպոլսում գոյություն ուներ 23 հունական եւ երեք հայկական եկեղեցի. Բերայում ապրում էր մեկ հոգեւորական, որին Յոզմի պապն էր կարգել արքեպիսկոպոս⁵¹: Քրիստոնյա բնակչության մասին ուրիշ ճշգրիտ թվեր չեն հիշատակվում: Հավանաբար որեւէ այլ տեղ նրան քրիստոնյաներ չեն հանդիպել, միայն Մարդինի մոտ, ինչպես նա գրում է, «շատ քրիստոնյաներ» են եղել⁵²:

Փոքր Ասիայի քրիստոնյա փոքրամասնության մասին համեմատաբար լավ պատկերացում է տալիս Անտոն Ֆրիդրիխ Բյուշինգի (Anton Friedrich Büsching) «Երկրի նոր նկարագրությունը» աշխատությունը (1769). Բյուշինգը նկարագրում է ուղղափառ, հայոց, «հակոբիկների»՝ Մարդինի պատրիարքա - րանով, եւ «նեստորական» եկեղեցիների կառուցվածքը: Սկզբում նա տեղեկություն է տալիս Անատոլիայի կուսակալության մասին: Նիկոմեդիայի արքեպիսկոպոսը նշվում է 12 արքեպիսկոպոսների մեջ որպես ամենաերեւելին եւ ըստ կարգի առաջինը՝ պատրիարքից հետո. Նիկիայինը 5-րդն էր, Բրուսայինը՝ 11-րդը, իսկ Կյուզկիկոսինը (Kyzikos)՝ 7-րդը, որի նստավայրը Կոստանդնուպոլսում էր: Պերգամոնում թվով քիչ քրիստոնյաներ կային եւ ունեին մեկ

51 Salomon Schweigger: *Zum Hofe des türkischen Sultans*, Leipzig 1985 և Carsten Niebuhr: *Entdeckungen im Orient 1761-1767 (1774)*, Stuttgart 1973, 258 u. 269f.

52 Նույն տեղում, 172.

եկեղեցի, Բրուսայում մեկ հայ արքեպիսկոպոս կար եւ երեք հունական եկեղեցի: Սարդեսում այլեւս եկեղեցի գոյություն չուներ: Չմյունիայում մեկ հույն մետրոպոլիտ եւ երկու եկեղեցի կար, ինչպես նաեւ՝ մեկ հայ արքեպիսկոպոս եւ մեկ եկեղեցի: Քուշադաշիում (Kushadashi) կար մեկ եկեղեցի, որի մոտ բնակվում էր Եփեսոսի արքեպիսկոպոսը: Քոլոսեում (Kolossae) քրիստոնյաները քիչ էին, եկեղեցի չունեին: Մագնեզիայում (Գուզելիխար) ապրում էր մեկ հայ եպիսկոպոս: Անկյուրիայի արքեպիսկոպոսը Գալաթայի առաջնորդն էր, դրանից բացի գոյություն ուներ նաեւ չորս հայ միաբան եւ երեք ոչ միաբան եկեղեցի՝ մեկ արքեպիսկոպոսով: Կարահիսարում կար մեկ հայ մետրոպոլիտ եւ երկու եկեղեցի: Պեսինուսում (Pessinus) կար մեկ հույն մետրոպոլիտ, ինչպես նաեւ Սինոպում: Կարամանի կուսակալությունում կար մեկ հույն մետրոպոլիտ, որ ապրում էր Կոնիայում. այնտեղ գտնվում էր հունական մի եկեղեցի եւ մի վանք, ինչպես նաեւ՝ հայկական մի եկեղեցի: Կեսարիայի շրջանում պատրիարքից հետո Կեսարիայի մետրոպոլիտն էր առաջին դեմքը. այնտեղ կար մեկ հունական եւ երեք հայկական եկեղեցի: Յուրգյուլայի (Ürgüp) մոտ գտնվող Գյորեմեի (Göreme) քարանձավային վանքերը չեն հիշատակվում: Տարսուսի մասին գրում է, որ հակոբիկներն այստեղ ունեցել են եպիսկոպոսներ, իսկ նեստորականները՝ արքեպիսկոպոսներ: Կիլիկիայում Սիսը հայ պատրիարքի նստավայրն էր: Գերմանիկեն (Մարաշ) հիշատակվում է որպես մի հակոբիկ եպիսկոպոսի նախկին նստավայր, իսկ Անարզաբան (Ainzerbeh)՝ որպես հակոբիկների եւ նեստորական եպիսկոպոսների նախկին նստավայր: Մելիտենեի (Մալաթիա) շրջակայքում հնում գոյություն է ունեցել հակոբիկ եպիսկոպոսների յոթ նստավայր (Arca, Claudia, Gargar, Guba, Kalisura, Lacabin եւ Semcha): Այնուհետեւ գալիս էր Սեբաստիայի նահանգը: Պոնտոսի Թոքատ (Tokat) քաղաքում 1632 թ. գոյություն է ունեցել 12 հայկական եկեղեցի (1923-ին՝ հայերի աքսորից հետո դեռեւս պահպանվել էր յոթ եկեղեցի՝ մեկ հայ արքեպիսկոպոսով): Այնտեղ եղել է նաեւ մեկ հունական եկեղեցի, իսկ Ամասիայում մեկ հույն մետրոպոլիտ: Մարմարա կղզու վրա, որը մեծ մասամբ քրիստոնյաներով էր բնակեցված, եղել է վեց վանք, որից երկուսը քանդված: Պապադոնիսիա (Papadonisia) կղզու վրա կանգուն էր երկու վանք, Դեյբելի (Heybeli) կղզում Գեորգի վանքն էր՝ Քաղկեդոնի (???????) մետրոպոլիտի նստավայրը: Ալոնիա (Alonia) կղզին ուներ մեկ մետրոպոլիտ: Տրապիզոնի նահանգում կար մեկ մետրոպոլիտ, Լույնը եւ Կերասոնտեում (Kerason- te): Բյուզինգը հիշատակում է մինչ օրս պահպանված Զովհաննեսի վանքը (Վազելոնի վանքը): Կարսում կար մեկ հայ եպիսկոպոս, Էրզրումում՝ մոտ 6000 հայ եւ երկու եկեղեցի՝ մեկ եպիսկոպոսով, որը ենթակա էր Երեւանի պատրիարքին, նաեւ՝ 400 հույն, մեկ եկեղեցիով եւ մեկ եպիսկոպոսով: Ամիդում (Դիարբեքիր) կար մեկ նեստորական պատրիարք եւ հակոբիկ մեկ եպիսկոպոս, Սաուրայում՝ հակոբիկ մեկ եպիսկոպոս: Սղերդում կար

նեստորական մեկ մետրոպոլիտ, Մարդինում՝ Դեյր ալ-Չաֆարան (Deir al-Zafaran) վանքը՝ հակոբիկ պատրիարքի նստավայրը: Մծբինում (այժմ՝ Նուսայբին) բնակվում էին նեստորականներ, հակոբիկներ եւ հայեր: Անցյալում այն եղել է հակոբիկ եւ նեստորական եպիսկոպոսների նստավայրը, ինչպես Դարա Զարանը (Dara Haran) եւ Սարուզը (Սերուջ) հակոբիկների համար: Անտիոքում (Անթաքիա) փոքրաթիվ հույն եւ հայ քրիստոնյաները իրար մեջ բաժանում էին երկու եկեղեցի: Այնթապի քրիստոնյաները Կոմագենում (Kommagene) թրքախոս հայեր էին: Եղեսիան (Ուրֆա, Ռուհա) հակոբիկների եպիսկոպոսի նստավայրն էր: Զալեպի նահանգին պատկանող, նախկինում հայոց պատրիարքների նստավայր Զոմկլայում (Ռումկալե)՝ Եփրատի ափին, որը հռոմեական կայսրության երբեմնի արեւելյան ծայրակետն էր, կար միայն մեկ եկեղեցի: Այսպիսով, այսօրվա Թուրքիայի փոքրասիական մասում պահպանվել էր 17 հույն ուղղափառ (Նիկոմեդիա, Նիկիա, Բրուսա, Կյուզլիկոս, Չմյունիա, Քուշասայ/Եփեսոս, Անկյուրա, Սինոպ, Պեսինուս, Կոնյա, Կեսարիա, Ամասիա, Յեյբելի, Ալոնիա, Տրապիզոն, Կերասոն եւ Էրզրում), ինը հայկական (Բրուսա, Չմյունիա, Մազնեզիա, Կարահիսար, Անկյուրա, Սիս, Թոքատ, Կարս եւ Էրզրում), չորս հակոբիկյան (Ամիդ, Սաուրա, Մարդին եւ Եղեսիա), ինչպես նաեւ երկու նեստորական (Ամիդ եւ Սղերդ)⁵³ եպիսկոպոսություն, ընդամենը՝ 32 առաջնորդարան: Այսպիսով, օսմանյան տիրապետության երեք դարից հետո, Արեւելքի եկեղեցիները տնօրինում էին՝ թեեւ խիստ կրճատված, սակայն այնուամենայնիվ առկա եկեղեցական ենթակառույցներ, ընդ որում ուղղափառների եւ հայերի պարագայում վիճակն անհամեմատ ավելի բարվոք էր, քան ասորի քրիստոնյաներինը, որոնք չունեին կրթական հաստատություններ եւ կապեր արտերկրի հետ, ինչպես միլեթ ունեցող ազգությունները եւ միաբան քրիստոնյաները, որոնց հովանավորում էր Զոմի պապը:

53 Anton Friedrich Büsching: *Neue Erdbeschreibung von Asia*, Schaffhausen 1769.

7. Քրիստոնյաների վիճակը Թանզիմատ դարաշրջանում՝ սկսած 1839 թվականից

Քուլչուկ ? այնարջիի հաշտության տարվանից (1774), երբ Ռուսաստանն իրավունք ստացավ հովանավելու Օսմանյան կայսրության ուղղափառ եկեղեցին, մինչեւ Աբդուլմեջիդ Առաջինի (Abdülmeçid I.) (1839-1861) 1839 թ. նոյեմբերի 3-ի հրովարտակը, համարվում է շրջադարձային ժամանակաշրջան: Ըստ այդ հրովարտակի խտրականության ենթարկված ոչ մուսուլմանները ճանաչվելու էին իրավահավասար օսմանյան քաղաքացիներ: Ֆրանսիական հեղափոխության նվաճումները (մարդու իրավունքներ, դավանանքի ազատություն եւ այլն) անհետեւանք չէին անցնում Օսմանյան կայսրության կողքով, եւ քրիստոնեաների համար աստիճանաբար ազատագրվելու հնարավորություններ էին ստեղծում: 1820-ից սկսած՝ գեներալ Ալեքսանդր Իպսիլանտիսի (Alexander Ipsilantis) գլխավորությամբ մղվող հույների ազատագրական պայքարը ծանր փորձության ենթարկեց հարաբերությունները: Պատրիարք Գրեգորիոս Յինգերորդը (Gregorios V.) (1797-1798, 1806-1808 եւ 1818-1821)՝ Կոստանդնուպոլսում հունական երկրորդ տպարանի հիմնադիրը, օսմանյան կառավարությունից հանձնարարություն ստացավ Իպսիլանտիսին նզովելու եւ հույներին հանդարտության կոչելու⁵⁴: 1821 թ. մարտի վերջին սուլթանը ջիհադի կոչ արեց ապստամբների դեմ Մուղափայում եւ Սորեայում (Պելոպոնես): Չնայած որ պատրիարքը նզովել էր ազգայնականներին, մուսուլմանները՝ մուլեռանդ դերվիշների առաջնորդությամբ, խմբերով շրջում էին Փոքր Ասիայում եւ Կոստանդնուպոլսում, տանջանքների ենթարկում, կախում եւ սպանում առաջնորդներին ու արքեպիսկոպոսներին, թալանում հույների եկեղեցիներն ու տները, այրում դրանք ու սպանում հույներին: Կոստանդնուպոլսում հույների կյանքն այլեսս ապահով չէր: Սպանվեց 12 մետրոպոլիտ, պատրիարք Գրեգորիսը պաշտոնանկ եղավ: Երբ նրա մոտ գտնվեցին Իպսիլանտիսի վարկաբեկիչ նամակները, նրան կախեցին Ֆանարի (Phanar) դարպասից եւ դիակը ծովը նետեցին: Երբ ռուսական մի նավատորմ Կոստանդնուպոլսին մոտեցավ, քաղաքի կաթոլիկ հայերին մեղադրեցին որպես «ֆրանկների» լրտեսներ: Ավելի քան 20.000 հավատացյալներ՝ իրենց քահանաների ու առաջնորդների հետ, ձմռան սառնամանիքին Փոքր Ասիայից դուրս քշվեցին: 1821 թ. Անատոլիայի արեւմտյան ծովագրին գտնվող Այվալիկ բնակավայրում բռնկված քրիստոնյաների

54 Nicolae Jorga: *Geschichte des Osmanischen Reiches*, Bd.5: bis 1912, ND Frankfurt 1990, 255f.

խոռվությունը «Philike Hetaireia» (ընկերների միաբանություն) հունական անկախության շարժման լույսի տակ, պետք է դիտվի որպես հունական հեղափոխության պատմության կարեւոր փուլերից մեկը⁵⁵:

1830 թ. Օսմանյան կայսրությունը հարկադրված էր ճանաչել Հունաստանի անկախությունը: Սակայն միայն 1850 թ. պատրիարքարանների ժողովում է, որ հաստատվեց հունական եկեղեցու ինքնուրույնությունը եւ նրա անկախությունը պատրիարքարանից: Պիոս Ութերորդ պապը (Pius VIII.), Ֆրանսիայի ու Ավստրիայի հետ միասին, հետամուտ եղավ այն բանին, որ 1829 թ. սեպտեմբերի 14-ին կնքված հաշտության պայմանագրում ավելացվի կաթոլիկ հայերի կրոնական ազատությունը եւ հակաքաղկեդոնական պատրիարքարանից նրանց անկախությունը երաշխավորող հոդված: Հայ միաբնակները սուլթանի մոտ ամբաստանեցին իրենց կաթոլիկ հայրենակիցներին՝ Ֆրանսիայի եւ պապի հետ համագործակցելու համար: Ի պատասխան դրան կաթոլիկ հայերին հարկադրեցին վերադառնալ միաբնակ պատրիարքի ենթակայության տակ: Ֆրանսիան ընդդիմացավ եւ հայ կաթոլիկների հալածանքներին վերջ տալու համար, 1834-ին ստիպեց սուլթանին ճանաչել հայկական կաթոլիկ միլլեթը: Դեռեւս 1830 թ. հուլիսի 6-ին Հռոմի պապը Կոստանդնուպոլսում հիմնել էր հայ միաբան պատրիարքի նստավայրը⁵⁶: Ավելի ուշ, 1850-ին բողոքական հայերը նույնպես ձեռք բերեցին իրենց անկախությունը:

Ռոմանտիզմի դարաշրջանում շատ մտավորականներ աղնրադարձան եվրոպական մշակույթի բուն արմատներին: Սա հանգեցնում էր ոչ միայն արեւելյան հին մշակույթների վերահայտնաբերման, այլեւ խթանում էր միսիոներական գործունեությունը, մասնավորապես բողոքականներինը, որոնք չէին ցանկանում ասպարեզը թողնել կաթոլիկներին: Միսիոներական «հետազոտական ուղեւորությունների» շնորհիվ ոչնչացումից փրկվեցին ասորական, հունական եւ հայկական ձեռագրեր, որոնք բերվեցին Եվրոպայի մեծ գրադարանները: 1820-ից սկսած անգլիացի երիցականներն (Presbyterianer) սկսեցին իրենց միսիոներական գործունեությունը Օսմանյան կայսրությունում: Անգլիայի եկեղեցում Եկեղեցական միսիոներական ընկերությունը (Church Missionary Society) զբաղվում էր Արեւելքի քրիստոնյաների հարցերով: 1821-ից պատվելի Հենրի Լիվսը (Revd. Henry Leevs) Բրիտանական աստվածաշնչյան ընկերության գործակալն էր Կոստանդնուպոլսում⁵⁷: Ընթերթերի (Canterbury) արքեպիսկոպոսը խրախուսում էր այդ աշխատանքը: 1830 թ. վերջերին գերմանա-ամերիկյան հոգեւորականների մի խումբ՝ պատվելի Շնայդերի (Schnei-

55 James J. Reid: *Crisis of the Ottoman Empire. Prelude to Collapse 1839-1878*, Stuttgart 2000, 45.

56 Fernau (1967), 77 u. Heyer (1978), 162.

57 J.F. Coakley: *The Church of England and the Church of the East. A History of the Archbishop of Canterbury's Assyrian Mission*, Oxford 1992, 18f.

der) գլխավորությամբ իր գործունեությունն սկսեց Չմյուռնիայում: Երբ հակոբիկների պատրիարքը 1838 թ. Կոստանդնուպոլսում էր, հայոց պատրիարքը նրան իր կարծիքը հայտնեց, ըստ որի՝ մի ժողովուրդ, որ դպրոց չունի, անպայման կկործանվի: Այդ ընթացքում կապեր հաստատվեցին նաեւ Օսմանյան կայսրության ու Պրուսիայի միջեւ: Հետագայում գլխավոր շտաբի պետ Յելմութ ֆոն Մոլթե (Helmuth von Moltke) 1835 թ. Թուրքիա ժամանեց որպես օսմանյան բանակի հրահանգիչ: Արեւելյան Անատոլիայի իրավիճակի մասին նա գրում է. «Հարուստ Արեւելքը, քաղաքակրթության երբեմնի օրրանը, իր իսկ կրոնի նեղ սահմաններում կաշկանդված՝ լճացել է բարբարոսության մեջ»⁵⁸:

Ամերիկացի միսիոներ բժիշկ դ-ր Ասահել Գրանտը (Asahel Grant)՝ ամբողջովին տարված «Իզրայելի կորած ցեղերի մասին» ռոմանտիկ գաղափարներով, 1835 թ. հասավ Ուրմիա, իսկ 1839 թ. հինգ շաբաթ անցկացրեց Շիմուն Աբրահամ Տասնյոթերորդ (Shimun Աբրահամ XVII.) կաթողիկոսի մոտ՝ երազելով վերականգնել միջնադարի նեստորականների «ոսկե ժամանակները»: Նա այցելեց նաեւ Նուրալահին (Nurallah), Հակարիի (Hakkari) ամիրին, որն այստեղ, որպես ինքնիշխան քուրդ, կառավարում էր քրիստոնյաներին եւ իր եղբորորդուն՝ Սուլեյման բեյին: 1840 թ. ամռանը Գրանտը կաթողիկոսի մոտ հանդիպեց Սուլեյման բեյին: Նա համոզված էր, որ գտել է Իզրայելի կորած ցեղերը եւ 1841-ին Նյու-Յորքում հրատարակեց «Ասորիները կամ կորած ցեղերը» գիրքը, որը ժամանակակիցների վրա մեծ տպավորություն թողեց⁵⁹:

1837 թ. անգլիացի երկրաբան Վիլիամ Էյնսվորթը (William Ainsworth) քաղաքացի քրիստոնյա Իսա Ռասանի (Isa Rassan) հետ ուղևորվեց Հակարիի (Hakkari) գավառը, որտեղ՝ Քոչանեսում (Kotchannes), գտնվում էր արեւելյան ասորիների կաթողիկոս Շիմուն Տասնյոթերորդի (Shimun XVII.) նստավայրը: Էյնսվորթը կաթողիկոսի հետ խոսեց հռոմի միսիոներական նկրտումների մասին եւ արտահայտեց իր մտավախությունները: Հակարիի գավառում չկա - յին թուրքական զորամասեր, չկային նաեւ հարկեր, հետեւապես ասորիները ապրում էին կիսահնքնավար միլիթում՝ կաթողիկոսի գլխավորությամբ: Իր երկիրը վերադառնալուց հետո, Էյնսվորթն առաջարկեց «Աշխարհագրագետների արքայական ընկերությանը» (Royal Geographical Society)՝ արշավախումբ ուղարկել քրիստոնյա ասորիներով բնակեցված այդ շրջանը: Ռասամը (Rassam) ուղևորվեց Անգլիա եւ Օքսֆորդում ծանոթացավ աստվածաբան Վիլիամ Փալմերի (William Palmer) եւ արքեպիսկոպոս Վիլիամ Հոլի ֆոն Զեյ-թերբերիի (William Howley von Canterbury) հետ, որոնք զբաղվում էին արեւելյան քրիստոնյաների հարցերով՝ ջանալով զերծ պահել նրանց պապա-

58 Մեջբերումը ըստ: Karin Lenkefeld: "Solange noch ein Weg ist ..." Die Kurden zwischen Verfolgung und Widerstand, Göttingen 1996, 30.

59 John Joseph: *The Modern Assyrians of the Middle East. Encounters with Western Christian Missions, Archaeologists & Colonial Powers*, Leiden-Boston-Köln 2000, 72-75.

կանության ազդեցությունից: Էյնսվորթը (Ainsworth) 1842 թ. լույս ընծայեց իր «Ուղեւորություններ եւ հետազոտություններ Փոքր Ասիայում, Միջագետքում, Քաղդեսայում եւ Հայաստանում» (Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldaea and Armenia) գիրքը: 1843 թ. անգլիկան (Anglican) աստվածաբան Գեորգ Փերսի Բուջերը (George Percy Budger) խնդրեց Անգլիայի դեսպանին՝ «Բարձր դաս» հետ աշխատել այն ուղղությամբ, որ կաթողիկոսը Հակարիում ճանաչվի որպես քաղաքական կառավարության ղեկավար: 1843 թ. Բադր խանի (Badr Khan) օրոք քրդերի կազմակերպած ջարդերի ժամանակ ֆրանսիացի Կինեի (Cuinet) գնահատմամբ սպանվել է մոտ 70.000 քրիստոնյա: Շնորհիվ անգլիացիների բարձրացրած աղմուկի եվրոպական հասարակայնության ուշադրությունը բեւեռվեց այդ թեմայի վրա: Սովորականի պես, կաթոլիկների ու բողոքականների միջեւ գոյություն ունեցող հակամարտությունը պայթեց Արեւելքի քրիստոնյաների գլխին:

1835 թ. Բուջերը ուղեւորվեց Բեյրութ եւ այնտեղ սկսեց իր գործունեությունը, որը 1852 թ. նա նկարագրեց իր «Նեստորականներն ու նրանց ծեսերը» (The Nestorians and their rituals) աշխատության մեջ: 1844 թ. նա այցելեց այսօրվա Թուրքիան: Դիարբեքիում Բուջերը հիշատակում է 1700 հայ ընտանիք, որոնք ունեին երկու եկեղեցի, 30 քահանա եւ մեկ եպիսկոպոս: Հակոբիկները ունեին 250 ընտանիք, իսկ միաբան ասորիները՝ 40⁶⁰: 1846-ին հայոց պատրիարք Մատթեոս Երկրորդը նզովեց բողոքական բոլոր հայերին⁶¹: Մարդիկ ունեցան 2780 ընտանիքից 1500-ը մուսուլմաններ էին, 600-ը՝ յակոբիկներ, 500-ը՝ միաբան հայեր, 120-ը՝ միաբան ասորիներ, իսկ 60-ը քաղդեացիներ: Հակոբիկները ունեին երկու եկեղեցի, միաբան հայերը՝ մեկ եկեղեցի, մեկ եպիսկոպոս եւ վեց քահանա, միաբան ասորիները՝ մեկ վանք, մեկ եպիսկոպոս եւ չորս քահանա: Միդիատում, որտեղ այսօր ասորի քրիստոնյաները փոքրամասնություն են կազմում, կար միայն 450 հակոբիկ ընտանիք: 1832-ին Բադր խանը (Badr Khan) արտաքսել էր Տուրաբդիկի քրիստոնյաներին: Բուջերը Եդեսիայում 12.000 մուսուլմանական ընտանիքի կողքին հիշատակում է 1800 հայ ընտանիք եւ 18 քահանա, Գարամուշ (Garamoosh) գյուղում 600 ընտանիք եւ վեց քահանա: Հակոբիկներից 180 ընտանիք ուներ մեկ եպիսկոպոս եւ երկու քահանա, ինչպես նաեւ միայն մեկ դպրոց՝ 40-50 աշակերտով: Եդեսիայում նա այցելել է հայկական Սուրբ Սարգիս եկեղեցում գտնվող Եփրեմ Ասորու գերեզմանը⁶²: Բուջերի պես մարդկանց միջոցով բրիտանական կառավարությունը իրագեկվել է 1843 թ. Օսմանյան կայսրությունում ասորի քրիստոնյաների կոտորածների մասին:

60 George Percy Budger: *The Nestorians and their Rituals*, vol. 1 (1852), ND London 1987, 41.

61 Reid (2000), 206.

62 Budger (1987) 49, 54 և 325.

Աստվածաբան Յորացիո Սաութգեյթը (Horatio Southgate) 1836 թ. ամերիկացի բողոքականների միսիոներական շարժման կողմից ուղարկվել է հակոբիկների մոտ, իսկ Ջոն Ջ. Ռոբերթսոնը (John J. Robertson)՝ Կոստանդնուպոլիս՝ հույների մոտ: Սաութգեյթը 1841 թ. Դեյր ալ-Չաֆարան (Deir al-Zafaran) վանքը կատարած այցելության ժամանակ տեղեկացավ, որ քրդերը վանքի վերջին գրավման ժամանակ հին օրենսգրքերն օգտագործել են որպես թիրախ իրենց հրացանների համար: Նա 1856-ին Նյու-Յորքում հրատարակում է իր ճանապարհորդության հաշվետվությունը «Պատմվածք Միջագետքի ասորի (հակոբիկ) եկեղեցի այցելության մասին. Թուրքիայի քրիստոնեության ներկա վիճակի մասին տեղեկագրություններով եւ խոհերով» (Narrative of a Visit to the Syrian (Jacobite) Church of Mesopotamia; with Statements and Reflections upon the Present State of Christianity in Turkey) վերնագրով: Հատկապես հակոբիկները, որոնք երբեւէ դուրս էին եկել իրենց տոհմական հայրենիքի սահմաններից, գրեթե ոչինչ չգիտեին լուսավորության, ժողովրդի կրթության եւ այլ նոր գաղափարների մասին:

Փոքր Ասիայում քրիստոնյաների իրավիճակի եական բարելավում սկսվեց, երբ սուլթան Աբդուլմեջիդ Առաջինը (Abdülmecit I.), Եգիպտոսի դեմ պատերազմում կրած պարտությունից հետո, 1839-ին իր Գյուլհանեի (Gülhane)՝ բարեփոխումներ խոստացող «Hatt-i Serif» (Ազնիվ հրահանգ) հռչակավոր հրամանագրում, հայտարարեց, որ ապագայում օսմանյան պետության քաղաքացիությունը ստանալու են նաեւ ոչ մուսուլմանները: Այն հանգամանքը, որ այժմ քրիստոնյաները եւ իրեաները ճանաչվելու էին որպես օսմանյան պետության իրավահավասար քաղաքացիներ, «միեւնույն ժամանակ եվրոպական պետություններին պիտի զրկեր՝ իրենց քրիստոնյա հավատակիցներին պաշտպանելու պատրվակի տակ խառնվելու Օսմանյան կայսրության ներքին գործերին»⁶³: Այստեղից էլ սկսվում է «Թանգիմատի» դարաշրջանը, «բուժիչ նորամուծությունների» ժամանակը: Այստեղ, անշուշտ, խոսք չէր կարող լինել պառլամենտարիզմի ողջությամբ արվելիք թեկուզ մեկ քայլի մասին, եւ նորամուծությունը որեւէ ժամանակ կարող էր հանվել: Օսմանյան կայսրությունն առաջվա նման բազմազգ պետություն էր. 19-20 միլիոն մուսուլմանների կողքին, որոնցից միայն 2 միլիոնն էր ապրում Եվրոպայում, բնակվում էին 2 միլիոն հույներ, 2,4 հայեր եւ 6 միլիոն սերբեր⁶⁴: Հոգեւոր առաջնորդներին նոր խնդիրներ էին առաջադրվում: Քրիստոնյաներին այժմ թույլտրվում էր բանակում ծառայել: Ի դեպ, սուլթանի հեղինակությունը շատ չէր մեծացել: Եգիպտոսում վեզիր Մուհամեդ Ալին հիմնել էր գրեթե անկախ մի իշխանություն, իսկ Միջագետքում քուրդ Էմիր Բադր խանը, որը փաստորեն անկախ

63 Matuz (1990), 226.

64 1851-ին Կոստանդնուպոլսում ապրում էր մոտավորապես 250 հայ:

եր, կոտորում էր արեւելյան ասորի քրիստոնյաներին, իրադարձություն, որը հետագայում ժողովրդական գրող Քառլ Մայը (Karl May) նկարագրում է «Վայրենի Քրոսատանով» վեպում: Այն մասին, որ որոշ բարեփոխումներ էին տեղի ունեցել հագուստեղենի վերաբերյալ, նկատում է նաեւ ֆրանսիացի գրող Ներվալը (Nerval) 1843-ին. «Դատելով գլխաշորերից... չի կարելի եզրակացնել, որ Թուրքիան ճիշտ առաջվա պես անհավասարության երկիր է: Նախկինում ամեն ինչից բացի կարելի էր ճանաչել յուրաքանչյուր բնակչի հավատքը նաեւ կոշիկներից: [...] Այսօր ամեն ինչ փոխվել է. կայսրության յուրաքանչյուր հպատակ իրավունք ունի հագնելու եվրոպական բարեձեւ կոստյում եւ դնելու կարմիր ֆես»⁶⁵:

1855 թ., Ղրիմի պատերազմի սկզբին ռուսները մուտք գործեցին Հայաստան: 1854 թ. մարտի 16-ին քրիստոնյաները առաջին անգամ Օսմանյան կայսրության մեջ դատարանում վկայություն տալու իրավունք ստացան⁶⁶: Այժմ նրանք արդեն կարող էին գորակոչվել պետության բանակ: 1856 թ. փետրվարին սուլթանը հրովարտակ (Hatt-i Hümayun) արձակեց, որտեղ շեշտվում էին քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները. «Նրանց տրվում է ոչ միայն անսահմանափակ կրոնական ազատություն, այլեւ քաղաքացիական բոլոր պաշտոնները զբաղեցնելու իրավունք»⁶⁷: Սուլթանին է պատկանում նաեւ այն որոշումը, որ դատարանները պարտավոր էին ընդունել քրիստոնյաների վկայությունը մուսուլմանների դեմ, սակայն միայն քրեական ատյաններում, ոչ թե քաղաքացիական հայցերում: Իսկ թե ինչպես էր այդ տեղի ունենում իրականության մեջ, տեղեկանում ենք անգլիացի մի հյուպատոսի 1858 թ. հաղորդումից. «Բռնությունների ենթարկված տեղացիները վախենում են դեպքի մասին հայտնել թուրքական իշխանություններին, քանի որ չնայած հրովարտակին, իմ տեղեկության համաձայն չի եղել մի դեպք, որ դատարանում կամ քաղաքացիական ատյանում (մեջլիսում) քրիստոնյայի ցուցմունքը մուսուլմանի դեմ ընդունված լիներ»⁶⁸: Սա մի պատկեր է, որն իր վավերականությունը չի կորցրել մինչեւ օրս. Թուրքիան՝ ելնելով Եվրոպայում իշխող հասարակական կարծիքի, բարեփոխումների որոշումներ է կայացնում, որոնք հետագայում իրականության մեջ երբեք չեն գործադրվում:

Անգլիացի գեներալ Ֆենվիկ Վիլիամսը (Fenwick Williams), որ 1855 թ. ժամանել էր Կարս՝ կազմակերպելու պաշտպանությունը ռուսների դեմ, օսմանյան վարչակարգը նկարագրում է որպես անտանելի բռնապետություն, որն աշխարհում հավասարը չունի⁶⁹: 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրի

65 Gerard de Nerval: *Reise in den Orient*, München o. J., 532.

66 Jorga V (1990), 478.

67 Matuz (1990), 230.

68 Bat Ye'or (2002), 381.

7-րդ հոդվածում ամրագրված էր սուլթանի մտադրությունը՝ Ղրիմի պատերազմի ավարտից հետո վերականգնել իր բոլոր հպատակների հավասարությունը առանց կրոնական կամ ցեղային խտրականության: Նման միջոցառումները մի կողմից դանդաղեցնում էին քրիստոնյա փոքրամասնության ուժացումը, մյուս կողմից, սակայն, թուրք ազգայնամուլները գործադրում էին ամեն տեսակի հնարքներ, որոնք վերջին հաշվով հանգեցնում էին փոքրամասնությունների անհետացման: 9-րդ հոդվածով եվրոպական տերություններին, որպես բոլոր քրիստոնյաների համախմբված պաշտպանական ուժ, տրված էր միջնորդելու այնպիսի իրավունք, որն արգելում էր որեւէ միջամտություն վարչական գործերին: Այդ հոդվածի շնորհիվ եվրոպական մեծ տերություններին հաջողվեց՝ Լիբանանում (1860) եւ Կրետե կղզում (1868) տեղի ունեցած բռնություններից հետո, հարկադրել բարեկարգումներ, որոնք քրիստոնյաներին ընձեռնում էին ընդարձակ ինքնավարություն: Լիբանանում քրիստոնյաների ու դրուզների միջեւ քաղաքացիական պատերազմից հետո, գերազանցապես քրիստոնյաներով բնակեցված շրջանը ստացավ սանջակի (=գավառ) կարգավիճակ՝ քրիստոնյա գավառապետով: 1858-ին Տրապիզոնում տեղի ունեցան խժոժություններ քրիստոնյաների դեմ, որը ստիպեց նրանց ռուսական սահմանի վրայով փախուստի դիմել: Ըստ Անգլիայի հյուպատոս Թեյլորի (Taylor) գեկույցի՝ Դիարբեքիում բռնարարքները հանգեցրին դրան, որ քրիստոնյա շատ ընտանիքներ օգնություն փնտրեցին կաթոլիկների մոտ կամ ֆրանսիական հյուպատոսարանում: Մոտ 1400 ընտանիք ցանկություն հայտնեց գաղթելու Ռուսահայաստան: 1869-ին հյուպատոս Թեյլորը հաղորդել է, որ երեք տարվա ընթացքում Երզրումի նահանգի քրիստոնեաբնակ 106 գյուղից մնացել էր միայն 76⁷⁰: 1870 թ. վանական Աբդուլլահ Սաֆուլլահ Սադադին (Abdullah Sattuf Sadadi)՝ հետագայում պատրիարք Իզնա-տիոս Աբդ Ալլահ Երկրորդը (Ignatius Abd Allah II), հեղինակեց մի փաստաՎթուղթ, որը հրատարակել է պատմաբան Գաբրիել Ռաբոն (Gabriel Rabo) Տուրաբոլիից: Ըստ այդ փաստաթղթի 1870-ին միայն Դիարբեքիի նահանգում կար ասորիներով բնակեցված 291 քաղաք ու գյուղ. տրվում է նաեւ ընտանիքների, եկեղեցիների ու քահանաների թիվը⁷¹: Ըստ այդմ, 135 տարվա ընթացքում ասորական գյուղերի 94 տոկոսը ամայացել է: Մորեխների պատճառած աղետի եւ երաշտի հետեւանքով արդեն 1860-ական թթ. մոտա - վորապես 5000 ասորիներ Տուրաբոլիից տեղափոխվել են Սիրիա: Գերմանա -

69 Akabi Nassibian: *Britain and the Armenian Question 1815-1923*, London-Sydney-New York (1985), 15.

70 Nassibian (1985), 15.

71 Gabriel Rabo: *Die Gründung der syrisch-orthodoxen Kirche in der Diaspora*. (Ասորի-ուղղափառ եկեղեցու հիմնադրումը սփյուռքում): Զեկույցում, որ կարգացվել է թուրքերենով 2005 թ. մայիսի 26-ին ասորիների գլխաժողովում՝ Ստամբուլի Բիլգի Համալսարանում (Զեռադիր), 10.

ցի արեւելագետներ Օյգեն Պրիմը (Eugen Prym) եւ Ալբերտ Սոկինը (Albert Socin) 1869-ին եւ 1870-ին այցելելով Տուրաբոնի եւ Դամասկոս, թողել են այդ մասին կարեւոր տեղեկություններ:

Աստիճանաբար ձեւավորվեց «Օսմանություն» ազգային շարժումը, իսկ աշխարհականության գաղափարը հասարակության մեջ առաջ բերեց որոշակի բեւեռացում, որն անհամատեղելի էր Ումայում (Սոմա = մուսուլմանների համայն հասարակություն) հիմնագրված համերաշխության կանոնների հետ: Բարենորոգումները, որոնք պիտի կասեցնեին կայսրության կազմալուծումը, կատաղի դիմադրության հանդիպեցին մուսուլմանների շրջանում: Բարենորոգումների իրականացման վերաբերյալ բրիտանական տեղեկությունները հիասթափեցնող պատկեր են տալիս կառավարման մեջ քրիստոնյաների մասնակցության մասին. «Քրիստոնյաներն իրավունք ունեն մասնակցելու տեղական խորհրդակցական ժողովներին, սակայն նրանք՝ համեմատած մուսուլմանների հետ, այնքան սակավաթիվ են եւ այն աստիճանի վախվորած, որ գործնականում ոչ մի ազդեցություն չունեն: Նրանք իրենց կնիքը կուրորեն դնում են «մազբատա»-ների (զեկուցումներ կամ որոշումներ) վրա, որ գրված են այնպիսի թուրքերենով, որ շատ քչերի համար են ընթեռնելի»⁷²: Տեսականն ու գործնականն այստեղ դեռ երկար ժամանակով անջատված էին մնում:

Միլեթը վերածվել էր աշխարհիկ համակարգի, բայց շարունակում էր գոյատևել: 1848 թ. առաջավոր հայերը Կոստանդնուպոլսում ցույց կազմակերպեցին մեծամեծների եւ սեղանավորների դեմ: Հայերը միշտ հետեւում էին, որ իրենց երեխաները դպրոցներում եւ վարժարաններում կանոնավոր կրթություն ստանան: Այսպիսով նրանք կրթական իրենց մակարդակով զգալիորեն գերազանցում էին թուրքերին: 1863 թ. մարտի 29-ի հրամանով հայերին, որոնց միլեթը բարձրացվել էր «Milleti Sadigha» (հավատարիմ ազգ)՝ կարգավիճակի, տրվեց պառլամենտի մի տեսակ, որն ուներ երկու պալատ՝ մեկը կրոնական, մյուսը՝ աշխարհիկ: Կոստանդնուպոլսի պատրիարքը սուլթանի մոտ համայնքի պաշտոնական ներկայացուցիչն էր: Պառլամենտը կազմված էր 140 պատգամավորներից, որոնցից 20-ը հոգեւոր դասից էին, 80-ը՝ սեղանավորների շրջանակից: Պատգամավորներն ընտրվում էին հարկատու տղամարդկանց խավից: Այս պառլամենտը օրինակ դարձավ թուրքական առաջին սահմանադրության համար: Այն ժամանակ պաշտոնական տվյալներով հայերի թիվը չորս միլիոն էր, որից երկուսուկես միլիոնը ապրում էր Թուրքիայում⁷³: 1863 թ. արեւելյան ասորի քրիստոնյաները, առաջին անգամ լինելով, դիմեցին Անգլիայի Վիկտորիա թագուհուն: 1868-ին 53 եպիսկոպոս ու քահանա բողոք ուղղեցին Քենթերբերիի արքեպիսկոպոսին, հիշեցնելով իրենց 700-ամյա գերության մասին, որի ընթացքում Արեւմուտքի քրիստոնյաներն

72 Bat Ye'or (2002), 389.

73 Yves Ternon: *Tabu Armenien. Geschichte eines Völkermords*. Frankfurt-Berlin 1977, 37.

իրենց մոռացել են⁷⁴: 1879-ին Էդուարդ Չախաուն (Eduard Sachau) Գերմանիայի կառավարության հանձնարարությամբ ուղեւորվեց Թուրքիա: Վերջինս գրում է քրիստոնյաների հանդեպ քրդերի վերաբերմունքի մասին. «Քրդերի առավելությունը քրիստոնյաների նկատմամբ զինվորական եւ ավագակային արիեստի առավել մեծ իմացությունն է: [...] Նման պայմաններում քրիստոնյաները անհուսալիորեն մատնվելու էին քրդերի դաժան մեծամասնության կամայականություններին, եւ նրանք հավանաբար վաղուց քարտեզի երեսից անհետացած կլինեին, եթե պատահաբար քրդերն իրենց ներսում համերաշխ լինեին: Քրդերը քրիստոնյաների արյունն այնպես հեղեցին, որ դրանով կարելի պիտի լիներ ջրաղացներ աշխատեցնել, եւ ոչ վերջին անգամ լինելով»⁷⁵: Հատկանշական է, որ Բադր խանը մինչեւ օրս քրդերի համար ազգային հերոս է:

Օսմանյան իրավական երկակի համակարգը հենվում էր հավասարության եւ անհավասարության վրա: Ձեւավորվեց «Երիտասարդ օսմանների» ընդդիմությունը, որը պատրաստ չէր հրաժարվելու մուսուլմանների առաջադասության դիրքերից: «19-րդ դարի ողջ ընթացքում տեղի են ունեցել մուսուլմանների հարձակումներ ու ապստամբություններ քրիստոնյաների դեմ»⁷⁶: Մինչեւ 1878 թ. Հայ ազգային ժողովը սահմանափակվել է միայն նշավակելով կենցաղային դժվարությունները, ճնշումներն ու քրդերի հարձակումները: Եպիսկոպոս եւ պատրիարք, հետագայում կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հրատարակել է նաեւ հայկական թերթեր, ինչպես օրինակ՝ «Արծվի Վասպուրականը»: Օտար երկրյա ճանապարհորդները՝ ելնելով հայերի ընկերային դիրքից, նրանց համեմատում էին հրեաների հետ:

Հենվելով ուսուցիչների, քահանաների ու գրողների վրա 1863-ից զարգացավ հայ ազգայնականությունը, որը հետագայում դարձավ «երիտթուրքական» ազգայնականության թշնամին: Հայ ընդդիմությունը առաջնորդվում էր Կոստանդնուպոլսի «Հայկ» անունը կրող օթյակի կողմից, անգլիական օթյակի մի ճյուղը, որի գրությունները բրիտանական պաշտպանական ուժի շնորհիվ ազատ շրջանառելու իրավունք ունեին: Ֆրանսիայի կողմից հովանավորվող «Սեր» օթյակը հոգ էր տանում հատկապես Կիլիկիայի հայերի մասին: Ռուսաստանում հրատարակվող «Հյուսիսսփայլ» թերթը կոչ էր անում պարսկահայերին նպաստել հնարավորին չափ անկախ Կիլիկիայի ստեղծմանը:

Բալկանների կամ Կովկասի այն տարածքներից, որոնք քրիստոնյա պետությունները գրավել էին թուրքերից, մուսուլման չէրքեզները, արխագները,

74 Wilhelm Baum: “Die sogenannten ‘Nestorianer’ im Zeitalter der Osmanen”, in: *Zwischen Eurphat und Tigris*, (=Wiener Offene Orientalistik 3), Wien 2004, 229-245.

75 Namo Aziz: *Kurdistan. Menschen, Geschichte, Kultur*, Nürnberg 1992, 139f.

76 Richard G. Hovannisian: *Armenian People from ancient to modern times, vol. 2: Foreign dominion to statehood: The fifteenth century to the twentieth century*, New York 2004, 207.

չեչեններն ու աջարները փախչում էին դեպի արեւելյան սահանգների հայկական բնակավայրերը, որի հետեւանքով փոփոխվեց տվյալ շրջանի բնակչության ցեղային կազմի պատկերը: Նոր սուլթանը՝ բռնակալ Աբդուլ Յամիդ Երկրորդը (1876-1909), հայերի դեմ էր հրահրում քոչվոր քրդերին: Տուրքադիւնում հայերն ու ասորիները պարտավոր էին աղաներին հարկ վճարել: Քրդերը, հատկապես ձմռանը, թալանում էին քրիստոնյա գյուղերը: Յարձակումները, թալանն ու սպանող մինչ օրս համարվում է «բնական վիճակ» Արեւելյան Անատոլիայի համար: Յերցոգովինայի (1875) քրիստոնյա գյուղացիների խռովությունից հետո, գարնանը՝ ապստամբություն բռնկվեց Բուլղարիայում, իսկ Սիրիան Թուրքիային պատերազմ հայտարարեց: Սուլթան Յամիդը՝ դեսպանների խորհրդակցությունից առաջ որոշում ընդունեց միահեծանության վերացման եւ պառլամենտական համակարգի ստեղծման մասին:

1876 թ. դեկտեմբերի 23-ին հայտարարված սահմանադրությամբ իսլամը հռչակվեց պետական կրոն, սակայն երաշխավորվեց նաեւ կրոնական ազատությունը: Դրան մեծապես նպաստել են ջանքերը հայ իրավաբան Գրիգոր Օտյանի (1834-1887), որի գրաված բարձր դիրքը նրան թույլ է տվել մասնակցելու է Յայ ազգային եւ օսմանյան սահմանադրությունների մշակմանը: Նոր օրենքով թրքահպատակ քրիստոնյաներն ու հրեաները եւս, որոնք տիրապետում էին թուրքերենին, կարող էին որպես իրավահավասար քաղաքացիներ զբաղեցնել հասարակական պաշտոններ⁷⁷: Նոր ընտրական օրենքով քրիստոնյա քաղաքացիները ոչ միայն դարձան լիիրավ, այլեւ եվրոպական սահանգներում կարողացան ունենալ պատգամավորների նշանակալից թիվ^{77a}: Երկու պալատներից ընտրվելու էր պառլամենտը, իսկ սենատը նշանակելու էր սուլթանը: Ուղիղ ընտրություն նախատեսված էր միայն մեծ քաղաքներում: Պառլամենտում պետք է ներկայացված լինեին կրոնական բոլոր համայնքները: Սահմանադրությունը, սակայն, չէր կարող իրավահավասարություն երաշխավորել, քանի որ սահմանադրության 11-րդ հոդվածը վավերացնում էր միլեթի կրոնական արտոնությունները եւ ամրագրում իսլամը որպես պետական կրոն⁷⁸:

Բուլղարիայի ապստամբություններից հետո մեծ տերությունները պահանջեցին, որ այնտեղ ստեղծվի երկու ինքնավար սահանգ՝ յուրաքանչյուրը ազատ ընտրված երկրամասային պառլամենտով, որը ղեկավարվելու էր

77 Tilman Nagel: *Staat und Glaubensgemeinschaft im Islam*, Bd. 2. Zürich 1981, 191.

77a Ferenc Majoros u. Bernd Rill: *Das Osmanische Reich 1300-1922*, Wiesbaden 2004, 342.

78 Taner Akcam: *Armenien und der Völkermord. Die Konstantinopeler Prozesse und die türkische Nationalbewegung*, Hamburg 1996, 21.

քրիստոնյա նահանգապետի կողմից: 1877 թ. մարտի 31-ի լոնդոնյան արձանագրությունը ստորագրեալ պետություններին միջամտության իրավունք էր վերապահում, եթե բարենորոգումները բավարար չափով իրականացվեին: Երբ Բարձր դուռը հրաժարվեց այն ստորագրել, 1877 թ. ապրիլին Ռուսաստանը Թուրքիային պատերազմ հայտարարեց: Երբ ռուսները հայազգի գեներալ Միքայել Տ. Լորիս-Մելիքովի գլխավորությամբ ներխուժեցին Թուրքիա, հայերը նրանց ընդունեցին ջերմությամբ, մի բան, որ հետագայում բորբոքեց մուսուլմանների վրեժխնդրությունը: Ավելի ուշ 40.000 հայ ընտանիք գաղթեց Ռուսաստան: Գրավված տարածքներում ռուսները ոստիկան էին նշանակում հայերին, որոնք թուրքերի հանդեպ ունեցած վրեժից դրդված, վերջիններին հետ վարվում էին ճիշտ այնպես, ինչպես առաջներում՝ թուրք ոստիկաններն իրենց հետ⁷⁹: Շուտով ընկավ Ադրիանուպոլիսը (Էդիրնե), եւ դաշնակիցները կանգնած էին Սան Ստեֆանոյում, Կոստանդնուպոլսի մատույցներում: Ռուսների հաջողության հարցում մեծ էր հայ սպաների դերը: 1877 թ. հոկտեմբերի 21-ին Չայ ազգային խորհուրդը ցարին հղած դիմումում պահանջում էր, որ Ռուսաստանը գրաված հողերը այլևս երբեք չվերադարձնե Թուրքիային: Ռուսական զորքը ոչ մի պայմանով չպետք է հեռանար երկրից, մինչեւ բարենորոգումներ չանցկացվեին, եւ հայերը պետական պաշտոններ գրավելու իրավունքը չստանային: Առաջին անգամ լինելով, հայերի «Մեծ խորհուրդը» հանդես էր գալիս թուրքական կառավարության դեմ⁸⁰: 1878 թ. հունվարի 19-ի զինադադարից հետո Ներսես պատրիարքը ռուսական գլխավոր հրամանատարությանը եւ Ալեքսանդր Երկրորդ ցարին մեկ անգամ եւս պարզաբանեց հայերի քննադատության հիմնական կետերը եւ օգնություն խնդրեց նրանցից: 1878 թ. մարտին Բարձր դուռը ստիպված եղավ Սան Ստեֆանոյի պայմանագրով համաձայնվել հաշտության մի որոշման հետ, որի հետեւանքով կորցնում էր գրեթե բոլոր եվրոպական տիրույթները: Ռուսական զորամասերը մինչեւ բարենորոգումների իրականացումը մնալու էին հայկական նահանգներում: Ռուսները 16-րդ հողվածով պահանջում էին հայկական նահանգներում ինքնավարություն, մի բան, որ թուրքերը մերժեցին: Չաշտության պայմանագրում հողվածը ամրագրում էր թուրքերի՝ պարզապես միայն բարենորոգումներ անցկացնելու պարտականությունը: Յողվածը բովանդակում էր նաեւ թուրքերի պարտականությունը՝ հայկական նահանգներում որոշ ինքնակառավարում սահմանելու: Մինչեւ բարենորոգումների ավարտը ռուսական զորքը պարտավոր էր տեղակայված մնալ Էրզրումում:

79 Jelle Verheij: “Die armenischen Massaker von 1894-1896”, in: Kieser Hans Lukas (Hg.): *Die Armenische Frage und die Schweiz* (1896-1923). *La question arménienne et la Suisse* (1896-1923), Zürich 1999, 69-129.

80 Artem Ohandjanian: *Armenien. Der verschwiegene Völkermord*, Wien-Köln-Graz 1989, 22.

վեց հայկական նահանգ Անատոլիայում, Կիլիկիայից մինչև Էրզրում, պետք է ազատագրվեր: Հայերը պահանջեցին, որ արեւելյան նահանգներում վերջապես նահանգապետը լինի հայ: Հայ դատավորները պետք է վճիռներ կայացնեին ըստ արեւմտյան օրենքների, այլ ոչ՝ ըստ շարիաթի, իսկ ոստիկանական ծառայության պետք է ընդունվեին գլխավորապես հայեր:

Երբ Մեծ Բրիտանիան, որը գաղտնի պաշտպանության դաշինք էր կնքել Թուրքիայի հետ, եւ Ավստրո-Յունգարիան դուրս եկան Ռուսաստանի դեմ, Գերմանիայի վարչապետ Օթթո ֆոն Բիսմարկն (Otto von Bismarck) էր, որ 1878 թ. հուլիսի 13-ին Բեռլինի վեհաժողովում միջնորդի դերում հանդես եկավ: Օսմանյան կայսրությունը ներկայացված էր մեկ հույնով՝ Ալեքսանդր Կարատոդորիով (Alexander Karatodori), որը բանակցում էր Դիսրաելիի (Disraeli), Սալիսբուրիի (Salisbury), Անդրասիի (Andrassy) եւ Բիսմարկի հետ⁸¹: Հայերը նույնպես ներկայացված էին այստեղ սեփական պատվիրակությամբ, որն իզուր պահանջում էր հայկական տարածքներում քրիստոնյա նահանգապետ եւ այլ գիշումներ ունենալ⁸²: Բիսմարկը կողմնակից էր այնպիսի մի խաղաղութան, որով Սերբիան, Մոնտենեգրոն եւ Ռումինիան, որոնք մինչ այդ պատկանում էին Օսմանյան կայսրությանը, անջատվեին եւ անկախանային: Բուլղարիան մտավ Սաքսոնիա-Կոբուրգ-Գոթայի՝ Ֆերդինանդ Առաջինի (Ferdinand I. von Sachsen-Coburg-Gotha) ենթակայության տակ, որպես հարկատու իշխանություն, Թեսալիան եւ Էպիրուսը անցան Յունաստանին, Կարսի մարզը՝ Ռուսաստանին, իսկ Բոսնիա-Յերցոգովինան հանձնվեց ավստրիական ինսամատարությանը: Համաձայնության եկան նաեւ, որ հայերն Արեւելյան Անատոլիայում ստանան ինքնակառավարում: 61-րդ հոդվածով Բարձր դուռը հավանություն էր տալիս հայկական նահանգներում բարեփոխումների անցկացմանը, խոստանալով պաշտպանել թուրքահայերին քրդերի ու չերքեզների վարագոյություններից⁸³: Այդպիսով, հայկական հարցին տեսակաւորեւ միջազգային բնույթ էր տրվում: Տիեզերական պատրիարքությունը եւս «Բեռլինյան պայմանագրով» ստանում էր որոշակի միջազգային երաշխիքներ: Այս կապակցությամբ Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Սալիսբուրին (Salisbury) ասել է, որ նա հավատ չի ընծայում ոչ էլ Թուրքիայի բարեկրթագումներին, ոչ էլ քրիստոնյաներին պաշտպանելու որեւէ ազդեցիկ միջոցի: Նրա գլխավոր նպատակն էր՝ ամեն գնով խանգարել Ռուսաստանին

81 Roderic H. Davison: "The Ottoman Empire at the Congress of Berlin", in: *Der Berliner Kongress. Die Politik der Großmächte und das Problem der Modernisierung in Südosteuropa in der 2. Hälfte des 19. Jahrhunderts*, Wiesbaden 1982, 205-223, hier 212f.

82 M.S. Anderson: *The Eastern Question 1774-1923. A Study in International Relations*, London 1978, 254.

83 Matuz (1990), 239.

գրավելու Յայաստանը⁸⁴: Որպես «վարձատրություն» իր աջակցության դիմաց Անգլիան ստացավ Կիպրոս կղզին: Երբ ռուսական զորքը գեներալ Լորիս-Մելիքովի գլխավորությամբ ետ քաշվեց Թուրքիայի արեւելյան սահանգներից, նրան հետեւեցին հազարավոր սարսափահար հայ գյուղացիներ: Պատրիարքը, սակայն, սուլթան Աբդուլ Յամիդին հավատարմության երդում տվեց եւ հավաստիացրեց, որ Յայկական հարցի լուծման բոլոր ջանքերը Թուրքիայի սահմանների ներսում հաջողությամբ պիտի պսակվեին⁸⁵: Թուրքիայում քրիստոնյաների հիմնախնդիրները Բեռլինի վեհաժողովից հետո եւս չլուծվեցին: «Թուրքիան շարունակեց չարաշահումները՝ երկրում իրեն հանձնված քրիստոնյա հպատակների նկատմամբ»⁸⁶:

Սուլթան Աբդուլ Յամիդը 1878-ի փետրվարին կրկին ցրեց նորաստեղծ պառլամենտը: Նա Գերմանիայի դեսպանին հայտարարեց, որ ինքը ոչ մի դեպքում տեղիք չէր տալու հայերի ճնշմանը: Անկախացած տարածքներից խուռն բազմությամբ երկիր ներխուժող մուսուլման ներգաղթողներին սուլթանը ուղարկում էր գլխավորապես հայկական սահանգները: Բեռլինի վեհաժողովին մասնակցած հայերը վերադարձան ձեռնունայն: Ըստ հայոց պատրիարքարանի տվյալների՝ արեւելյան հայկական մարզերում («Մեծ Յայքում»), բնակվում էին 1,33 միլիոն հայեր, որոնք այնտեղ բացարձակ մեծամասնություն էին կազմում⁸⁷: Նրանք հիասթափված էին, որ Թանզիմատ դարաշրջանին այժմ հաջորդում էր կենտրոնամետության ու սուլթանական ինքնակալության շրջանը, որի ընթացքում քրիստոնյաները կրկին տուժելու էին: Խարբերդում, Էրզրումում եւ Վանում հաստատված Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ռուսաստանի հյուպատոսությունները կարող էին այսուհետեւ իրենց կառավարություններին հաղորդել թուրքերի ոտնձգությունների մասին: 1880 թ. Վանից 940 հայեր օգնություն խնդրեցին անգլիացի հրամանատար Էմիլիոս Կլեյթոնից (Emilius Clayton): Փոխիյուպատոս Վիլիամ Էվրետը (William Evrett) գրում է, որ հարաբերությունները Էրզրումի սահանգում երբեք այնքան անապահով չեն եղել, որքան տվյալ ժամանակաշրջանում: Ազդեցիկ հայերը բացատրում էին հրամանատար Զլեյթոնին, որ ժողովուրդը նախընտրում է մեռնել, քան շարունակել կյանքը այս աղետալի վիճակում⁸⁸:

Բեռլինի վեհաժողովից հետո ստեղծվեցին հայկական առաջին կուսակցու -

84 Nassibian (1985), 6-9 և Ohandjanian (1989), 27.

85 Richard G. Hohannisian: “Die armenische Frage (1878-1913)”, in: *Das Verbrechen des Schweigens*, hg. v. Tessa Hofmann, (=Progrom-Taschenbücher 1912), Göttingen, 13-37.

86 Andre Maurois: *Die Geschichte Englands*, Wien-Leipzig 1937, 544.

87 Wolfgang Gust: *Der Völkermord an den Armeniern*, München-Wien 1993, 106f u. Jakob Künzler: *Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918)*, 2. Aufl., Zürich 2004, 89.

88 Nassibian (1985), 18.

թյունները: 1872-ին Վանում ստեղծվեց «Միութիւն ի փրկութիւն» անունով հայերի առաջին հեղափոխական ընկերությունը: 1878 թ. հիմնված «Սեւ խաչ» գաղտնի ընկերությունը ստանձնեց իր անգլեն հայրենակիցների պաշտպանությունը: 1881-ին Երզրումում ստեղծվեց «Պաշտպան հայրենեաց» գաղտնի ընկերությունը, իսկ 1885-ին Վանում՝ Արմենական կուսակցությունը, որը պահանջում էր ինքնորոշման իրավունք: 1887 թ. Թիֆլիսում հիմնադրվեց «Յնչակ» կուսակցությունը, որն ուներ մարքսիստական ուղղվածություն եւ պայքարում էր Թուրքահայաստանի անկախության համար:

Սուլթանը քաջալերում էր մուսուլմանների վայրագությունները հայերի հանդեպ: 1891-ին կազմակերպվեցին սուլթան Աբդուլ Յամիդի անունով «Յամիդիե ջոկատները», որոնք կոչված էին ճնշելու հայ բնակչությանը: Նույն թվականին հայոց կաթողիկոսը, որը թուրքերի բարեկամն էր, բողոքեց իշխանությունների կողմից հանդուրժվող քրդերի վայրագությունների դեմ: Երզրումում տեղի ունեցան փողոցային մարտեր: Կոստանդնուպոլսի հայերը թախանձագին խնդրանք ներկայացրին պատրիարքին, որպեսզի նա իր ժողովրդի համար արտոնություններ պահանջեր: Նրանք ուզում էին նաեւ եվրոպացիների հետաքրքրությունը սեւեռել իրենց խնդիրների վրա: Յեղափոխականները Լայպցիգից ու Փարիզից նամակներով դիմում էին նաեւ ասորի քրիստոնյաներին ու քրդերին: Երրորդ քաղաքական կուսակցությունն էր «Պաշակցությունը», որը գործում էր գլխավորապես Ռուսահայաստանից: Այժմ ծրագրեր էին մշակվում՝ վերջ տալու թուրքական տիրապետությանը հայերի վրա: 1889-ին Աբդուլ Յամիդը խոստովանել էր հունգարացի մի թուրքագետի, որ նա հայերին «կարգի էր բերելու»: Իսկ Մեծ վեզիր Իսեո փաշան (Isset Pascha) առաջին անգամ խոսելով Յայկական հարցի մասին, ասաց, որ ինքը դրա լուծումը տեսնում է այդ ժողովրդի ոչնչացման մեջ⁸⁹: 1890-ին Կոստանդնուպոլսում հնչակյան կուսակցության մի անդամ՝ Կում Կապուի մոտ ցույցից հետո, ստիպեց պատրիարք Խորեն Ա. Աշիկյանին՝ բողոքի մի նամակ հանձնել սուլթանին: Բրիտանիայի դեսպանը այդ կապակցությամբ նկատեց, որ 1453-ից ի վեր քրիստոնյաները մայրաքաղաքում առաջին անգամն էր, որ դիմադրություն էին ցույց տալիս թուրք գինվորականությանը: Ռուսաստանում նույնպես հայերին սպառնում էր ռուսականացման քաղաքակա- նությունը: 1890 թ. սեպտեմբերին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գիրսը (Giers) ասել է գերմանացի մի դիվանագետի, որ Ռուսաստանը չի ցանկանում մի երկրորդ Բուլղարիա՝ հայկական ինքնավար իշխանության տեսքով⁹⁰:

89 Gust (1993), 97.

90 Anderson (1978), 254.

8. 1895/96 թվականների կոտորածները եւ «երիտթուրքերի» մուտքը

1893 թ. Անատոլիայում տեղի ունեցան առաջին գոյամարտերը, երբ Սասունում հայերը հրաժարվեցին հարկերը վճարելուց, քրդերն այրեցին 30 գյուղ եւ սպանեցին բնակիչներին: Հայ եպիսկոպոսներ ձերբակալվեցին, իսկ պատրիարքը հրաժարական տվեց: 1895/96 թթ. առաջին անգամ տեղի ունեցան զանգվածային ջարդեր, որոնց ընթացքում զոհվեցին մոտ 100.000 հայեր՝ Տրապիզոնում, Սասունում եւ Միջագետքի քաղաքներ Մարդինում ու Եղեսիայում: 1894-ին Սասունում բռնկվեց հայերի առաջին ապստամբությունը: Կոտորվեց 900-ից 3000 հայ, որի մասին լուրն արագ տարածվեց Եվրոպայում եւ Եվրոպացի միսիոներներն ու հյուպատոսները իրենց բողոքի ձայնը բարձրացրին⁹¹: 1894 թ. մայիսին Եվրոպացի դեսպանորդները հայկական նահանգներում պահանջեցին նոր կառավարչություն: Մեծ տերություններ Ռուսաստանը, Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան դիմեցին Աբդուլ Համիդ Երկրորդին՝ պահանջելով վճռական քայլերի դիմել, իսկ 1895 թ. մայիսին նրա առջեւ դրեցին բարեփոխումների մի նախագիծ, որը նախատեսում էր հայկական մարզերի միավորումը առանձին վարչակարգի մեջ: Հայոց պատրիարք Մատթեոս Երրորդ Իզմիրյանը 1895 թ. սեպտեմբերի 24-ին մի գրություն հղեց մեծ տերությունների դեսպաններին՝ պահանջելով հայկական նահանգների բարեփոխման նախագիծը դնել Եվրոպացիների վերահսկողության տակ: Սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ Հնչակյան կուսակցության կազմակերպած հայերի հրապարակային ցույցը կառավարության դեմ, որի հետեւանքով սպանվեցին տասնյակ հայեր եւ տեղի ունեցան ըմբոստություններ Տրապիզոնում, Բիթլիսում եւ Երզնկայում: 1895 թ. աշնանը խռովությունները տարածվեցին հայկական բոլոր քաղաքների վրա: 1895 թ. հոկտեմբերի 17-ին սուլթանը մի քանի փոփոխություններով ընդառաջեց մեծ տերությունների բարենորոգումներ անցկացնելու առաջարկներին: Լուրն այդ մասին արագ տարածվեց: Սակայն Գերմանիայի դեսպան Մարշալը (Marschall), որ զբաղված էր Գերմանիայի համար Բաղդատի երկաթուղու շինարարության պետական արտոնագրով, հայտարարեց, որ Հայաստանում բարենորոգումների կարիքը չկա:

Միաժամանակ, սակայն, մեծ տերությունների շրջանում խոսվում էր

91 Verheij (1999), 82f.

Օսմանյան կայսրության վերաբաժանման մասին: Գերմանիայի դեսպան Յացֆելդը (Hatzfeld) Լոնդոնում բանակցություններ էր վարում վարչապետ Սալիսբուրիի (Salisbury) հետ: Վերջինս 1896 թ. սեպտեմբերի 27-ին եւ 29-ին Բալմորալ (Balmoral) ամրոցում Նիկոլայ Երկրորդի եւ Վիկտորիա թագուհու հետ հանդիպման ժամանակ ասաց, որ մեծ տերությունները պետք է վճռական քայլեր ձեռնարկեն Աբդուլ Յամիդին գահընկեց անելու ուղղությամբ, եթե նա հրաժարվի բարենորոգումներից⁹²: Գերմանիայի կայսր Վիլհելմ Երկրորդը նույնպես արտահայտվեց սուլթանին գահընկեց անելու առաջարկի օգտին: 1895 թ. սեպտեմբերի 30-ին հայերը պահանջեցին՝ Եվրոպայի կողմից հավանության արժանացած գլխավոր նահանգապետի նշանակումը: Կառավարությունը խոստացավ 1895 թ. հոկտեմբերին նշանակել քրիստոնյա փոխնահանգապետ, ստեղծել դեսպանատների հետ կապ հաստատող վերահսկիչ հանձնախումբ, նշանակել քրիստոնյա պաշտոնյաներ ու արդարադատության տեսուչներ, ինչպես նաեւ սահմանափակել քրդերի վերվարումները: Նույնիսկ ռուսական կրոնական մի խորհրդում խոսվեց Կոստանդնուպոլսի գրավման մասին: Ռուսաստանը սակայն չէր ուզում գործի անցնել առանց իր դաշնակից Ֆրանսիայի:

Յայոց պատրիարքարանի տվյալների համաձայն 1895-ին Օսմանյան կայսրությունում ապրում էին մոտ 2.100.000 հայեր: Յայկական վեց նահանգներում հայերի թիվը կազմում էր բնակչության 38,9 տոկոսը, թուրքերինը՝ մոտ՝ 24,4, քրդերինը՝ 16,3⁹³: Շուտով Թուրքիայի հայերն ունեցան վտանգավոր թշնամի: 1889 թ. Կոստանդնուպոլսի զինվորական բժշկական ակադեմիայում ստեղծվեց քաղաքական մի գաղտնի կոմիտե՝ «Միություն եւ առաջադիմություն» անվամբ (Itihat ve Terakki), ֆրանս. «Comité Union et Progrès» (CUP)՝ հետագայի «իթթիհատական» կամ «երիտթուրքական շարժումը», որի նպատակն էր Օսմանյան կայսրությունը վերափոխել թուրքական ազգային պետության: 1895-ին Կոստանդնուպոլսում հայերի մի ցույցի ժամամակ տեղի ունեցավ ոստիկանության հետ բախում: Գրգռված հակացուցարարները սպանեցին բազմաթիվ հայերի: Աբդուլ Յամիդը լուծարեց իթթիհատական շարժումը, որը շարդերի առթիվ հայերի հետ բանավոր կերպով համերաշխություն էր հայտարարել, իսկ հայերին խոստացել վարչական բարեփոխումներ հայկական նահանգներում: Սկզբնական շրջանում «երիտթուրքերը» նույնիսկ նախատեսել էին քրիստոնյաներին ներգրավել պետական նոր կազմակերպություններում:

92 Alan Palmer: *Glanz und Niedergang der Diplomatie. Die Geheimpolitik der europäischen Kanzleien vom Wiener Kongress bis zum Ausbruch des Ersten Weltkrieges*, Düsseldorf 1986, 315 է. Paul M. Kennedy: *The Realities behind Diplomacy: Background Influences on British External Policy 1865-1980*, London-Boston-Sydney 1981, 106f.

93 Redgate (2000), 271.

Սուլեռանդ բնակչության հետ վայրագությունների մասնակցում էին նաեւ պաշտոնյաներն ու զինվորականությունը: Միայն Տրապիզոնում սպանվեց ավելի քան 1000 մարդ: Արդյունքը եղավ այն, որ հազարավոր հայեր արտագաղթեցին Միացյալ Նահանգներ կամ Ռուսաստան: 1895 թ. Օսմանյան կայսրության բազմաթիվ վայրերում տեղի ունեցան քրիստոնյաների կոտորածներ: Եղեսիայում (այժմ՝ Սանլի-Ուրֆա), որտեղ 60.000 բնակչից 13.000-ը հայեր էին, մուսուլմանները՝ ոտքերն ու ձեռքերը կապկպած հայերի մորթելուց առաջ, աղոթում էին դուրանի սուրահներով: Ջարդի ժամանակ, որին ականատես է եղել ամերիկոսի միսիոներ Կորինա Շատուքը (Corinna Shattuck) եւ այն բնութագրել է որպես «Ողջակիզում» (Holocaust), Ծննդյան տոնի օրը զոհվել է 1200-2000 մարդ, որից հետո ավելի քան երկու հազար հայ՝ քարյուղով ցնցղված, հրկիզվել է քաղաքի եկեղեցում: Դիակները քաղաքից դուրս՝ ընդհանուր գերեզմանոց տանելու գարհուրելի դերը դրվել էր հրեաների վրա⁹⁴: Սպանվել է ավելի քան 3000 հայ⁹⁵: Հուզումները Եղեսիայում շարունակվում էին մինչեւ 1896-ի գարունը:

Թուրքական ջարդերը Եվրոպայի մեծ մասում գայրութի ալիք առաջացրին: Գերմանիայի կայսր Վրլիելմ Երկրորդը եւս 1895 թ. նոյեմբերի 11-ին այդ մասին իր վրդովմունքն արտահայտեց: Կայսրի մայրը հորդորեց նրան՝ հայերի համար մի բան անել, իսկ տատը՝ Վիկտորիան, նամակ գրեց Աբդուլ Համիդին: Գերմանիայի կառավարությունն արդեն տեղյակ էր, որ 8000 մարդ սպանվել էր թուրք ոստիկանների աչքի առաջ⁹⁶: «Մարդիկ չէին հավատում, որ իրապես գոյություն ուներ բարի կամք՝ լրջորեն պաշտպանելու քրիստոնյա բնակչությանը հայկական նահանգներում»: 1895 թ. հոկտեմբերի 8-ին Ավստրիայի դեսպանը հաղորդեց Տրապիզոնում հայերի կոտորածների մասին, իսկ Գերմանիայի դեսպան ֆոն Սաուրման (von Saurma) կայսերական կառավարությանը գեկուցեց Էրզրումում տեղի ունեցած ջարդերի մասին: Ռուսները կրկին անդրադարձան Թուրքիայի վերաբաժանմանը, որը նրանց տալու էր Կոստանդնուպոլիսը: Լոնդոնում Գերմանիայի դեսպան Հացֆելդը (Hatzfeld) Բեռլինին տեղեկացրեց Անգլիայի վարչապետ Սալիսբուրիի վերաբաժանման նմանօրինակ ծրագրերի մասին: Գերմանիայի կայսր Վրլիելմ Երկրորդը 1895 թ. հոկտեմբերի 8-ի Տրապիզոնի հայերի սպանոցից հետո, խժոժությունների

94 Gust (1993), 11.

95 Dalrymple William: *From the Holy Mountain. A Journey in the Shadow of Byzantium*, London 1997, 80.

96 *Die diplomatischen Akten des Auswärtigen Amtes 1871-1914*, hg. v. Bernhard Schwertfeger. Bd. 2: 1890-1899, Berlin 1924, 152f.

97 **Հմմտ. դեպքան** Paul Graf von Hatzfeld: “Nachgelassene Papiere 1838-1901”, hg. v. Gerhard Ebel, Bd. 2 (= Deutsche Geschichtsquellen des 19. u. 20. Jahrhunderts 51/12), Boppard 1976, 1055f, Nr. 656.

համար բացեիբաց պատասխանատու համարեց անգլիացիներին⁹⁷: «Մեծ» քաղաքագետների համար հայերի ողբերգությունը հաճախ միայն միջոց էր՝ նրանց հաշվին սեփական շահեր հետապնդելու համար:

Չատուկ դեպք էր հայկական Չեյթուն քաղաքը (այժմ՝ Սուլեյմանլի), որը գտնվում էր Տավրոս լեռնաշղթայում, Մարաշից հյուսիս: Այնտեղ հայերը պահպանել էին մեծամասնություն եւ արդեն 1618-ից ունեին հարկերից ազատ լինելու արտոնությունը: Դեռեւս 1862-ին գեյթունցիները հաջողությամբ դիմադրել էին 25.000-անոց թուրքական բանակին⁹⁸: Այդ իրադարձությունների մասին մի քահանա Փարիզում տեղեկացրել էր կայսր Նապոլեոն Երրորդին՝ խնդրելով նրան հանդես գալ հոգուտ հայերի վիճակի բարելավման: Կայսրը այդ մասին խոսել էր Ֆրանսիայում պետական այցով գտնվող սուլթան Աբդուլ Ազիզի հետ, որն իր երկիրը վերադառնալուց հետո, 150.000 մարդուց բաղկացած պատժիչ ասպատակ էր ուղարկել Չեյթունի դեմ, որտեղ բռնկվել էր ապստամբությունը⁹⁹: 1895 թ. Նոյեմբերին հայերը Յնչակյան կուսակցության առաջնորդությամբ հարձակվեցին Չեյթունում տեղակայված թուրքական կայազորի վրա եւ 500 զինվոր բանտ նետեցին: Երբ 50.000 թուրք, քուրդ եւ չերքեզ պաշարեցին 2.000 հայերով պաշտպանվող քաղաքը, արեւմտյան պետությունները միջամտեցին: Բրիտանիայի հյուպատոս Բառնհամը (Barnham) հաղորդել է, որ այդ ապստամբության ժամանակ սպանվել է առ նվազն 5.000 օսմանցի զինվոր¹⁰⁰: 1896 թ. փետրվարի 10-ին ստորագրվեց համաներման պայմանագիր, որը 30.000 հայի փրկեց մահից: Բնորոշ է կայսր Վիլհելմ Երկրորդի նկատողությունը, որ նա գրել է Չեյթունի մասին զեկույցի լուսանցքին. «Վախենում եմ, որ այս ամենը դատարկաբանություն է: Յենց որ մեր պատվիրակությունը հեռանա, նրանք բոլորին կսպանեն»¹⁰¹:

1896-ին Եդեսիայում (Ուրֆա) կրկին կոտորածներ տեղի ունեցան: Պատ՝ ռիարք Մատթեոս Երրորդ Իզմիրյանին պարտադրված հրաժարականից հետո, հայերը որոշեցին 1896 թ. օգոստոսի 26-ին Կոստանդնուպոլսում գրավել ու ավերել Օսմանյան բանկը: Օգոստոսի 27-ին եւ 28-ին հայազգի մի քանի քաղաքացիներ մահապատժի ենթարկվեցին. «պարզապես թույլատրելի էր փողոցում պատահած յուրաքանչյուր հայի սրախողխող անել»¹⁰²: Վանում 1896 թ. հունիսի 15-ին բռնկվեց ապստամբություն: 700 հնչակյան հեղափոխականներ խրամատավորվել էին հայկական թաղամասում: Երբ օսմանները

98 Gust (1993), 79.

99 Elisabeth Bauer: *Armenien, Luzern 1977*, 147f. u. Reid (2000), 45f.

100 Verheij (1999), 118, Anm. 98.

101 Die große Politik der europäischen Kabinette 1871-1914, Bd. 10, Berlin 1927 (Das türkische Problem 1895), 135, Nr. 2487 (18.4.1896).

102 Jorga V. (1990), 612.

հրետանակոծեցին թաղամասը, անգլիացի հյուպատոս Վիլիամսին (Williams) հաջողվեց օգնել հեղափոխականներին, որ նահանջեն: Սակայն դեպի պարսկական սահման փախուստի ժամանակ, քրդերն ու թուրք զինվորները նրանց՝ գրեթե մինչեւ վերջին մարդը կոտորեցին: Ըստ Վիլիամսի, ընդհանուր առմամբ ավերվել էր 150 գյուղ, սպանվել՝ 3.500 հայ: Անգլիացի դիտորդները չարիքի պատճառը տեսան դրանում, որ իշխանությունները քրդերի դեմ ոչինչ չէին ձեռնարկում: Հայերի սեփականությունը թալանող մուսուլմանները մտում էին անպատիժ: Վանում սպանվեց մոտ 10.000 հայ, 20.000 էլ կոտորվեց քրդաբնակ վայրերում: Իզուր էր հայոց պատրիարքը սուլթանին հավաստիացնում իր ժողովրդի օրինապահության մասին: 48 ժամվա ընթացքում Ուրֆայում սպանվեց 12.000 հայ: Գերմանիայի դեսպանը խոսում էր 5.000 սպանվածների մասին, իսկ իրականում զոհերի ընդհանուր թիվը կազմում էր 6.000-14.000: Գերմանիայի եւ Ավստրիայի դեսպանորդների զեկույցները բացահայտում են, որ կառավարությունները քաջատեղյակ էին կատարվածի մասին, սակայն բավարարվում էին բողոքներ հղելով, որոնք ոչնչի չէին հանգեցնում: Հայերին արգելված էր գեներ կրել, իսկ թուրքերին ու քրդերին՝ կարելի էր: Հայերն իրավունք չունեին նաեւ թուրքերի նման հագնվելու: 1895-96 թթ. կոտորածների զոհ գնաց ավելի քան 100.000 հայ, ոչնչացվեց 2500 գյուղ, ավերվեցին կամ մզկիթի վերածվեցին հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ¹⁰³: 80.000 – 100.000 հայեր ապաստան գտան արտերկրում: Այդ ժամանակն էր, որ սկսվեց նաեւ ասորիների արտագաղթի առաջին ալիքը Օսմանյան կայսրությունից դեպի ԱՄՆ:

Ապացուցված է, որ ջարդերին ուղղակի մասնակցում էին օսմանյան ոստիկանությունն ու զինվորականությունը: Շատ ավելի դժվար է դատել Աբդուլ Համիդի մեղսակցության մասին, որը Սասունի հարցում իր քարտուղար Սյուրեյա փաշայի (Süreyya Pasha) միջոցով տալիս է հետեւյալ հանձնարարությունը. «Ավագակներին արտակարգ ուժով վնասագերծել՝ առանց նրանց հնարավորություն տալու, որ գեթ մեկ անգամ արարքը կրկնեն»¹⁰⁴: Ի դեպ, արեւելյան նահանգների պետական իշխանությունը բավականին թույլ էր, եւ կոտորածներին ամենամեծ մասնակցությունը բերում էր մուսուլման բնակչությունը: Իշխանությունները սուլթանին բավարար չափով չէին տեղեկացնում իրադարձությունների մասին: Որպես սովորական գործընթաց՝ տեղացի հայ երեվելիներին ստիպում էին, մասամբ խոշտանգումների միջոցով, սուլթանին նվիրվածության («Mazbata») ուղերձներ հղել, որոնց մեջ խոռվությունները վերագրվում էին հայ սադրիչներին: Մեծ տերությունները, հատկապես Անգլիան, փորձում էին սուլթանի վրա ճնշում գործադրելով, բարեփոխումներ

103 Ohandjanian (1989), 36.

104 Verheij (1999), 99.

պարտադրել, իսկ 1895-ին՝ Նույնիսկ ռազմանավեր ուղարկելու սպառնալիքով: Այն ժամանակ Աբդուլ Յամիդը համաձայնագրեր ստորագրեց՝ չմտահոգվելով դրանց իրականացման մասին: Թեև իշխանությունները խռովությունների ժամանակ բնագոյաբար դիմում էին ձերբակալությունների, կային նաև բացառություններ, երբ նահանգապետերն էին, որ փորձում էին զսպել մոլեռանդ զանգվածներին: Աբդուլ Յամիդն իր կայսրությունը ծածկել էր լրտեսների ցանցով՝ հատկապես պաշտոնյաների ու հոգեւորա կանների շրջանում, ամեն ինչ հսկողության տակ պահելու միտումով: Մարդասպաններն ու ավարառուները հաճախ էին սուլթանին վկայակոչում: Թե իրապես որքանով էր սուլթանը տեղյակ իրադարձություններից, դժվար է ասել: Անգլիայի հյուպատոսներն այն կարծիքին էին, որ խժոժությունները ղեկավարվում էին գաղտնի մի կենտրոնից: Իրականում, սակայն, սուլթանը կորցրել էր իրադրության ղեկը: Նրա միանձնյա կառավարման ճախողումն է հայտ եկավ 1895-ին, հատկապես քրդերի ու համիդիե ջոկատների սանձարձակությունների ժամանակ, որոնց զորացրման պահանջը քանիցս դրել էին Անգլիայի հյուպատոսները¹⁰⁵: Մեծ տերությունների՝ օսմանյան վարչակարգը վերափոխելու փորձերը 1896-ին վերջերին ավարտվեցին հուսախաբությամբ, չնայած Անգլիայի մեծ ջանքերին՝ այդ գործընթացում ներգրավելու նաև Գերմանիային ու Ավստրիային: Կոտորածների անպատիժ մնալը եւ դրանց վրա օսմանյան արդարադատության աչք փակելը, դարձավ 1915 թ. ցեղասպանության նախերգանքը: Համաձայն թուրք պատմաբան Համիտ Բոզարսլանի, կոտորածները նաև առաջին իրական քայլն էին՝ «Անատոլիան ընկալելու որպես թուրքերի եւ մուսուլմանների միասնություն, այնպես, ինչպես այն երիտթուրքերն էին պատկերացնում»:

Առաջին աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի հետ դաշնակցած գերմանական կառավարությունը, ինչպես նաև Անգլիան, Ավստրիան եւ Ռուսաստանը, տեղյակ էին, թե ինչ է կատարվում Օսմանյան կայսրությունում: Ֆրանսիացիները խոսում էին 1895 եւ 1896 թթ. երկու տարիների ընթացքում 36.085 զոհված հայերի մասին, անգլիացիները՝ 88.243-ի, իսկ Հայոց պատրիարքարանը՝ 300.000 զոհերի մասին, պատմաբաններ Նասիբյանն ու Հովհաննիսյանը իրենց ուսումնասիրություններում տալիս են 100.000-ից մինչեւ 200.000 թվերը¹⁰⁶: Նույն տվյալներն է բերում նաև Անատոլ Ֆրանսը (Anatole France): Կոտորածից խուսափելու համար 646 գյուղի բնակիչներ ընդունել են իսլամը: Անգլիացիների տեղեկությամբ՝ 328 եկեղեցի վերածվել է մզկիթի, իսկ 568 եկեղեցի եւ 77 վանք՝ ավերվել է¹⁰⁷: Նման բան ինչպե՞ս էր հնարավոր:

105 Նույն տեղում, 104f.

106 Nassibian (1985), 19. Նասիբյանը խոսում է 200-250 հազար զոհերի մասին:

107 Die grosse Politik X (1907), 107.

Բնակչության տրոհվածությունը, փոխադարձ անվստահությունն այնքան մեծ էր, որ մի կայծն անգամ կարող էր վառողի տակառը բռնկեցնել: Սակայն եական էր նաեւ այն հանգամանքը, որ թուրքերն իրենք իրենց համարում էին մի տեսակ «տիրող ցեղ» եւ պատրաստ չէին ոչ մուսուլմաններին կենցաղի բոլոր ոլորտներում շնորհելու կատարյալ իրավահավասարություն: Անգլիան՝ թեեւ կողմնակից էր Օսմանյան կայսրության պահպանմանը, ամենից շատ հարատեւողն էր բարեփոխումների հարցում, որը 1895-ին փաստորեն իր վերջը գտավ:

1895-ի կոտորածներից հետո գերմանացի բողոքական հոգեւորական Յոհաննես Լեփսիուսը 1896 թ. ապրիլին երկաթուղով մեկնեց Կոստանդնու - պոլիս ու Անկարա, եւ այնտեղից՝ ձիով ավելի հեռու, երկրի խորքերը, որպեսզի իրադրության մասին պատկերացում ստանա: Հետագայում նա դարձավ Գերմանիայում հայերի ամենամեծ գորավիզը: 1897 թ. Եդեսիայում նա հիմնեց գորգագործարան՝ համիդյան ջարդերը վերապրողների համար: Նա կազմա - կերպեց 100 հայ որբերի ընդունումը Եդեսիայի ամերիկյան որբանոցներից մեկում: 1899-ին Լեփսիուսը կրկին ուղեւորվեց Թուրքիա եւ այնտեղ կատարեց մուսուլմանների համար միսիոներություն հիմնելու մի փորձ, որը Թուրքիայում ուժեղ դիմադրության հանդիպեց:

Թե ինչքան էր հայերի խնդիրը հուզում ամբողջ աշխարհի մտավորական - ներին, պարզվում է Թեոդոր Հերցլի (Theodor Herzl) նամակներից ու օրագրերից: Նա 1896-ին գնաց Կոստանդնուպոլիս՝ սուլթան Աբդուլ Համիդին ներգրավելու հրեական պետություն հիմնելու իր նախագծի մեջ: Նրա կար - ծիքով «ճիշտ չէ Պաղեստինում շարունակել գաղութականացման գործը, քանի դեռ սիոնիստական շարժումը թուրքական կառավարության կողմից չի ստացել «Charter», այսինքն տվյալ դեպքում՝ պաշտոնական վկայագիր, որն այդ շարժմանն է փոխանցում Պաղեստինի ինքնավարությունը»¹⁰⁸: Հերցլը նախ նշում է, որ իր բարեկամ Նեվլինսկու (Newlinski) կարծիքով, սուլթանի միակ փրկությունը երիտթուրքերի հետ միանալն էր, քանի որ նրանք հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էին: Ավստրիայի դեսպան Կալիսի (Calice) հետ խոսակցությունից հետո Հերցլը նրա մասին գրում է. «Հայկական հարցը նա եապես այլ կերպ է ներկայացնում, քան թուրքերը, որոնք միշտ կեղծում են փաստերը: Հիմա նրանք անշուշտ որեւէ օտար միջամտություն չեն ընդունում, խոստանալով, որ բոլոր բարեփոխումները կկատարեն իրենք: Բայց հենց որ տագնապն անցնի, դրա մասին այլեւս չեն մտածի»¹⁰⁹: Փարիզ՝ իր բարեկամին գրած մի նամակում՝ մայիսի 11-ին Թեոդոր Հերցլը ասում է, որ սուլթանի բարե -

108 Wurmbrand-Roth (1989), 430.

109 Theodor Herzl: Zionistisches Tagebuch 1895-1899, hg. v. Johannes Wachten u. Chaya Harel, (=Briefe u. Tagebücher 2), Berlin-Frankfurt 1983, 380f.

հաճությունը շահելու համար, անհրաժեշտ է նրան սատարել հայկական հարցում: Հայերը մտադրվել էին հուլիսին մի անգամ եւս հակահարված տալ: Հարկավոր էր ճնշում գործադրել հայերի վրա Բոյուսեյի, Փարիզի եւ Լոնդոնի հայկական կոմիտեների միջոցով, որպեսզի հայերը սուլթանին անպայման ենթարկվեին եւ վերջինս դիմակազուրկ չլիներ, որից հետո նա հայերին բարեփոխումներով կընդամառեր: Հերցլը ցանկանում էր նաեւ իր անգլիական կապերի, եւ հատկապես վարչապետ Սալիսբուրիի միջոցով «ճնշում գործեր» հայերի վրա: «Նրանք ոչ մի դեպքում չպետք է տեղեկանան, որ մենք ուզում ենք օգտվել իրենցից՝ անկախ հրեական պետություն ստեղծման հարցում, այլապես նրանք գուցե փորձեն մեզ ընդօրինակել, իսկ մենք դրանով մի խնդիր ավելի կունենանք»: Նա նաեւ նշում է, որ հայերի խռովությունների պատճառած վնասները վերացնելու համար կզգացվեր փոխառության կարիք: Սեղանավորների մի խումբ պատրաստ էր դրան, եթե հայերը համաձայնեին զինադադարի¹¹⁰: Կենդանության օրոք Հերցլը իր նպատակին չհասավ: Ինչպես հայ կուսակցությունները (դաշնակցականներն ու հնչակյանները), նա նույն կերպ ոգեշնչված էր ազգային պետության գաղափարով: Սուլթանից «Charter» ստանալու նրա ջանքերն անցան ապարդյուն:

Հուլյն-թուրքական պատերազմում (1895/96), որը բռնկվել էր Կրետե կղզու վրա ապստամբությունների հետեւանքով, Թուրքիան դիմադրեց, սակայն ստիպված էր ընդունել կղզու ինքնավարությունը: 1898 թ. Գերմանիայի կայսր Վիլհելմ Երկրորդը՝ բողոքական փիլիսոփա Ֆրիդրիխ Նաումանի (Friedrich Naumann) ուղեկցությամբ, ուղեւորվեց Կոստանդնուպոլիս: Բեռնհարդ ֆոն Բյուլովը (Bernhard von Bülow)՝ արտաքին գործերի նախարարության պետական քարտուղարը, այսպես է նկարագրում այդ ընդունելությունը. «Սուլթան Աբդուլ Համիդը ինձ տրամադրված ամբողջ ընդունելության ընթացքում իմ վրա արտակարգ տպավորություն չթողեց: Թեեւ նա աշխարհում ճանաչված էր որպես «հայերի դահիճ», եւ երեւի իսկապես էլ այդպիսին էր, նա արտաքսակապես ավելի շուտ նման էր հայի, քան թուրքի՝ կռացած, խուզարկու եւ երկչոտ»¹¹¹: Դիվանագետները գիտեին, թե ում հետ գործ ունեին: Կոստանդնուպոլսից ճանապարհորդությունը շարունակվեց դեպի Չմյունխեն եւ Երուսաղեմ, որտեղ գերմանացիները կառուցել էին Փրկչի եկեղեցին, եւ որտեղ Հերցլը ողջունեց Վիլհելմ Երկրորդին: 1888-90 թթ. արդեն ստորագրվել էին Բաղդատի երկաթուղու կառուցման պայմանագրերը, որով Գերմանիան մեծ ազդեցություն պիտի ձեռք բերեր Օսմանյան կայսրության վրա, մի բան, որ

110 Theodor Herzl: *Briefe Anfang Mai 1895 – Anfang Dezember 1898*, hg. v. Barbara Schafer, (=Briefe u. Tagebücher 4), Frankfurt-Berlin 1990, 101.

111 Bernhard Fürst von Bülow: *Denkwürdigkeiten*, Berlin 1930, 249.

112 Hans Rall: *Wilhelm II. Eine Biographie*, Graz-Wien-Köln 1995, 250.

վատացրեց հարաբերությունները Ռուսաստանի հետ¹¹²:

1899 թ. իշխան Դամադ Մահմուդ (Damad Mahmud) փաշան եւ կրա երկու որդիները՝ Սաբահադին (Sabahaddin) եւ Լյութֆուլահը (Lütfullah) արտագաղթեցին Փարիզ, որտեղ նրանք դաշնակցեցին երիտթուրքերի ազատական ընդդիմության հետ¹¹³: Արտագաղթած, քաղաքական գործիչ Իզմայիլ Զեմալ բեյի հետ միասին նրանք աշխատում էին հայերին եւս ներգրավել բարեփոխումների իրենց շարժման մեջ: 1900 թ. վերջին Դամադ Մահմուդ փաշան հրավիրեց հայերին համատեղ գործակցելու՝ հիշեցնելով օսմանների հանդուրժողականությունը հավատաքննության դարաշրջանում եւ ընդունեց, որ Աբդուլ Յամիդը նույնպիսի բռնապետ էր, ինչպիսին՝ Փիլիպոս Երկրորդը: Յետեւաբար անհրաժեշտ էր վերացնել այդ բռնապետությունը՝ ստեղծելով նոր սահմանադրություն: Պատասխանելով երիտթուրքերի առաջարկին «Դրոշակ» թերթում, Դաշնակցությունը գրեց, որ նոր սահմանադրության ներմուծումը դեռեւս շատ քիչ էր: Բայց եթե հայերին երաշխավորեին, «որ ժողովուրդի վիճակը պիտի բարելավվեր, նրանք կսատարեին երիտթուրքերին»¹¹⁴: Դրանով կարծես թե երիտթուրքերի եւ հայերի միջեւ փոխըմբռնում էր ստեղծվում: 47 պատգամավորները որպես փոխնախագահներ ընտրեցին հույն Սաթասին (Sathas) եւ հայ Սիսյանին: Սակայն հայերը համաժողովում շեշտեցին, որ իրենց նպատակը կայսրության բարեփոխումը չէր, այլ իրենց ազգակիցների կյանքի պայմանների բարելավումը: Ազատական երիտթուրքերը փորձեցին հայերի օգնությամբ բուլղարների հետ եւս համաձանության գալ: Երիտթուրքերի ազգային թելին պատկանող Ահմեդ Ռիզան (Ahmed Riza) թեքվեց «Օսմանյան առաջադիմական միացյալ կուսակցության» (Osmanli Terakki ve Ittihad Cemiyeti) կողմը: Սակայն Օսմանական կայսրության քրիստոնյաների դիրքը թուլացավ շարժման պատճառով, որը բուլղար ուղղափառներին պատրիարքությունից անջատում էր եւ ձգտում տեղադրել 1870 թ. սուլթանի թույլտվությամբ հիմնված բուլղարական մարդպանության ենթակայության տակ: Թուրք եւ հույն ապստամբների շարժման օգնությամբ մարզպանական գյուղերը վերադարձվեցին պատրիարքարանին: Անգլիայի արտաքին գործոց նախարար Էդվարդ Գրեյի՝ 1908-ի օգոստոսին ունեցած ելույթից հետո, որտեղ նա պանիսլամիզմը դիտել էր որպես Եվրոպայի համար սպառնալիք, Իշխան Սաբահադինը Թայմս (Times) թերթի մի համարում գրեց. «Թուրքիան է, որ կանխում է կոտորածները հույների եւ բուլղարների միջեւ: Ապագայի սահմանադրական Թուրքիայում օսմանյան քրիստոնյաները գտնելու են մի հայրենիք, որն ամեն կերպ նպաստելու է

113 Erik J. Zürcher: *Turkey. A Modern History*, London-New York 2003, 92.

114 Mehmet Hacisalihoglu: *Die Jungtürken und die Mazedonische Frage (1890-1918)*, (= Südosteuropäische Arbeiten 116), München 2003, 91.

Նրանց առաջընթացին»:

Մակեդոնիայի իլինդական ապստամբությունից հետո Ֆրանց Յոզեֆ (Franz Josef) կայսրը եւ Նիկողայոս Երկրորդը ցարը առաջադրեցին Մյուլց-շտեգի (Mürzsteg) բարեփոխումների ծրագիրը, որն օգնեց մակեդոնացիներին. սակայն հայերի մոտ ամեն ինչ անփոփոխ մնաց:

Երբ 1900 թ. տեղի ունեցան հայերի նոր ձերբակալություններ ու շարդեր, հայոց պատրիարքը ինդրեց Ավստրիայի դեսպան Կալիսին` (Calice) սուլթանի մոտ միջամտել: 1902 թ. Փարիզում կայացավ օսմանցի ազատականների առաջին համագումարը, որին մասնակցում էին նաեւ հայ, հույն եւ հրեա մտավորականներ: 1904 թ. ապրիլին` Սասունի վրա համիդիե ջոկատների եւ քրդերի նոր հարձակման ժամանակ զոհվեց քաղաքի 3.000 հայերի մեծ մասը: 1905 թ. հուլիսի 1-ին սուլթանի դեմ մահափորձից հետո Դաշնակցություն կուսակցությունը հրապարակեց մանիֆեստ` ուղղված Բեռլինի վեհաժողովի համաձայնագիրը ստորագրող տերություններին, որի մեջ պահանջվում էր դավանանքի, մամուլի, հավաքների ազատություն, դատարանի առաջ բոլոր ազգությունների հավասար իրավունքներ եւ եվրոպացիների մշտական վերահսկողության վավերացում: 1905 սեպտեմբերին իշխան Սաբահադինը բաց նամակով դիմեց օսմանյան հայերին եւ դատապարտեց մահափորձը` որպես հայերի մի փոքրամասնության արարք, որը հայերի մեծամասնությանը միայն վնաս էր բերելու: «Թուրքերն ու հայերը ճակատագրով լինելով անմիջական եւ մշտական հարեւանության մեջ, ուրիշ ելք չունեն քան հաշտության կնքումը»: Նա ժխտեց հայերի այն հայտարարությունները, ըստ որոնց թուրքերի նպատակը հայերի բնաջնջումն էր: Ըստ իրեն` ընդհակառակը, թուրքերը հարգանք էին տածում դեպի հայոց լեզուն, կրոնն ու ավանդությունները: Յնչակյանները 1906-ի հուլիսին երիտթուրքերի հետ բանակցում էին մի դաշինքի շուրջ, որը, սակայն, չիրականացավ, քանի որ բարեփոխումների հարցում չկարողոցան համաձայնության գալ: 1907 թ. երիտթուրքերը դաշնակցականների հետ կնքեցին համագործակցության համաձայնագիր:

Յոհաննես Լեփսիուսի նման մի խումբ այլ անհատականություններ մտա - ծում էին, թե ինչ կարելի էր անել նման վայրագությունների դեմ: Մեծ Բրիտանիայում եւս տեղի ունեցան համերաշխության ցույցեր, հատուկ ձեռնարկներով եւ տեղեկատվական արշավներով, որոնց մասնակցում էին նաեւ մասոններ, ընկերավարներ ու հրեաներ: 1905-ի կոտորածները պատճառ հանդիսացան, որ գերմանացի բողոքական հոգեւորական Յոհաննես Լեփսիուսը հիմնեց «Գերմանական արեւելյան առաքելությունը», որը Յայաստանում հաստատեց որբանոցներ` բուժարաններով եւ դեղատներով: Նա ստեղծեց միջազգային մարդասիրական գործունեության ցանց, իսկ Եդեսիայում ու Կեսարիայում կառուցեց դպրոցներ եւ զինվորական հիվանդանոցներ: Իր` «Յայաստան եւ Եվրոպա. Մեղադրագիր քրիստոնյա մեծ տերությունների դեմ

եւ կոչ քրիստոնյա Գերմանիային» աշխատությունում (1896) նա կոչ էր անում եվրոպական պետություններին՝ փրկել հայերին: Մինչ Անգլիան ու Շվեյցարիան աշխատում էին հայերի օգտին, որոշ գերմանացի քարոզիչներ հայերին ներկայացնում էին որպես «այլասերված ցեղ», որպես «Արեւելքի հրեաներ»: 1896 թ. Եդեսիան դարձավ Լեփսիուսի գործունեության կենտրոնը: 1898 թ. բազելցի բժիշկ Յերման Զրիստը (Hermann Christ) ժամանեց Եդեսիա, մեկ տարի անց՝ Լեփսիուսի հորդորանքով եկավ Յակոբ Զյունցլերը (Jakob Künzler), որը մինչեւ 1922 թ. գործելով այստեղ, կարողացավ օգնել բազմաթիվ հայերի ու հույների: Ցյուրիխցի բժշկուհի Ժոզեֆինե Ցյուրիխերը (Josephine Züricher) հիմնեց «Շվեյցարական հիվանդանոցը», որը մինչեւ Առաջին աշխարհամարտի ավարտը մաս էր կազմում «Գերմանական արեւելյան առաքելության»: Իսկ գերմանական դիվանագիտությունը «մերժում էր ամեն տեսակի հովանավորություն այն հայրենակիցներին, որոնք զբաղվում էին քաղաքական առումով կնճռոտ՝ հայկական հարցով եւ ճանապարհորդում էին օսմանյան արեւելյան նահանգներում»¹¹⁵:

Սուլթան Յամիդի վարչակարգի դեմ ընդդիմությունը պառակտվեց երկու խմբի՝ ազատականներ, որոնք հանդես էին գալիս հօգուտ ապակենտրոնացման ու համագործակցության, եւ ազգայնականներ: «Երիտթուրքերը» 1907 թ. հուլիսին հավանություն տվեցին սահմանադրական միապետության ծրագրին: 1908 թ. հուլիսին սուլթանը կրկին ուժի մեջ դրեց 1876-ի սահմանադրությունը: 1908-ին Բուլղարիան իրեն անկախ հայտարարեց, իսկ Ավստրո-Յունգարիան իրեն միացրեց Բոսնիա-Յերցոգովինան: Մարտի 3-ին Սալոնիկում տեղի ունեցավ երիտթուրքերի հեղափոխությունը, իսկ հուլիսի 24-ին սուլթանը հավանություն տվեց նոր սահմանադրությունը: Բանտերը բացվեցին, իսկ ժողովուրդն այցելեց 1906 թ. զոհերի եղբայրական գերեզմանները: Երիտթուրքերը շարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս, սուլթանին գահընկեց արեցին եւ նրա եղբորը՝ Մեհմեդ Յինգերորդին հռչակեցին նոր սուլթան, որը սակայն ոչ մի ազդեցություն չունեցավ: Սկզբում երիտթուրքերը (միութենականները) դեռ համագործակցում էին հայերի հետ: Հայ դաշնակցություն կուսակցությունն արդեն օրինական կուսակցություն էր, իսկ հեղափոխականները համարվում էին ազատության հերոսներ: 1907 թ. կուսակցությունը նույնիսկ անդամագրվեց Սոցիալիստական երկրորդ ինտերնացիոնալին: Հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանը բրիտանական դեսպանատան մի աշխատակցի իր համոզմունքն է արտահայտել, ըստ որի հայերի միակ ելքը երիտթուրքերի հետ դաշնակցելն է¹¹⁶: Սկզբնական շրջանում երիտթուրքերը՝ հեռու կանգնեցին 1895 թ. կոտորածներից, որոնք արդեն բարդված էին հին

115 Künzler (2004), 12.

116 Nassibian (1985), 21.

կառավարության վրա:

1908 թ. հուլիսին երիտթուրքերը մասամբ ստանձնեցին պետական իշխանությունը: «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության հայտարարության մեջ նշվեցին նաեւ Վանի, Բիթլիսի եւ Դիարբեքիի հայերի ապստամբությունները եւ քրիստոնյաների տառապանքները, որոնց տները ավերվել էին, եւ որդիները աշխարհով մեկ ցրվել: Այդ իսկ պատճառով, ասվում էր հայտարարության մեջ, անհրաժեշտ էր, որ թուրքերը միանային քրիստոնյաներին¹¹⁷. Ահմեդ Նիազի բեյը (Ahmed Niyazi Bey), 1908 թ. հեղափոխության առաջնորդներից մեկը, կոչ արեց Մակեդոնիայի քրիստոնյաներին՝ միանալ իրենց: Նրանց այլեւս ոչ մի վտանգ չէր սպառնալու: Դրան հաջորդեց երիտթուրքերին միանալու եւ բռնապետության դեմ համատեղ պայքարելու կոչը՝ ուղղված քրիստոնյա ամբողջ բնակչությանը, որպեսզի իշխեր ազատությունը, հավասարությունը եւ եղբայրությունը: 1908 թ. հուլիսին Էնվեր փաշան եւ Նիազի բեյը հաղորդեցին, որ իրենք արդեն շահել էին բուլղարացիների վստահությունը: Սակայն հունական կառավարությունը՝ Սալոնիկի հյուպատոսարանի միջոցով արգելեց օսմանյան իշխանության ներքո ապրող հույներին՝ հետեւել երիտթուրքերի կոչին: Երիտթուրք մի սպա հայտնել էր հույն հյուպատոս Էնյալիսին (Enyalis), որ հայերը նույնպես երիտթուրքերի հետ էին: Հույները միշտ ետ էին մղում թուրքերի՝ իրենց հետ մերձենալու փորձերը: Երիտթուրքերը դիմեցին Մոնաստիրի հույներին՝ խորհուրդ տալով նրանց չտարվել հելլենիստական պատրանքներով եւ միանալ երիտթուրքերին, եւ կամ՝ չեզոք մնալ: Նրանք հույներին նաեւ զգուշացրին, որ պատրիարքը դեռ շարունակում էր սուլթանի հետ համագործակցել: Պարզորոշ է, որ պատրիարքարանը սուլթանի կողմն էր, մինչդեռ հույն կառավարությունը հեղափոխությունն էր սատարում: Նույնիսկ հեղափոխության հաղթանակից եւ սուլթանի անկումից հետո, Աթենքի կեցվածքը երիտթուրքերի հանդեպ բացասական էր: Հույների՝ երիտթուրքերի հեղափոխության նկատմամբ ունեցած այդ դիրքորոշումը նպաստավոր էր եղել հունական կառավարության, եւ պատրիարքարանի համար, քանի որ այն տարբերվում էր օսմանական տարածքում այլազգի մրցակիցների վարած քաղաքականությունից: Իր հուշերի մեջ Թալեաթ փաշան նշում է, որ հույների համար շատ պարզ էր, որ նրանց «վեհ գաղափարը» (meg leh id a) համայն հույների վերամիավորման վերաբերյալ, երիտթուրքերի հաղթանակի դեպքում չէր իրականանա:

Դաշնակցության հետ երիտթուրքերի ընտրական դաշինքը նախատեսում էր՝ հայերի ունեցվածքը, որ 1895-ի կոտորածների ժամանակ անցել էր քրդերի եւ մուսուլմանների ձեռքը, վերադարձնել հայերին: Երբ այդ ուղղությամբ ոչինչ

117 Hacısalihoglu (2003), 160-176

չարվեց, եւ 1913 թ. երիտթուրքերը խոստումը ետ վերցրին, հայերի քաղաքա - կան առաջնորդները դիմեցին միջազգային հասարակայնությանը՝ 1878 թ. Բեռլինյան համաձայնագրի բարեփոխումներն անցկացնելու պահանջով: Իսկ երիտթուրքերի կոմիտեում առաջ քաշվեց 1911 թ. կուսակցության համագումարի գաղափարը՝ կայսրության իսլամացման ու թուրքացման վերաբերյալ, մի որոշում, որը պիտի իրագործվեր բռնության ճանապարհով: Հայերն աստիճանաբար գլխի էին ընկնում, որ սխալ դաշնակից էին ընտրել:

1908 թ. դեկտեմբերին երիտթուրքերի կոմիտեն նոր պառլամենտում մեծամասնության էր հասել, սակայն մենակ չէր կառավարում: 1909-ի ապրիլին բռնկվեց երիտթուրքերի հակառակորդների ապստամբությունը, որի միջոցով Աբդուլ Համիդը փորձում էր կրկին իշխանության գլուխն անցնել: Երիտթուրքերի առանձին առաջնորդներ, ինչպես Հալիլ բեյը, թաքնվում էին հայերի տներում: Սակայն ապստամբությունը երկու շաբաթ անց բանակի միջամտությամբ ճնշվեց: 1909-ի ապրիլին «միութենականները» դադարեցրին Ադանայի քրիստոնյաների կոտորածը, որն արժեց մոտ 15.000–20.000 հայի կյանք¹¹⁸: 1909 թ. ապրիլի 18-ին հայկական մի պատվիրակություն կառավարությանը բողոք ներկայացրեց Տարսուսի, Անտիոքի եւ Ադանայի կոտորածների կապակցությամբ: Չնայած երիտթուրքերն այստեղ մասնակցություն էին ունեցել, այնուամենայնիվ տեղի ունեցան արարողություններ նվիրված մուսուլման եւ քրիստոնյա զոհերի հիշատակին: Ապրիլի 27-ին երիտթուրքերը կրկին անցան իշխանության գլուխ եւ ջոկատներ ուղարկեցին Ադանա՝ կասեցնելու սպանությունները: Այդ սպանոյի՝ հայ զոհերի ընդհանուր թիվը կազմում էր 30.000: Միայն Ադանայի կոտորածից հետո, հայերի մեջ կասկած առաջացավ, թե արդյո՞ք ճիշտ էր «երիտթուրքերի հեղափոխությունից» որեւէ բան ակնկալելը:

1909 թ. մայիսին պառլամենտում տեղի ունեցավ սահմանադրության փոփոխում, որի հետեւանքով դպրոցներն անցան պետության հսկողության տակ: Հույն պատվիրակները պահանջեցին, որ փոքրամասնությունների՝ 500 տարի ի վեր գոյություն ունեցող կրոնական, դպրոցական եւ հանրային կյանքի արտոնությունները պահպանվեին: Հույներին պաշտպանեցին հայերն ու բուլղարները: Սակայն պատվիրակների բողոքներն ապարդյուն անցան: 1910-ին երիտթուրքերը դպրոցների օրենքն ուժի մեջ դրեցին եւ ազգային դպրոցներն անցան պետության տնօրինության տակ:

Միջավայրը գնալով ավելի շիկացավ: Թալեաթ փաշան դարձավ ներքին գործոց նախարար. 1909-ից սկսած միությունների մասին նոր օրենքը արգելում էր տարբեր բնույթի ազգային ու կրոնական միությունների ստեղծումը եւ

118 Nassibian (1985), 14-44

դրանով իսկ՝ փոքրամասնությունների միությունների գոյությունը: Դրան հաջորդեց մի փուլ, որի ընթացքում հույներն ու հրեաները հրաժարվեցին երիտթուրքերին աջակցելուց: Գեներալ Սեվքեթ փաշան (Sevket) հիմնել էր մի տեսակ քողարկված զինվորական բռնապետություն: Արեւելքում հայ դաշնակցականները սկսեցին ապստամբել: Նման լարված պայմաններում դժվար էր լուծումները գտնել կրոնական եւ ազգային բարդ հարցերի համար:

Թուրք-իտալական պատերազմը վերջացավ նրանով, որ Թուրքիան 1911 թ. Իտալիային զիջեց Լիբիան, ինչպես նաեւ Ռոդոսն ու Դոդեկանեսյան կղզիները: 1912-ի ամռանը Յունաստանը, Բուլղարիան, Սերբիան եւ Մոնտենեգրոն կազմեցին Բալկանյան միությունը: 1912 թ. հոկտեմբերի 1-ին սկսվեց Բալկանյան պատերազմը: Բուլղարիան գրավեց Թրակիան, Սերբիան՝ Կոսովոն, Մոնաստիրը, Օխրիդը եւ Սկոպիան, իսկ հույները հազիվ հասցրեցին բուլղարներից առաջ անցնել եւ Սալոնիկը գրավել: 1913 թ. փետրվարի 2-ին պատերազմական գործողությունները վերսկսվեցին, եւ մարտի 6-ին հույները գրավեցին Յոանինա, իսկ բուլղարները՝ մարտի 26-ին Եդիրնե (Ադրիանուպոլիս) քաղաքները: 1913 թ. ապրիլի 14-ին զինադադար հայտարարվեց, որի հետեւանքով Օսմանյան կայսրությունը Եվրոպայում կորցրեց ամեն ինչ, բացի Արեւելյան Թրակիայից: Երիտթուրքերը՝ Ջեմալ, Էնվեր եւ Թալեաթ փաշաներից կազմված Եռյակի ղեկավարությամբ, ստանձնեցին ամբողջ իշխանությունը: 1913 թ. Էնվեր փաշային հաջողվեց Էդիրնեն բուլղարներից ետ խլել: Սա թուրքերի վերջին հաղթանակն էր Եվրոպայում: Դրանով իսկ նրանք 1908 -1913 թթ. կորցրեցին կայսրության մեկ երրորդը:

Բռնությունները քրիստոնյաների հանդեպ չէին դադարում: Տրապիզոնում Ավստրիայի հյուպատոսը 1912 թ. սեպտեմբերի 9-ին հաղորդեց Վիեննա. «Չայերը մինչ այժմ սատարում են երիտթուրքերին, որոնց պարտական են Աբդուլ Յամիդի սոսկալի բռնատիրությունից, նաեւ բռնապետի մշտական հալածանքներից ու խոշտանգումներից ազատվելու համար: Նրանք հուսով են, որ կվարձատրվեն իրենց ծառայությունների համար: Սակայն Ադանայի կոտորածն ու քրդերի մշտական հարձակումները ուսուցանում են, որ նրանք սահմանադրական կառավարության ներքո եւս պետք է զգաստ մնան»¹¹⁹: Վանի շրջանում դաշնակցականները պաշտպանեցին հայ գյուղացիներին, որոնց տունն ու տեղը զավթել էին քրդերն ու նրանց աղաները:

Երիտթուրքական «Միություն եւ առաջադիմություն» (իթթիհատ) շարժումն աստիճանաբար ձեռք բերելով որոշիչ ուժ, 1913-ից սկսեց կառավարել բռնապետական ոճով: Դեռեւս տարվա սկզբին Էջմիածնի կաթողիկոս Գեւորգ Յինգերորդը պատվիրակ էր ուղարկել մեծ տերությունների՝ Բեռլինի պայմանագրում խոստացված բարենորոգումների իրականացման պահանջով:

119 Nassibian (1985), 47.

Իսկ 1912 թ. հոկտեմբերին կաթողիկոսը կոչ արեց Ռուսաստանին՝ միջամտելու ի նպաստ թուրքահայերի: 1912 թ. դեկտեմբերի 26-ին ռուսական կառավարությունը պահանջեց թուրք կառավարությունից 1878 թ. խոստացված բարենորոգումների իրականացումը: Դեկտեմբերի 31-ին Պետերբուրգում Ավստրիայի դեսպանը հաղորդեց, որ առանց դրսի ճնշման Թուրքիան նախկինում խոստացած բարենորոգումները չի կատարի: Իսկ 1913 թ. հունվարի 11-ին Ավստրիայի դեսպանը մեջ բերեց արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովի խոսքերը, որ Ռուսաստանը «որպես Արևելքի քրիստոնյաների պաշտպան, հավատարիմ կմնա իր առաքելությանը [եւ] ոչ մի դեպքում չի հանդուրժի հայկական կոտորածների կրկնությունը»¹²⁰:

1913 թ. մայիսին մեծ տերությունների միջև Հայկական հարցի շուրջ նոր բանակցություններ տեղի ունեցան: Հայոց պատրիարք Յովհաննես Արշարունի Տասներկուերորդը 1913 թ. մայիսի 12-ին Մեծ վեզիրին հանձնեց հուշագիր՝ հայերի անմխիթար վիճակի մասին: Հունիսին Ռուսաստանն առաջարկեց դեսպանների խորհրդաժողով հրավիրել: Գերմանիան, Ավստրո-Հունգարիան եւ Իտալիան պատրաստակամություն հայտնեցին այնտեղ ելույթ ունենալու: Գերմանիան եւ Անգլիան ջանք էին թափում պահպանելու Թուրքիայի ամբողջականությունը: 1913 թ. հուլիսի 1-ին Ռուսաստանի դեսպանը մեծ տերությունների ներկայացուցիչներին առաջադրեց բարենորոգումների մի տարբերակ: Միաժամանակ հայ արքեպիսկոպոս Յմայակը Ավստրիայի դեսպան Պալավիչինին (Pallavicini) հանձնեց երկու հուշագիր. մեկը Թուրքիայից հայերի արտագաղթի ուժեղացման մասին էր, որը 1913-ին հասել էր աննախադեպ չափերի, իսկ մյուսը՝ հայերի հետեւյալ պահանջների մասին. որ հայկական բոլոր նահանգները միավորվեն, որ նահանգապետ նշանակվի մեծ տերությունների համաձայնությամբ եւ որ թուլյատրվի հայերենը որպես դատարանի լեզու: Դաշնակցության առաջնորդ Ակնունին 1913-ին օգոստոսին Չմյունխայում հանդիպեց Ավստրիայի հյուպատոս Շթումմֆոլլի (Stummvoll) հետ, որին բացատրեց Եվրոպայի վերահսկողության կարեւորությունը: Միաժամանակ որոշ հայ մտավորականներ, այդ թվում Պողոս Նուբար փաշան, դիմեցին «Թայմսին» ու բրիտանական կառավարությանը՝ պահանջելով իրավունքի ապահովում եւ վարչական բարեփոխումներ: Հատկանշական է, որ 1913-ին, այն դեպքում երբ Կոստանդնուպոլսի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 1.250.000, որի 500.000 ոչ մուսուլմաններ էին, ժանդարմների եւ ոստիկանների նույնիսկ մեկ տոկոսը չի եղել ոչ մուսուլման¹²¹: 1913 թ. դեկտեմբերին Քենթերբերիի արքեպիսկոպոսը նախագուշացրեց Անգլիայի արտաքին գործոց նախարար Գրեյին մոտալուտ կոտորածի մասին եւ

120 Նուլյն տեղում, 50.

121 Նուլյն տեղում, 23f.

122 Նուլյն տեղում, 30.

հարցրեց, թե ինչ է մտադիր կառավարությունը ձեռնարկել դրա դեմ¹²²:

Գերմանական կառավարությունը նման վիճակում մտաբերեց Յովանսես Լեփսիուսին, որը պիտի ներգործեր հայ առաջնորդների վրա: Լեփսիուսը կարողացավ հայերին համոզել, որ հրաժարվելիս ռուսական ծրագրերից: Մեծ տերություններին պիտի թույլատրվեր մասնակցել գլխավոր տեսուչների ընտրությանը: Հայերի գործադիր կոմիտեն որոշեց Լեփսիուսի միջոցով բանակցությունների մեջ մտնել թուրքական կառավարության հետ¹²³: 1913 թ. օգոստոսի սկզբին դեսպանների խորհրդաժողովն ավարտեց աշխատանքները: Ռուսաստանի առաջարկները զգալիորեն ուժազրկվեցին: Գերմանիայի դեսպան Վանգենհայմը (Wangenheim) եւ Ռուսաստանի դեսպան Գիրսը (Giers) Մեծ վեզիրին ներկայացրին բանակցությունների արդյունքը, որը երկու սահանգի համար սախատեսում մեկական գլխավոր տեսուչ՝ արտասահմանյան չեզոք մի երկրից: 1914 թ. փետրվարի 8-ին Թուրքիան եւ Ռուսաստանը ստորագրեցին բարենորոգումների նի փաթեթ, որը երկու սահանգի համար սախատեսում մեկական գլխավոր տեսուչ արտասահմանյան չեզոք մի երկրից¹²⁴: Ավստրիայի դեսպան Պալավիչինին (Pallavicini) այդ մասին հաղորդում է Վիեննա. «Ռուսական սախագծի ամենակարեւոր պահանջը՝ պետությունների կողմից վերահսկողության սահմանում բարեփոխումների կառույցի վրա, Բարձր դռան կողմից չընդունվեց. դրանով իսկ բարեփոխումները արժանացան նույն ճակատագրին, ինչ Թուրքիայի բարեփոխումների բոլոր խոստումներն անցյալում»¹²⁵: Ի վերջո հոլանդացի Վեստենենկը (Westenenk) նշանակվեց Տրապիզոնի, Էրզրումի ու Սվազի, իսկ Լորվեզացի հազարապետ Հոֆը՝ Վանի, Դիարբեքի, Բիթլիսի եւ Խարբերդի շրջանների տեսուչ: Սակայն նրանց առաքելության կարիքն այլեւս չզգացվեց:

Սկսած 1913 թ. վերջից Թուրքիայում արդեն կառավարում էր աջ ծայրահեղական երիտթուրքական եռապետությունը՝ ներքին գործոց սախարար Թալեաթ փաշայի, Ջեմալի եւ ռազմական սախարար Էնվերի ղեկավարությամբ: Երիտթուրքերի կոմիտեն, եւ հատկապես ռազմական սախարար Էնվերը, 1911-ից քարոզում էին համատարած թրքացում (Pantürkismus), որն ընդգրկելու էր թուրքական ժողովուրդներին (Turkvölker) մինչեւ Մոնղոլիա: Ռուսաստանը համատարած թրքացման գլխավոր թշնամին էր: 1913-ի վերջին ստեղծվեց «Teskilati Mahsusa» հատուկ միությունը, որն իրականացնելու էր Փոքր Ասիայի «թրքացումը»: 1914 թ. գարնանից գաղտնի նիստերում քարոզում էին «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կենտրոնական

123 Ohandjanian 1969, 59f.

124 Gust (1993), 154f.

125 Ohandjanian (1969), 65.

126 Hans-Lukas Kieser u. Dominik Schaller: *Der Völkermord an den Armeniern und die Shoah. The Armenian Genocide and the Shoah*, 2. Aufl. Zurich 2003, 19.

կոմիտեի նպատակը. «Ռազմավարական նշանակություն ունեցող դիրքերում գտնվող ոչ թուրքական կարեւոր բնակավայրերի ոչնչացում»¹²⁶:

Ջելալ Բայարը (Celal Bayar)՝ Թուրքիայի հետագա պետական քարտուղարը, որպես «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կոմիտեի գլխավոր քարտուղար, 1914 թ. գարնանը Չմյուռնիայում կազմակերպեց «ցեղային գտում»: Իր իսկ վկայությամբ, ահաբեկիչների հրոսակախմբերը Չմյուռնիայի շրջակայքից հունաստան քշեցին 130.000 ուղղափառ հույն: Էգեյականի ափերին եւ Թրակիայում բոյկոտի միջոցով հույների ու հայերի տնտեսական մեկուսացումը գալիք կոտորածների նախերգանքն էր: Այն ժամանակ Փոքր Ասիայի բնակչության զգալի մասը քրիստոնյա էր: Էսրեդ Կուսչուբաշին՝ (Esred Kuscubasi)՝ «Teskilat-i Mahsusa»-ի հատուկ զորամասի հրամանատարը, խոսում էր միայն 1914 թվականի 1.500.000 արտաքսվածների մասին¹²⁷: Առաջին աշխարհամարտի բռնկումը շատ հարմար առիթ էր թուրքերի համար: Չիյա Գոքալպը (Ziya Gokalp) «Միություն եւ առաջադիմություն» միության ռահվիրաներից մեկը, պատերազմի սկզբում կոչ էր անում ոչնչացնել Ռուսաստանը: Թուրքական կառավարության հարկային քաղաքականությունը շատ հայերի երկրից դուրս վանեց. 1908 թ. Վանում հայ բնակչության 64 տոկոսը նվազել էր 50-ի¹²⁸: Սուլթանի կողմնակիցների խռովությունը ձախողելուց հետո երիտթուրքերը հայտարարեցին պաշարման դրություն եւ կասեցրին սահմանադրական իրավունքները: «Այդ շրջանում ամրապնդվեցին թուրքական շատ առաջնորդների թրքականության եւ ծայրահեղ նացիոնալ-սոցիալիզմի գաղափարները»¹²⁹:

Առաջին աշխարհամարտից քիչ առաջ կասեցվեցին եվրոպական պետությունների հետ համաձայնեցված արեւելյան նահանգներում անցկացվելիք վարչական վերանորոգումները: Մինչ այդ Թուրքիա ժամանած գլխավոր տեսուչներ Հոֆ (Hoff) ու Վեստենենկը (Westenenk) 1914-ի օգոստոսին երկրից վտարվեցին: 1914 թ. օգոստոսի 2-ին երիտթուրքական կառավարությունը Գերմանական կայսրության հետ դաշինք կնքեց, որը նախատեսում էր Թուրքիայի՝ պատերազմի հայտարարությունը Ռուսաստանին: Էսվեր փաշան՝ երիտթուրքերի առաջնորդներից մեկը, սկսեց իր ռազմարշավը Ռուսաստանի վրա, որը վերածվեց ռազմական աղետի: Այժմ արդեն թուրքական կառավարությունը կարիք չուներ նկատի առնելու արեւմտյան տերություններին: Դրանով իսկ իթթիհատը կարող էր իրագործել հայ ժողովրդին բնաջնջելու իր ծրագիրը: Ընդ որում, ապահովված էր գերմանական քաղաքականության աջակցությունը, իսկ Ավստրո-Հունգարիան բավարարվում էր անցողիկ բողոք-

127 Նույն տեղում, 21.

128 Gust (1993), 121.

129 Hovannisian, o. J., 21.

ներով: Պատերազմի բռնկումից քիչ առաջ, 1914-ի գարնանը Յոհաննես Լեփսիուսը հիմնեց «Գերմանա-հայկական ընկերությունը», որը 1914 թ. հունիսի 16-ին առաջին անգամ օգնության կոչով դիմեց հասարակայնությանը: Իսկ հայերի համար տարվող աշխատանքներին օժանդակելու նպատակով Լեփսիուսը 1916 թ. հիմնեց «Օգնության միությունը»՝ Թուրքիայում հայերի տառապանքը մեղմելու եւ նրանց նկատմամբ հետաքրքրությունը արթուն պահելու համար:

9. Քրիստոնյաների կոտորածները Առաջին աշխարհամարտի ժամանակ

Մինչև աշխարհամարտի սկիզբը Անգլիայի շահերը պահանջում էին, որ Թուրքիան մնար անխաթար՝ որպես պատվար Ռուսաստանի դեմ: Գերմանիան, որը 1880-ական թթ. Օսմանյան կայսրության տնտեսության, այդ թվում եւ Բաղդատի երկաթուղու շինարարության մեջ մեծ ներդրումներ էր արել, այն երկիրն էր, որ ամենից շատ էր շահագրգռված Թուրքիայի հզորության մեջ՝ որպես դաշնակից գործընկեր ընդդեմ «Անտանտ Զորոյալի»¹³⁰ եւ Ավստրո-Յունգարիայի, որոնցով նա շրջափակված էր: Երկու հակադիր կողմերն էլ նախ եւ առաջ փնտրում էին թուրքական կառավարության բարեհաճությունը: Դեռեւս 1914 թ. փետրվարին գերմանացի մարշալ ֆոն Գոլցը (von Golz) Գերմանա-Ասիական ընկերության նիստում առաջարկեց հայերին տեղափոխել Միջագետք¹³¹: Ակնհայտ է, որ նա սատարում էր երիտթուրքերի՝ հայերի տեղահանության ծրագիրը: 1915 թ. Թալեաթ փաշան կարող էր Յոհաննես Լեփսիուսի երեսին ասել. «Մենք իրագործում ենք ձեր ծրագիրը»¹³²: Անտանտը նույնպես փորձեց թուրքերի հետ լավ հարաբերություններ ստեղծել: Չերչիլը, որպես ծովակալության լորդ, առաջարկեց երկու ռազմական հանձնել թուրքերին: Այնուհետեւ, 1914 թ. օգոստոսի սկզբին Գերմանիայի դեսպան Վանգեն-հայմը երիտթուրքական կառավարության հետ ամփոփեց մի պայմանագիր, որով թուրքերը պարտավորվում էին պաշտպանել Գերմանիային, եթե Ռուսաստանը հարձակվեր նրա վրա: Օսմանյան կայսրությունը նախ չեզոքություն պահպանեց, բայց 1914 թ. հոկտեմբերի վերջին Գերմանիայի կողմից մտավ պատերազմի մեջ: Սկզբում երիտթուրքերը բանակցություն վարեցին Դաշնակցություն կուսակցության հետ՝ Ռուսաստանի դեմ դուրս գալու հեռանկարով: Սակայն, ինչպես նշում է Յոհաննես Լեփսիուսը, հայերը ո? չ Ռուսաստանից, ո? չ էլ Թուրքիայից չէին կարող սպասել իրական ինքնավարություն: Թրքահայերը պատրաստ չէին կռվելու ռուսների դեմ, վերջիններիս համարելով իրենց բարեկամը: Իսկ ռուսահայերը վախենում էին, որ թրքահայերը զոհ կգնան կոտորածներին, եթե իրենց ջոկատները պատերազմի մեջ մտնեին:

130 Ohandjanian (1989), 208.

131 Նույն տեղում, 213.

132 Nassibian (1985), 108.

Նիկոլայ Երկրորդ ցարը՝ ռազմաճակատ կատարած այցելության ժամանակ, պատասխանելով Հայոց կաթողիկոս Գեւորգ Յինգերորդին, որը դիմել էր նրան՝ թրջահայերին ազատագրելու եւ իր հովանավորության տակ առնելու խընդրանքով, ասել էր, որ հայերին մեծ ապագա էր սպասում: Կոստանդնուպոլսի պատրիարք Չավեն Տեր-Եղիայանը խոհեմության կոչ արեց: Դաշնակցության առաջնորդ Ակնունին իթթիհատի առաջնորդ Մեհմեդ Թալեաթի հետ խոսակցությունից հետո հայտարարեց, որ կառավարությունը ճանաչում է հայերի օրինապահությունը:

Առաջին աշխարհամարտի սկզբին հայերի թիվն աշխարհում մոտ 4,5 միլիոն էր, որից 1,5 միլիոնը ապրում էր Ռուսաստանի կովկասյան մարզերում: Ըստ թուրքական կառավարության տվյալների հայերի թիվը Օսմանյան կայսրությունում 1,3 միլիոն էր, որից 628.000 ապրում էր արեւելյան նահանգներում, այնտեղ կազմելով հինգ միլիոն բնակչության 12,53 տոկոսը: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի տվյալներով հայերի թիվը Օսմանյան կայսրությունում 2,1 միլիոն էր, որից 1.010.000 ապրում էր արեւելյան նահանգներում, այնտեղ կազմելով բնակչության 38 տոկոսը: Նրանք՝ 25,4 տոկոս թուրքերի ու 16,3 տոկոս քրդերի կողքին ներկայացնում էին ազգային ամենամեծ խումբը: Իրական թվի մասին, որը տատանվում էր 1,3-ից 2,1 միլիոնի միջեւ, կողմերը մինչեւ օրս չեն կարողանում համաձայնության գալ¹³³:

1914 թ. մարտից ու ապրիլից թուրքերն սկսեցին հայերի արտաքսումը Չեյթունից եւ Ադանայի գավառից: Գերմանացի մի սպա, որը ղեկավարում էր Ադանայի հայկական թաղերի հրետակոծումը, նամակում գրում էր, որ այժմ «բարենպաստ առիթ էր Չեյթունում մի քիչ մաքրություն անելու»¹³⁴: 1914 թ. հուլիսի 14-ին թուրքական կառավարությունը ձերբակալեց Հնչակյան կուսակցության 20 ղեկավարների: Նրանք՝ որպես պետության դավաճաններ դատապարտվելուց հետո, հուլիսի 15-ին Ստամբուլում հրապարակայնորեն կախաղան հանվեցին: Երբ 1914 թ. օգոստոսին Երզրումում Դաշնակցություն կուսակցությունն իր համագումարն էր անցկացնում, Կոստանդնուպոլսում «Տեսքիլաթ-Մահսուսայի» (Teskilat-Mahsusa) հատուկ զորամասի մահվան ջրկատները՝ բոլոր մասնակիցներին սպանելու հանձնարարություն ստացան¹³⁵:

Առաջին աշխարհամարտի սկզբին սիոնիստական շարժումը իրեն չէզոք հայտարարեց: Զեմալ փաշան, որ պատկանում էր «երիտթուրքական Եռյալկին», ստանձնեց եգիպտական ճակատի գլխավոր հրամանատարությունը: Նա փակեց սիոնիստական հաստատությունները եւ աքսորեց կամ արտաքսեց այն հրեաներին, որոնք օսմանահպատակ չէին եւ ճնշում գործադրեց

133 Nassibian (1985), 3.

134 Hovannisian (1984), 25.

135 Wurmbrand-Roth (1989), 443.

հրեաների վրա՝ կասկածելով, որ նրանք թշնամու կողմն էին: Պատերազմի ժամանակ սինիստները գնալով ավելի համակիր դարձան ազլիացիներին. հրեական «Zion Mule Corps» ջոկատը բրիտանական դրոշի ներքո մասնակցեց Գալիպոլիի վրա գրոհին: Սինիստների առաջնորդ Չայիմ Վայցմանը (Chaim Weizman) 1917 թ. հոկտեմբերի 2-ին Բրիտանիայի արտաքին գործոց նախարար Արթուր Բալֆուրից (Arthur Balfour) ստացավ Բալֆուրի հայտարարության տակ ստորագրությունը՝ Պաղեստինում հրեաների համար հայրենիք հիմնելու խոստումով՝ միաժամանակ արաբների իրավունքները պաշտպանելու պայմանով: Այս փաստաթուղթն այսօր Իսրայելում դիտվում է որպես հրեական ազգային պետության հիմնադրման մի տեսակ վավերացում:

Նոյեմբերի 10-ին Գերմանիայի դեսպան Վանգենհայմը եւ Թուրքիայի նախարար Թալեաթը կնքեցին դաշինք Գերմանիայի եւ Օսմանյան կայսրության միջեւ¹³⁶: Հաջորդ օրը իսլամի գերագույն հոգեւորականը ջիհադի կոչ արեց: Օսմանյան կայսրության՝ որպես Գերմանիայի դաշնակից պատերազմի մեջ մտնելը, հանգեցրեց Թուրքիայի վերջին երկու քրիստոնյա նախարարների հրաժարականին: Նրանք էին՝ առետրի ու գյուղատնտեսության նախարար Սուլեյման Բուստանին (Sulayman Bustani), որը քրիստոնյա արաբ էր, եւ փոստի հայ նախարար Օսկան (Oskan) Էֆենդին: Նրանք երկուսն էլ Թալեաթին եւ Էնվերին բողոքել էին գերմանացիների խարդավանքների մասին եւ դժգոհ էին, որ թուրքերը պատերազմի մեջ էին մտել Գերմանիայի կողմից¹³⁷: Սուլեյման իբն Խաթար ալ Բուստանիի վերելքը նման բարձր պաշտոնի, չնայած որ նա մարոնիտ քրիստոնյա էր Լիբանանի լեռնային Շուֆ շրջանից, հատկանշական էր միայն այնպիսի երեւելիների համար, որոնք ավարտել էին Բեյրութի ամերիկյան կրթական հաստատությունները: Նա խոսում էր արաբերեն, թուրքերեն եւ անգլերեն, ուղեւորվել էր Եգիպտոս, Իրան, Յնդկաստան, ԱՄՆ եւ Եվրոպա: Բասրայում եւ Բաղդատում պետական ծառայության տարիներից հետո նա թարգմանել էր Իլիականը արաբերեն: 1908-ին նա Բեյրութում ընտրվել էր պառլամենտում, իսկ 1913-ին նշանակվել առետրի, գյուղատնտեսության եւ արդյունաբերության նախարար: Երբ 1914 թ. Բուստանին բողոք հայտնեց Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու դեմ, հարկադրված եղավ հրաժարական տալ եւ փախչել Շվեյցարիա, որտեղ աքսորի մեջ ապրեց մինչեւ 1919 թ.: Այնուհետեւ տեղափոխվեց Եգիպտոս, իսկ 1924-ին՝ Նյու-Յորք, որտեղ եւ մեկ տարի անց մահացավ: Նրա կյանքը ցույց է տալիս, որ որոշ քրիստոնյաներ կարողացել են Օսմանյան կայսրությունում

136 Menfer Sahinter: *Kemalismus. Ursprung, Wirkung und Aktualität*, Hückelhofen 1997, 274-276.

137 Morgenthau (2003), 84.

138 The Encyclopaedia of Islam, Bd. X, Leiden 1986, 161f.

հասնել քաղաքական բարձր պաշտոնների¹³⁸:

Պատերազմի բռնկումից հետո գերմանական Գոեբեն (Goeben) եւ Բրեսլաու (Breslau) հաժանավերը, որոնք «գնվել» ու ծառայության մեջ էին դրվել թուրքերի կողմից, 1914-ի աշնանը մտան Դարդանել: Սա հանգեցրեց դրան, որ հոկտեմբերի սկզբին դաշնակիցները Թուրքիային պատերազմ հայտարարեցին: Էնվեր փաշան, որ 1909–1911 թթ. Բեռլինում եղել էր ռազմական կցորդ, դարձավ ռազմական նախարար, փաշա եւ գլխավոր հրամանատարի տեղակալ: Ռասիստական գաղափարախոսության վրա հիմնված նրա գավթոդական ռազմարշավը դեպի Ատրպատական՝ կրելով ծանր կորուստներ ձախողվեց: Սկսած 1914-15 թթ. ձմեռվանից Թուրքիայում հայ զինվորներին զինաթափում էին, նրանցից նախ կազմավորում էին սակրավորների զորամասեր, այնուհետեւ խումբ առ խումբ տանում եւ գնդակահարում էին¹³⁹:

1915 թ. սկզբներին Բերայում հայտնաբերվեց իտալացի եւ ֆրանսիացի հոգեւորականների մի հեռագիր՝ ուղղված դաշնակիցների նավատորմին, որի մեջ խոսվում էր այն մասին, որ Կոստանդնուպոլսի քրիստոնյաները ծրագրում էին նավատորմին օգնություն ցույց տալ: Սա եւս առիթ հանդիսացավ, որ քրիստոնյա զինվորները պարբերաբար զինաթափվեին: 1915 թ. փետրվարի 18-ին երիտթուրքերի կենտրոնական կոմիտեն գրեց Ադանայի կառավարիչ Ջեմալ բեյին. «Թուրքիայում միակ ուժը, որը կարող է խանգարել իթթիհատի քաղաքական կյանքին, հայերն են: Հայրենիքն այդ անիծյալ ժողովրդի ընչաքաղցությունից ազատելու նպատակով, կենտրոնական կոմիտեն իր հայրենասեր ուսերի վրա է վերցնում՝ օսմանյան պատմության վրա ծառանալիք վատ համբավի պատասխանատվությունը: Կտորածներն իրականացնելու համար նահանգապետերն ու բանակի գլխավոր հրամանատարները ժամանակին կստանան կառավարության անհրաժեշտ ցուցումները»: 1915 թ. մարտի 25-ին կենտրոնական կոմիտեն գրեց նույն կառավարչին. «Մեր բոլորի պարտքն է ոչնչացնել այն բոլոր տարրերը, որոնք դարեր շարունակ խանգարել են պետության քաղաքակրթության առաջընթացին»¹⁴⁰:

Հավանաբար 1915 թ. մարտի վերջերին էր, որ երիտթուրքերի կենտրոնական կոմիտեում ընդունվեց հայերի բնաջնջման վերջնական որոշումը: 1915 թ. մարտի 31-ին արգելվեց Դաշնակցություն կուսակցության ղեկավար մարմնի գործունեությունը: Երկրի արեւելքում պատասխանատու գեներալները հայտարարեցին, որ հայերն են մեղավոր ռազմարշավի ձախողման համար:

139 Tessa Hofmann: “Deutsche Quellen und Augenzeugenberichte zum Völkermord an den Armeniern 1915/16”, in: *Das Verbrechen des Schweigens*, hg. v. Tessa Hofmann, (= Pogrom-Taschenbücher 1012), Wien 1984 92-119.

140 Mesrop Krikorian: “Der Genozid. Völkermord an den Armeniern”, in: “...Aber unvergänglich sind wir wie unsere Berge”, *Armenien*, hg. v. Erich Renhart u. Jasmine Dum-Tragut, Graz-Wien 1997, 46-52, hier 46f.

Մինչև 1915 թ. ապրիլի 12-ը ձերբակալվեցին նաև Դաշնակցություն կուսակցության ղեկավար շատ անդամներ, չնայած որ նրանցից շատերը սատարել էին երիտթուրքերին¹⁴¹:

Դաշնակիցների՝ 1915 թ. ապրիլի 25-ին Դարդանեղի ափ դուրս գալու փորձը, Թուրքիայի վարչակարգին մեծ վտանգի ենթարկեց: Գերմանական ռազմական մի ներկայացուցչություն սատարեց թուրքերին: Թուրքական կառավարությունն այժմ այլևս կարիք չունեի հաշվի առնելու արեւմտյան տերություններին, եւ բոլոր միջազգային պայմանագրերը արտասահմանցիների իրավունքների մասին, անվավեր ճանաչվեցին: 1915-ի հուլիսին հայերի խռովություններ բռնկվեցին Սվազի գավառում, իսկ հոկտեմբերին՝ Եղեսիայում: Թուրքական բանակը պատերազմի բռնկումից հետո արեւելյան ճակատում անասելի վայրագությամբ բռնագրավեց հայ գյուղացիների սննդամթերքը: Սպանվեցին պառլամենտի երկու հայ պատգամավորներ:

Վան քաղաքը այն սակավաթիվ վայրերից էր, որտեղ հայերը դիմադրություն ցույց տվեցին թուրքերին: Այստեղ եւս նախապես տեղի էին ունեցել ջարդեր: Մոլլաները մզկիթներում մուսուլմաններին հրահրել էին հայերի դեմ: Հայ եպիսկոպոսը օգնություն խնդրեց փոխհյուպատոսից եւ տեղյակ պահեց պատրիարքին Վանում ստեղծված վիճակի մասին¹⁴²: Նահանգապետը հյուպատոսի հետ զրույցի վամանակ ամբողջ պատասխանատվությունը բարդեց բանակի վրա: Հայերին երկու ժամ տրվեց՝ նախապատրաստվելու տարհանման: Ոստիկանները նրանց հետ վարվում էին, ինչպես կվարվեն թշնամու հետ: Մի խումբ հայեր ապրիլի 20-ին քաղաքի միջնաբերդում ինքնքապաշտպանության որոշում ընդունեցին: Գերմանիայի փոխհյուպատոս Մաքս Էրվին ֆոն Շոյբները (Max Erwin von Scheubner) այդ մասին հաղորդեց Կոստանդնուպոլսի դեսպանին: Մայիսի 18-ին ռուսներն անսպասելիորեն ազատագրեցին պաշարվածներին եւ քաղաքը գրավելուց հետո այրեցին սպանված հայերի 55.000 դիակ: Շոյբներն աստիճանաբար հասկացավ, որ տեղի ունեցածը ոչ թե ապստամբների դեմ միջոցառում էր, այլ արտաքսման կանոնավոր նախաձեռնություն, որի նպատակը բնաջնջում էր: Ռուսների նահանջից հետո, 1915 թ. օգոստոսի 11-ին այնտեղ նոր կոտորածներ տեղի ունեցան: Վանի հայերի այսպես կոչված «հեղափոխությունը» հետագայում թուրքերի համար ծառայեց որպես ցեղասպանության արդարացում¹⁴³:

Էրզրումի շրջանում հազարավոր տարագիրներ գիշերում էին բաց դաշտում: Էրզրումում Գերմանիայի հյուպատոսը 1915 թ. օգոստոսի սկզբին

141 Gerayer Koutcharian: *Der Völkermord an den Armeniern (1915-1917)*, in: Tessa Hofmann: *Verfolgung, Vertreibung...*(2004), 55-75.

142 Hilmar Kaiser: "A Scene from the Inferno. The Armenians of Erzerum and the Genocide 1915-1916", in: Kieser-Schaller (2003), 129-186.

143 Henry Morgenthau: *Ambassador Morgenthau's Story*, Detroit 2003, 202-206, Kap. 23.

հաղորդեց, որ այնտեղ արդեն այլևս հայ չէր մնացել: Տեղահանվածների ունեցվածքը թուրքերն ու քրդերը յուրացնում էին: Այսպիսով, առաջանում էր հարուստների մի նոր խավ, որը հետագայում կարելու էր խաղաց Թուրքիայում: 1915 թ. սեպտեմբերի 9-ին Թալեաթը հեռագրեց Յալեպի կառավարչին. «Յայերի՝ Թուրքիայում ապրելու իրավունքը պետք է իսպառ վերացնել: Կառավարությունը, որն ամբողջովին ստանձնում է դրա պատասխանատվությունը, հրամայել է չխնայել նույնիսկ օրորոցի երեխաներին»¹⁴⁴: Սա է հիմք հանդիսացել, որ 1919-ին Թալեաթը դատապարտվել է մահվան: Մինչեւ 1907 թ. հազարավոր հայեր հալածանքների զոհ դարձան, սակայն այժմ, երիտթուրքական իշխանավորների նպատակը որոշակիորեն այլ էր. մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը՝ ռասիստական հիմնավորումով: Սա որակապես բոլորովին նոր երեւույթ էր, որը հնարավոր չէ համեմատել Օսմանյան կայսրության սուլթանական շրջանի կոտորածների հետ:

Երզրումի հայերի տեղահանման մի մանրակրկիտ ուսումնասիրություն նկարագրում է այդ քաղաքի հայերի անցած գողգոթան մինչեւ նրանց բնաջնջումը: Այն սկսվում է նախ՝ հայ զինվորների զինաթափումով եւ 1915 թ. մարտին՝ նրանց տեղափոխումով աշխատանքային գումարտակները: 1915 թ. մարտի 23-ին Երզրումի, Բիթլիսի եւ Վանի նահանգների նահանգապետերը Թալեաթից հրահանգ ստացան՝ բոլոր հայերին քշելու Մոսուլի եւ Ուրֆայի անապատները¹⁴⁵: Շոյքները տեսակցություն խնդրեց 3-րդ բանակի հրամանատար Մահմուդ Զյամիլ փաշայի հետ: Այստեղ նա տեղեկացավ, որ հայերին տեղափոխելու էին ոչ թե որոշ հեռավորության վրա, այլ Եփրատի ստորին հոսանքի շրջան՝ Դեր Էս-Չորի համակենտրոնացման ճամբարները: Շոյքները անմիջապես ուղարկեց պաշտոնյաներից մեկին՝ Յոհան Յայնրիխ Մորդմանին (Johann Heinrich Mordtmann) Թալեաթի մոտ: Վերջինս մայիսի 29-ի ընդունելության ժամանակ հայտարարել էր, որ աքսորն անհրաժեշտություն է դարձել, քանի որ գտնվել են հայերի դավադրությունների բազմաթիվ ապացույցներ: Դեսպանությունը տեղեկատվությունը փոխանցեց Ադանայի, Յալեպի, Բաղդատի եւ Մոսուլի հյուպատոսություններին: Տեղեկատվության մեջ ասվում էր, որ ռազմական նախարար Էնվեր փաշան ընդունել է աքսորի որոշում. որ հայերի փրկությունը միայն իսլամ ընդունելն է. որ կաթոլիկ հայերը նույնպես զերծ չէին մնում աքսորից: Դեսպան Վանգենհայմը արգելեց Շոյքներին շարունակել միջամտությունը եւ բողոքագրեր այլևս չփոխանցվեցին: Իսկ Շոյքները շուտով հասկացավ, որ Երզրումում հայերի դավադրության որեւէ ապացույց չէր գտնվել, եւ որ Թալեաթի հայտարարությունը ոչ այլ ինչ էր, քան

144 Krikorian (1997), 47.

145 Նուռյն տեղում, 136 (տալով գրության տվյալները Օսմանյան կայսրության պետական արխիվից):

արդարանալու մի միջոց:

1915 թ. հունիսի 15-ին սկսվեց հայերի տեղահանումը բուն Երզրում քաղաքից: Ժնեւի ՄԱԿ-ի արխիվում դեռեւս կան արձանագրություններ, որոնք կազմվել են Ազգերի ընկերակցության կողմից 1920-1930 թթ. Հալեպում՝ բռնազաղթը վերապորոզների տված տեղեկությունների հիման վրա¹⁴⁶: Շոյբները տեղեկացավ նաեւ աքսորի երթուղիների պայմանների մասին, որոնց ընթացքում հայերը հաճախակի հարձակումների էին ենթարկվել քրդական հրոսակախմբերից: 1915 թ. հունիսի 23-ին Շոյբներին այցելել է Կարապետ անունով 55-ամյա մի հայ, նախկինում հյուպատոսարանի սննդամթերք մատակարարողը: Նա աքսորյալների հետ հասել էր մինչեւ Եփրատ, որտեղ քրդերը հարձակվել էին բռնազաղթածների շարասյան վրա: Երբ հյուպատոսը գեներալ Մահմուդ Քյամիլին ասել է, որ տեղահանումը ռազմական անհրաժեշտություն չի եղել, վերջինս նրան բացատրել է, որ պատերազմից հետո «Հայկական հարցը» վերանալու էր¹⁴⁷: Երբ հունիսի 30-ին պաշտոնապես հաղորդվել է, որ Երզրումի տեղահանվածներից սպանվել է 3000 հոգի, Շոյբներն այդ թիվը համարել է շատ փոքր: Ըստ նրա հաշվարկների՝ քրդերն եւ թուրքական անկանոն ավազակախմբերը սպանել են 10.000-20.000 հայ, եւ 1915 թ. հուլիսի 15-ին Երզրումում այլեւս հայեր չէին մնացել:

Շոյբները նահանգապետ Թահսինի հետ այցելել է Երզնկա հասած Երզրու - մից աքսորված հայերին եւ այնտեղ տեղեկացել, թե ինչ տառապանքների միջով են նրանք անցել: Մի գերմանացի տեսել էր Տրապիզոնից եւ Երզնկայից տեղահանվածներից՝ կենդանի մնացած հայերի մի խումբ: Նա վկայել է, որ կանայք մեծ մասամբ կիսամերկ ու քաղցած էին, եւ խոտը նրանց միակ սնունդն էր: Երբ գերմանացուց փող են խնդրել, ժանդարմները ծեծել են նրանց: Ականատեսը նկարագրել է, թե ինչպես ժանդարմները փողոցում կանանց ու երեխաների հետ վարվում էին «կենդանիների» պես: Շոյբները հասկացել էր, որ «անկանոն» ավազակախմբերը գործում էին երիտթուրքերի եւ օսմանյան կառավարության գիտությամբ, եւ որ դեպի անապատ՝ թալանով ու ջարդերով ուղեկցվող աքսորը համապատասխանում էր կառավարության կողմից մանրամասնորեն մտածված մի ծրագրի: 1915 թ. օգոստոսի 5-ին Շոյբները գեկուցեց դեսպանին, որ իր հյուպատոսական տարածքում այլեւս հայ չի մնացել¹⁴⁸: Նա նաեւ հաղորդեց, որ գնալով ավելի շատ էր տարածվում այն լուրը, որ գերմանացիներն են թուրքերին հրահրողը: Թուրքական վերնախավը բացատրել էր Շոյբներին, որ մինչդեռ Աբդուլ Համիդի ջարդերը տղամարդկանց կռիվ էր, այժմ «անկանոններն» ու քրդերը կոտորում էին անմեղ կանանց ու երեխաներին: Շոյբները 1915 թ. սեպտեմբերի վերջին թողեց Երզրումը: Նրան

146 Նույն տեղում, 177f, Ann. 55.

147 Նույն տեղում, 141.

148 Նույն տեղում, 143.

հաջորդեց Ֆրից Վերներ ֆոն Շուլենբուրգը (Fritz Werner von Schulenburg), որն անմիջապես բռնեց Վանգենհայմի դիրքը: Տրապիզոնում Ավստրիայի հյուպատոս Էռնստ Կվիատկովսկին (Ernst Kwiatkowski) հաղորդեց, որ Շուլենբուրգը ջարդերը նկարագրում է մեղմ գույներով: Երվին ֆոն Շոյբների օրինակը ցույց է տալիս, թե այդ ժամանակների օտար դիվանագետները որպես ականատեսներ որքան հարուստ տեղեկություն կարող էին քաղել, եթե նրանք կառչած չմնային ընդունված քաղաքական գծին:

Թուրքերը բռնագրավում էին հայերի ունեցվածքը, իսկ շարժական գույքերը, ինչպես կաշին ու բուրդը, տանում լցնում մի որեւէ հայկական եկեղեցու մեջ: Երբ 1916 թ. փետրվարի 26-ին ռուսները գրավեցին Էրզրումը, նրանք բռնագրավեցին հայերի ունեցվածքի մնացորդը: Իսկ երբ մահվան երթից կենդանի մնացած հայերը հասան Սիրիա, Զալեպի գերմանացի հյուպատոս Ռոյսլերը (Rössler) հոգաց նրանց կարիքները: Էրզրումի մոտ գտնվող Մուրդուղա գյուղի 2.300 բնակչից ողջ էին մնացել միայն չորս կին, չորս աղջիկ եւ երեք պատանի: Սարգիս Մանուկյան անունով մի ուսուցիչ, որը Գերմանիայում փիլիսոփայություն էր ուսանել, պատմեց, որ 2000 տղամարդուց միայն 115 հոգի էր վերապրել աղետը: Երբ Ռոյսլերը Մանուկյանին իր պաշտպանության տակ առնելով ներկայացրեց դեսպանին, վերջինս առաջարկեց, որ ուսուցիչն ինքը դիմի ներքին գործոց նախարարության: Ռոյսլերը առարկեց՝ ասելով, որ ոչ մի թուրք պաշտոնյա հայից հեռագիր չէր ընդունելու: Մանուկյանը պատմեց, որ իր ընտանիքն անհետացել էր Միջագետքի «Մահացու դաշտեր»-ում¹⁴⁹: 1915 թ. դեկտեմբերին, Էրզրումի հարուստ ընտանիքից Գայանե անունով մի աղջիկ՝ մահվան երթով հասել էր Մոսուլ, որտեղ նրան թագրել էին քրիստոնյաները: 8000 հոգուց, որոնց հետ այդ աղջիկը դուրս էր եկել Էրզրումից, Ջեզիրեի անապատն էր հասել միայն 300 հոգի: Նկատի ունենալով թուրք ժանդարմների եւ քուրդ հրոսակախմբերի կողմից՝ հայերի նկատմամբ սովորական դարձած սեռական ոտնձգությունները՝ հաճախ պատահում էր, որ երիտասարդ տղաները իրենց կյանքը փրկելու համար, մտերմանում էին մանկամուլ մուսուլմանների հետ, իսկ աղջիկները հաճախ ժայռերից իրենց ցած էին նետում կամ թույն խմում՝ խուսափելով բռնաբարվելուց: Մայրերը՝ տեսնելով, որ այնուհետ էին կարող իրենց երեխաներին կերակրել, նստում էին նրանց Եփրատ գետը: Անանցանելի լեռնաշղթաներով անցնող ճանապարհների ընտրությունը նպատակ ուներ՝ կոտորածներն իրագործել առանց վկաների ներկայության: Ամերիկացի հյուպատոս Լեսլի Դեյվիսոնը (Leslie Davison) այցելել է անապատ հասած հայերին:

Թրեյսի Աթքինսոնը (Tracy Atkinson)՝ հյուպատոսներից մեկի կինը, գրել է մի հուշագրություն, որի մեջ նկարագրում է այդ տարիների իր ապրումները: Իսկ

149 Նույն տեղում, 156f.

Դեյվիսոնը զեկուցել է Ամերիկայի դեսպան Մորգենթաուին (Henry Morgenthau), որ ինքը ականատես եղել, թե ինչպես էին սովահար կանայք իրենց երեխաներին ծախու հանում, եւ թե ինչպես էին աղջիկներին որպես ստրուկ վաճառում: Շատ աղջիկներ բռնաբարություններից վարակվում էին վեներական հիվանդություններով, իսկ որոշ կանայք, որոնց գնել էին մուսուլմանները, կարողանում էին փախուստի դիմել՝ հետեւում թողնելով բռնաբարությունից ծնված երեխաներին: «Այս ճամբարը դժոխային մի տեսարան էր: Ավելի մեծ թշվառություն հնարավոր չէ պատկերացնել», գրում է Դեյվիսոնը¹⁵⁰: Երզրումի հայերից ողջ էին մնացել միայն 5.100 հոգի, որոնցից միայն 120-ն էր տղամարդ¹⁵¹: Երզրումի հայերի ապրած ողբերգության մանրամասները վկայում են, որ ցեղասպանությունը ծրագրված էր կառավարության կողմից եւ ի կատար ածված բանակի եւ ժանդարմների օգնությամբ: Իսկ համաճարակներից եւ թշվառությունից տառապող քրդերը՝ օգտագործելով առիթը, կողոպտում էին հայ կանանց ու երեխաներին եւ յուրացնում նրանց ունեցվածքը: Ցեղասպանությունը միտումնավոր, ծրագրված եւ «բարենպաստ պայմաններում» անգթորեն իրագործված ձեռնարկ էր: Քրդերը, որոնք այսօր փորձում են ներկայանալ որպես թուրքերի գոհ, իրենց հոժարակամ մասնակցությունը բերեցին թրջական մահաբեր մեքենային: Սա է մեզ ուսուցանում Երզրումի ողբերգության մանրամասն ուսումնասիրությունը:

1915 թ. ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը հայ բնակչության դեմ գործողություններ սկսվեցին ամբողջ Փոքր Ասիայով մեկ, նախ ձերբակալելով հայ մտավորականներին, այդ թվում նաեւ շատերին, որոնք երիտթուրքերի ընկերներն ու ծանոթներն էին: Միայն Ստամբուլում ձերբակալվեցին 2.345 հայեր, որոնք քվելով Անկարայի շրջան, խոշտանգումների ենթակվեցին եւ մեծ մասամբ սպանվեցին: Մայիսին՝ ներքին գործոց նախարար Թալեաթ փաշան հրամայեց հայերի կանոնավոր աքսորը ռազմական շրջաններից դեպի «բնակչության նոր վայրեր» Միջագետքի անապատներում. սա հիմնավորվում էր այն փաստարկով, որ հայերը քաղաքանապես անվստահելի եւ կասկածելի տարրեր էին, միշտ պատրաստ թշնամու կողմն անցնելու: Անգլիան հենց սկզբից տեղյակ էր ամեն ինչի մասին: Դեռեւս 1915 թ. մայիսի 4-ին Էջիածնի Գեւորգ Յինգերորդ կաթողիկոսը աղերսեց Անգլիայի Գեւորգ Յինգերորդ թագավորին օգնել իր հայրենակիցներին¹⁵²: Կոստանդնուպոլսի պատրիարքը ի գուր ջանաց ընդունելություն ստանալ Թալեաթի մոտ: Մորգենթաուին բազմիցս խոսեց Ավստրիայի դեսպան Փալավիչինիի հետ կոտորածների մասին: 1915 թ. մայիսի 2-ին Ավստրիայի դեսպանը իրազեկեց Թալեաթի

150 Նույն տեղում, 166.

151 Նույն տեղում, 167.

152 Nassibian (1985), 71.

153 Ohandjanian (1989), 94.

հետ ունեցած մի զրույցի մասին, որի ժամանակ վերջինս ընդունել է «մի քանի հազար» հայերի սպանված լինելու իրողությունը¹⁵³: Միայն դրանից հետո է, որ «տարիանումը» (sevkiyat) հավանության է արժանացել 1915 թ. մայիսի 27-ին Նախարարների խորհրդում: Աքսորից գերծ մնացին միայն Կոստանդնուպոլսի ու Չմյուռնիայի բնակիչները, քանի որ այնտեղ ապրում էին բազմաթիվ արտասահմանցիներ: Ամենուրեք ավերեցին եկեղեցիներն ու հուշարձանները, իսկ երեխաներին խլեցին իրենց ծնողներից, տվեցին թուրք ընտանիքներին ու ստիպեցին իսլամ ընդունել:

Երբ արտասահմանում առաջին լուրերը տարածվեցին տեղահանության մասին, որի ընթացքում կանայք ու երեխաներ՝ մասամբ բուրբոսով և մերկ, ոլորապտույտ շարասյուններով, լլկված ու ծեծված, քշվում էին Միջագետքի ուղղությամբ, 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի պետությունները հանդես եկան հետեյալ հայտարարությամբ. «Նկատի ունենալով Թուրքիայի՝ ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության կատարած այս սոր հանցագործությունը, դաշնակից կառավարությունները հրապարակայնորեն ծանուցում են Բարձր դռանը, որ իրենք անձնապես պատասխանատվության են կանչելու թուրքական կառավարության յուրաքանչյուր անդամի, ինչպես նաև այն պաշտոնյաներին, որոնք մասնակցել են այդ կոտորածներին»¹⁵⁴: Հայտարարությունը կազմել էր Ռուսաստանի արտգործ Նախարար Սազոնովը, ստորագրել էին Անգլիայի ու Ֆրանսիայի արտաքին գործոց Նախարարներ Էդվարդ Գրեյը և Թեոֆիլ Դելկասեն (Théophile Delcassé): 1915 թ. սեպտեմբերի 9-ին Անգլիայի արտաքին գործոց Նախագահի երկրորդ տեղակալ Ռոբերտ Ցեցիլը (Robert Cecil) հայ արքեպիսկոպոս Դուրյանի Նամակը հանձնեց ամերիկյան մամուլին: Վավերագրերից պարզորոշ կերպով հետեւում էր, որ բրիտանական կառավարությունը հայերի կոտորածներն օգտագործել է՝ չեզոք ԱՄՆ-ին պատերազմի մեջ որպես Անգլիայի դաշնակից ներգրավելու նպատակով¹⁵⁵:

ԱՄՆ-ում մամուլն ու քննադատական հասարակայնությունը ավելի մեծ դեր էին խաղում քան Գերմանիայում, որտեղ իշխում էր խիստ գրաքննություն: Բոստոնի «Christian Science Monitor» հանդեսը 1915 թ. սեպտեմբերի 15-ին գրեց, որ թուրքական քաղաքականության նպատակն է հայ եւ հույն ազգերի վերջնական բնաջնջումը: Բրիտանիայի հյուպատոս Պատրիկ Ստիվենսը (Patrick Stevens) միաժամանակ նկարագրեց Կովկաս փախած հայ եւ քաղղեացի քրիստոնյաների սրտաճմլիկ վիճակը¹⁵⁶: Ամերիկայի Նախկին Նախագահ Թեոդոր Ռուզվելտը (Theodore Roosevelt) «Նյու-Յորք թայմսի» 1915 թ. դեկտեմբեր

154 «Nassibian (1985) 25. Հմմտ. Նույնպես. Yves Ternor: *Tabu Armenien. Geschichte eines Völkermordes*, Berlin-Fankfurt-Wien 1981, 216.

155 Nassibian (1985), 73f.

156 Նույն տեղում, 74f.

րի 1-ի համարում դատապարտեց «ամեն գնով չեզոքությունը» եւ «Գերմա- նի- ալի հանցավոր պատասխանատվությունը: (...) Մենք գլանում ենք Յայաստա- նում մեր պարտքը կատարել, որովհետեւ որոշել ենք ամեն գնով խաղաղություն պահպանել»¹⁵⁷: Ինչպես Լեփսիուսը Գերմանիայում, այնպես էլ ԱՄՆ-ում կային պատմաբան Առնոլդ Թոյնբիի (Arnold Toynbee) պես մտավորա- կաններ, որոնք մինչեւ վերջ մնացին իրենց սեփական կառավարության վարած քաղաքականության անխոնջ քննադատները:

Ոչ ոք չկարողացավ կասեցնել թուրքերի գործողությունները հայերի դեմ: Նախ հայերին զինաթափում էին, ապա՝ հեռացնում բանակից: 600 անվանի մտավորական տեղահանվեց Կոստանդնուպոլսից: Ըստ Լեփսիուսի, նրան- ցից միայն ութ հոգի փրկվեց կոտորածից: Մարտի վերջին տեղահանություն սկսվեց Կիլիկիայում: Այն ընթացավ միշտ նույն կարգով. տղամարդկանց առանձնացնում ու անմիջապես զնդակահարում էին, կանանց ու երեխանե- րին քշում անապատ, լլկում եւ հոգնեցուցիչ երթից այնպես թուլացնում, որ շատերը մահանում էին ուժասպառությունից: Կենդանի մնացածներին տա- նում էին համակենտրոնացման ճամբար՝ Սիրիայի անապատում, որտեղ նրանց, եթե իրենք չէին մահանում քաղցից ու հիվանդությունից, սպանում էին: 1915 թ. ապրիլի վերջին Եդեսիայի հայերի հոգեւոր առաջնորդը խնդրեց Յակոբ Զյունցլերին՝ Յալեպում Եվրոպայի հյուպատոսներին իրազեկել հայերի վիճակի մասին: Երբ Զյունցլերը հուլիսի սկզբին վերադառնում էր Եդեսիա, նա դեռեւս ճանապարհին տեսավ հայերի քայքայվող դիակներ¹⁵⁸: Որոշ հայերի համար իսլամ ընդունելը միակ փրկությունն էր ստույգ մահից, թեեւ թուրքական կառավարությունը 1915-ի եղեռնի ժամանակ արգելել էր խնայել զոհերին՝ նունիսկ իսլամ ընդունելու դեպքում: Մայիսի 31-ին Ենվերը Գերմա- նիայի դեսպանությանը իրազեկեց, որ հայկական դպրոցները փակված էին եւ որ հայ մամուլն ու փոստային ամեն ծառայություն հայերի համար արգել- ված էր¹⁵⁹: 1915 թ. մայիսի 31-ին Գերմանիայի դեսպանը հաղորդեց, որ նախա- րար Թալեաթը գերմանացի մի դիվանագետի մոտ այսպես էր արտահայտվել. «Բարձր դուռը աշխարհամարտն ուզում է օգտագործել՝ իր ներքին թշնամի- ներին (բնիկ քրիստոնյաներին) հիմնովին մաքրագործելու համար, թույլ չտա- լով, որ արտասահմանյան դիվանագետները իրենց միջամտություններով խանգարեն»¹⁶⁰: Իսկ 1915 թ. հուլիսի 8-ին Ավստրիայի դեսպան Փալավիչինին Վիեննա ուղարկեց հետեւյալ տեղեկությունը. «Ըստ երեւույթին, այստեղ մտա- դրովել են մեկընդմիջտ վնասագերծել կասկածելի համարվող բոլոր հայկա-

157 Նուշն տեղում, 75f.

158 Künzler (2004), 39f.

159 Ternor (1981), 217.

160 Ohandjanian (1989), 95f.

161 Նուշն տեղում, 98.

կան տարրերին»¹⁶¹:

1915 թ. մայիսի վերջից մինչև հունիսի վերջը տեղահանվեցին նաև Տրապիզոնի, Խարբերդի, Դիարբեքիի եւ Բիթլիսի շրջանների հայերը: 1915 թ. օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներին հետեւեց հայերի տեղահանությունը Արեւմտյան Անատոլիայից, Նիկոմեդիայի (այժմ՝ Իզմիր), Բրուսայի, Կաստամունի, Անկարայի եւ Կոնիայի շրջաններից: Տեղահանվածներին չէին հայտնում, թե երթը որ ուղղությամբ էր ընթանալու: Նրանց տանում էին 40 աստիճան շոգին, հաճախ շաբաթներով, ոտաբոբիկ, լեռների միջով, մինչև նրանք տապալվում էին ուժասպառությունից: 1914 թ. սեպտեմբերի 9-ին Սամսունի փոխիյուպատոսը հաղորդեց դեսպանատուն. «Յույն քրիստոնյաները դողում են վախից, եւ իրավացիորեն, քանի որ հավատացած են, որ առաջին պատեհ առիթով նրանք կարժանանան նույն ճակատագրին ինչ որ հայերը: Եթե Յունաստանը անցնի թշնամու կողմը, Թուրքիայում նրա հավատակիցները դատապարտված են: Ներուկադնեզարը եւ Աբդուլ Յամիդը հոգեկան հիվանդներ էին եւ բնաջնջման արվեստում խիստ անճարակ մարդիկ: Մինչդեռ այն, ինչ որ հիմա ենք սարսուռով տեսնում, այսինքն մի քանի շաբաթվա ընթացքում հսկա երկրով մեկ սփռված մի ամբողջ ժողովրդի մաքրագործումը, ո՞չ է նրանք, ո՞չ է Չինգիզ խանն ու Թամերլանը, ո՞չ է էլ հին թուրք սուլթանները ի վիճակի չէին իրագործել»¹⁶²: 1915 թ. սեպտեմբերի 18-ին կենտրոնի պատգամավոր Մաթիաս Էրցբերգերը (Mathias Erzenberger) արտաքին գործոց նախարարությանը տեղեկացրեց դաշնակցականներից ստացված մի հեռագրի մասին, որտեղ, իմիջիայլոց, մատնանշվում էր միջազգային որոշ ուժերի, հատկապես չեզոք ԱՄՆ-ի, մեղսակցությունը ողբերգական այդ իրադարձություններին¹⁶³: Գերմանական կառավարությունը տեղեկացված էր ամեն ինչի մասին: Ֆիլիպ Փ. Գրեյվսը (Philip P. Graves), «Թայմսի» նախկին թղթակիցը Կոստանդնուպոլսում, 1915 թ. սեպտեմբերի 15-ին տեղեկացրեց նախարար Լյոյդ Ջորջին Մուսա լեռան փախստականների տարհանման մասին: Թալեաթն այդ կապակցությամբ նկատել է, որ ինքն ամեն ինչ անելու էր, որպեսզի մոտակա 50 տարիների ընթացքում հայկական ինքնավարության գաղափարը լիովին վերանա: 1915 թ. սեպտեմբերին անգլիական կառավարությունը քաջատեղյակ էր, թե ինչ ոճրագործություններ էին կատարվում Թուրքիայում քրիստոնյաների դեմ¹⁶⁴:

Յայերի մի մասը փրկելու համար, դեսպան Մորգենթաուն առաջարկեց Թալեաթին, թույլ տալ հայերին արտագաղթել ԱՄՆ: Նախարարը նախ համաձայնեց: Սակայն 1915 թ. հոկտեմբերի 13-ին Ավստրիայի դեսպանը գե -

162 www.armenocide.de (9.9.1915).

163 www.armenocide.de (18.9.1915).

164 Nassibian (1989), 72f.

կուցեց Վիեննա թուրքերի մտավախության մասին, որ «զանգվածային արտագաղթը լայն հասարակայնության ականջին կհասցնի հայերի դեմ գործադրվող միջոցառումների լուրը, եւ աշխարհը, ավելի քան երբեւէ կզբաղվի Փոքր Ասիայի ներքին իրադարձություններով»¹⁶⁵: Մորգենթաուն հաղորդում է Թալեաթի հետ ունեցած մի խոսակցության մասին, որի ժամանակ վերջինս հայտարարել է. մինչեւ պատերազմի ավարտվելը, հայերին պետք է ուժաթափ անել: Ըստ նրա՝ հայերի ու թուրքերի միջեւ ատելությունն այնքան մեծ էր, որ «մենք պետք է վերջ տանք նրանց, այլապես նրանք մեզանից վրեժ կլուծեն. (...) Մենք Անատոլիայի որեւէ մասում այդ հայերին չպետք է ունենանք. (...) Նրանք կարող են ապրել անապատում, բայց ուրիշ ոչ մի տեղ. ... Ո՞չ մի հայ չի կարող մեր բարեկամը լինել, այն բանից հետո, ինչ մենք նրանց արեցինք»¹⁶⁶:

Մինչեւ 1915 թ. հոկտեմբերը մոտ 300.000 քրդերը քվեցին Եփրատի առափնյա անապատները, Մուսուլից հյուսիս գտնվող համակենտրոնացման ճամբարները, որտեղ նրանք մի քանի ամսվա ընթացքում իսպառ ոչնչանում էին¹⁶⁷:

Իսլահիյեի (Islahiye) ճամբար. 1915-ի աշնանից մինչեւ 1916 թ. սկզբը՝ մոտ 60.000 հայ

Մամուրայի (Mamura) ճամբար. 1915-ի ամռանից մինչեւ աշուն՝ մոտ 40.000 հայ

Ռաջոյի (Radjo), Կատմայի (Katma) եւ Ասասի (Asas) ճամբարներ. 1915-ի աշնանից մինչեւ 1916-ի գարունը՝ 60.000 հայ

Բաբի (Bab) եւ Ախտերմինի (Achtermin) ճամբարներ. 1915-ից մինչեւ 1916-ի գարունը՝ 60.000 հայ

Մեսքենեի (Meskene) ճամբար՝ Յալեպի մոտ. 1915-ի նոյեմբերից մինչեւ 1916-ի ապրիլ՝ 60.000 հայ

Դիպսի (Dipsi) ճամբար. 1915-ի նոյեմբերից մինչեւ 1916-ի ապրիլ՝ 30.000 հայ

Չեբկայի (Sebka) ճամբար. 1915-ից մինչեւ 1916-ի հունիս՝ 5.000 հայ

Դեր ես-Չորի (Der es-Zor) ճամբար՝ Եփրատի ափին. 1916 թ. մարտի 17-ից մինչեւ հունիս՝ 200.000 հայ

Ռաս-ուլ-Այնի (Ras-ul-Ayn) ճամբարում՝ Բաղդատի երկաթուղու վերջնակետում, մեկ ամսվա ընթացքում օրական սպանվում էր 300-500 ճամբարական, ընդամենը՝ 70.000-ից ոչ պակաս, ինչպես նաեւ Ինթիլիի (Intili)

165 Ohandjanian (1989), 107.

166 Morgenthau (2003), 232f.

167 Hofmann: Deutsche Quellen (1984), 109-112; Հմմտ. նույնպես. Tessa Hofmann և Ger-ayer Koutcharian: Armenien. Völkermord. Vertreibung. Exil, Göttingen-Wien 1986, 37-4

168 Koutcharian (2004), 61.

համակենտրոնացման ճամբարում՝ Բադդատի երկաթուղու վրա բռնի աշխատանք կատարող 50.000 հայ¹⁶⁹: Խարբերդի մոտ գտնվող Գյոլշյուք (Gölcük) լճի ափին 1915 թ. ամռանը քրդերը սպանեցին մոտ 10.000 հայ երեխա ու կին: Այստեղ էին աքսորվել Կոստանդնուպոլսից 10.000 մինչև 30.000 հայեր, որոնք ծննդով կոստանդնուպոլսեցի չէին: Միջազգային Դեր Էս-Չոր ամենամեծ համակենտրոնացման ճամբարում, որտեղ նավթը գետնից էր հորդում եւ 80.000 աքսորյալներ հեղձամահ էին եղել Խաբուր գետի մոտ քարանձավային լաբիրինթոսներում, որոնք մինչ օրս կոչվում են «Խաբս Էլ-Էրմեն» (Յայերի փոս): 1915 թ. նոյեմբերի 10-ին Յայոց պատրիարքը Գերմանիայի դեսպանին հղած մի գաղտնի նամակում գրանցեց սպանված հայերի հետեւյալ թիվը՝ 800.000-ից մինչև մեկ միլիոն¹⁶⁹: 1915 թ. դեկտեմբերի 14-ին նշանավոր աստվածաբան Ադոլֆ ֆոն Յարնաքը (Adolf von Harnack) գրեց արտաքին գործոց նախարարի տեղակալին. «Գերմանացի հեղինակավոր անձինք ինձ արդեն նախապես հավաստիացրել էին, որ Յայաստանի քրիստոնեության բնաջնջումը մասամբ ավարտված է»: Այդ իսկ պատճառով նա հայցում էր տեղեկություն այն մասին, թե արդյոք վերջին 10.000 հայերը եւս արտաքսվելու էին Կոստանդնուպոլսից¹⁷⁰: Ուրեմն մտավորականությունը նույնպես տեղյակ էր: Յալեպում գերմանացի հյուպատոս Ռյոսլերը (Rösler), որին Անտանտի թերթերը մեղադրում էին կոտորածներին մեղսակից լինելու մեջ, 1914 թ. դեկտեմբերի 20-ին ռայխսկանցլեր Բեթման Յոլվեգի (Bethmann Hollweg) հետ խոսելիս նկատում է. «Ֆրանքֆուրթեր Ցայթունգ» թերթը սխալ է վարվում, երբ կասկածի տակ է առնում արեւմտյան թերթերի հայտարարությունն այն մասին, որ արդեն սպանվել է 800.000 հայ: «Ցավոք դա չի կարող բացառվել: Վերջին ամիսների զեկուցումներիս մեջ ես անդադար նկարագրել եմ զագրելի բնույթ ունեցող իրադարձություններն ու հանգամանքները, որոնք նախ՝ առաջ բերեցին եւ ապա ուղեկցեցին բնաջնջման ամբողջ ընթացքը: Յետեւաբար շատ օրինական է եզրակացնել, որ նման իրադարձություններից հետո զոհերի թիվը արտակարգ մեծ պետք է լիներ: Այստեղ ամենաճշգրիտ թիվը կարող են տալ տեղացի այն հայերը, որոնք շարունակ կապի մեջ են եղել երկրի բոլոր կողմերից տեղահանվածների հետ. հայերի ընդհանուր թիվը Թուրքիայում 2,5 միլիոն էր, որոնցից 1.200.000-ը արեւելյան վեց նահանգներում՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի, Խարբերդի եւ Սվազի: Ամբողջ Փոքր Ասիայում կես միլիոնի չափ հայեր գերծ մնացին տեղահանությունից (այսպես, օրինակ, Մարաշի տարածաշրջանի 50.000-ից մնացին հազիվ 9.000), իսկ մոտ կես միլիոն հայեր հասան Սիրիա եւ Միջազգային: Վանի նահանգը, իր 150.000-200.000 հայ բնակիչներով, հաշվի չի առնված, քանի որ ռազմական գործո-

169 www.armenocide.de (27.11.1915).

170 www.armenocide.de (14.12.1915).

ղությունների վայր էր եւ հանգամանքները շատ հատուկ էին: Սիրիա եւ Միջագետք հասածների մեջ մահացության թիվը չափազանց մեծ է եւ դեռ երկար այդպես կմնա, քանի որ տեղահանումները շարունակվում են: Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները, հավաստի որոշ աղբյուրներ հավանական կամ նույնիսկ հնարավոր են համարում, որ զոհերի ընդհանուր թիվը գերազանցում է 800.000: Տարբերությունն այն էր, որ տղամարդկանց, գոնե արեւելյան նահանգներում, հավաքում ու անմիջապես գազանորեն սպանում էին, մինչդեռ կանանց ու երեխաների մահը իրագործում էին ավելի դանդաղորեն, այնպես որ թուրքերը կարողանային ասել, որ նրանք իրենք-իրենց մահացան: Մյուս կողմից, եթե հետեւեինք այլ աղբյուրների եւ ընդունեինք, որ հայերի թիվը Թուրքիայում կազմում էր 1,5 միլիոն, ապա բոլոր թվերը համապատասխանաբար կնվազեին: Սակայն մահացածների տոկոսը կմնար նույնը»¹⁷¹: 1915 թ. դեկտեմբերի 20-ին սոցիալիստ պատգամավոր Քարլ Լիբքնեխթը (Karl Liebknecht) Գերմանիայի ռախսատագի նախագահին փոխանցեց ռախսականքների նուղված մի հարցապնդում, թե վերջինս ինչ է ձեռնարկում այն բանի դեմ, որ թուրքերը կոտորում են «հարյուր հազարավոր» հայերի¹⁷²: Ռայխսկանցլերի հանձնակատարը պետք է պատասխաներ այն հարցին, թե արդյոք նա տեղյակ էր, որ «ներկա պատերազմի ընթացքում դաշնակից թուրքական պետությունը հայ բնակչությանը հարյուր հազարներով արտաքսում է իրենց բնակավայրերից ու կոտորում»: Մեկ այլ հարցադրումով, 1916 թ. հունվարի 11-ին Լիբքնեխթը ուզում էր իմանալ, թե կանցլերն արդյոք գիտի, որ դ-ր Լեփսիուսը պարզորոշ կերպով ազդարարել է, որ «ներկայումս թուրքահայերը բնաջնջվում են»¹⁷³: 1915 թ. դեկտեմբերի 31-ին Գերմանիայի հյուպատոս Վալտեր Յոլշթայնը հետեւյալը գեկուցեց այն հայերի մասին, որոնց Դիարբեքիից Մոսուլ էին «աքսորվել». «Ժամանակին Դիարբեքիից այստեղ աքսորված հայերից ոչ մեկը մինչ օրս Մոսուլ չի հասել: Ինչպես այն ժամանակ տեղվույս վալին ինձ բացատրել է, Դիարբեքիի հայերից ոչ մեկը կենդանի չի մնացել»¹⁷⁴:

Գերմանիայի դեսպան Հանս Ֆոն Վանգենհայմը բավական բացահայտորեն պաշտպանում էր թուրքական քաղաքականությունը. նա Ամերիկայի դեսպան Մորգենթաուին անկեղծորեն խոստովանել է, որ պատրաստ չէր որեւէ բան անել հայերի համար¹⁷⁵: Կային, սակայն, այլ գերմանացիներ, որոնք հա -

171 www.armenocide.de (20.12.1915).

172 www.armenocide.de (20.12.1915).

173 www.armenocide.de (11.1.1916).

174 www.armenocide.de (31.12.1915).

175 Morgenthau (2003), 250-263, Kap. 27: “I shall do nothing for the Armenians”, says the German Ambassador. (“**Ես ոչինչ չեմ անելու հայերի համար**”, ասում է գերմանացի դեսպանը.)

վանություն չէին տալիս կայսերական կառավարության քողարկված քաղաքականությանը: Նրանց թվին էր պատկանում գրող Արմին Թ. Վեգները (Armin T. Wegner) (1886-1978), որը 1915 թ. գարնանից աշխատում էր «Գերմանասօմալյան սանիտարական առաքելությունում», եւ որը՝ հակառակ Քեմալ փաշայի հրամանին, ըստ որի լուսանկարելն արգելվում էր, 1916 թ. Մեսքենեի ու Յալեայի ճամբարներում բազմաթիվ լուսանկարներ է արել եւ մաքսանենգ ճանապարհով նամակներ հասցրել Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպանատուն: 1916 թ. հրատարակված երկու նամակները պատճառ դարձան նրա հեռացմանը: 1919 թ. իր հեղինակած «Բաց նամակ Ամերիկայի նախագահ Վիլսոնին» գրվածքում նա նկարագրում է իր վերապրածը. «Երեխաները լաց էին լինում, մինչեւ որ մահը լռեցնում էր նրանց, տղամարդիկ ջախջախվում էին ժայռերի վրա, մայրերն իրենց մանուկներին ջրհորներն էին գցում, հղի կանայք երգելով նետվում էին Եփրատ գետը ... Տեսել եմ ցնորվածներ, որոնք իրենց որովայնի արտաթորանքը կերակուրի տեղ ուտում էին, կանանց, որ եփում էին իրենց Նորածիններին, աղջիկների, որ դիահատում էին իրենց մայրերի դեռ տաք դիակները, որպեսզի մահացածի աղիքների մեջ փնտրեն թալանչի ոստիկանի ահից կուլ տված ոսկին: Քանդված քարավանատներում նրանք պառկած էին դիակների կույտերի եւ կիսանեխ մարմինների միջեւ եւ անտարբեր սպասում էին մահվան. ինչքա՞ն կարող են նրանք իրենց թշվառ գոյությունը պահպանել ձիու աղբի մեջ հատիկ փնտրելով կամ խոտ ուտելով»¹⁷⁶: 1919 թ. Վեգները հրատարակեց «Ճանապարհ առանց տունդարձի. Մարտիրոսություն նամակների մեջ» գիրքը, իսկ մեկ տարի անց՝ «Երանության տանը. Գրառումներ Թուրքիայից»: 1921 թ. նա գրեց հայերի դահիճ, երիտթուրք Թալեաթ փաշային սպանող, հայորդի Սողոմոն Թեհլերիանի Բեռլինյան դատավարության արձանագրություններն ամփոփող գրքի նախաբանը:

Գերմանացի ականատեսներից, որոնք գրել են 1915 թ. կոտորածների մասին, մեկն է նաեւ դ-ր Մարթին Նիփագեն (Martin Niepage)՝ Յալեայում գերմանական ռեալական բարձրագույն դպրոցի մի ուսուցիչ: 1916 թ. սեպտեմբերի 10-ին նա Գերմանիայի ռայխսթագին ուղարկել է լուսանկարներով մի զեկույց, որը ստորագրել էր նաեւ նրա շվեյցարիացի գործընկեր դ-ր Էդուարդ Գրեբերը (Dr. Eduard Graeber). Դրա մեջ Նիփագեն նկարագրում է առողջապահական տեսակետից նախնադարյան պայմաններում ապրող աքսորյալների խղճալի վիճակը: Այդ զեկույցը Լեփսիուսը գետեղել է իր «Գերմանիան եւ Յայաստանը» (Deutschland und Armenien) գրքում, որը լույս է տեսել 1917 թ. Լոնդոնում նաեւ անգլերեն թարգմանությամբ (The Horrors of Aleppo, seen by a German eye-witness = Յալեայի արհավիրքները՝ գերմանացի

176 Tessa Hofmann: *Deutsche Quellen* (1984), 97.

ականատեսի վկայությամբ): Գիրքը պարունակում է հայերի նկատմամբ թուրքերի գործադրած ցնցող վայրագությունները:

«Այն, ինչ այստեղ մեր սեփական աչքերով տեսանք, հայերի բնաջնջման մեծ ողբերգության սոսկ վերջին դրվագն էր, մի չնչին մասնիկը այն վայրագությունների, որոնք տեղի էին ունենում միաժամանակ Թուրքիայի բոլոր շրջաններում: Շատ ավելի զարհուրելի դեպքերի մասին էին պատմում Բաղդատի երկաթուղու ճարտարագետները, երբ Նրանք վերադառնում էին ուղեմասից, կամ գերմանացի ճանապարհորդները, որոնք ուղեւորության ժամանակ տեսել էին տեղահանվածների քարավանները: Այդ պարոններից շատերը օրերով ուտել էին կարողանում, այնքան զազրելի բաներ էին տեսել Նրանք ճանապարհին: Մեկը պատմում էր ..., թե ինչպես Թել Աբիադի (Tell Abiad) եւ Ռազ ու Այնի (Raz ul Ain) մոտ՝ երկաթուղու թմբերին սփռված են եղել անարգված կանանց մերկ դիակները: Նրանցից շատերի հետույքներում ցցված են եղել դագանակներ: Մեկ ուրիշը ... տեսել էր, թե ինչպես թուրքերը հայ տղամարդկանց կապկպում էին իրար, որսորդական հրացաններից կրակահերթ էին արձակում մարդկային խրձի մեջ ու ծիծաղելով հեռանում, մինչդեռ իրենց զոհերը սոսկալի ցնցումների մեջ դանդաղ մահանում էին: Այլ վայրերում տղամարդկանց ձեռքերը կապում էին մեջքներին եւ ժայռից ցած գլորում, իսկ ներքեւում կանգնած կանայք ցած գլորվածներին դանակահարում էին՝ մինչեւ նրանց մահանալը ...

Հալեպի գերմանական ակումբում՝ Մոսուլում Գերմանիայի հյուպատոսն իմ ներկայությամբ հաղորդեց, որ Մոսուլից Հալեպ գնացող ճանապարհի շատ հատվածներում նա տեսել է երեխաների կտրված ձեռքեր, ամենուրեք թափված, թվով այնքան շատ, որ դրանցով կարելի կլիներ մի ճամփա սարքել: Ուրֆայի գերմանական հիվանդանոցում պառկած է եղել մի փոքրիկ աղջիկ, որի երկու ձեռքերը նույնպես կտրված էին: Հալեպ չհասած, Մոսուլի գերմանական հյուպատոսը արաբական մի գյուղի մոտ տեսել է մակերեսային գերեզմաններ՝ հայերի նոր թաղված դիակներով: Գյուղի արաբները ասել են, որ իրենք հայերին սպանել են կառավարության հրամանով: Մեկը հպարտորեն հայտարարել է, որ միայն ինքը ութ հոգու է սպանել: Քրիստոնյա հալեպցիներից շատերի տներում կային թագնված հայ աղջիկներ, որոնք դիպվածով խուսափել էին մահից: Նրանք փրկվել էին, կա՞մ որովհետեւ ուժասպառ պառկած էին մնացել եւ համարվել էին մեռած, երբ նրանց շարասյունը շարունակել է երթը, կա՞մ էլ եվրոպացիներին առիթ է ընձեռվել մի քանի մարկով դժբախտ աղջկան գնել թուրք զինվորից՝ նրա վերջին բռնաբարոդից: Բոլոր այդ աղջիկները կիսացնորված էին: Նրանցից շատերը ականատես են եղել, թե ինչպես են թուրքերը կտրել իրենց ծնողների վիզը: Ես ճանաչում եմ նման թշվառ արարածների. նրանցից ամիսներով չէի խլի գեթ մեկ բառ, ո՞չ էլ մի ժպիտ: Հալեպում Բաղդատի երկաթուղու պահեստի կառավարիչը իր մոտ էր տեղավորել 14 տարեկան մի աղջկա (...) Մեկ գիշերվա ընթացքում այդ

երեխային թուրք զինվորները այնպես էին լլկել, որ նա թռցրել էր խելքը: Ես տեսել եմ, թե ինչպես էր նա իր խելագարության մեջ տենդոտ շրթներով գզգզում իր բարձը, եւ ես դժվարությամբ միայն կարողացա նրան ջուր խմցնել»¹⁷⁷:

1916 թ. Ջեմալ փաշան ուզում էր երկու ուսուցիչների կանգնեցնել ուսումնական դատարանի առաջ, սակայն նրանք արդեն փախուստի էին դիմել: Որպես կանոն, գերմանացի սպաները աչք էին փակում թուրքերի վայրագությունների վրա: Նրանք նույնիսկ օգնում էին թուրքերին հայերի թաղերը ռմբակոծելիս: Տարբեր առիթներով, սակայն, այստեղ եւս լսվում էին քննադատական ձայներ, ինչպես գեներալ Օթթո Լիման ֆոն Չանդերսի (Otto Liman von Sanders) ձայնը, որը 1920 թ. հրատարակեց «Յինգ տարի Թուրքիայում» գիրքը: Նա անձնապես ճանաչում էր երիտթուրքական բռնակալներին եւ Լեփսիոսի կողքին՝ 1921-ին Բեռլինում Թալեաթ փաշայի դատավարության ժամանակ հանդես եկավ որպես փորձագետ: Ավստրիացի դիվանագետները կոտորածների մասին բազմիցս արտահայտվեցին եւ գերմանացիներից շատ ավելի տարբերակված եղանակներով, թեւեւ այստեղ նույնպես պաշտոնական գիծը դաշինքի կողմն էր, եւ երջանակահիշատակ կայսր Զարը 1916 թ. մայիսի 18-ին այցելեց Կոստանդնուպոլսի երիտթուրք բռնակալներին:

Շվեյցարացի հիվանդահանամ Յակոբ Զյունցլերը, որ աշխատում էր Եդեսիայում (Ուրֆա), արձանագրել է առանձին վերապրողների պատմածները: Յայուրի Եղսա Պետրոսյանը, որը 1915 թ. հուլիսի 10-ին 2000 տղամարդկանց, կանանց ու երեխաների հետ դուրս էր եկել Խարբերդից, պատմում է. «Երբ Երզրումից ու Սվազից տեղահանվածների քարավանները մեզ միացան, մենք շարունակեցինք մեր երթը, դեռեւս ոչ թե դեպի Մալաթիա, այլ դեպի հարավ, Տավրոսի գառիվեր լեռներով: Այնտեղ հոգնածությունից ուժասպառ գետին էին տապալվում երեխաներից ու ծերերից շատերը: Նրանք պառկած էլ մնում էին իրենց ընկած տեղերում, ավար դառնալով վայրի կենդանիների համար: Մալաթիայի ու Ադանայի միջեւ գտնվող լեռնահովտում, շրջակա գյուղերի քրդերը մեզ կողոպտեցին: Տղամարդկանց բաժանեցին մեզնից: Նրանց մի կողմ տարան ու սպանեցին: Ճանապարհին՝ մինչեւ Սամսատ, երիտասարդ աղջիկների ու կանանց մեծ մասն անհետացավ: Շրջակա գյուղերի քրդերից ամեն մեկը իրեն դուր եկած կնոջն ու աղջկան վերցնում տանում էր: (...) Մեզ երբեք ջուր չէին տալիս, առանց դրա համար ոսկով վճարելու: (...) Երբ մեզ մոտ այլեւս ոչինչ չէր մնացել, մեզ քշեցին մի քարաստան: Մերկացրին եւ հագուստներից վերցրին այն ամենը, ինչ դեռ որոշ արժեք ուներ: Մերկացնելու ժամանակ պարզվեց, որ մեր մեջ դեռեւս կային մի քանի դեռահաս տղաներ, ծպտված աղջկա շորերով: Նրանց իսկույն կտոր-կտոր արեցին: Այժմ արդեն

177 www.armenocide.de (10.9.1916).

քրդերն էին քշում մեզ՝ մոտ 2000 մերկ կանանցից ու աղջիկներից բաղկացած մի մեծ խմբի, դեպի մի նեղ բացատ, ուր սկսվեց ամենասուկալին: Բոլոր կողմերից կրակ բացեցին մեր վրա: Ստեղծվեց մի սուսկալի իրարանցում: Ով կանգնած էր եզրին, սպանվում էր, ով ամբոխի մեջ էր, խեղդվում էր: Ես անձամբ մահից պրծա, որովհետեւ ընկել մնացել էի մեռած մարմինների վրա: Մեզանից կենդանի մնաց միայն մի քանի հարյուր մարդ: (...) Վերջապես գնացինք քրդական մի գյուղ՝ ջուր խնդրելու: Թեպետ ամբողջովին մերկ էինք, քրդերը նախ փող ուզեցին: Իսկ երբ տեսան, որ ոչինչ չունեինք տալու, քշեցին մեզ ջրի ակունքից: Ուզում էի խմել մի կեղտոտ ջրափոսից եւ հազիվ էի կռացել, երբ սրի մի հարված ստացա թեւիս: Առանց ջուր խմելու, ստիպված շարունակեցինք մեր երթը: Միջագետքի օգոստոսյան արեւը այրում էր մեր մերկ մարմինները: (...) Մարմինների վրա մեծ այրվածքներով վերջապես հասանք Ուրֆայի մոտ գտնվող քրիստոնեաբնակ մի գյուղ: Այնտեղ ինձ տվեցին մանկական մի կարճ վերնաշապիկ, որով կարողացա մի կերպ ծածկել 16 օրվա մերկությունս: Ժամանակի ընթացքում այդ գյուղում հավաքվեցին 200 կանայք, մնացորդը 6000 հոգուց բաղկացած խմբի, որով մենք ճանապարհ էինք ընկել Մալաթիայից: Նույն օրը հասանք Ուրֆայում գտնվող տեղահանվածների ճամբարը: Եթե այն օրը ես Ուրֆայի բնակչության հետ չաքսորվեցի, ապա այն պատճառով, որ երբ ոստիկանները հիվանդանոց եկան հայերի հետեւից, ես բարձր ջերմությամբ պառկած էի»¹⁷⁸:

Ի պատասխան գերմանական հասարակայնության բողոքների, դեսպալնատունը բազմիցս թուրքական կառավարությանը հայտնել էր Գերմանիայի մտահոգությունը կոտորածների կապակցությամբ, նշելով, որ այնուամենայնիվ ցանկալի չէր վտանգել ռազմական դաշինքը Թուրքիայի հետ: 1915 թ. դեկտեմբերի 17-ին Գերմանիայի դեսպանը թուրքական կառավարությունից ստացավ պաշտոնական գրություն, որը հիշեցնում էր, որ դա Թուրքիայի զուտ ներքին գործն էր եւ գերմանացիների հանդիմանությունը «անընդունելի» էր իրենց համար¹⁷⁹: Դրանից հետո գերմանական կառավարությունն այլեւս ուղղակիորեն բողոքներ չներկայացրեց: Գերմանացիները լռությամբ հանդուրժեցին կոտորածները, որոնց նրանք ոչ չ հավանություն տվեցին, ոչ էլ պաշտոն-նապես դատապարտեցին:

Յունաստանի հյուպատոսարանները նույնպես ցնցող լուրեր էին ուղարկում կոտորածների մասին: 1915 թ. օգոստոսի 6-ին Յունաստանի դեսպանը հրապարակեց Կոնիայի փոխհյուպատոսից ստացած տեղեկությունն այն մասին, որ ըստ թուրքական շրջանների հայտարարության՝ հայերից հետո հերթը հույներին էր եւ որ անհրաժեշտ էր հույներին եւս արմատախիլ անել¹⁸⁰:

178 Künzler (2004), 58-61.

179 Ternon (1981), 221.

180 Hassiotis (1992), 138.

Սամսունի փոխիուպատոսը 1915 թ. հունիսի 14-ին զեկուցեց, որ հայերն իրենց կյանքը կարող են փրկել, եթե միայն կրոնափոխվեն եւ թլպատվեն: Կերասոնում (Kerason) թուրքերը քրիստոնյաներով բռնկված նավակները սուզեցին Սե ծովում: Նրանց տները հանձնվեցին Կովկասից փախած մուսուլմաններին: 1915 թ. օգոստոսի 6-ին Կոնիայի հույն փոխիուպատոսը գրեց, որ դեպի Բաղդատ մահվան ճանապարհին սովահար հայերը վաճառում էին իրենց սեփական երեխաներին: Տեղահանված բարձրաշխարհիկ կանայք՝ մահից փրկվելու համար ամուսնանում էին փողոցի հասարակ թուրք գործավորների հետ: Դա բնաջնջման մի սատանայական ծրագիր էր եւ կասկած չկար, որ Թուրքիայում բնակվող բոլոր հայերը արժանանալու էին նույն ճակատագրին¹⁸¹:

Ինչպես նացիոնալ-սոցիալիստների Զոլոքոստի ժամանակ, այստեղ եւս հարց է ծագում, թե ինչու հայերը, որոնցից շատերը զենք էին հավաքել, թեեւ քրիստոնյաներին արգելված էր զենք կրել, այդքան քիչ դիմադրություն ցույց տվեցին: Թուրքիայի հարավարեւելքում գտնվող Եդեսիա (այժմ՝ Սանլի-Ուրֆա) քաղաքից հիվանդախնամ միսիոներ Զյունցլերը վկայում է, որ իսկապես եղել է որոշ դիմադրություն: Այստեղ ոստիկանությունը 1915 թ. օգոստոսին 19-ին կատարել է տնային խուզարկություններ: CUP-ի ներկայացուցիչները հրահրելիս են եղել ամբոխին՝ կոտորել քրիստոնյաներին: Չինվորական համազգեստով ծպտված հայերը Զալեպից զենք են հայթայթել. դարբինները ձեռքի նռնակներ են պատրաստել: Զայկական թաղի շուրջը բարիկադներ են կառուցվել, իսկ ժանդարմները դրսում զբաղված են եղել տեղահանվածների քարավանները թալանելով: Պաշարման երրորդ օրը քրդերը համալրվեցին թուրք հետեւակայիններով, որից հետո բանակը ծանր հրետանի է բերել: Քրիստոնյա ասորիներ, որպես պատժիչ գորագնդի զինվորներ, տեղակայված են եղել առաջին շարքերում՝ զինված կացիներով: Երբ պաշարման 15-րդ օրը նռնակի բեկորը դիպել է առաջնորդին՝ Մկրտիչին, պաշտպանությունը տապալվել է: Բոլոր տղամարդկանց զնդակահարել են եւ թաղել ընդհանուր գերեզմանում: Եդեսիայի ու Շապին Կարահիսարի պաշտպանները կոտորվել են: Գերմանացի հրետանագորային սպա Էբերհարդ Վոլֆսքել ֆոն Ռայխենբերգը (Wolffskeh von Reichenberg) Եդեսիայի հայկական թաղը վերածել է հող ու մոխրի¹⁸²: Մտրակների հարվածների տակ կանայք բռնկվել են եղել մահվան երթի: «Կասկածից վեր է, որ գոյություն ուներ ծրագիր, ըստ որի բոլոր ուրֆացիները պետք է ոչնչանային անապատում: Նրանց այնքան ժամանակ

181 Նույն տեղում, 144-146.

182 Christian Schmidt-Hauer: “Wer am Leben blieb, wurde nackt gelassen” (Ով ողջ էր մնացել, մնացել էր մերկ). *Zeit-Dossier Völkermord* (www.zeit.de/2005/13/Armenier).

183 Künzler (2004), 84.

այս ու այն կողմ են քշել, մինչեւ ոչ մեկն այլեւս կենդանի չի մնացել, որ տեղափոխվելու կարիք ունենա»¹⁸³:

Հայտնի տարծավ հայերի պաշտպանությունը Եդեսիայում, Շապին Կարահիսարում եւ հատկապես Անտիոքի մոտակայքում գտնվող Մուսա լեռան վրա, որտեղ հինգ գյուղերից 5000 հայեր 1915 թ. հուլիսի 21-ից մինչեւ սեպտեմբերի 9-ը մնացին թուրքերի կողմից պաշարված, մինչեւ որ ֆրանսիական չորս ռազմանավ եւ անգլիական մեկ նավ կենդանի մնացած 4.058 հոգու փրկեցին եւ տեղափոխեցին Պորտ Սայիդ: Դեռեւս 1915 թ. սեպտեմբերի 7-ին ֆրանսիացի ծովակալը սիրիական ափի մոտ զեկուցեց Կիպրոսի բարձրագույն հրամանատարին, որ 6000 հայեր Մուսա լեռան վրա, Անտիոքի ծոցի մոտ պաշտպանվում էին թուրքերից: Նա հայերին զինամթերք եւ պարեն ուղարկեց եւ հարցրեց, թե ինչ պետք է արվեր: Հրամանատարը անհնար համարեց օգնության հասնելը: Արտաքին գործոց նախարար Գրեյը ոչ մի դեպքում չհամաձայնեց փախստականներին տանել Եգիպտոս եւ դրա մասին հայտնեց Փարիզում Բրիտանիայի դեսպան Բերթիին (Berthie): Գրեյի պատասխանը շատ ուշ տեղ հասավ. ֆրանսիացի ծովակալը Մուսա լեռան մարտիկներին փրկելով՝ փոխադրեց Եգիպտոս¹⁸⁴:

Պատվելի Տիգրան Անդրեասյանը, որը նախապես ներկա է եղել Չեյթունի գրավմանը, գրի է առել մուսալեռցի հայերի փրկության հետ կապված իրադարձությունները: Երբ ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը (Franz Werfel) 1930-ին Հալեպի մի գորգագործարանում հանդիպեց հայ երեխաների, եւ տեղեկանալով Մուսա լեռան դեպքերի եւ մուսալեռցիների հերոսամարտի մասին, գրեց «Մուսա լեռան 40 օրը» գիրքը, որ լույս տեսավ 1933 թ. եւ հայտնի դարձավ աշխարհով մեկ: Թեոդոր Վ. Ադորնոն (Theodor W. Adorno) գրում է այդ առիթով՝ Գերմանիայում հազիվ թե տեղյակ են միլիոնավոր անմեղ մարդկանց սպանդի մասին. «չնայած որ այդպիսի հռչակավոր գիրքը, ինչպիսին է Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», նյութը քաղել է այնտեղից: Դեռեւս Առաջին աշխարհամարտի ժամանակ թուրքերը սպանել էին ավելի քան մեկ միլիոն հայ: Անշուշտ Գերմանիայի ռազմական եւ կառավարական բարձր շրջանակներում տեղյակ են եղել այդ մասին, սակայն խիստ գաղտնի են պահել»¹⁸⁵: 1915 թ. հոկտեմբերի 7-ին Ավստրիայի դեսպանը Մեծ վեզիր Հալիլ բեյի հետ Վանի 3000-4000 հայերի ազատագրման մասին խոսակցությունից հետո գրում է. «Միայն ամենավայրագ ու ամենաանպատկառ երեւակայությունը ի վիճակի է պատկերացնել այդ իրադարձությունների արհավիրքը»¹⁸⁶: Ադրիանուպոլսի խժոժություններից հետո տեղի հյուպատոս Նադամլենցկին (Nadam-

184 Nassibian (1985), 92f.

185 Theodor W. Adorno: “Erziehung nach Auschwitz”, in: *Erziehung zur Mündigkeit*, Frankfurt 1970, 88-104.

186 Ohandjanian (1989), 111.

lenzki) իր բուլղարացի գործընկերոջ հետ գրում է կառավարությանը. «Քաղաքակրթության բոլոր սկզբունքներն ու մարդկային զգաց-մունքները ոտնակոխ են արված: Կատարվածը խնամքով մտածված ծրագրի իրականացումն է, որի նպատակը՝ թուրքիայում քրիստոնյա տարրերի ոչնչացումն է: Փաստն այն աստիճանի ծանրակշիռ է, որ ստորագրողներն իրենց պարտավորված են զգում այդ մասին տեղեկացնել համապատասխան պետություններին, հետագա տիպի անակնկալներ կանխելու նպատակով: Գործողությունների ընթացքը տանում է ոչ միայն դեպի կործանում, այլ ավելի շուտ՝ մի ամբողջ ցեղի բնաջնջում»¹⁸⁷:

Փրկարար գործողություններից ամենանշանակալիցն այն էր, որ հայերին հաջողվեց կաթողիկոսական գանձերը Կիլիկիայից տեղափոխել Սիրիա: Կաթողիկոս Սահակ Երկրորդը պատերազմի սկզբում տեղափոխվեց նահանգային մայրաքաղաք Ադանա եւ այնուհետեւ՝ Յալեպ, որտեղ հավաքվել էին բնագաղթածների բազմաթիվ խմբեր: 1915 թ. սեպտեմբերի 9-ին տեղահանման հրամանը հասավ նաեւ Կիլիկիա՝ Սիսի վանքը՝ կաթողիկոսական նստավայրը: Եպիսկոպոս Խաղ Աջապահյանը վերցրեց վանքի քարավանի ղեկավարությունը, որը սեպտեմբերի 9-ին թողեց Սիսը: Ջահան գետի ափին ջորիներով լծված մի սայլ՝ բեռնավորված հայկական սուրբ մասունքներով, ընկավ գետը: Երիտասարդները նետվեցին ջուրը եւ փրկեցին մասունքները, ինչպես եւ Գրիգոր Լուսավորչի Աջը: 23 օրից քարավանը հասավ Յալեպ, որտեղ Սահակ Երկրորդը մնաց մինչեւ 1930 թ.: Ապա նա տեղափոխվեց Անթիլիաս, այսօրվա Լիբանանում, ուր կաթողիկոսական գանձերը գտնվում են մինչեւ օրս: 2000-ին Գերմանիայի Յալլե (Halle an der Saale) քաղաքում կազմակերպվեց դրանց ցուցահանդեսը: Պատարագի հանդերձանքի, վեղարների, թագերի, գավազանների, հին ձեռագրերի կողքին՝ փրկվել էին արժեքավոր մասունքներ: Այսպիսով Անթիլիասը դարձավ հայ աքսորյալ համայնքներից մեկի կենտրոնը:

Բնաջնջման գործընթացը սակայն չէր սահմանափակվում միայն հայերով: Դաժանորեն հետապնդվում էին նաեւ հույներն ու ասորի քրիստոնյաները: Արդեն պատերազմի բռնկումից առաջ թուրքերը սկսել էին հույներին Թրակիայից եւ Հոնիայից քշել երկրի խորքերը: Բայց քանի որ Հունաստանը անկախ պետություն էր, եւ հույների հետապնդումը կարող էր բարդություններ առաջ բերել, թուրքերը ավելի մեծ զգուշությամբ էին գործում: Այդուհանդերձ, «հարյուր հազարավոր հույներ՝ ելնելով ռազմավարական եւ սոցիալ-տեխնոլոգիական պատճառներից, ափամերձ շրջաններից աքսորվում էին երկրի խորքերը»¹⁸⁸: 1914 թ. հունիսի 14-ին Ավստրիայի դեսպան Պալավիչինսին գե-

187 Նույն տեղում, 112.:

188 Kieser-Schaller (2003), 28.

կուցեց արտաքին գործոց նախարարությանը, որ հույն դեսպան Պանասը (Pan-
nas) հունական հյուպատոսարաններից տեղեկացել էր հույների տեղահանու-
թյունների մասին Գալիպոլիից (Gallipoli), Ռոդոստոյից (Rodosto = Թեքիրդաղ),
Կիդոնիայից (Այվալի) եւ Վուռլայից (Ուռլա)՝ Չմյունխայի մոտ¹⁸⁹: Գերմանացի
ծովակալ Ուսեդոմը (Usedom) պատմել է դեսպան Սորգենթաուին, որ ինքն է
թուրքերին տեղահանության խորհուրդ տվել¹⁹⁰: Նաեւ Յունաստանում Ավս-
տրիայի դեսպանը կառավարությանը իրազեկել է այն ամենի մասին, ինչ իրեն
հայտնել էին Յունաստանի արտաքին գործոց նախարարությունում իրադրու-
թյան մասին: Արդեն 1914 թ. հունվարի 14-ին Աթենքում արտաքին գործոց
նախարարությունը տեղյակ էր թուրքերի համապատասխան ծրագրերի մա-
սին: 1914 թ. մայիսի 14-ին Թալեաթ փաշան կարգադրեց Դարդանելի ափերի
հունական բոլոր բնակավայրերը մինչեւ Կիսիս, (Kyssos=Cesme) բռնի կերպով
դատարկել եւ շրջանը բնակեցնել Բալկաններից փախած մուսուլմաններով եւ
Անատոլիայի թուրքերով. «Քաղաքական պատճառներով խիստ անհրաժեշտ
է, որ փոքրասիական ափերի հույն բնակչությունը պարտադիր կարգով թողնի
իր գյուղերն ու վերաբնակվի Երզրումի նահանգում ու Քաղդեայում: Եթե իրա-
ժարվեն նշված վայրերը տեղափոխվել, խնդրվում է բանավոր հրահանգ տալ
մուսուլման եղբայրներին այնպիսի ձեւեր կիրառել, որոնք հույներին կպար-
տադրեն՝ կամավոր կերպով լքել իրենց տները: Այդ դեպքում, մի? մոռացեք
գաղթողներից վկայական վերցնել այն մասին, որ բնակավայրերը թողել են
իրենց բարի կամքով»¹⁹¹: 1914 թ. մայիսին եւ հունիսին հույների ջարդեր տեղի
ունեցան Յոնիայի Էրիթրեում (Erythrai) եւ Ֆոքեայում (Fokea). 1914 թ. մայիսի
27-ին Պերգամոնում (Բերգամա) թուրքերը հույներին երկու ժամ տվեցին
քաղաքը թողնելու համար: Յագարավոր փախստականներ ապաստանեցին
Քիոս (Chios) եւ Լեզբոս (Lesbos) կղզիներում, 40.000՝ Չմյունխայում, իսկ
80.000՝ շրջակայքում: Բռնի տեղահանվածները պարտավոր էին հայտարա-
րություն ստորագրել, ըստ որի նրանք իրենց հողը թողնում էին կամովին եւ
պարտավորվում էին երբեք այլեւս չվերադառնալ: Փոքր Ասիայի հույն
համայնքների կանոնավոր արտաքսումը սկսվում է Առաջին աշխարհամարտի
ավարտից փոքր-ինչ առաջ եւ անմիջապես հետո: Սկսած 1914-ից՝ Յու-
նաստան էին փախել 500.000-ից մինչեւ 773.859 հույներ, Յոնիայից Արեւելյան
Թրակիայից եւ Պոնտոսից¹⁹²:

Ներքրիստոնեական մրցակցությունը հույներիի ու հայերի միջեւ երբեմն
շատ տարօրինակ դրսեւորումներ էին ունենում: Իոաննիս Կ. Յասիոտիսը

189 Harri Tsirkinidis: *Der Völkermord an den Griechen Kleinasiens (1914-1923)*, in: Tessa Hofmann (Hg.): *Verfolgung...* (2004), 135-176.

190 Morgenthau (2003), 251.

191 Tsirkindis (2004), 139.

192 Hofmann: *Mit einer Stimme* (2004), 16.

(Ioannis K. Hassiotis) այդ մրցակցությունը բացահայտում է ելևելով հույն դիվանագիտական թղթակցություններից: Այսպես, հույն հյուպատոս Պ. Ադամիդիսը (Adamidis) 1915 թ. մայիսի 7-ին Մերսինից (Mersin) հաղորդելով հայերի՝ Ադանայից Կապադովկիա աքսորվելու լուրը, նշում է՝ այժմ կարելի էր ակնկալել, որ հույները կկարողանան գրավել հայերի տեղերը: Մյուս կողմից՝ Ադանայում հույների հետապնդումների ընթացքում հայերը նրանց հանդեպ միայն ատելություն էին դրսևորում¹⁹³:

Արեւելյան ասորի «նեստորականները» նախապես բնակվում էին Զակարիի (Hakkari) շրջանում, Սդերդի (Seert) մոտակայքում, Մոսուլի գավառում եւ Իրանում: 1914 թ. հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած առաջին կոտորածներից հետո, նեստորականների պատրիարք Շիմուն Տասնիներորդ Բենջամինը (Shimun XIX. Benjamin), որը նախապես, 1914 թ. օգոստոսին, Վանի նահանգապետի հետ բանակցել էր «նեստորականների» չեզոքության հարցի շուրջ, 1915 թ. մայիսի 10-ին Մեծ Չաբ (Zab) գետի ափին գտնվող Դիզ (Diz) բնակավայրում տեղի ունեցած համազգային ժողովից հետո, Թուրքիային պատերազմ հայտարարեց¹⁹⁴: Սա պաշտոնապես հաղորդվեց Վանի նահանգապետին: 1915-ին հունիսին Մոսուլի վալին (նահանգապետը) հարձակվեց «նեստորականների» վրա եւ կաթողիկոսից պահանջեց անձնատուր լինել: Երբ ձախողվեցին ռուսներից ռազմական օգնություն ստանալու բանակցությունները, 1915-ի աշնանը մոտ 50.000 «լեռնեցի նեստորականներ» իրենց հոտերով, անցնելով պարսկական սահմանը, շարժվեցին դեպի Ուրմիա, խուսափելով քրդերի կոտորածներից: Այսօրվա Թուրքիայի Զակարիի տարածքում 1915/16 թթ. թուրքերն ու քրդերը սպանեցին մոտ 20.000–30.000 «լեռնեցի ասորի»¹⁹⁵: Ռուսների՝ դեպի արեւելյան Թուրքիա առաջխաղացումից հետո, Մար Շիմուն Տասնիներորդը (Mar Shimun XIX.) Նիկոլայ Երկրորդ ցարի հրավերով 1916 թ. հունվարին մեկնեց Թիֆլիս, որտեղ նա՝ իր ժողովրդին արիասիրտ կերպով առաջնորդելու համար բարձր պատվանշան ստացավ: «Նեստորականները» 1916 թ. մայիսին կազմակերպեցին ինքնապաշտպանություն՝ Պետրոս աղայի եւ կաթողիկոսի գլխավորությամբ: Սակայն արեւելյան ասորիների ճակատագիրը կախված էր Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ ընթացող պատերազմի համապատասխան վիճակից: Ի վերջո, ասորի քրիստոնյաները տեղակայված էին ճակատների արանքում: Սդերդ քաղաքում, որտեղ 11-րդ

193 Ioannis K. Hassiotis: “The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)”, in: *The Armenian Genocide*, ed. by Richard G. Hovannisian, New York 1992, 129-151, hier 134.

194 Gabriele Yonan: *Assyrer heute. Kultur, Sprache, Nationalbewegung der aramäisch sprechende Christen im Nahen Osten*, (=Progrom 59), Hamburg-Wien 1978, 30 և Strothmann (1936), 61.

195 Gabriele Yonan: *Ein vergessener Holocaust: Die Vernichtung der christlichen Assyrer in der Türkei* (=Progrom 148/149), Göttingen 1989, 213.

դարում արաբերենով գրվել է հռչակավոր «Սղերդի տարեգրությունը», քրիստոնեությունը ամբողջովին ոչնչացվեց: Տարեգրության հատորը պատրաստվում էր տպագրության՝ դրա հայտնաբերողի՝ արքեպիսկոպոս Ադաի Շերի (Addai Scher) կողմից եւ տպվելու էր «Patrologia Orientalis» (Արեւելյան հայրաբանություն) քրիստոնեական գրվածքների շարքում, երբ մուսուլմանները ավերեցին եպիսկոպոսանիստն ու գրադարանը՝ այդ ձեռագրով հանդերձ: Այսօր Սղերդում այլևս տեղի նախկին քրիստոնյա համայնքի մասին ոչինչ հիշեցնող չկա: Որպես կանոն թուրքերը եկեղեցիներն ու վանքերը կամ պայթեցնում էին, կամ վերածում մզկիթի: 1916 թ. հունվարի 28-ին դեսպանորդ Վոլֆ-Մեթերնիխը Բեռլին հաղորդեց, որ Տուրաբդիսից հյուսիս, Սղերդում սպանվել է քրիստոնյա ամբողջ բնակչությունը¹⁹⁶: Հակարիի տարածաշրջանում քրիստոնյա «նեստորականները» նույնպես չվերապրեցին Առաջին աշխարհամարտը: Դիարբեքիի քաղղեացի եպիսկոպոս Սուլեյման Մոխսե ալ-Սաբաղը կարողացավ, սակայն, խույս տալ կոտորածներից. նրա մահով մարեց եպիսկոպոսությունը¹⁹⁷:

Արեւելյան Թուրքիայում քրիստոնյա «հակոբիկները» եւս, որոնք Եվրոպայում հովանավորներ չունեին, անմասն չմնացին կոտորածներից: Դիարբեքիի գավառում, որտեղ 1913 թ. ապրում էր նաեւ 4000 հայ, ինչպես եւ Մարդինում ու Տուրաբդիսում, ասորի քրիստոնյաները եւս մասամբ բնաջնջման ենթարկվեցին թուրքերի եւ քրդերի կողմից:

1915 թ. հուլիսի 28-ին Մոսուլի գերմանացի հյուպատոս Վալթեր Հոլշթայնը հաղորդեց Կոստանդնուպոլսի դեսպանին, որ Միդիատի (Midyat) ու Մարդինի (Mardin) միջեւ բնակվող ասորիներն ու քաղղեացիներն ապստամբել են Դիարբեքիի վատահամբավ նահանգապետ դ-ր Մեհմեդ Ռեշիդի (Dr. Mehmed Reshid) դեմ: «Ապստամբությունն անմիջական արդյունքն է Դիարբեքիի վալիի՝ քրիստոնյաների դեմ կիրառած ծայրահեղ միջոցառումների: Նրանք պաշտպանում են իրենց մաշկը՝ ինչպես որ կարողանում են»¹⁹⁸: Գերմանացի հյուպատոսը դեսպանի անունից դիմեց ներքին գործոց նախարար Թալեաթին՝ Ռեշիդին պաշտոնից ազատելու պահանջով, սակայն նահանգապետը շարունակեց մնալ պաշտոնում: 1915 թ. հուլիսի 31-ին դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգը (Hohenlohe-Langenburg) հաղորդեց Բեռլին. «Սույն ամսվա սկզբից Դիարբեքիի վալի Ռեշիդ բեյը սկսել էր վարչական տարածքի քրիստոնյա բնակչության կանոնավոր բնաջնջումը՝ առանց տարբերակելու ազգություն կամ դավանանք: Դրանից հատկապես տուժել են Մարդինի ու Տելեր-

196 Նույն տեղում (28.1.1916).

197 Jean Maurice Fiey: *Pour un Oriens Christianus Novus. Répertoire des Diocèses syriacques orientaux et occidentaux*, (=Beiruter Texte und Studien 49), Beirut 1993, 50.

198 Tessa Hofmann: "Mit einer Stimme sprechen – Gegen Völkermord", in: Tessa Hoffmann (Hg.): *Verfolgung, Vertreibung...* (2004), 9-51, hier 20.

մենի (Tellermen) կաթուղիկ հայերն ու եւ քրիստոնյա քաղղեացիները, ինչպես նաեւ Միդիատի (Midiat), Ջեզիրետ իբն Օմարի (Djeziret ibn Omar) եւ Մծբինի (Nisibis) շրջանների ոչ միաբան ասորիներին»¹⁹⁹: 1915 թ. սեպտեմբերի 26-ին հյուպատոս Ռուլերը հաղորդեց Յալեպից. «Արեւելյան նահանգներից հայերից բացի աքսորվում են ոչ միայն նեստորականներ, այլ նաեւ հին ասորիներ (հակոբիկներ), կաթուղիկ ասորիներ եւ այլ քրիստոնյաներ: Վաղուց արդեն լուրեր են շրջում, որ այդ քրիստոնյաներին նաեւ սպանում են»²⁰⁰: Մարդիկ եւ Միդիատի միջեւ Յազիկ (Hazik) բնակավայրում նույնպես հաստատված են սիրիացի քրիստոնյաներ: Այստեղ, ինչպես Տուրաբդինում, գործը կարգավորվում է առանց արյունահեղության: 1915-ի հունիսին Մծբինի քրիստոնյա բնակչությունը ենթարկվեց շարդի, որի ընթացքում սպանվեց ավելի քան 400 քրիստոնյա. քաղղեացիներ, հայեր, արեւմտյան ասորիներ ու կաթուղիկներ: 1915 թ. հունիսի 15-ին ավերվեց քրիստոնյաների թաղամասը. ասորի վանական Ստեփանոսը տանջամահ արվեց²⁰¹: Խարբերում, որտեղ 1895 թ. արդեն 500 հայ էին կոտորել, ոչ միայն սպանում են հայերի մեծ մասին, այլև արեւմտասիրիացիների եպիսկոպոս Կյուրեղ Մանսուրին²⁰²: Աթաթուրքի Թուրքիայում, բացառությամբ Մարդին եւ Տուրաբդին քաղաքների, Դիարբեքիում եւ Ստամբուլում հազիվ թե մնացած լինեն «հակոբիկներ»:

Տեղահանումները շարունակվեցին մինչեւ 1915 թ. սեպտեմբերը: Թուրքիայում քրիստոնյաների կոտորածների հետեւանքով տեղի ունեցան պաշարումներ եւ քրիստոնյաների ինքնապաշտպանական մարտեր՝ պաշարված Ինվարդոյում (Inwardo) եւ Տուրաբդինի (Turabdin) Յահ (Hah) վայրում, ինչպես նաեւ Մոր Մալքե վանքում: Ինվարդոյում եւ Յահում 1915 թ. քրիստոնյաները ամրացել էին բերդածե կառուցված եկեղեցիներում, ամիսներ շարունակ դիմադրելով թուրքական բանակի պաշարմանը: Կոտորածներին մաս էին կազմում, անշուշտ, նաեւ քրդերը, որոնք այստեղ՝ քրիստոնյա Տուրաբդինում ոչ թե զոհերի դերում էին, այլ կանոնավորապես մասնակցում էին 1895-ի եւ 1915-ի ջարդերին: Զվարտամին (Մոր Գաբրիել) վանքը, որտեղ ապրում էր վեց վանական, դարձել էր Կֆարբեի (Kfarbe) բնակչության փախստավայրը: Քրդերը կաշառում էին թուրք սպաներին, որպեսզի կարողանան սպանել տեղահանվածներին: Ահզամի (Ahzam) քրդական ավազակախումբը յուրացրեց վանքը ու բնակվեց այնտեղ չորս տարի: Միայն զինադադարից հետո, 1919-ին քրիստոնյաները կարողացան կրկին տեր կանգնել ավերված վանքին: 1919 թ. Մարդինի երիցապետ Իսահակ Արմալեն (Isaak Armale) հրատարակեց հաղոր-

199 Նույն տեղում, 21.

200 www.armenocide.de (26.9.1915).

201 Jean-Maurice Fiey: Nisibe métropole syriaque orientale et ses suffragants des origines à nos jours, (=CSCO 388, Subsidia 54), Louvain 1977, 128f.

202 Fiey (1993), 216.

դագրություններ 1915-ի բռնարարքների մասին: Արկահի (Arkah) ավագերեց Սուլեյման Հենոն (Suleyman Henno) հետագայում տեղեկություններ հավաքեց տեղահանությունից ողջ մնացածների մասին²⁰³:

Ինվարդո ամրոցում քրիստոնյաների ինքնապաշտպանության առաջնորդը Մասուդն էր՝ Միրզա ընտանիքից: Առաքելական նվիրակ Յոֆերի (Hofer)՝ 1915 թ. հոկտեմբերի 26-ի հաղորդման մեջ ասվում է, որ Մարդինում տեղի ունեցած կոտորածի ժամանակ սպանվել է կաթոլիկ եպիսկոպոսը՝ իր 700 հետևորդների հետ միասին²⁰⁴: Ընդհանուր առմամբ, Մարդինի շրջակայքում նահատակվել են մոտ 90.000 հակոբիկներ²⁰⁵: Պարզ է, որ Այդինի բերած թիվը՝ «ավելի քան մեկ միլիոն» սպանված ասորիներ (դրանցից 250.000-ը Դիարբեքի ռ. Տուրաբդինի շրջանից), չափազանցված է²⁰⁶: Այն հանգամանքը, որ Տուրաբդինի կոտորածների մասին գերմանական կառավարությունը տեղեկացված է եղել, փաստում է Մոսուլի գերմանացի փոխստրատեգի Վալդերի 4-ին Կոստանդնուպոլսի դեսպանին հղած հեռագիրը Տուրաբդինում Ազաքի (Azakh), կամ Բեթ Չաբդայի (Beth Zabday) պաշարման մասին. «Լսել եմ, որ բարոն ֆոն դեր Գուլը 4-րդ բանակին հրաման է արձակել զորամասեր ուղարկել՝ ճնշելու Միդիատի ապստամբությունը: Պիտի շեշտեմ, որ սխալ է Միդիատի ու Մարդինի (Ազիքի մոտ) միջև խրամապատված քրիստոնյաների մասին (ասորիների եւ հայերի մի փոքր խումբ, որոնց դեմ ուղարկվել էին վերոհիշյալ զորամասերը) խոսել որպես ապստամբների: Նրանք ավելի շուտ այն քրիստոնյաներն են, որոնք կարողացել են փախչել կոտորածից եւ այժմ՝ փոխանակ ոչխարների պես մորթվելու, պաշտպանում են իրենց կյանքը: Կարելի է ակնկալել, որ երբ թուրքական զորքը Ազիքը գրավի, այնտեղ քրիստոնյայի հետքն անգամ մնացած չի լինի: Այնինչ, թերեւս հնարավոր լինելու գործը առանց արյունահեղության անմիջապես հարթել, պաշարվածների հետ բանակցությունների մեջ մտնելով եւ թույլ տալով նրանց, որ զինաթափվեն, ապա նահանջեն եւ բնակություն հաստատեն Միջագետքում: Քանի որ մինչ օրս իրենց ունեցած փորձից ելնելով, քրիստոնյաները թուրքական կառավարության ոչ մի բառին այլեւս հավատ չեն ընծայում, անհրաժեշտ կլինի, որ բանակցություններին մասնակցի գերմանացի որեւէ սպա կամ հյուպատոսս արանի պաշտոնյա: Ես կառաջարկեի պարոն ֆոն Շոյբներ-Ռիխտերին (Scheubner-Richter), որի ջոկատները նույնպես ուղարկվելու են Ազիք, եւ որը չի կարող

203 Die Verfolgung und Vernichtung der Syro-Aramäer im Tur Abdin 1915, gesammelt von Erzpriester Sleman Henno von Arkah, übersetzt v. Amill Gorgis u. Georg Toro.

204 Ohandjanian (1989), 108: Մարդինի թանգարանում, որը եղել է միաբան պատրիարքի նախկին ապարանքը, քաղաքի պատմութեան ցուցանմուշներում քրիստոնյաների մասին ոչինչ չեն գտնի:

205 Yeor (2002), 201: Խոսքն այստեղ հավանաբար Տուրաբդինում սպանված ասորիների ընդհանուր թվի մասին է:

206 Aydin (1990), 98.

այնտեղ գնալ նախքան այդ հարցի կարգավորումը: Ես ինքս էլ պատրաստ կլինեի Ազիք գնալ: Պաշարվածների հետ բանակցություններին պետք է ներգրավել նաև տեղի ասորի եպիսկոպոսին: Այստեղի վալին, որն ինձ համակարծիք է, նույնպես պատրաստ է ուղեկցել մեզ: Այս գործով նա իր նախարարությունում ոչ մի առաջարկ չի արել, քանի որ դա կարող էր մեկնաբանվել որպես բանասարկություն Դիարբեքիի վալիի դեմ: Եթե գործն ընթանա առաջարկված եղանակով, հավատացած եմ, որ կարելի է ապահովել արագ եւ գոհացուցիչ արդյունք: Խոնարհաբար Ձեր հայեցողության եմ թողնում՝ վերոհիշյալ գրությունը սպարապետ Կոլմար ֆոն դեր Գուլցին հանձնելու որոշումը»²⁰⁷: Պրուսացի բարոն Կոլմար ֆոն դեր Գուլցը, 1883-ին մտնելով թուրքական ծառայության մեջ, մինչև 1916 թ. գործեց որպես թուրքական բանակի հրամանատար: Գործողության իրականացումը Գուլցը հանձնարարեց թուրք գնդապետ Նաջի բեյին (Nadschi Bey), որն ապրել էր Գերմանիայում եւ խոսում էր գերմաներեն: Նոյեմբերի 12-ին գերմանական դեսպանատունը Բեռլին հղեց Գուլցից ստացված հետեյալ տեղեկատվությունը. «Բավական ժամանակ է, որ թուրքական բանակի ղեկավարությունը ծրագրել էր գրոհ մի խումբ ասորի քրիստոնյաների դեմ, որոնք հայերի հետ ամրացել էին Մարդինի եւ Միդիատի միջև գտնվող դժվարանցանելի մի վայրում, որպեսզի խուսափեն Դիարբեքիի վալիի կազմակերպած քրիստոնյաների կոտորածներից: Զանի որ սկզբում այդ գրոհը հանձնարարված էր շատ հեռու գտնվող 4-րդ բանակին, մարշալ Գուլցը 3-րդ բանակի մի ջոկատի հրաման է տվել վերականգնել այդ վայրի կարգ ու կանոնը: Մոսուլի հյուպատոսարանի կառավարիչ Յոլշթայնը իր հերթին՝ շեշտելով, որ երեւույթը չի կարելի ապստամբություն համարել, Մոսուլի վալիի հետ փոխադարձ համաձայնության գալով, ցույց է տվել պաշարվածների հետ բանակցությունների եղանակը: Նրանք նշել են, որ ցանկալի կլինի՝ բացի այլ անձնավորություններից, բանակցություններին ներկա լինել պարոն Շոյբներ-Ռիխտերը, որի ջոկատները պետք է մասկացեին գրոհին»²⁰⁸: Տուրաբդինի անցքերի մասին եւս տեղյակ էր գերմանական կառավարությունը: Ահա այս բոլոր եղելությունները պատճառ հանդիսացան, որ թուրքական բանակի ղեկավարության հրահանգով Տուրաբդինի պաշարումներն ավարտվեցին առանց արյունհեղության:

Յնում հայտնի քրիստոնեական բարձրագույն դպրոցների քաղաք Մըծբինում, որ գտնվում էր բյուզանդական մշակույթի տարածաշրջանի եւ Պարսկական պետության սահմանին, 1915-ին նույնպես քրիստոնյաներ են կոտորվել: Կենդանի մնացած երիցապետ Բեթ Հանոն (Beth Hanno) այդ մասին պատմել է իր գրառումներում. «Երբ թուրքերը ասորիներին քաղաքից դուրս

207 www.armenocide.de. (4.11.1915).

208 www.armenocide.de. (12.11.1915).

Էին հանում, վերջիններս գիտեին, որ գնում են դեպի մահ: Մի ջրհորի մոտ թուրքերը սկսեցին նրանց՝ իրար հետեւից գամների նման մորթել: Յուրաքանչյուրին սպանելուց առաջ, նախքան դանակը վզին դնելը, ասում էին՝ իսլամ ընդունի՞ր եւ քեզ չենք սպանի: Ոչ ոք չէր ենթարկվում նրանց կամքին, ոչ ոք չէր ուրանում իր Տեր Հիսուս Զրիստոսին: Հետեւաբար մեկ առ մեկ բոլորին սպա-նեցին, իսկ դիակները ջրհորը նետեցին: Այսպիսով, քրիստոնեական հին քաղաք Մծբինը դատարկվեց քրիստոնյաներից»²⁰⁹: Հայերի եւ հույն ուղղափառ-ների կողքին՝ ասորի քրիստոնյաները նույնպես ունեն 1915/17 թթ. ջարդերի իրենց մասնաբաժինը, որը հաճախ մոռացության է մատնվում: Մարդիկ շրջակայքում սպանվեց 90.000 հակոբիկ, նրանցից՝ 5.379 հոգի Հին Ամիդ մայրաքաղաքում (այժմ՝ Դիարբեքիր), 5.815 բուն Մարդինում, 25.830՝ Միդիատում եւ 6.165 Սավուրում: Ամայացավ 336 գյուղ, ավերվեց 162 եկեղեցի, սպանվեց 136 քահանա²¹⁰: Այսպիսով, քրիստոնյաները իրենց վաղնջնական բնօրրան Միջագետքում վերածվեցին նվազող մի փոքրամասնության:

209 Amil Gorgis: “Der Völkermord an den Syro-Aramäern”, in: Tessa Hoffmann: *Verfolgung, Vertreibung...* (2004), 111-120, hier 117.

210 Նույն տեղում, 114 (Tabelle).

10. Արեւմտյան աշխարհի արձագանքները

Անտանտի պետությունների 1915 թ. մայիսի 24-ի հայտարարությունը փաստագրում է այն, ինչ կոտորածների մասին արդեն մեկ ամիս անց Արեւմուտքին հայտնի էր: Դեռեւս 1915-ի հունիսին Յակոբ Զյունցլերը իրադարձությունների մասին իրազեկել էր գերմանական, ավստրիական ու ամերիկյան հյուպատոսություններին, նաեւ՝ գերմանացի դիվանագետ Մաքս ֆոն Օպենհայմին (Max von Oppenheim): 1915 թ. մայիսի 31-ին Գերմանիայի դեսպան Վանգենհայմը բեռլինյան կառավարությանը տեղեկացրել էր տեղահանումների մասին եւ խնդրել այդ մասին հայտնել Յոհաննես Լեփսիուսին (Johannes Lepsius) եւ գերմանա-հայկական կոմիտեին: Չնայած որ հայատյաց դեսպան Վանգենհայմը կառավարությանը նախազգուշացրել էր, որ բողոքական հոգեւորական Լեփսիուսից ակնկալվող գործողությունները «կբարկացնեն» Թուրքիային, հունիսի վերջին Լեփսիուսը ճանապարհվելու թույլտվություն ստացավ: 1915 թ. հուլիսի 24-ին նա ժամանեց Ստամբուլ, բայց ներքին գործերի նախարար Թալեաթը արգելեց նրա մուտքը երկրի խորքերը: Սակայն գերմանական ծովային ուժերի գծով կցորդ Յումանի (Humann) միջնորդությամբ, Լեփսիուսը հանդիպում ունեցավ ռազմական նախարար Էնվեր փաշայի հետ: Լեփսիուսի այն ամաչարկին, որ իրեն վստահվի քստորյալների մատակարարման հարցը, Էնվերը պատասխանել էր, որ եթե ինքը թույլ տար, որ օտարները հայերին օգնության հասնեին, նրանք երբեք իրենց հույսը չէին կտրի դրսի միջամտություններից: Թուրքերը ի վիճակի էին իրենց ներքին թշնամիներից գլուխ հանել, իսկ գերմանացիները՝ ոչ²¹¹: Ապա նա ավելացրել է, որ կառավարության անդամներն այժմ համաձայնության են եկել, որ «հայերի հետ իրենց հաշիվը պետք է մաքրեն»²¹²: Լեփսիուսը վերադարձավ Գերմանիա եւ փորձեց հասարակայնությանը ոտքի հանել: 1915 թ. սեպտեմբերի 16-ին «Basler Nachrichten» (Բազելի լուրեր) թերթում տպագրվեց «Մի ժողովրդի բնաջնջումը» անստորագիր հոդվածը: Գլխավոր հյուպատոս Վուլդերլիխը 1915 թ. սեպտեմբերի 22-ին բողոքեց ռախսկանցներին. «Անում են, որ այդ պարոնը վերջերս եղել է Շվեյցարիայում եւ իրազեկել, որ Բեռլինում

211 Dominik J. Schaller: “Die Rezeption des Völkermordes an den Armeniern in Deutschland 1915-1945”, in: Kieser-Schaller (2003), 517-556, առջ. 525. 1919-ին Լեփսիուսը «Քրիստոնեական Արևելք» (*Christlicher Orient*, 1919, 21-33) ամսագրում հրատարակեց «1915-ի Հուլիս-օգոստոս ամիսների այցելությունն Կոստանդնուպոլիս» հոդվածը: Այդ հոդվածի նյութը հետագայում Ֆրանց Վերֆելը օգտագործել է Մուսա Լեռանը նվիրված իր գրքում:

212 Ternon (1981), 219.

արտաքին գործոց նախարարությունը լրիվ տեղեկացված է հայերի հալածանքների ծավալի եւ ընթացքի մասին: Արտաքին գործոց նախարարությունը փորձում է կասեցնել հալածանքները, սակայն թուրքերը (ամենից առաջ Էնվեր փաշան) չեն թողնում խառնվել իրենց ներքին գործերին: Այսպես թե այնպես, Գերմանիան մեծ դժվարություններ ունի Թուրքիայի հետ, մանավանդ որ վերջինս ժամանակ առ ժամանակ երկմտում է Անտանտի առաջարկությունների առաջ: Իսկ Ամերիկյան արդեն լրջորեն մտածում է Հայկական հարցը լուծել այն հեռանկարով, որ Արեւմուտքում հայերին հատկացվի բնակվելու տարածք: Սակայն դա եւս Էնվեր փաշայի սրտովը չէր: Լեփսիուսը, երբ Կոստանդնուպոլսում էր, Էնվեր փաշային հիշեցրել էր, որ ամբողջ առեւտուրը Թուրքիայում հայերի ձեռքն էր: Եթե նրանք բնաջնջվեին, ապա «Թուրքիան այլեւս ստամոքս չէր ունենա»: Էնվեր փաշան պատասխանել է՝ Թուրքիան որոշ ժամանակ կկարողանա նաեւ թույլ ստամոքսով ապրել: Տեսնելով, որ Կոստանդնուպոլսում այս կերպ հայերի համար ոչինչ չի կարողանա անել, Լեփսիուսը հարմար է գտել չեզոք մամուլում աղմուկ բարձրացնել Գերմանիայի դաշնակցի դեմ: Շվեյցարիայում հրատարակվող տազնապալի հոդվածների նպատակը՝ հոգուտ հայերի միջամտության նոր փորձ կատարելն էր: Թեեւ պարոն Լեփսիուսի գործունեությունը գոհացում էր տալիս նրա քրիստոնյա սրտին, բանականությունը պետք է նրան հուշեր, որ չեզոք երկրում ձեռնարկած իր բացարձակապես անհեռանկար քարոզչության միջոցով, նա միայն վնաս էր հասցնում Գերմանիային»²¹³:

1915 թ. հոկտեմբերի 5-ին Լեփսիուսը Գերմանիայի առաջատար մամուլի ներկայացուցիչների համար զեկուցում կարդաց, որտեղ շեշտեց, որ Գերմանիայի հեղինակությանը մեծ վնաս կհասցվի, եթե կառավարությունը չներգործի երիտթուրքերի վրա: Մի պաշտոնագրում Թուրքիայի ներքին վիճակի մասին, նշված է. «Դ-ր Լեփսիուսը, որը վերջերս Բեռլինի լրագրողների արաջ կարդաց հրապարակման համար չնախատեսված մի զեկուցում, 30 տարի շարունակ, եւ մեծ մասամբ եկեղեցական գործերով, ճանապարհորդել է Փոքր Ասիայում եւ վերջերս էլ այնտեղ ուղեւորության մեջ էր: Նա խոսել է հայ ժողովրդի տեղահանության մասին՝ հենվելով գերմանացի վաճառականների, միսիոներների, երկաթուղային ծառայողների, ինչպես նաեւ Հունաստանի, Բուլղարիայի եւ Ամերիկայի դեսպանատների հաղորդումների, վերջապես երկրի խորքերից Հայոց պատրիարքարանի եւ Կոստանդնուպոլսի Հայ սահմանադրական կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից ստացված տեղեկությունների հիման վրա: Եվրոպական պատերազմի սկզբին Էրզրումում երիտթուրքական կոմիտեի անդամները հայերին հուշել էին՝ հեղափոխականացնել Կովկասի 1,5 միլիոն ռուսահայերին (Թուրքիայում կային 2

213 www.armenocide.de. (22.9.1915).

միլիոն հայեր): Այդ բանը տեղի չունեցավ, քանի որ կովկասահայերի հետ ռուսներն այնքան լավ վարվեցին, որ հայերը բռնեցին նրանց կողմը: Դրանով իսկ Կովկասը թուրքերի համար անհասանելի դարձավ: Պատերազմի սկզբում թուրքերը բանակում գտնվող բոլոր հայերին զինաթափ արեցին եւ նրանցով համալրեցին թիկունքի աշխատանքային գումարտակները: Այնուհետեւ թուրքերը հապճեպորեն զինաթափեցին հայ բնակչությանը, չնայած որ զենքն այնտեղ քաղաքացիների ապահով կյանքի մաս էր կազմում: Դրան հակառակ՝ պետությունը սպառնազինում էր թուրք բնակչությանը եւ կազմավորում քրդական հրոսակախմբեր, ինչպես նաեւ հազարավոր բանտարկյալներից կազմը՝ վաճ ավազակախմբեր: Նոյեմբերից ապրիլ թալանվել էր 400-500 հայկական գյուղ, եւ մոտ 26.000 հայեր սպանվել էին իրենց իսկ տներում: Թիկունքի հայ զինվորները շատ անգամ դասալքվում էին, որովհետեւ նրանց թուրք ընկերները աշխատանքի ժամանակ սպանում էին նրանց: Պատերազմի սկզբում հայ առաջնորդները թուրքական իշխանությունների հետ հարաբերությունների մեջ մտան՝ հետագա դժվարություններից խուսափելու համար: Չնայած դրան, վերջին երեք ամիսներին, թուրքերը ոչնչացրին իրենց հայ բնակչության կեսին: Ինչպես էնվերն ինքն է խոստովանում, մայիսի վերջին հրաման է արձակվել աքսորել հայ բնակչությանը Անատոլիայի բոլոր նահանգներից դեպի արաբական անապատները: Այդ հրամանն իրականացվեց: Հայ բնակչության մի մասը, անշուշտ, կարողացավ ողջ մնալ: 100.000-200.000 հոգի կոտորվեց ճանապարհին, իսկ 2000-3000-ը տեղ կհասնի, սակայն այնտեղ՝ հարավում, կմահանա, եթե օգնություն չստանա: Այս փաստերը Թուրքիայում ոչ ոք չի ժխտում: Ինչ վերաբերում է մեղավորությանը, զեկուցողի կարծիքով, հայերը կարող են լրիվ արդարացվել: Ճիշտ է, որոշ տեղերում հայերը ինքնապաշտպանության են դիմել, բայց այն ժամանակ, օրինակ Վանում, նրանք դեռեւս ոչինչ չգիտեին ռուսների առաջխաղացման մասին եւ զարմացել էին ռուսներին տեսելով, որոնց անշուշտ ընդունել էին որպես իրենց ազատարարների: Ի դեպ, Հայկական կենտրոնական կոմիտեն հրահանգել էր՝ խուսափել այն ամենից, ինչը կարող էր բախումների հանգեցնել՝ վախենալով, որ այդ առիթով կվերակենդանանա սուլթան Համիդի հին ծրագիրը՝ քրիստոնյաների հալածանքերը: Մի բարձրաստիճան պաշտոնյա զեկուցողին ասել է. «Մենք կույր պետք է լինեինք, եթե այս առիթը չօգտագործեինք եւ հայերից չազատվեինք»²¹⁴:

Մեկ օր անց արտաքին գործերի նախարարության մի ներկայացուցիչ Լեփսիուսին որակեց որպես «ապստամբ»: Վերջինս իր «Տեղեկություն հայ ժողովրդի մասին Թուրքիայում» (1916, ֆրանսերեն՝ 1919) աշխատության մեջ նկարագրում է իրադարձություններն Օսմանյան կայսրության մեջ ըստ շրջան-

214 www.armenocide.de (12.12.1915).

ների: Եւ փող հայթայթեց եւ 1916 թ. հուլիսին աշխատությունը 20.000 տպաքանակով հրատարակեց եւ ուղարկեց Ռայխստագի պատգամավորներին, թերթերին եւ ավետարանական հոգեւորականներին: Գրքի հանձնումը, սակայն, պետական ծառայությունների կողմից կանխվեց: Այնուհետեւ Լեփսիուսը մեկնեց Յուլանդիա՝ կամավոր աքսորի, որտեղ մնաց մինչեւ պատերազմի վերջը: 1919 թ. լույս տեսավ նրա «Յաղոբիում հայ ժողովրդի վիճակի մասին» աշխատությունը՝ «Յայ ժողովրդի մահվան երթը» խորագրով: Բեռլինում արտաքին գործոց նախարարությունը, որն ուզում էր վերստին բանակցությունների նախօրեին ձերբազատվել կոտորածներին մեղսակից լինելու մեղադրանքից, 1919 թ. դրոշմ Լեփսիուսին հրատարակելու Օսմանյան կայսրությունում Գերմանիայի հյուպատոսների ու դեսպանների զեկույցների վավերագրերը՝ «Գերմանիան եւ Յայաստանը. Դիվանագիտական վավերագրերի հավաքածու» խորագրի ներքո²¹⁵: Քննադատները հետագայում Լեփսիուսին պարսպվեցին, որ նա հաշտության բանակցությունների հետ նախօրեին ցանկացել էր Գերմանական կայսրությանը ձերբազատել ցեղասպանության մեջ նրա մեղսակցության բաժնից:

Գերմանական կառավարությունը քաջատեղյակ էր, թե ինչ էր կատարվում Թուրքիայում: 1915 թ. ամռանը Օսմանյան կայսրությունում Գերմանիայի հյուպատոսներն ու դեսպանները տեսան, որ հայերի «վերաբնակեցումը» իրականում ցեղասպանություն էր, որն իրագործվում էր երիտթուրքերի կամքով: 1915 թ. հունիսի 12-ին դ-ր Մորտմանը (Dr. Mordtmann) հաղորդեց Յայոց պատրիարքի հետ ունեցած մի խոսակցության մասին: Նա գիտակցում էր, որ «պատրիարքը Բարձր դռան հայատյաց քաղաքականության նպատակը համարում էր ոչ թե հայ ազգաբնակչության ժամանակավոր վնասագերծումը, այլ նրանց վերջնական արտաքսումը Թուրքիայից, ինչպես նաեւ նրանց բնաջնջումը, եւ որ այդ պատճառով էլ նա այլեւս չի տեսնում հարցի որեւէ խաղաղ լուծում»²¹⁶: Դեսպան Վանզենհայմը 1915 թ. հունիսի 17-ին գրում է ռայխսկանցլերին. «Պարզորոշ է, որ հայերի աքսորը չի կարող հիմնավորվել միայն ռազմական սկստառումներով: Ներքին գործոց նախարար Թալեաթ բեյը վերջերս կայսերական դեսպանատան աշխատակից դ-ր Մորտմանի ներկայությամբ բացեցիք հայտարարել է, որ Դուռը ցանկանում

215 2003-ին Վոլֆգանգ Գուստը (Wolfgang Gust) վերահրատարակեց (www.armenocide.de) այդ գործը, քանի որ քննադատության ձայներ Հնչեցին այն կապակցու-թյամբ, որ քանիցս բաց են թողնվել տեղեր, որոնք բացահայտում են գերմանացիների մեղսակցությունը ցեղասպանությանը: Սկսած 1922-ից Լեփսիուսը՝ Ալբրեխտ Մեն-դելսոն-Բարթոլդի (Albrecht Mendelssohn-Bartholdy) և Ֆրիդրիխ Թիմեի (Friedrich Thimme) Համադրոժակցությամբ Հրատարակեց “Die grosse Politik der Europäischen Kabinette 1871-1914. Sammlung der Diplomatischen Akten des Auswärtigen Amtes” Արտաքին գործոց նախարարության դիվանագիտական փաստաթղթերի սովոր-ժողովածուն:

216 www.armenocide.de (12.6.1915).

Է պատերազմն օգտագործել ներքին թշնամիներից՝ տեղացի քրիստոնյաներից, հիմնովին ազատվելու համար: Դա նաեւ բխում է Թուրքիայի դաշնակից գերմանացիների շահերից, քանի որ Թուրքիան այդ կերպ կհզորանար»²¹⁷:

1915 թ. հունիսի 22-ին Յոհաննես Լեփսիուսը գրում է արտաքին գործոց նախարարությանը. «Ըստ շրջանառվող լուրերի՝ մինչեւ օրս մոտ 200.000 հայեր պետք է որ ենթարկված լինեն աքսորի միջոցառումներին: Յատկապես հիշատակվում են Եփրատի վերին հոսանքի (Երզնկա, Կամախ, Բայբուրդ), Տավրոսի եւ Ամանոսի լեռների (Չեյթուն, Յաճըն, Այնթապ, Մարաշ) շրջանները եւ Կիլիկիան: Այլ շրջաններում, ինչպես Էրզրումն է, նախապատրաստվում են նման միջոցառումներ: Քանի որ Թրակիայում՝ Ադրիանուպոլիսի ու Մարմարա ծովի միջեւ գտնվող գյուղերի հույն բնակչությունը եւս արտաքսվել է, ակընհայտ է, որ սա՝ ռազմական իրավունքի քողի տակ եւ օգտագործելով մուսուլմանական վեհ զգացմունքներով տոգորված սրբազան պատերազմը, կայսրության քրիստոնյա բնակչությունը հնարավորին չափ նվազեցնելու եւ դեպի կլիմայական անբարենպաստ եւ անապահով սահմանային շրջանները քշելու միջոցով՝ նրանց բնաջնջման ենթարկելու մի փորձ է: Թե ինչպիսի միջոցներ էին նրանք կիրառում այդ նպատակին հասնելու համար, ահա մի օրինակ. Տավրոսի բարձրավանդակում գտնվող Չեյթուն բնակավայրի մոտ 27.000 բնակիչներից ընտրեցին տղամարդկանց եւ քշեցին Եփրատի ստորին հոսանքի շոգ շրջանները՝ Դեր Ես-Չոր, արաբական բեդվին ցեղախմբի գիրկը (500 կմ հարավարեւելք), իսկ կանանց, աղջիկներին ու երեխաներին տեղափոխեցին Անգորայի շրջան (500 կմ հյուսիսարեւելք), այսինքն տղամարդիկ իրենց ընտանիքներից հեռացվեցին 1000 կմ-ով: Երթի ընթացքում երիտասարդ աղջիկներին քաշեցին տարան թուրքական հարեմներ, իսկ կանայք մահմեդական գյուղերում ենթարկվեցին բռնությունների: Այն ժամանակ Չեյթունի դատարկված շրջաններում յուրաքանչյուր մահմեդական բռնիացու բնակեցման համար կառավարությունը տրամադրում էր 20.000 թուրքական ոսկի, հայերի ունեցվածքը թալանում էին եւ նրանց առանց միջոցների քշում օտարություն:

Այսպիսի միջոցառումներ, որոնք կարող են համեմատվել միայն ասորիների նախկին տեղահանումների հետ, չեն կարող արդարացվել ռազմական նկատառումներով: Դրանք ավելի շուտ քրիստոնյաների քողարկված կոտորածներ են: Տարածվածության առումով դրանք գերազանցում են Աբդուլ Յամիդի ժամանակների կոտորածներին: Պարտքս եմ համարում ուշադրություն հրավիրել թուրքական այդ միջոցառումների հետեւանքների վրա:

1. Յենց որ եղելությունները Եվրոպայում եւ Ամերիկայում հայտնի դառնան, դրանք, ինչպես դեսպանն է արդեն կանխատեսել հունիսի 4-ի իր դես-

217 Koutcharian (2004), 70.

պանագրի մեջ, «դեպի մեզ թշնամաբար տրամադրված ամբողջ աշխարհը կրկին մեծ աղմուկ կբարձրացնի եւ կօգտագործի մեր դեմ»: Դրանք նաեւ առաջ կբերեն Գերմանիայի ավետարանական եկեղեցու վրդովմունքը, որի դեմ ոչինչ չեն կարող անել թուրք ժողովուրդի նույնիսկ ամենաանկեղծ համակիրները:

2. Ներկայիս թուրք իշխանավորների որդեգրած բնաջնջման քաղաքականության հետեւանքով՝ Թուրքիայի դեմ ատելություն է սերմանվում ամբողջ հայ ժողովրդի մեջ (այսինքն՝ 2 միլիոն ռուսահայերի եւ 2 միլիոն թուրքահայերի շրջանում): Այդ ատելությունը միայն Անտանտի պետությունների օգտին է եւ մեծ չափով վնասելու է Գերմանիայի ազդեցությանը Թուրքիայի տնտեսական զարգացման վրա, որը մեծ մասամբ ընկած է հայերի ուսերին: Կիլիկիայից հայերի տարհանման պատճառով, օրինակ, տեղի գերմանական ձեռնարկությունները (բամբակագործական ընկերությունները եւ այլն) զրկվել են իրենց աշխատուժից:

3. Մի երկրում, որտեղ կառավարությունը ի սկզբանե գործել է ահաբեկչական միջոցներով, անխուսափելի էր, որ բնաջնջման քաղաքականությունը ահաբեկվածներին եւս չմղեր դեպի ահաբեկչություն: Չպետք է մոռանալ, որ ներկայիս կառավարությունը ունի ուժեղ եւ վտանգավոր ընդդիմադիր կուսակցություն նաեւ թուրք եւ արաբ հպատակների շրջանում, որը մինչ օրս օրինապահ թրքահայերին բանակ է գորակոչում: Քանի որ թուրքական ընդդիմությունը (ազատական միությունը) համերաշխ է Անտանտի հետ, մեր կարելու րագույն քաղաքական շահերը պահանջում են թուրքահայերին չմղել դեպի ահաբեկչական ընդդիմություն եւ նրանց հանել գերմանական ազդեցությունից: Դաշնակցության մոտ 120 ղեկավարներ, որոնք միանգամայն օրինապահ մարդիկ էին, ձերբակալվել են եւ կարող են խմբով մահապատժի ենթարկվել: Այդ ազնիվ մտավորականների վերացումից հետո, ռուսահայության ահաբեկչական տարրերը Թուրքիայում եւս գործելու ազատություն են ստանալու: Յայկական օրինապահ կոմիտեները համապատասխան դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով խնդրել են Ամերիկայի, Բուլղարիայի եւ Յունաստանի կառավարություններին՝ իրենց ազդեցությունը գործի դնել ի նպաստ հայերի: Վերջիններս միահամուռ կերպով պատասխանել են, որ միայն Գերմանիայի կառավարությունն է ի վիճակի չարիքի դեմն առնելու, քանի որ միայն նա ազդեցություն ունի թուրքական կառավարության վրա, որի հետեւանքով էլ արտասահմանում պատասխանատու է համարվում Թուրքիայի ներքին իրավիճակի համար»²¹⁸: Բեռլինում «Գերմանա-հայկական» ընկերությունը, որին անդամակցում էր նաեւ Լեփսիուսը, շարունակ կառավարությանը ներկայացնում էր հուշագրեր ու զեկույցներ՝ իրազեկելով Անատոլիայի

218 www.armenocide.de. (22.6.1915).

իրադարձությունների մասին:

Երբ Գերմանիայի դեսպան Վանգենհայմը 1915 թ. ձեռական բողոք հղեց ջարդերի դեմ, Ավստրիայի դեսպան Պալավիչինին հաղորդեց Վիննա. «Գերմանիայի դեսպանի երեկվա քայլը, անշուշտ, հնարավորություն է ընձեռում, եթե երբեւէ արծարծվի Յայկական հարցն ու Թուրքիայի զանցանքը, վկայակոչելու, որ թուրքական կառավարությունը զգուշացվել է հայերի դեմ վարած իր քաղաքականության հետեւանքների մասին»²¹⁹: Վանգենհայմին հաջորդող Յոհենլոհեն (Hohenlohe) 1915 թ. օգոստոսի 12-ին գրել է Բեռլին. «Բնակավայրերից տեղահանված հայ բնակչության կանոնավոր կոտորածները վերջին շաբաթներին այնպիսի ծավալ են ստացել, որ անհրաժեշտաբար կարիք է զգացվում մեր կողմից կրկին առարկություն ներկայացնել այդ վայրագությունների դեմ, որոնք կառավարությունը ոչ միայն հանդուրժել է, այլև ակնհայտորեն խրախուսել, մանավանդ, որ զանազան տեղերում չեն խնայել նաեւ այլ՝ տարբեր ցեղերի ու դավանանքների քրիստոնյաներին»²²⁰: Մյուս պետությունները նույնպես զբաղվում էին այդ խնդրով: 1915 թ. օգոստոսի 7-ին Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանատունը հաղորդեց Բեռլին, որ հայ հայտնի բարերար Պողոս Նուբար փաշան Եգիպտոսից ճանապարհվում է Փարիզ՝ Անտանտին հորդորելու, որ միջամտի²²¹: Թուրքիայում գերմանացիների ռազմական հզոր ներկայությունը կհեշտացնէր երիտթուրքերի ու բանակի վրա համատարած ճնշում գործադրելու փորձը: Սակայն այդ փորձը տեղի չունեցավ՝ դաշնակիցներին չբարկացնելու համար:

Անգլոսաքսոնական երկրներում հայերի դեմ բռնությունների քննարկումը հասարակայնության մեջ շատ ավելի լայնածավալ էր, քան Գերմանիայում, որտեղ տիրում էր մամուլի խիստ գրաքննություն: 1915 թ. հոկտեմբերի 6-ին Բրիտանիայի լորդերի պալատում քննարկվեցին Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները: Լորդ Կրոմերը (Cromer) ներկայացրեց մինչ այդ թվականը սպանված հայերի թիվը՝ որպես 800.000: Ռոյթեր լրատվական գործակալությունը համապատասխանաբար 1915 թ. հոկտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 9-ը Ստամբուլի դեսպանատուն հեռարձակեց հետեւյալը. «Այսօր Լորդերի պալատը քննարկեց հայերի սպանողը: Լորդ Կրոմերը հայտարարեց՝ ըստ լուրերի սպանվել է 800.000 հայ, եւ նա այդ թե՞՞՞՞ համարում է չափազանցված: Գերմանիան, որ ազդեցություն ունի Կոստանդնուպոլսի վրա, կրում է բարոյական պատասխանատվություն: Եթե Մեծ Բրիտանիան ուրիշ ոչինչ չի կարողանում անել, զոնե տեղեկացնում է եղելությունը: Լորդ Կրոն (Crewe) կառավարության անունից ցանկություն հայտնեց, որ ծանուցվեն պաշտոնապես հաստատված լուրերը: Բրիտանական հյուպատոսարանների հաղոր-

219 Ohandjanian (1989), 218.

220 Նույն տեղում.

221 www.armenocide.de. (7.8.1915).

դած լուրերը լույս էին սփռում իրերի ցավալի վիճակի վրա: Շրջաններից մեկում, բացառությամբ մի քանի փախստականի, բնակչությունը ամբողջությամբ կոտորվել է: Բազմաթիվ փախստականներ հանգրվանել են Կովկասի տարածաշրջաններում: Մի վայրով անցնում էր 160.000 հոգուց բաղկացած մի շարասյուն: Փախստականների վիճակը սոսկալի էր: Շատերը սովահար վիճակում էին: Ռուսները նրանց օգնում են, սակայն եթե օգնությունը դադարի, հավանաբար նրանց կեսը կմահանա: Կառավարությունը պաշտոնական հաղորդագրություն չունի գերմանացիների մեղսակցության վերաբերյալ: Ամերիկացի մի ականատես պատմում է, որ գերմանական հյուպատոսությունների ներկայացուցիչները, որպես դիտորդներ, խրախուսում էին Փոքր Ասիայում կատարվող գազանությունները: Անգլիան թուրքական կառավարությանը հայտնել է, որ ինքը նրան պատասխանատվության էր կանչելու ոճրագործությունների համար, սակայն դա անցել է ապարդյուն: Զետաքննության հանձնախմբի նախագահ Բրայսը (Bryce) ասում է, որ 800.000 թիվը չափազանցված է, գրեթե անբողջ ազգն է բնաջնջված: Մնացածներին փրկելու միակ հնարավորությունը ամբողջ աշխարհին դրա մասին հայտնելն է: Դա գուցե առիթ հանդիսանար, որ գերմանական կառավարությունը զսպեր Թուրքիային»²²²: Չեզոք Շվեյցարիայում նույնպես 1915 թ. հոկտեմբերին հրապարակվեց ի նպաստ հայերի օգնության կոչ, որտեղ ասվում է. «Չարյուր հազարավոր հայեր սպանվել են կամ հարկադրաբար քշվելով իրենց հայրենիքից, թշվառության մեջ մեռել Միջագետքի տափաստաններում կամ այլ վայրերում: Մեծ թվով, հատկապես կանայք ու երեխաներ, հարկադրաբար իսլամ են ընդունել»²²³:

1915 թ. հոկտեմբերի 21-ին Վատիկանի պրոստացի դեսպանը հաղորդեց, որ պապը եւս միջամտել է Ստամբուլում Նունտիուս Դոլչիի (Nuntius Dolci) միջոցով: Պապը նույնպես լավատեղյակ էր: Թուրքերին ուղղված գերմանացիների հաղորդագրություններում ասվում էր, որ պապին պետք է հաշվի առնել²²⁴: 1915 թ. հոկտեմբերի 23-ին պապի նվիրակ Սկապինելլին (Scapinelli) Վիեննայում՝ Բուրիանի (Bourian) հետ խոսակցության ընթացքում նշել է 500.000 որպես մինչ այդ սպանված հայերի թիվ: Զայր Ռոֆերի (Pater Hofer) մանրամասն շարադրված հուշագրում 1915 թ. հոկտեմբերի 26-ին գրված է. պետք է նշել, որ թուրքերն իրենք կոտորածից կամ զրկանքներից մահացած հայերի թիվը հաշվում են 500.000, արքունիքներին՝ 900.000²²⁵: «Նորդոդյե ցայթունգ» օրաթերթը հոկտեմբերի 29-ին գրում է, որ Անգլիայի Զամայնքների պալատում լորդ Բրայսը իր ճառում հայտարարել է. «Զայերի կոտորածը ոչ մի այն շատ ավելի վատ իրողություն է, քան այն ամենը, ինչ մինչ օրս տեղի է

222 www.armenocide.de. (9.1.1915).

223 www.armenocide.de (14.11.1915).

224 www.armenocide.de (21.10.1915).

225 Ohandjanian (1989), 109.

ունեցել Բելգիայում, այլ որեւէ կոտորած, որը պատմությանը հայտնի է Թամերլանի ժամանակներից»²²⁶: Առաջին աշխարհամարտի տարիներին եւս մամուլի ու դիվանագետների միջոցով հնչել են նման արտահայտություններ, որը հաստատում են իրադարձությունների մասին մեծ տերությունների բավականին մանրամասն իրազեկ լինելը: Ինչ վերաբերում է գերմանացի դիվանագետներին, ապա տպավորությունն այն է, որ ստորին մակարդակներում միանգամայն ճշգրիտ կերպով ամեն ինչի մասին հաղորդվել է: Սակայն սոսկ քաղաքական նկատառումներով ղեկավարվող դեսպան Վանգենհայմը հաճախ «զտված» լուրեր էր ուղարկել Բեռլին՝ նպաստելով պատերազմի քարոզչությանը:

Միջազգային համբավ ունեցող պատմաբաններն ու դիվանագետները նույնպես ծանուցում էին Թուրքիայում ընթացող դեպքերի մասին: Ամերիկյան մամուլի, Թեոդոր Ռուզվելտի (Theodore Roosevelt) եւ Առնոլդ Թոյնբիի (Arnold Toynbee) մասին արդեն խոսվել է: Այստեղ պետք է առաջին հերթին նշել Ամերիկայի դեսպան Յենրի Մորգենթաուին (Henry Morgenthau Sr.), որը ծնվել էր Գերմանիայում եւ 1913-ից մինչեւ 1916 թթ. Ամերիկայի դեսպանն էր Ստամբուլում: Նա իր «Ambassador Morgenthau's Story» (Դեսպան Մորգենթաուի պատմությունը, 1919) եւ «All my lifetime» (Իմ ամբողջ կյանքում, 1922) գրքերում շարադրում է Թալեաթի, Էնվերի ու Վանգենհայմի հետ ունեցած խոսակցությունները, ինչպես նաեւ թուրքերի՝ հույների ու հայերի դեմ գործադրած վայրագությունները: Թուրքիայում բազմաթիվ ամերիկացի միսիոներների առկայության ու ԱՄՆ-ի չեզոքության պայմաններում ակնհայտ է, որ ԱՄՆ-ը եւս լավատեղյակ էր բոլոր իրադարձություններին: Այդ մասին դեսպան Մորգենթաուն վկայում է իր հուշերում, որտեղ մանրամասն նկարագրում է նաեւ Փոքր Ասիայում հույների ոչնչացումը, որոնց թիվը հաշվում էր «200.000-ից մինչեւ մեկ միլիոն»²²⁷: 1915 թ. ապրիլին նա խոսում է դեսպան Վանգենհայմի հետ, եւ վերջինս նրան ասում է, որ հայերը դավաճան են. նա կօգներ սիոնիստներին, սակայն հայերի համար մատը մատին չէր խփի: Ավստրիայի դեսպան Պալավիչինի հետ եւս Մորգենթաուն ոչնչի չի հասնում²²⁸:

Բրիտանացի պատմաբան Ջեյմս Բրայսը (James Brice), որն արդեն 1878 թ. ճանապարհորդությունից հետո գրել էր «Անդրկովկասն ու Արարատը» գիրքը, «Կապույտ գրքում» հավաքելով ամերիկացի միսիոներների հաղորդումները եղեռնագործությունների մասին, 1916 թ. Նոյեմբերի 23-ին այն ներկայացրել է Համայնքների պալատ: Ջորջ Յորթոնը՝ Չմյուռնիայում Ամերիկայի հյուպատոսը, իր «The Blight of Asia» (Ասիայի ածխահարությունը, 1926) ինքնակենսագրականում վկայում է, որ թուրքերը հույներին 1914 թ. Յոնիայից

226 www.armenocide.de (29.10.1915).

227 Hofmann (2004), 18.

228 Ohandjanian (1989), 209.

արտաքստելուց հետո, կազմակերպված կերպով ավերեցին նրանց տները: Անգլիացիներից կարելի է հիշատակել Առնոլդ Թոյնբիին, որն աշխատում էր Անգլիայի գաղտնի ծառայությունում եւ 1915-ին արդեն հրատարակել էր «Armenian atrocities. The murder of a Nation» (Վայրագություններ հայերի հանդեպ. Մի ազգի կործանումը, Լոնդոն 1915) աշխատությունը: Վիսքաունթ Բրայսի (Viscount Bryce) հետ 1916 թ. լույս է ընծայել «The treatment of the Armenians in the Ottoman Empire» (Թե ինչպես վարվեցին հայերի հետ Օսմանյան կայսրությունում) գիրքը: Մերձարեւելյան փորձագետ Սարկ Սայքսը (Mark Sykes) Բրիտանիայի կառավարությանն է ներկայացրել Տրապիզոնում հայերի կոտորածների ականատեսների հաղորդումները²²⁹: Կարելոր վկաներից է Գրիգորիս Բալաքյանը, որն աշխատում էր Բաղդատի երկաթուղու շինարարությունում, եւ որին 1916 թ. հաջողվել էր փախչել Դեր Ես-Չորից: Նա 1921 թ. Բեռլինում որպես վկա հանդես եկավ Թալեաթի դատավարությունում, դարձավ եպիսկոպոս եւ արքայազն Գրեգորիանի քրեական գործը: «Չայկական Գողգոթան» գիրքը:

1916 թ. սկզբին «Թայմսում» տպագրվեցին մի քանի առաջնորդող հոդվածներ, որոնց մեջ նշվում էր Գերմանիայի կարելոր դերը՝ թուրք մարդասպանների գազագությունները կասեցվելու հարցում²³⁰: Նաեւ Բենեդիկտ Տասնհինգերորդ (Benedict XV.) պապի՝ 1915 թ. հուլիսին կոտորածները կասեցնելու ջանքերը արդյունք չտվեցին: Պապի նամակը սուլթանին մնաց անպատասխան²³¹: Եգիպտոսի հայերը դիմեցին Ջոն Մաքսվելին (John Maxwell)՝ Եգիպտոսում Անգլիայի գլխավոր հրամանատարին, առաջարկելով Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի եւ Ամերիկայի կամավորների հետ ափ դուրս գալ Կիլիկիա՝ օգնելու իրենց հավատակիցներին: Սակայն ագլիացիները մերժեցին կամավորների հետ համագործակցությունը: Նմանօրինակ իրողությունները վկայում են, որ հայերի կոտորածն ամենուրեք քննարկվում էր՝ զբաղեցնելով մտավորականներին ու հումանիստներին: Սակայն անգլիացիները չէին ցանկանում մուսուլմանական Եգիպտոսն օգտագործել որպես հենակետ Թուրքիայի դեմ: Դիվանագետների, ինչպես նաեւ լրագրողների, միսիոներների ու հումանիստների միջոցով, քրիստոնյաների կոտորածները հայտնի դարձան ողջ քաղաքական աշխարհին: Դա հասցրեց նրան, որ 1916 թ. դեկտեմբերի 18-ին դաշնակիցները Ամերիկայի նախագահ Վիլսոնին իրենց վճռականությունը հայտնեցին՝ ազատագրելու «Թուրքիայի արյունոտ բռնապետությանը ենթարկված» ժողովուրդներին: Ֆրանսիայի արտաքին գործոց նախախարը 1917 թ. հունվարի 10-ին հայտարարեց. «Պատերազմի վեհ նպատակները ներառում են նաեւ այն ժողովուրդների ազատագրումը, որոնք ներկայումս գտնվում են Թուրքիայի ոճրագործ բռնատիրության ներքո»²³²:

229 Nassibian, (1985), 83.

230 Նույն տեղում, 85f.

231 Նույն տեղում, 89.

232 Akcam (1996), 78.

Նման դիտողություններից հետո հարց է ծագում, թե դաշնակիցները ռազմական ինչպիսի նպատակներ էին հետապնդում Թուրքիայի քրիստոնյաների նկատմամբ: Անտանտը նախապես որոշակի տեսակետ չունեւր Զայաստանի վերաբերյալ: Պատերազմի սկզբում գոյություն է ունեցել «Յայկական լեգիոնը»: Եգիպտահայ Պողոս Նուբարը մեծ դեր էր խաղացել «Արեւելյան լեգեոնի» (Legion d'Orient) ստեղծման գործում: Որպես հայերին հովանավորող երկիր՝ առաջին խոսքը Ռուսաստանին էր: Սակայն արդեն 1915-ին Ռուսաստանի դեսպանը Անգլիայի արտաքին գործոց փոխնախարար Արթուր Նիքոլսոնին (Arthur Nicolson) պատմել էր, որ հայերը դեռ տեղյակ չեն, որ ցարը չի ուզում Նրանց հետ գործ ունենալ եւ չի պատրաստվում հաղթանակից հետո հայկական նահանգները իր երկրին միացնել: Նրանք նաեւ չգիտեին, որ Սայքս-Փիքոթի (Sykes-Picot) բանակցություններում Ռուսաստանը պնդել էր, որ Ֆրանսիային բաժին ընկնի Սվազն ու Կիլիկիան, քանի որ ցարը կամենում էր հնարավորին չափ քիչ հայեր ունենալ²³³: Անգլիացիները եւս, որոնց առաջին հերթին հետաքրքրում էին Իրաքի նավթային հողերը, սկզբում ամենեւին չհայտարարեցին, որ թուրքերի լծի տակ գտնվող ժողովուրդների ազատագրումը իրենց պատերազմական նպատակներում մաս էր կազմում: Թուրքերին ուզում էին պատժել սոսկ նրանց գործած ոճիրի համար: Լլոյդ Ջորջը շեշտեց, որ կգա օրը, երբ թուրքերը ստիպված կլինեն վճարել իրենց տմարդության գինը: Նման անորոշ խոստումները մոլորեցնում էին հայերին՝ ապագա պետության հույսեր ներշնչելով: Արշակ Զոպանյանը՝ Փարիզում հայկական կոմիտեի քարտուղարը, շնորհակալություն հայտնեց Լլոյդ Ջորջին՝ նրա խոսքերի, ինչպես նաեւ «արդարությունը ուժի մեջ դնելու» համար: Պողոս Նուբարը հույս հայտնեց, որ Անգլիան վերակազմելու է համայն հայության միասնությունը: Անգլիայի վարչապետ Զերբերթ Զ. Ասքվիթը (Herbert H. Asquith) 1916 թ. նոյեմբերին հայտարարեց, որ պատերազմից հետո հայերի համար սկիզբ է առնելու ազատության եւ փրկության դարաշրջանը²³⁴: Անտանտը 1916 թ. վերջին որոշեց «Արեւելյան լեգեոնի» օգնությամբ Կիլիկիա ափ դուրս գալ՝ խոստանալով ստեղծել ինքնավար Կիլիկիա՝ Ֆրանսիայի խնամատարության ներքո: Պողոս Նուբարը հրապարակեց Ջորջ Պիքոթի (Georges Picot) եւ Մարկ Սայքսի (Mark Sykes) հետ 1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում կնքած իր համաձայնագիրը, որը դաշնակիցների հաղթանակից հետո պիտի իրականացնէր «հայերի ազգային երազները»²³⁵: Պողոս Նուբարը գիտեր, որ ռուսները ուզում էին ետ ստանալ 1878 թ. գրաված եւ ապա կորցրած երեք

233 L. Bruce Fulton: France and the End of the Ottoman Empire, in: The Great Powers and the End of the Ottoman Empire, London-Boston-Sydney 1984, 141-171, hier 163f u. Nassibian (1985), 108.

234 Նուրն տեղում, 109f.

Նահանգները:

Մյուս նահանգները, սակայն, պետք է միացվեին Կիլիկիային, որպեսզի ելք ստանային դեպի Միջերկրական ծով եւ գոյատևեին Ֆրանսիայի հովա - նավորության ներքո: Պողոս Նուբարը 1917 թ. հոկտեմբերին Առնոլդ Թոյնբիի հետ խոսակցության ժամանակ ասաց՝ իր միակ վախն այն էր, որ եթե Ռուսաստանը հրաժարվեր նահանգները իրեն միացնելուց, թուրքերը կարող էին դրանք գրավել: Մի քանի օր անց տեղի ունեցավ Յոկոտեմբերյան հեղափոխու - թյունը, որի հետեւանքով Թուրքիայի հետ Ռուսաստանի ռազմաճակատի գիծը կազմալուծվեց: Եգիպտոսից, Եվրոպայից եւ Ամերիկայից եկած հայ կամա - վորները կռվելու էին հանուն ինքնավար ու ազատ Հայաստանի: Սակայն իրա - կանությունը այլ ընթացք ստացավ, մանավանդ այն բանից հետո, երբ ռուսա - կան հեղափոխությունը հիմնովին փոխեց Մերձավոր Արեւելքի իրադրու - թյունը: Պարզվեց, որ հայերի ազատագրումը ռուսական հեղափոխությունից հետո չափազանց դժվարին խնդիր է: Կովկասի ռազմական պաշտպա - նության հայկական կոմիտեն 1917 թ. դեկտեմբերին տեղեկացրեց Թիֆլիսում Բրիտանիայի հյուպատոսին, որ Հայաստանը թուրքական տիրապետության տակ ընկնելու վտանգի տակ էր: Կոմիտեն կոչ արեց Ռուսաստանին, Անգ - լիային, Ֆրանսիային եւ ԱՄՆ-ին, որպեսզի միացյալ ուժերով ապահովեն Հա - յաստանի ինքնավարությունը՝ արեւմտյան տերությունների հովանավորու - թյան ներքո²³⁶: Դաշնակիցները թեեւ մինչ այդ անդադար խոսում էին հայերի ինքնավարության մասին, պատերազմից հետո խուսափեցին այդ կարգա - վիճակին ճշգրիտ բնորոշում տալուց:

235 Նույն տեղում, 110.

11. Հույների տեղահանումները մինչև պատերազմի վերջը

Ամերիկացի դիվանագետ Յենրի Մորգենթաուն 1918 թ. իր հուշերում մանրամասնորեն նկարագրում է Թուրքիայում հույն փոքրամասնության տառապանքները. «Չայերը Թուրքիայում միակ նվաճման ենթարկված ժողովուրդը չեն, որը տուժել է Թուրքիան բացառապես թուրքերի երկիր դարձնելու քաղաքականությունից: Չայերի մասին իմ հաղորդած պատմությունը՝ մի քանի ձեռագիրներով կարելի է պատմել նաեւ հույների ու ասորիների մասին: Իրականության մեջ հույներն ազգայնացման այդ գաղափարի առաջին զոհերն են (...): Ըստ երեւոյթին, քանի որ քաղաքակիրթ աշխարհը նրանց տեղահանությունների դեմ աղմուկ չբարձրացրեց, թուրքերը որոշեցին նույն մեթոդները ավելի մեծ ծավալով կիրառել ոչ միայն հույների, այլ նաեւ հայերի, ասորիների, նեստորականների եւ թրքահպատակ մյուս ժողովուրդների նկատմամբ: (...)

Այսպիսով հույների մարտիրոսությունն ընդգրկում է երկու շրջան. մեկը՝ նախապատերազմյանը, իսկ մյուսը՝ 1915-ից հետո: Առաջինը նախ հարվածի տակ առավ Փոքր Ասիայի ծովափնյա հույներին: Երկրորդ հարվածը ուղղված էր նրանց, ովքեր ապրում էին Թրակիայի եւ Մարմարա ծովի, Դարդանելի, Բոսֆորի շրջաններում, ինչպես նաեւ Սեւ ծովի ափերին: Վերջիններին՝ հարյուր հազարներով ուղարկեցին Փոքր Ասիայի խորքերը: Թուրքերը գրեթե կետ առ կետ օգտագործեցին նույն մեթոդները, որոնք կիրառել էին հայերի նկատմամբ: Նրանք հույներին նախ ներգրավում էին օսմանյան բանակի մեջ, ապա տեղավորում հարկադիր աշխատանքային գումարտակներում, օգտագործում Կովկասում ճանապարհաշինարարության մեջ եւ պատերազմի այլ թատերաբեմերում: Ծիշտ այնպես, ինչպես հայերը, հույն զինվորները մահանում էին հազարներով, ցրտից, քաղցից եւ այլ զրկանքներից: Ասորիական գեներալու նույն տեսիլն խուզարկությունները կատարվում էին հունական, ինչպես հայկական գյուղերում, իսկ հույն տղամարդիկ ու կանայք ծեծի եւ խոշտանգումների էին ենթարկվում ճիշտ այնպես, ինչպես իրենց բախտակից հայ ընկերները: Ինչպես հայերը, հույները ենթարկվում էին նույն կամայական հարցաքննություններին, որոնք, ինչպես հայերի մոտ, նրանց մոտ եւս վեր էին ածվում հուժկու թալանի: Թուրքերը փորձում էին հույն հպատակներին բռնի կերպով մահմեդական դարձնել: Չույն աղջիկներին, հայ աղջիկների օրինակով, գողանում եւ թուրք հարեմներն էին տանում, իսկ հույն տղաներին առեւանգում ու տեղավորում էին մուսուլմանների տներում: (...) Ամենուրեք հույներին հավաքում էին եւ թուրք ոստիկանների ձեռական պաշտպանության ներքո, մեծ մասամբ ոտքով, քշում էին դեպի երկրի խորքերը: Թե քանիսն են

այսպես ցիրուցան եղել, վերջնականապես չի պարզվել, տվյալները տատանվում են 200.000-ից մինչև մեկ միլիոնը: Հույների քարավանները ենթարկվում էին մեծ զրկանքների, բայց ոչ ընդհանուր կոտորածների, ինչպես որ հայերը: (...) Թուրքերը հույներին ցուցաբերում էին այդ հատուկ վերաբերմունքն ամենեւին ոչ կարեկցանքից ելնելով: (...) Այդ ժամանակ թուրքերի տեստոն դաշնակիցները սպասում էին, որ Հունաստանը պատերազմին կմասնակցի՝ որպես Անտանտի դաշնակից, իսկ Փոքր Ասիայի հույների որեւէ կոտորած, անկասկած, Հունաստանում կստեղծի այնպիսի մի տրամադրություն, որ վերջինիս գերմանամետ թագավորն այլևս ի վիճակի չի լինի Հունաստանը պատերազմից ետ պահելու: Ուրեմն դա պարզապես պետական քաղաքականության հարց էր, որը Թուրքիայի հույն հպատակներին խնայեց այն բոլոր արհավիրքներից, որոնք պատուհասվել էին հայերին: Այնուամենայնիվ, սրանց կրած տառապանքները նույնքան ահավոր էին եւ մի առանձին գլուխ են կազմում տեւական ոճրագործությունների պատմության մեջ, որոնց համար մի օր քաղաքակրթությունը Թուրքիային պատասխանատվության է կանչելու»²³⁷: Հույն փախստականների թվին, որոնք փորձել էին խուսափել 1914 թ. թուրքերի կոտորածներից, պատկանում էր նաեւ 1900 թ. Չմյունխայում ծնված հույն Նորբեյան մրցանակակիր Գիորգիոս Սեֆերիսի ընտանիքը: Փախստականների այդ խմբից է նաեւ Էլիա Կազանը (Elia Kazan = Kasanioglu), որը 1909 թ. ծնվել էր Կոստանդնուպոլսում գորգավաճառի ընտանիքում եւ 1913 թ. ծնողների հետ գնացել էր Ամերիկա: Վերջինս 1963 թ. «Ամերիկա, Ամերիկա» կինոնկարում անմահացրել է Անատոլիայից իր հորեղբոր փախուստի պատմությունը:

Թուրքիայի հույներն, անշուշտ, քաղաքական առումով բոլորովին այլ վիճակում էին քան հայերը: Սրանց թիկունքում որպես «հայրենիք» Հունաստանի թագավորությունն էր, որը դիվանագիտական հարաբերությունների մեջ էր Թուրքիայի հետ եւ այնտեղ պահում էր ութ հյուպոսություն: Այստեղից կանոնավորապես Աթենք՝ արտաքին գործոց նախարարություն էին հասնում զեկույցներ, որոնք ամենայն հստակությամբ փաստագրում էին հայերի եւ հույների կոտորածները: Հունաց ուղղափառ եկեղեցին մի այլ կապող օղակ էր, թեւէ Հունաստանի մեծ մասը եկեղեցուց անկախ էր (autokephal) եւ գտնվում էր Աթենքի արքեպիսկոպոսի հովանու ներքո, որը չէր ենթարկվում պատրիարքին: Որպես Կրետե կղզու բնիկ, վարչապետ Էլեֆթերիոս Վենիզելոսը (Eleutherios Venizelos) 1905/08 թթ. կարողացավ Կրետեն միացնել Հունաստանին եւ առաջադրեց օտար տիրապետությունից բոլոր հույներին ազատագրելու վեհ գաղափարը՝ «Մեզալի իդեա»: Կոստանդնուպոլիսը վերագրավելու

²³⁶ Նույն տեղում, 112.

²³⁷ Henry Morgenthau: *Ambassador Morgenthau's Story*. (2003), 222f u. Hofmann: *Mit einer*

Նրա երազանքը խաչածեւում էր ռուսների՝ «Երկրորդ Զոմին» տիրանալու հավակնության հետ: Նույնիսկ թուրքերի դեմ հաջողություն ունենալու դեպքում, ռուսների հետ բախումն անխուսափելի էր²³⁸: Անգլիայի արտաքին գործոց նախարար Էդուարդ Գրեյը (Edward Grey)՝ որպէս պատերազմի մեջ մտնելու պարգէւ, հույներին առաջարկեց փոքրասիական Չմյուռնիան, որը վարչապետը սիրով ընդունեց՝ ի հեճուկս Կոստանդին Առաջին թագավորի: 1915 թ., երբ Անգլիան Վենիզելոսից պահանջեց միանալ Անտանտին՝ Փոքր Ասիայում փոխհատուցումներ ստանալու հեռանկարով, Կոստանդին Առաջինի հետ կապը խզվեց: Վենիզելոսը հարկադրված եղավ հրաժարական տալ, սակայն 1916 թ. ֆրանսիացիների գրաված Սալոնիկում խռովությունից հետո, ստեղծեց հակակառավարություն եւ անգլո-ֆրանսիական միջամտությամբ 1917 թ. հունիսին թագավորին ստիպեց հրաժարական տալ:

1913/14 թթ. հույների դեմ հետապնդումների առաջին ակիբը իրականում ոչ թուրք փոքրամասնությունների բնաջնջման երիտթուրքերի ծրագրի սկիզբն էր²³⁹: Նրանց նպատակն էր՝ սադրանքի միջոցով հույներին պատերազմի մեջ ներքաշել գերմանացիների դեմ: Դա երիտթուրքերի համար լավ առիթ պիտի լիներ, հույներին նույն եղանակով բնաջնջելու, ինչպէս հայերին²⁴⁰: Սակայն երիտթուրքերը պետք է աչքի առաջ ունենային Զոնաստանի հարձակումը իրենց վրա, եթէ իրենք հույներին կոտորեին, ինչպէս հայերին: Կանանց ու երեխաների տեղահանումը, տղամարդկանց տեղաբաշխումն աշխատանքային ջոկատներում ու դրանց հաջորդող սպանությունները, հույների դեպքում եւս, կատարվում էին հայերի օրինակով: 1915 թ. սկզբին ծովային հարցերով կցորդ գերմանացի Հանս Հումանը (Hans Humann) տեղեկացրեց գերմանացի գեներալ Էրիխ Ֆոն Ֆալքենհայնին (Erich von Falkenhayn), որ Էնվեր փաշան իրեն ասել է, որ երիտթուրքերի կոմիտեն (CUP) ծրագրել է «հայերի ցեղասպանությունը, դեռ պատերազմի ընթացքում, ավարտել հույն տարրերի բնաջնջմամբ»²⁴¹: Զոնաստանը սկզբից եւեթ բարեկամացել էր սերբերի հետ եւ հանձինս ռուսական ցարի, տեսնում էր ուղղափառության հովանավորին: 1916 թ. ապրիլի 18-ին ցարական բանակին հաջողվեց Ռուսահայաստանից հարձակվել ու գրավել Տրապիզոնը, եւ առաջանալ դեպի այսպէս կոչված «Պոնտոսի հույների» շրջանները: Դա պատճառ դարձավ, որ թուրքերն արագորեն ձեռնարկեին հույների արտաքսումն այդ շրջաններից:

Հույների ապստամբության սպառնալիքից դրդված, թուրքերը 1916 թ. ապրիլին սկսեցին նրանց տեղահանումը Պոնտոսից: Աթենք՝ արտաքին

— *Stimme* (2004), 17.

238 Michael W. Weithmann: *Griechenland. Vom Frühmittelalter bis zur Gegenwart*, Regensburg 1994, 215f.

239 Hassiotis (1992), 135f.

240 Նույն տեղում, 138.

գործոց նախարարությանը հղած Պետերբուրգի հույն դեսպանի զեկույցում ասվում է. «Տրապիզոնի գավառի Վասիլոնայի տարածաշրջանի 16 գյուղերի բնակիչները, բոլորը հույներ, թուրքական զինվորական իշխանության հրամանով ապրիլի 15-ին հարկադրված էին հեռանալ դեպի Ագիրուպոլիի (Agirupoli) խորքերը: Սակայն վախենալով, որ ճանապարհին ջարդերի կենթարկվեն, ինչպես դա տեղի ունեցավ հայերի հետ, նրանք թողեցին իրենց բնակավայրերն ու փախան անտառները, հույսով, որ ռուսական բանակի հնարավոր առաջխաղացման դեպքում՝ կփրկվեն: Այդ բնակիչներից, որոնց թիվը հասնում է 6.000-ի, 650-ը փորձեց ապաստան գտնել Վասիլոնայի վանքում, որտեղ արդեն հանգրվանել էին 1500 փախստականներ Տրապիզոնից: 1200 հոգի խցկվել էին Կունակա գյուղի մոտ գտնվող մի մեծ անձավ, իսկ մնացածը ապաստանել էին անտառների որջերում ու այլ թաքստոցներում»²⁴²: Թուրքական բանակը թալանի մատնեց հույների տները: Կունակայի քարանձավի փախստականները, չդիմանալով սովին, ստիպված եղան հանձնվել, իսկ Գեֆիրա (Gefira) գյուղի մոտ 26 երիտասարդ կին գետը նետվեց՝ խուսափելով բռնաբարումից: Գերմանացի փոխհյուպատոս Քուկհոֆը (Kuckhof) 1916 թ. հունիսի 15-ին Սամսունից հաղորդեց Բեռլին. «Չավաստի աղբյուրներից տեղեկանում ենք, որ Սինոպի եւ Կաստամունիի առափնյա շրջանների ողջ հույն բնակչությունն արտաքսվել է: Թուրքերենում՝ արտաքսում եւ բնաջնջում բառերը նույն նշանակությունն ունեն, քանի որ ով սպանված չէ, միեւնույնն է, մահանում է կամ հիվանդություններից, կամ քաղցից»²⁴³: Կերասունի առափնյա շրջաններն ավերվեցին. ամենաշատը վտանգված էին ափում գտնվող 100.000 հույները: Ռուսների կողմից Տրիպոլիի (Trebolu) գրավումը որպես պատրվակ օգտագործելով, թուրքերը տեղահանեցին Կերասունի եւ Տրիպոլիի հույներին: Աքսորի երթը դեպի Բիրկ (Birk) գյուղը, որտեղ մեկ տարի առաջ կոտորվել էր 500 հայ ընտանիք, տևեց 25 օր: 13.000 տեղահանվածներից Բիրկ հասավ ընդամենը 800 հոգի²⁴⁴:

Պոնտոսում թուրքերի գործողությունները նույնպես գաղտնի չմնացին արտասահմանյան պետություններից: Ամերիկայի դեսպան Յենրի Մորգենթաուն դատապարտեց թուրքերի տմարդի գործելակերպը: Նրա հաջորդը՝ Աբրահամ Էլկուսը (Abraham Elkus), որը 1916 թ. ստանձնել էր պաշտոնը, խոսեց իրադարձությունների մասին Ավստրիայի դեսպանորդ Քարլ Ֆոն Թրաութմանսդորֆ-Վայնսբերգի (Karl von Trauttmannsdorf-Weinsberg) հետ, որն արդարացրեց թուրքերի միջոցառումները: 1916 թ. վերջերին Ավստրիայի

241 Նույն տեղում, 139.

242 Kostantin Fotiadis: “Der Völkermord an den Griechen des Pontos”, in: Tessa Hofmann: *Verfolgung, Vertreibung ...* (2004), 185-219, hier 187.

243 Նույն տեղում, 186.

դեսպան Պալավիչինին հաղորդեց Սամսունի դեսպերի մասին. «11 դեկտեմբերի, 1916 թ., հինգ հունական գյուղ թալանի ենթարկվեց, այնուհետև այրվեց: Բնակիչներն արտաքսվեցին: 12 դեկտեմբերի, 1916 թ., այրվեցին քաղաքամերձ մի շարք գյուղեր: Ամբողջական գյուղեր՝ իրենց դպրոցներով ու եկեղեցիներով կրակի մատնվեցին: 17 դեկտեմբերի, 1916 թ., Սամսունի գավառում թուրքերն այրեցին 11 գյուղ: Թալանը շարունակվում է: Գյուղերի բնակչությունը ենթարկվում է բռնությունների: 31 դեկտեմբերի, 1916 թ., մոտ 18 գյուղ այրվեց ամբողջությամբ, 15-ը՝ մասամբ: 60 կին բռնաբարվեց: Կողոպտեցին նույնիսկ եկեղեցիները»²⁴⁵: Կատարվածի համար ավստրիացիները գերմանացիներին մեղսակից համարեցին: Յուլպատոս Ֆրիդրիխ Վիլհելմ ֆոն դեր Շուլենբուրգին (Wilhelm von der Schulenberg) ուղղված Գերմանիայի դեսպանատան մի հեռագրում ընդգծվում է, որ ըստ թուրք գավառապետերի հայտարարությունների, հիմա կրկնվում էր այն, ինչ եղել էր հայերի հետ: Այս բոլոր վայրագություններն արգելք չեղան Վիլհելմ Երկրորդ կայսրին, որը դեռևս 1916 թ. Էսվեր փաշային պարգևատրել էր Արժանյաց կարգի շքանշանով, 1917-ին երկրորդ այցով ժամանելու Թուրքիա: Բռնի իսլամացման հարցերով զբաղվող հունական գիտահետազոտական մի հանձնախումբ, որին մասնակցում էր դպրոցի տնօրեն Պ. Կինիգոպուլոսը (P. Kinigopoulos), հաղորդում է այն մասին, թե ինչպես հույն կանայք բռնի իսլամացվում եւ ապա թուրքական հարեմներում անհետանում էին: Սամսունի ավստրիացի հյուպատոս Էռնստ ֆոն Կվիատկովսկին (Ernst von Kwiatkowski) խնդրեց դեսպան Պալավիչինին վերջ տալ ծայրահեղ զգուշավորությանը, որից հետո դեսպանն իր մտահոգությունը հայտնեց արտաքին գործերի նախարար Յալիլ բեյին (Halil Bey). Վերջինս արդարացրեց թուրքերի գործողությունները՝ բացատրելով դրանք հույների՝ ռուսների հետ համագործակցությամբ: Կոլոնիա (Kolonía) տարածաշրջանի 51.660 հույն բնակչությունից կենդանի մնաց միայն մեկ երրորդը:

Նույնիսկ 1917 թ. պատերազմական տարում շարունակվեց հույների տեղահանումը, որի իրականացմանը մասնակցում էր գերմանացի գեներալ Լիման ֆոն Չանդերսը: Կոստանդնուպոլսում ավստրիացի դեսպանորդ, կոմս Թաուրթանսդորֆը 1917 թ. ապրիլի 3-ին հաղորդեց Վիեննա. «Մեծ վեզիրն ու արտաքին գործոց նախարարը ինձ եւ Գերմանիայի դեսպանին խնդրում են՝ մեր կառավարություններին տեղեկացնել, որ խիստ կենսական նշանակություն ունեցող ռազմական պատճառներով, օսմանյան կառավարությանը տարհանում է Այվալիի ու Նրա շրջակայքի բնակչությանը»: Լեզբոսի դիմաց գտնվող Այվալի քաղաքից արտաքսվեց 300.000 մարդ, իսկ Սամսունից՝ 60.000: Ֆրանսիայի գլխավոր շտաբի հետախուզական ծառայությունից հաղորդվեց, որ այստեղ ամենից առաջ աքսորվել են կանայք ու երեխաներ, որոնց մեծ մասը մահացել է բժավոր տիֆից: «Մեկ տարի եւս այս վարչա-

244 Նույն տեղում, 188f.h

կարգին, – ասվում է ֆրանսիացիների զեկույցում, – եւ Թուրքիան կվերածվի քրիստոնյա ողջ բնակչության գերեզմանատան»²⁴⁶: Հայերն ու հույները 1915 թ. Նոյեմբերից համախմբվեցին դիմադրության բռնիքներում, որոնց գործունեությունը հատկապես աշխուժացավ Կովկասում ռուսական ճակատի փլուզումից հետո:

Անգլիան Նույնպես տեղեկացավ արհավիրքների մասին: Բեռնում Բրիտանիայի դեսպանության մի հուշագրում, 1918 թ. Թուրքիայում հույների նկատմանը կիրառված դաժանությունների մասին ասվում է. «Ամեն օր Կոստանդնուպոլիսն ու Նրա շրջակայքը մաքրագրվում են հույներից, որոնց քշում են երկրի խորքերը: Նրանց սեփականությունը բռնագրավում են, իսկ ունեցվածքը աճուրդով վաճառում: Գերմանացի սպաներն ու երեւելի մուսուլմանները իրար մեջ են բաժանում հույն կանանց ու աղջիկներին: Ասիական Թուրքիայում վիճակը շատ ավելի հուսահատական է: Չմյուռնիայի, Կարասուսի եւ այլ շրջանների բոլոր գյուղերը թալանված ու ավերված են, ընդ որում գերմանացիների բաժինը այդ աղետում մեծ է: Հաշվարկված է, որ Կոստանդնուպոլիսում ավելի քան 3.000 հույն է ստրկացվել: Ասվում է, որ ասիական Թուրքիայում անցյալ տարվա օգոստոսից սպանվել կամ քաղցից մահացել է 100.000-ից ավելի մարդ»²⁴⁷: Էմանուել Էլիադեսը՝ հույն փախստականների բարձրաստիճան մի ներկայացուցիչ, 1918 թ. դեկտեմբերի 10-ին հեռագրեց Բրիտանիայի արտգործ նախարարություն. «Փոքր Ասիայի ափամերձ շրջաններից արտաքսված հույն բնակչության վերջին բեկորները՝ կազմված կանանցից, երեխաներից եւ ծերերից, գտնվում են ամենաանմխիթար վիճակում: Նրանք զրկված են սննդից, հագուստից ու օթեւանից, եւ ամեն ինչի կարոտ են: Նախկինում Եփեսոս քաղաքում բնակվող 8000 տղամարդկանցից վերադարձել է միայն 600, եւ դժվար թե կենդանի մնացածների թիվը անցնի 1000-ը: Մնացածները մարտիրոսաբար զոհվել են: Ակ-Բյուկ գյուղի բնակչությունը գրեթե ոչնչացվել է: Ամենուրեք ամայություն է տիրում: [Անտանտի] շրջափակման պատճառով մենք ի վիճակի չենք նրանց օգնության հասնելու»²⁴⁸: Այս բոլոր ոճրագործությունների համար չկա քավություն: Օսմա - Նյան կայսրության փլուզումից հետո, 1919 թ., ազատամտության կարճատեւ շրջանում տեղի ունեցավ պատերազմի մի շարք հանցագործների դատավարությունը: Պահպանվել է այսպես կոչված «Տրապիզոնի դատավարության» արձանագրությունը, սակայն այն վերաբերում է միայն հայերի նկատմամբ գործած ոճիրներին²⁴⁹:

Անտանտի զորքերի առաջխաղացումն իր ազդեցությունն ունեցավ նաեւ
245 Նույն տեղում, 187.

246 Tsirkindis, in: Hofmann: *Verfolgung, Vertreibung...* (2004), 142f.

247 Նույն տեղում, 144.

248 Նույն տեղում.

249 Taner Akcam: *Armenien und der Völkermord. Die Stambuler Prozesse und die türkische*

Օսմանյան կայսրությունում դեռևս մնացած քրիստոնյաների վիճակի վրա: Այդ զգացվեց «նեստորականների», Յակարիի (Hakkari) տարածաշրջանի եւ Վերին Միջագետքի արեւելյան ասորիների մոտ: 1917 թ. Նոյեմբերի 25-ին Շիմուն Տասնիններորդ (Shimun XIX.) կաթողիկոսը հրավիրեց ժողով արեւելյան ասորի ու հայ զորավարների մասնակցությամբ, որտեղ որոշում ընդունվեց՝ ստեղծել միասնական բանակ: Շիմուն Տասնիններորդ կաթողիկոսը կապեր հաստատեց անգլիացիների հետ, որոնք արդեն 1916 թ. Եգիպտոսից թուրքական սահմանով հասել էին Պաղեստին: 1917 թ. ընկան Երուսաղեմն ու Բաղդատը, 1918-ին՝ գրավվեց Մոսուլը: 1918-ի մարտի 3-ին քրդերի առաջնորդ Իսմայել աղա Սիմկոն (Ismael Agha Simko) սպանեց Շիմուն Տասնիններորդ կաթողիկոսին: Նրան հաջորդեց եղբորորդին՝ Մար Պուլոս Շիմուն Բասներորդը (Mar Poulos Shimun XX.): Աղա Պետրոսը՝ մինչեւ 1918 թ. հունիսը անգլիացիների օգնությամբ կարողացավ Ուրմիայում դիմադրել թուրքերի հարձակումներին: Երբ արեւելյան ասորիներին պարտադրեցին 500 կմ կտրելով վերադառնալ Ղամաղան, 70.000 փախստականների մեկ երրորդը կոտորվեց սովից, համաճարակներից եւ քրդերի հարձակումներից²⁵⁰: Պատերազմից հետո Թուրքիայում շատ քիչ «նեստորականներ» ու քաղղեացիներ մնացին:

1918 թ. հունվարի 18-ին Ամերիկայի Նախագահ Վուդրո Վիլսոնը (Woodrow Wilson) հրապարակեց իր Նշանավոր «14 կետերը», որտեղ Թուրքիայի մասին գրված է. «XII. Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական մասում պետք է ապահովվի ինքնավարությունը, սակայն մյուս ազգությունները եւս, որոնք թուրքական իշխանության ներքո չեն գտնվում, պետք է վայելեն կյանքի կատարյալ ապահովություն եւ ինքնավար զարգացման բացարձակապես անխաթար հնարավորություն»²⁵¹: Նույն հարցի մասին մեկնաբանություններից մեկում որոշակիորեն ասվում է, որ Հայաստանը պետք է Միջերկրական ծովում նավահանգիստ ստանա եւ դրվի մի մեծ տերության, ավելի շուտ Անգլիայի կամ Ֆրանսիայի, հովանավորության ներքո²⁵²: Վիլսոնը նաեւ հնարավոր էր համարում, որ Ամերիկյան ստանձնի Հայաստանի հովանավորությունը: Առաջին աշխարհամարտի վերջում չկար մեկ այլ քաղաքագետ, որ Ամերիկայի Նախագահ Վիլսոնի նման այդպիսի եռանդով արդար վերաբերմունք պահանջեր Թուրքիայում ապրող քրիստոնյաների նկատմամբ: Ի՛նչ ափսոս, որ նա չկարողացավ իրագործել զաղափարախոսի իր վեհ մտահղացումները:

Nationalbewegung, Hamburg 1996, 176-184.

250 Wilhelm Baum – Dietmar W. Winkler: Die apostolische Kirche des Ostens. Geschichte der sogenannten Nestorianer, Klagenfurt 2000, 121f.

251 Fotiadis, in: Hofmann: *Verfolgung, Vertreibung ...* (2004), 2154, Anm. 24.

252 Arthur Walworth: *Wilson and his Peacemakers. American Diplomacy and the Paris*

12. Զրիստոնյաների վիճակը Թուրքիայում Առաջին աշխարհամարտի ավարտին (1917-1918)

1916 եւ 1917 թթ. ընթացքում հայ տարագիրների մեծ մասը ոչնչացավ Իրաքի եւ Սիրիայի անապատներում: Գերմանիայի դեսպան կոմս Փաուլ Ֆոն Վոլֆ-Մեթերնիխը (Paul von Wolff-Metternich) 1916 թ. հունիսի 10-ին ռայխս-կանցլեր Բեթման Յոլվեգին (Bethmann-Hollweg) գրում է. «Յայերի հալածանքներն արեւելյան նահանգներում թեւակոխել են իրենց վերջին փուլը: Թուրքական կառավարությունը իր ծրագրի իրագործման հարցում չսխալվեց: Յայկական հարցը Թուրքիան լուծեց հայ ազգի բնաջնջման միջոցով, հաշվի չառնելով ո՞չ մեր պատկերացումները, ո՞չ Ամերիկայի դեսպանության եւ պապի պատվիրակության առաջարկները, ո՞չ էլ Անտանտի պետությունների սպառնալիքները, իսկ առավել եւս Արեւմուտքի երկրների հասարակական կարծիքը: Նա այժմ պատրաստ էր կազմալուծել ու ցրել հայերի վերջին խլյակները, որոնք հաղթահարել էին առաջին բռնագաղթը»²⁵³:

Տեղահանվածներին քշում էին դեպի Ռաս-ուլ-Այն (Ras-ul-Ajn) եւ Դեր Էս-Չոր (Der es-Zor)՝ Եփրատի ափ, այժմյան հյուսիսային Սիրիա: Մինչեւ 1915-ի հոկտեմբերը 300.000 հայեր, մեծ մասը կանայք եւ երեխաներ, Յալեպից քշվել էին մինչեւ հյուսիսային սիրիական անապատները: Վերապրողները մահանում էին համաճարակներից, քաղցից, ուժասպառությունից կամ սպանվում քրդերի ու թուրքերի ձեռքով: Նրանց տեղավորում էին կանոնավոր համակենտրոնացման ճամբարներում, որտեղ չկար բնակարան եւ սննդամթերք: Այստեղ նրանք մնում էին այնքան ժամանակ, քանի դեռ բան կար նրանցից պոկելու. այնուհետեւ նրանց քշում էին անապատ, Մոսուլի ուղղությամբ: 1916 թ. ապրիլին Դեր Էս-Չորի թուրքական գլխավոր հրամանատար Ալի Սուադը (Ali Suad) հրաման ստացավ 10 տոկոսով կրճատել տեղ հասած հայ բնակչության թիվը²⁵⁴: Ի վերջո Ալի Սուադը՝ որպէս «չափազանց մեղմ անձ», պաշտոնից հեռացվեց, եւ նրան փոխարինեց Սեկի բեյ (Sekki Bei) անունով չերքեզ մի հրամանատար, որը չերքեզական ավագակախմբերի միջոցով սիստեմատիկաբար կոտորում էր քրիստոնյաներին: Զրիստոնյաների այլ խմբեր քշվում էին դեպի Կոնիայի ճահճուտներին կից գտնվող համակենտրոնացման ճամբարները: Մինչեւ 1916 թ. ամռան վերջը «դատարկվեցին» Եփրատի ափամերձ համակենտրոնացման ճամբարները: Այժմ արդեն

Peace Conference, 1919, London 1986, 488.

253 www.armenocide.de (10.7.1916).

աշխատանքային գումարտակներից ողջ մնացածները ստիպված էին իսլամ ընդունել՝ իրենց կյանքը փրկելու համար: Ընդհանրապես, ըստ Լեփսիուսի, ինչպես նաեւ Յայոց պատրիարքարանի տվյալների, Օսմանյան կայսրությունում ապրող 1.845.450 հայերից (չհաշված «միաբաններին» ու բողոքականներին) մոտ 244.000 հոգի փախուստի դիմեց Կովկաս կամ Եգիպտոս: Տեղահանվեց մոտ 1.400.000 հայ, որից ավելի քան մեկ միլիոնը զոհվեց: Լեփսիուսը՝ իր գրքի երկրորդ հրատարակությունում 1915 թ. զոհերի թիվը հասցնում է 1,100.000-ի²⁵⁵: Սվեն Յեդինը (Sven Hedin), որը 1917-ին այցելել է Դեր Էս-Չոր, իր «Բաղդատ, Բաբելոն, Նինվե» (Լայպցիգ, 1918) գրքում սպանված հայերի համար տալիս է 500.000 թիվը, որը մինչեւ օրս էլ վկայակոչում է թուրքական քարոզչությունը²⁵⁶: Բրիտանական հանրագիտարանում եւս բերվում է այդ թիվը²⁵⁷:

Յայերից հետո հերթը եկավ հույներին: Վերը նշված ռուսների կողմից 1916 թ. ապրիլին Տրապիզոնի գրավումը առիթ հանդիսացավ սկսելու հույների արտաքսումը Պոնտոսից: 1916 թ. դեկտեմբերին Ավստրիայի դեսպան Պալավիչինին տեղեկացրեց Սամսունի հույների տեղահանման մասին: 1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում ստորագրվեց Սայքս-Փիքոթի (Sykes-Picot) համաձայնագիրը, որը նախատեսում էր սիրիական եւ արաբական տարածքների բաժանումը Անգլիայի ու Ֆրանսիայի միջեւ: Ընդ որում, նախատեսվեց նաեւ Ֆրանսիայի կողմից հայ կամավորների զորակոչը: Դրանով իսկ Ֆրանսիան որոշակիորեն ստանում էր իրեն խոստացված Ադանայի նահանգը²⁵⁸: Մինչեւ 1916 թ. նոյեմբեր ամիսը Եգիպտոսում եւ ԱՄՆ-ում հավաքագրվեց 5000 հայ «Յայկական լեգիոնում», որը պաշտոնապես պիտի ենթարկվեր ֆրանսիական արեւելյան լեգիոնին: Երբ 1920 թ. Ֆրանսիան համաձայնության եկավ քեմալականների հետ, կորցրեց հետաքրքրությունը լեգիոնի նկատմամբ: Առնոլդ Թոյնբիի «Կապույտ գրքի» եւ Յոհաննես Լեփսիուսի հրապարակումների շնորհիվ հայկական կոտորածների թեման շարունակում էր մնալ քննարկումների առարկա:

Յայերին Միջագետք քարտեզից հետո թուրքերը փորձեցին վերացնել Կոստանդնուպոլսի եւ Սիսի պատրիարքարանները եւ խզել նրանց կապը Էջմիածնի կաթողիկոսի հետ: Կոստանդնուպոլի պատրիարքին տեղափոխեցին Երուսաղեմ: Տեղի գերմանացի հյուպատոս Բրոդե (Brode) 1916 թ.

²⁵⁴ Hofmann: Deutsche Quellen (1984), 110.

²⁵⁵ Նույն տեղում, 114.

²⁵⁶ Ըստ Թուրքիայի մշակույթի նախարարությունի կայքէջի (www.kulturtrizm.gov.tr/).

²⁵⁷ The New Encyclopaedia Britannica, Bd. 1, Chicago, 15. Aufl., 1993, 668: “About 600.000 Armenians died of starvation or were killed by Turkish soldiers and police”. (Նոր Բրիտանական Հանրագիտարանում, Հատոր 1, կարգում ենք. «Մոտ 600 հազար հայեր սովամահ են եղել կամ սպանվել թուրք զինվորների կամ ոստիկանների կողմից»:

²⁵⁸ Ternon (1981), 227f.

Նոյեմբերին այդ մասին հաղորդեց ռայխսկանցլեր Բեթման Յոլվեգին (Bethmann-Hollweg) իր մանրամասն զեկույցով, որի մեջ տալիս է ամբողջ նախապատմությունը. «Չայոց պատրիարքարանի մասին Նոր կարգադրությունը, որ արվել է այս տարվա օգոստոսի 29-ին, տեղի հայկական շրջանակների համար լրիվ անակնկալ էր եւ այդ իսկ պատճառով մտահոգիչ է, քանի որ թուրքական կառավարությունը կամայականորեն շրջանցում է 1860 թ. մայիսի 24-ի կանոնադրությամբ հայ եկեղեցուն տրված երաշխիքները: Վերջինիս 99-րդ հոդվածում որոշակիորեն նախատեսված է, որ Նույնիսկ ժամանակի ընթացքում եւ կյանքի փորձով անհրաժեշտ համարվող հիմնական կանոնները չեն կարող վերանայվել առանց հոգեւորականների եւ ժողովրդի ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի ներգրավման: Նոր կարգի երկու հիմնական կետերը՝ օսմանյան հայերի տարանջատումն է ռուսական պարագլխից եւ եկեղեցական կենտրոնավայրի տեղափոխումը Երուսաղեմ: Առաջին միջոցառումը՝ գոնե թուրքերի տեսանկյունից հասկանալի է, եթե նկատի առնենք այն դերը, որ խաղացին հայերը Կովկասում՝ ռուսների առաջխաղացման ժամանակ: Սակայն երկրորդը ներքուստ չի ընդունվում «Չայ առաքելական եկեղեցու» բոլոր համախոհների կողմից՝ որպես իրենց եկեղեցու միասնության դիտավորյալ պառակտում:

Էջմիածնի վանքը նստավայր է ընտրվել է ազգային եկեղեցու հիմնադիր եւ հայոց եկեղեցու առաջին կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից դեռեւս 3-րդ դարում: Այդ ժամանակվանից, չհաշված քաղաքական իրավիճակով պայմանավորված որոշ ընդմիջումը, վանքը մնացել է հայոց եկեղեցու առաջնորդի մշտական նստավայրը: Էջմիածնում նստող Ամենայն Չայոց կաթողիկոսին ենթակա էին չորս այլ եկեղեցական բարձրաստիճան այրեր՝ Աղթամարի ու Սիսի կաթողիկոսները եւ Կոստանդնուպոլիսի ու Երուսաղեմի պատրիարքները: Մինչդեռ Աղթամարը երբեք առանձնահատուկ նշանակություն չի ունեցել, Սիսի դերը մեծ է եղել: Երբ սելջուկների կողմից հին Չայաստանը նվաճվեց եւ Կիլիկիան՝ գաղթած հայերի շնորհիվ վերափոխվեց պետական ու եկեղեցական Նոր կառույցի, Սիսը՝ Կիլիկիայի մայրաքաղաքը, մեկուկես դար մնաց կաթողիկոսի նստավայր, մինչեւ որ 1441 թ. Էջմիածնում հրավիրված ազգային եկեղեցական ժողովը որոշեց վերականգնել տեղի կաթողիկոսությունը: Քանի որ Սիսի այդ ժամանակվա կաթողիկոսը հրաժարվեց իր նստավայրը Էջմիածին փոխադրել, տեղում Նոր կաթողիկոս ընտրվեց, իսկ Սիսի կաթողիկոսությունը մնաց որպես Կիլիկիայի մասնակի կաթողիկոսություն՝ ունենալով միայն այդ նահանգի գավառների վրա պաշտոնական իշխանություն եւ սահմանափակ արտոնություններ՝ Էջմիածնի կաթողիկոսի կողմից մերթ ճանաչվելով, մերթ մերժվելով:

Թվում է, որ Երուսաղեմի պատրիարքությունը իր առանձնահատուկ դիրքի համար պարտական է խաչակիրների արշավանքներից հետո Եգիպտոսի նվաճմանը եւ որպես Առաջնորդարան միշտ ունեցել է տեղական, միայն Պա-

ղեստինի տարածքի վրա սահմանափակվող նշանակություն: Եկեղեցական առումով այն միշտ ճանաչել է Էջմիածնի գերակայությունը: Կոստանդնուպոլսի պատրիարքությունը հիմնվել է Մեհմեդ Երկրորդ Ֆատիհի (Muhammed II Fatih) կողմից, որը (...) հայ պատրիարքին տվեց նույն իրավունքները, ինչ որ հույն պատրիարքներին: Անցյալ դարաշրջանից Կոստանդնուպոլսի պատրիարքը ճանաչվում էր նաեւ որպես Էջմիածնի կաթողիկոսի աթոռակալ՝ աջակցելով (...) եկեղեցական առնչությանը Էջմիածնի հայոց եկեղեցու առաջնորդի հետ, որն օժված է առաքելական ավանդույթներով: Նոր կանոնադրության առաջին հոդվածով Սիսի կաթողիկոսությունն ու (...) Կոստանդնուպոլսի պատրիարքությունը փաստորեն վերացվում էին, եւ որպես միակ եկեղեցական ներկայացուցիչ մնում էր (...) Երուսաղեմի պատրիարքը, որը միաժամանակ ստանալով կաթողիկոսի տիտղոս, աթոռակալելու էր Երուսաղեմում: Եկեղեցու ծանրության կենտրոնի տեղափոխումը Երուսաղեմ, որտեղ գտնվում էր աստիճանաբար նվազող, փոքրաքանակ հայկական գաղութ, հստակ բնորոշում է թուրքական կառավարության դիտավորությունը՝ ամբողջովին զրկել նրանց կրոնական կյանքը ազգային նկարագրից: Նոր առաջնորդին հատկացվում էր մի վայր, որտեղ նա կարող էր զբաղվել կրոնական ամեն ինչով, բայց ոչ երբեք ընկնել գայթակղության մեջ՝ կրոնական իր ազդեցությունը չարաշահելով, հետապնդել քաղաքական նպատակներ: Ամբողջ միջոցառումը կարելի էր փոքր-ինչ կոպիտ համեմատությամբ նմանեցնել այն իրավիճակին, երբ գերմանական կառավարությունը, օգտվելով կայսրության՝ Իտալիայի հետ պատերազմական վիճակում լինելու հանգամանքից, պապին պաշտոնանկ է անում եւ տեղը, որպես հակաթոռ, նշանակում գերմանացի եպիսկոպոսի, որպես նստավայր հատկացնելով մի ինչ-որ բողոքական քաղաք: Անշուշտ նոր կաթողիկոս-պատրիարքի գուտ եկեղեցական եւ վարչա-րարական աշխատանքը դժվարանում է, քանի որ Երուսաղեմը հեռու է իր թեմից եւ պետական վերին իշխանությունից: Նոր կանոնադրության մյուս կետերը, որոնք հայերի շրջանում դժգոհություն պետք է առաջացնեն, այն սահմանումներն են, որոնք վերաբերում են մինչ օրս գործող՝ աշխարհականների մասնակցությանը կաթողիկոս-պատրիարքների ընտրություններին եւ նրանց պաշտոնանկման վերաբերյալ որոշումներին: (...) Ներկա պայմաններում, անշուշտ, բացառվում է, որ հայերը կարողանային արտահայտել իրենց դժգոհությունը: Նրանք բիրտ հալածանքներից այնպես են ահաբեկված, որ յուրաքանչյուր անհատ զգուշանում է իր հայությունը, լինի դա եկեղեցական, թե ազգային առումով, որեւէ կերպ չշեշտել: Ես նույնիսկ դիտարկել եմ, որ այստեղի հայերը հնարավորին չափ խուսափում են հոգեւորականների հետ շփվելուց: (...) Ինչ վերաբերում է Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք Օրմանյանի դերին, որի մասին Ձերդ Բարեձնությունը ժամանակին հարցրել է, ապա վերջինիս (...) Հայոց ազգային ժողովը ուղարկել էր Երուսաղեմ՝ ղեկավարելու նոր ընտրությունը: (...) Սահակ պատրիարքի

Որպես Սիսի կաթողիկոսի նշանակումը ամեն դեպքում չէր մտնում նրա հետաքրքրությունների մեջ, քանի որ այն վերջ էր դնում նրա՝ մինչ այժմ ունեցած իշխանությանը: Այնուհանդերձ նա կարողացել է նոր տիրոջ հետ բարեկամական հարաբերություններ ստեղծել: (...) Կաթողիկոս Սահակը, ընհակառակը, տխուր բնավորության տեր է երեւում, եւ իր ցեղակիցների ու հավատակիցների կրած տառապանքների բերումով, հավանաբար նաեւ դժվարությամբ ենթարկվող անձնավորություն: Անշուշտ նրան ցավ էին պատճառում հատկապես արեւելյան Զորդանանից շարունակ եկող լուրերը՝ այնտեղ արտաքսված հայերի բռնի իսլամացման մասին: (...) Այդ հավատափոխությունները՝ հավաստի աղբյուրների համաձայն, այսօր էլ շարունակվում են՝ հակառակ թուրքերի ժխտման բոլոր փորձերի: Ըստ երեւույթին Զայկական հարցը եւս դառնալու է հաշտության բանակցությունների թեման: Շատ ցավալի պիտի համարեի, եթե մենք մեր բարեկամությունը թուրքերի հետ այնքան հեռու տանեինք, որ ի վերջո ներեինք հայերի դեմ գործած նրանց ոճրագործությունները: Թե ինչ կարող ենք անել այդ բոլոր հարցերը լուծելու համար, վեր է իմ դատողությունից, սակայն իմ համեստ կարծիքով, Գերմանական կայսրությունը՝ որպէս Թուրքիայի քրիստոնյա դաշնակից, առաջին պետությունը կարող է լինել, որը, հենց որ հանգամանքները թույլ տան, հանդես գա Թուրքիայի հակաքրիստոնյա միտումների դեմ: Սրբազան պատերազմի հռչակումը մեզ համար դարձավ երկսայրի մի գէնք»²⁵⁹:

Սիսի կաթողիկոսի նստավայրը սկզբում Զալեպում էր, իսկ ավելի ուշ Անթիլիասում՝ Բեյրութի մոտ: Լիբանանում եւ Սիրիայում բազմաթիվ հայեր վերապրեցին եղեռնը: Իհարկե թուրքերին չհաջողվեց հուժկու հարված հասցնել հայոց եկեղեցու հին կառուցվածքին, որը մինչ օրս կարողացավ հաստատուն մնալ Լիբանանում, Սիրիայում եւ Ռուսահայաստանում ու Ատրպատականում:

1917 թ. փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, որի հետեւանքով ռուսների ճնշումը արեւելյան Թուրքիայի վրա դադարեց: Միաժամանակ, սակայն, անգլիացիները Պարսից ծոցից հարձակվեցին Թուրքիայի վրա: 1917 թ. մարտի 1-ին Բաղդատը գրավվեց: 1917 թ. հոկտեմբերին ռուսական բանակի հայկական վեց գումարտակ հրաժարվեց գրոհել Պարսկաստանի վրա: Պետրբուրգում Զայկական կոմիտեն որոշեց՝ նախ սպասել, թե ինչ լուծում կստանա հայկական հողերի հարցը: Ցարական բանակում կռվել էին 150.000 հայեր, սակայն նրանք հիասթափվել էին Ռուսաստանից²⁶⁰: Զոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 1917 թ. նոյեմբերի 24-ին կազմակերպվեց մի նոր կովկասյան կառավարություն՝ ընկերավարների գլխավոր

259 www.armenocide.de (14.11.1916).

260 Nassibian (1985), 96f.

րությանը: Բրեստ-Լիտովսկում սկսվեցին հաշտության բանակցությունները
նոր բոլշևիկյան Ռուսաստանի եւ Կենտրոնական պետությունների միջեւ:
1917թ. ապրիլի 20-ին ԱՄՆ-ը Անտանտի կողմից պատերազմի մեջ մտավ, որի
շնորհիվ աստիճանաբար ուժեղացավ «Անտանտ կորդիալ»-ի [համաձայնա -
գրերի շարք ստորագրված Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ] գերակշռությունը
«Կենտրոնական պետությունների» նկատմամբ: Դեռեւս 1917/18 թթ. ձմռանը
Անգլիան լրջորեն մտածում էր Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր
կնքելու մասին: Կենտրոնական պետությունները, սակայն, նախապես դեռեւս
օգտվում էին ռուսական պետության քայքայումից:

Գերմանիան 1918 թ. մարտի 18-ին ստիպեց բոլշևիկյան Ռուսաստանին
ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որը թուրքերի հա-
մար ստեղծեց բոլորովին նոր իրավիճակ: Արեւելյան երեք մարզերը՝ Կարսը,
Արդահանը եւ Բաթումը, հանրաքվեով պետք է որոշեին իրենց ապագան, սա-
կայն շատ չանցած թուրքերը գրավեցին այդ մարզերը: Երբ ռուսական զոր-
քերը կազմալուծվեցին թուրքական ռազմաճակատում, գեներալ Անդրանիկի
գլխավորությամբ կազմակերպվեցին հայկական զևոյներ, որոնք 20.000 մարդով
պաշտպանում էին 375 կմ ձգվող ռազմաճակատը: Ռուսաստանի ու Թուրքիա-
յի միջեւ կնքված 1917 թ. նոյեմբերի 30-ի զինադադարից հետո, Թուրքիայի
հյուսիսարեւելյան մասը, Տրապիզոնից մինչեւ Վանա լիճ, պաշտոնապես դեռ -
եւս ռուսական գրավյալ տարածք էր, սակայն առանց ռազմական պաշտպա-
նության: Մինչեւ 1917 թ. տարեվերջը անգլիացիները գրավել էին Օսմանյան
կայսրության այն մարզերը, որոնք նրանք ծրագրում էին պահել նաեւ պատե -
րազմից հետո: 1918 թ. փետրվարի 9-ին ավստրիացի հյուպատոսը զեկուցեց
Վիեննա, որ Էնվեր փաշան կարգադրել է թուրքերի մուտքը արեւելյան մարզե-
րը²⁶¹: 1918 թ. փետրվարի 14-ին սկսվեց թուրքերի առաջխաղացումը ռուսա-
կան ապառազմականացված Կարսի, Արդահանի եւ Բաթումի մարզերը: Տրա-
պիզոնը գրավվեց հունաց մետրոպոլիտի օգնությամբ. այդ պատճառով այս -
տեղ պակասեցին քրիստոնյաների հալածանքները: Երկու ամսվա ընթացքում
թուրքերը հասան 1877 թ. հին սահմանին եւ ավելի առաջ անցան: Անդրկով -
կասցիները (վրացիներ, հայեր եւ ադրբեջանցիներ) Թուրքիայի հետ խաղա-
ղություն էին ուզում կնքել միայն այն պայմանով, որ այդ գործընթացում
Գերմանիան եւս ներգրավվեր: 1918 թ. մարտի 13-ին թուրքերը գրավեցին
Արդահանը, որտեղ նրանք կոտորեցին 7000 հայ խաղաղ բնակիչներ. ապրիլի
14-ին թուրքերը գրավեցին Բաթումը: 1918 թ. մայիսի 15-ին ընկավ նաեւ Ալեք -
սանդրապոլը: Թուրքական ներխուժման ընթացքում կոտորվեց ընդհանուր
առմամբ 8.500 հայ: 1918 թ. ապրիլի 22-ին հայկական մի պատվիրակություն
ներկայացավ Բեռլին՝ գերմանացիների միջամտությունը հայցելու նպա-
տակով. բայց նրանց ստացածը միայն օգնության անորոշ խոստումներ էին:

261 Ohandjanian (1989), 131.

Գերմանիան ձգտում էր Անդրկովկասում ստեղծել մի անկախ պետություն: 1918 թ. հունվարին տեղի ունեցան անդրկովկասյան պառլամենտի ընտրու - թյունները: Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը միասնաբար հայտարարեցին Ռուսաստանի կազմից իրենց դուրս գալու որոշման մասին: Երբ թուրքերը վերսկսեցին իրենց առաջխաղացումը, այդ համադաշնությունը լուծարվեց: Հայերն առանձնապես շահագրգռված չէին անջատվել Ռուսաստանից: 1918 թ. ապրիլի 22-ին Թիֆլիսում հռչակվեց «Անդրկովկասյան Հանրապետությունը», որի մեջ մտնում էին Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը, եւ նույն օրը թուրքերի հետ զինադադար կնքվեց: Գերմանիան ամենից առաջ հովանավորում էր Վրաստանին, որը շուտով անկախացավ: Այսպիսով, 1918 թ. մայիսի 24-ին Սարդարապատի մոտ թուրքերի դեմ տարած հաղթանակից հետո, մայիսի 28-ին հռչակվեց «Հայաստանի Հանրապետությունը» եւ «Վրաստանի Հանրապետությունը»: Սակայն միայն Վրաստանը ճանաչվեց Գերմանիայի կողմից, որը Վրաստանում զինվորական առաքելություն էր հիմնել: Գերմանիայի նպատակն էր Վրաստանը պատվար դարձնել Ռուսաստանի ու Թուրքիայի միջև: 1918 թ. մայիսի 5-ին Բաթումում սկսվեցին Հայաստանի հաշտության բանակցությունները թուրքերի հետ: Ավելի ուշ, Հայաստանը ստիպված եղավ մենակ, թույլ ուժերով ետ մղել թուրքերի հարձակումը 400 կմ ձգվող ռազմաճակատի ամբողջ գծով:

Երբ Հայաստանի ֆինանսների նախարար Ալեքսանդր Խատիսյանը Կոստանդնուպոլիսում բանակցություններ էր վարում, նախարար Թալեաթը նրան հաղորդեց Էնվեր փաշայի՝ ազգային խորհրդում արտահայտած այն տեսակետը, որ «հայերը միշտ էլ եղել են եւ մնալու են թուրքերի թշնամիները: Որ նրանք Անատոլիայի սահմանները եւս երբեք հանգիստ չեն թողնելու: Այդ իսկ պատճառով ավելի լավ կլիներ, որ նրանք Կովկասում եւս նույնքան հիմնովին բնաջնջվեին, ինչպես Թուրքիայում: Բացի դրանից, մի փոքրիկ Հայաստան Կովկասում միշտ ձգտելու էր ընդարձակել իր սահմանները: Այդ պատճառով էլ Հայաստանը Թուրքիայի համար մշտապես վտանգ էր նշանակելու: Թալեաթը նրան պատասխանել է, որ այդ առաջարկն անիրագործելի է, քանի որ, ինչ էլ որ լինի, Կովկասում ապրում էր շուրջ երկու միլիոն հայ եւ նրանց բոլորին անհնարին պիտի լիներ ոչնչացնել: Ավելի նպապակահար էր՝ գոհացնել նրանց, քանի որ եթե անգամ կոտորածից հետո 100.000 հայ կենդանի մնար, նրանք Թուրքիային երբեք հանգիստ պիտի չտային: Բացի դրանից, եթե մենք ստեղծեինք մի փոքրիկ Հայաստան, լուծած կլինեինք Հայկական հարցը: Եվ դա մեզ կօգներ դաշնակիցների հետ հաշտության բանակցություններում»²⁶²: Հայերն ի վերջո ստիպված եղան գերմանացիների խորհրդով՝ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Թուրքիայի հետ զինադադարի ծանր պայմանագիր կնքել:

262 Նույն տեղում, 140-150.

Թուրքերի գրավյալ տարածքներից հազարավոր մարդիկ փախչում էին Կովկաս: Նախկին Ռուսահայաստանի արեւմտյան տարածքների զգալի մի մաս անցավ Թուրքիային, որը հնարավորություն ստացավ շարժվել դեպի Ադրբեջան: Սակայն գերմանական կառավարությունը շուտով տեղեկացավ թուրքերի նոր ոճրագործությունների մասին: Մայիսի 28-ին Գերմանիան Ավստրիայի արտգործ նախարարությունից պահանջեց, որ թուրքական կառավարությանը բողոք ներկայացնի, քանի որ Նորանոր հայ տղամարդիկ էին սպանվում, եւ Կովկասի քրիստոնյաները ենթարկվում էին թուրքերի ու թաթարների գազանություններին: Աններելի էր Բրեստի պայմանագիրը շահագործել որպէս «քրիստոնյաներին հետապնդելու արտոնագիր»: Գերմանիան ճանաչում էր Վրաստանի կառավարությունը եւ թուրքերից պահանջում՝ «հայերի նկատմամբ պատշաճ վերաբերմունք ապահովել Թուրքիայի կողմից գրավված մարզերում»²⁶³: Երբ Ավստրիայի դեսպանը տվյալ բողոքը նույնու - թյամբ ներկայացրեց Թալէաթին, պարզվեց, որ գերմանական բանակի բարձրագույն հրամանատարությունը որոշ չափով վարում էր իր սեփական քաղաքականությունը՝ ամրապնդելով թուրքերի թիկունքը: Յունիսի 1-ին Ավստրիայի դեսպանը հաղորդեց՝ մեծ սխալ էր, որ 1877-ից Ռուսաստանի ենթակայության տակ գտնվող արեւելյան մարզերը հանձնվել են «առավել ցածր մի մշակույթի»: Գերմանացի գնդապետ Զրես ֆոն Զրեսենշտայնը (Kress von Kressenstein) 1918 թ. հուլիսին առաջարկեց ռայխսկանցլեր Յերթլինգին՝ «տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով եւ հնարավորին չափ արագ՝ գործուն ճնշում կիրառել թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս անմիջապէս զորքը դուրս բերի Յայաստանից»²⁶⁴: Զրեսենշտայնը՝ իր «Թուրքերի հետ դեպի Սուեզի ջրանցք» (Բեռլին 1938) գրքում հաղորդում է Նաեւ Երեւանում կաթողիկոսի հետ մի խոսակցության մասին, որտեղ ծանր մեղադրանքներ են ներկայացվում գերմանացիների դեմ՝ կոտորածներին ունեցած մեղսակցության համար: Ավստրիայի պահվածքը ավելի շուտ վերապահ է եղել, եւ նույնիսկ չի փորձել գերմանացիների մոտ միջամտել հայերի ու հույների օգտին:

Իսկ բրիտանացիներն իսկապէ՞ս ցանկանում էին օգնել հայերին, թե՞ ողջունում էին կոտորածները որպէս քարոզչության միջոց Թուրքիայի ու Գերմանիայի դեմ, եւ որպեսզի այդ եղանակով ԱՄՆ-ին եւ մյուս չեզոք պետություններին եւս ներքաշեն պատերազմի մեջ: Անգլիան 19-րդ դարում երբեք անմիջական հետաքրքրություն չէր ցուցաբերել Յայաստանի նկատմամբ եւ Թուրքիային հովանավորել որպէս բուժեր Ռուսաստանի դեմ: 1915 թ. ռուսներին խոստացել էին Կոստանդնուպոլիսն ու նեղուցները: Անգլիայի կառա-

263 Նույն տեղում, 151f.

264 Նույն տեղում, 220.

վարությունը 1918 թ. փորձեց համաձայնության գալ Թուրքիայի հետ: Բրիտանացիներին առաջին հերթին հետաքրքրում էր Միջագետքն ու Նավթը. եթե անհրաժեշտ լիներ զիջումներ անել թուրքերին, նրանք ավելի շուտ ցույց էին տալիս հյուսիսային մարզերը, ուրեմն՝ Չայաստանը: Միաժամանակ, հայերի ճակատագրով մտահոգ աշխարհի սրտացավության հետ մեկտեղ աճում էր ճնշումը բրիտանացիների վրա: Այդ իսկ պատճառով նրանք համաձայնության եկան հայերի հողերը բաժանելու Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև, քանի որ վերջինս հետաքրքրված էր Կիլիկիայով: Լլոյդ Ջորջը բազմիցս նշել է, որ խոստումը քաղաքագետի համար պարտավորիչ չէ. անգլիացիների հիմնական հետաքրքրությունը ծովածոցն էր եւ դեպի Յնդկաստան ծովային ճանապարհի անվտանգության ապահովումը: Բացի դրանից, նրանք ուզում էին նաեւ հաշվի առնել կայսրության մուսուլման բնակչությանը:

Պատերազմի ընթացքում անգլիական ռազմական խորհուրդը ստիպ վստեղա՛ծ ճշտել, թե ինչպիսին էր լինելու հայերի ճակատագիրը պատերազմի վերջում: 1917 թ. հունիսի վերջին խորհուրդը որոշեց՝ Չայաստանը, միջագետքյան Սիրիան ու Պաղեստինը այլեւս չթողնել Թուրքիայի տիրապետության տակ: 1917 թ. վերջին արտաքին գործոց նախարար Բալֆուրն (Balfour) առաջարկեց, որ ԱՄՆ-ի ստանձնի ինքնավար Չայաստանի հովանավորությունը²⁶⁵: Կառավարության մեկ այլ անդամ առաջարկեց, որ ինքնավար Չայաստանը լինի Ռուսաստանի դաշնության անդամ: Իրականում հայերի ապագան չէր հետաքրքրում բրիտանական կառավարությանը: Ռամզեյ ՄաքՌոնալդը՝ (Ramsey MacDonald), ընդդիմադիր աշխատանքի կուսակցության ղեկավարը, 1918 թ. հուլիսին հարցրեց արտաքին գործոց նախարար Բալֆուրին՝ թե արդյոք կառավարությունը անսալու էր հայերի դիմադրությանը եւ հոգալու էր, որ Չայաստանը պատերազմից հետո ստանար ինքնորոշման իրավունք²⁶⁶: Կառավարությունը փորձեց հանգստացնել ընդդիմությանը: Մի քանի օր անց Բալֆուրը հավաստիացրեց հայ դիվանագետ Պողոս Նուբարին, որ Չայաստանի ազատագրումը դաշնակիցների պատերազմական նպատակների շրջանա - կում էր:

Գերմանիան իր հետաքրքրությունները տեսնում էր գլխավորապես Վրաստանում: Այդ պատճառով հայերը նախ եւ առաջ կողմնորոշվել էին դեպի Ավստրիան, որտեղից օգնության ավելի մեծ հույս ունեին: Գերմանիան Չայաստանը հանձնեց Ավստրիայի տրամադրությանը, սակայն Ավստրիայի դեսպա - նը զգուշացրեց, որ սխալ է Չայաստանը «միապետության առաջին գաղութ» դարձնելու միտքը: 1918 թ. հուլիսի 30-ին հայ դիվանագիտական ներկայա - ցուցիչները Կոստանդնուպոլսում Ավստրիայի դեսպանին իրենց հանրապե - տությունը ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացրին: Գերմանացիները

265 Nassibian (1985), 120.

266 Նուրյն տեղում, 114f.

գործ ուղարկեցին Վրաստան՝ կասեցնելու թուրքերի առաջխաղացումը: Դաշնակից բանակների բախման ժամանակ թուրքերը մի խումբ գերմանացի զինվորի գերի վերցրին ու սպանեցին: 1918 թ. հուլիսի կեսերին հայկական մի պատվիրակություն ժամանեց Բեռլին՝ խնդրելու գերմանական կառավարությանը, որ գրավի ու պաշտպանի իրենց երկիրը: Ավստրիայի արտաքին գործոց նախարարը Բեռլինում դեսպանին հաղորդեց, որ Թիֆլիսում մի կերպ տեղավորել էին մոտ 30.000 հայ փախստականներ: Մեսրոպ եպիսկոպոսը հավաստիացրեց, որ Երեւանի շրջակայքում եւս 500.000 փախստականի վիճակը հուսահատական էր²⁶⁷: Սակայն գերմանական ու ավստրիական կառավարությունները չէին ցանկանում այդ հարցով լրջորեն զբաղվել, քանի որ վախենում էին թուրքերի հետ բարդությունների մեջ ընկնել: Նրանք սակայն այսպանեցին Թուրքիային, որ մի կողմից կորցնում էր իր միջագետքյան եւ սիրիական տիրույթները, իսկ մյուս կողմից Կովկասում ամբողջ կատաղությանը զբաղվում էր զավթողական քաղաքականությամբ: 1918 թ. օգոստոսի 4-ին Ավստրիայի պատվիրակ Ֆրանկենշտայնը (Franckenstein) հաղորդեց դեսպան Պալավիչիին երիտասարդ հանրապետության իրավիճակի մասին, որ «Հայաստանը կարող էր փրկվել կործանումից միայն Կենտրոնական պետությունների շուտափույթ օգնության դեպքում: Ներկայիս Հայաստանը ի վիճակի չէր նույնիսկ տեղի բնակչությանը կերակրել, ո՛րը մնաց երեքից մինչեւ հինգ հարյուր հազար փախստականների: (...) Հայաստանը կենսունակ է միմիայն բրեստյան սահմանները պահպանելու դեպքում, եւ առանց սահմանների այն սրբագրումների, որոնց թուրքերը ձգտում են»²⁶⁸:

Գերմանական կառավարությունը չէր ցանկանում Հայաստանում պարտավորություններ ստանձնել, բայց հասկացնում էր, որ դեմ չէր լինի, եթե ավստրիացիներն այդ դերն ստանձնեին: Եվ այսպես, ավստրո-հունգարական միապետության վերջին ամիսներին Արեւելքում ստեղծվեց ավստրիացիների ներդրման հնարավորություն, որը հայերը սիրով ընդունեցին: Հայտնի դարձավ, որ Վիեննայի կառավարությունը նման միջամտությունը խորհրդածության առարկա է դարձրել: Դեսպանության խորհրդական Զարլ ֆոն Թրաութմանսդորֆը (Karl von Trauttmannsdorff) 1918 թ. օգոստոսի 12-ին հրահանգ ստացավ պարզելու, թե որոնք են գործ ուղարկելու պայմանները: 1918 թ. օգոստոսի 31-ին Թուրքիայի, Գերմանիայի, Ավստրիայի ու Հայաստանի մասնակցությամբ Երեւանում հրավիրված խորհրդակցությունում բանակցություններ տեղի ունեցան հայ փախստականների վերադարձի շուրջ դեպի թուրքերի գրաված մարզերը: Գերմանիան ուզում էր Հայաստանը ճանաչել միայն խորհրդային Միության հետ համաձայնության գալով, իսկ վերջինս Հայաս-

267 Ohandjanian (1989), 155.

268 Նույն տեղում, 160.

տանի ինքնուրույնության առնչությամբ ասել էր, որ այն շատ փոքր է անկախության համար: Այդ պատճառով ավստրիական դիվանագիտությունը կառավարությանը խորհուրդ տվեց զգուշանալ: Թալեաթ փաշան՝ Բեռլին մեկնելուց առաջ բացատրեց հայերին, որ Գերմանիան ճանաչում էր միայն Վրաստանը. նա հայերին առաջարկեց՝ հնարավորության դեպքում ընդարձակել իրենց տարածքը²⁶⁹: Բեռլինում Թալեաթը գերմանական կառավարության հետ խոսեց նաեւ այն մասին, որ Աստանտի հետ հաշտության պայմանագրից առաջ անհրաժեշտ է լուծել Հայկական հարցը: Հայաստանը բանակցում էր Ավստրիայի հետ Խորհրդային Միության կողմից իրենց պետության ճանաչման ուղղությամբ: Իսկ ռուսները հայտարարում էին, որ Հայաստանը կճանաչեին միայն այն դեպքում, եթե Թուրքիան նահանջեր դեպի այն սահմանները, որոնք հաստատված էին Բաթումի հաշտությունից առաջ: 1918 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի հավատարմատար դ-ր Օհանջանյանը մեկնեց Վիեննա, Ավստրիայի հետ բանակցելու մեկ այլ խնդրանքի շուրջ: Նա սեպտեմբերի 17-ին կայսեր Զառլին հանձնեց Գեորգ Հինգերորդ կաթողիկոսի օգոստոսի 3-ի օգնության խնդրագիրը²⁷⁰: Այնտեղ ասված էր. «Որպես Արեւելքում հնագույն եկեղեցու առաջնորդ եւ հովիվ մի ժողովրդի, որը վաղեմի ժամանակներից՝ անցնելով բոլոր սարսափների ու անհամար արյունահեղությունների միջով, պահպանել է իր քրիստոնեական հավատքն ու իր անսասան հավատարմությունը քրիստոնեության նկատմամբ, դիմում եմ Ձերոջ Մեծությանը թախանձագին խնդրանքով՝ օգնության ձեռք մեկնել խորտակվող ժողովրդին եւ Ավստրո-Հունգարիային դաշնակից Թուրքիայի վրա համապատասխան ազդեցություն գործել՝ վերջ դնելու հայ ժողովրդի անսահման տառապանքներին»: Սակայն Ավստրիայի արտաքին գործոց նախարարի խորհրդով՝ անցյալում գրված անթիվ բողոքագրերից միայն մեկն է ուղղվել թուրքական կառավարությանը, քանի որ նման նամակներ նախորդ տասնամյակներում որեւէ ազդեցություն չեն ունեցել:

Մինչ այդ թուրքերը փորձում էին առաջանալ դեպի Բաքու: Ռազմական նախարար Էնվեր փաշան քարոզում էր «թուրանիզմ», այսինքն՝ թուրքական ծագում ունեցող բոլոր ժողովուրդների միավորում մինչեւ Կենտրոնական Ասիա: Այդ իսկ պատճառով Հայաստանը, որպես դեպի Ադրբեջան տանող ճամփա, մեծ նշանակություն ուներ նրանց համար: Թուրքերը՝ տասնապատիկ գերազանցությամբ հարձակվեցին Հայաստանի վրա: 1918 թ. սեպտեմբերի 14-ին նրանք հասան Բաքու, որտեղ կոտորեցին 30.000 հայ: Հայ բնակչության կեսը փախավ քաղաքից: Թուրքերը ներխուժեցին նաեւ Դաղստան եւ Հյուսիս-սային Պարսկաստան: Սա օսմանյան բանակի վերջին հաջողությունն էր: Այդ

269 Նույն տեղում, 165f.

270 Նույն տեղում, 169f.

շարդերի ժամանակ, ինչպես նաև դրանց հաջորդող սովից ու համաճարակներից մահացան մինչև 500.000 հայեր: Հայ փախստականների թիվը հասավ 850.000-ի, որից մոտ 500.000-ը Երեւանի շրջակայքում: Ի դեպ, մյուս ճակատներում օսմանյան պետությունը քայքայվել էր, իսկ անգլիացիները Եգիպտոսից շարժվում էին դեպի Երուսաղեմ:

Դեռևս զինադադար կնքելուց առաջ Թուրքիայի կողմից մի քանի անգամ զինադադարի առաջարկ է եղել, անշուշտ, առաջին հերթին ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից: Սուլթանը եւս 1918 թ. հոկտեմբերի 5-ին Բեռնում Անգլիայի դեսպան Յ. Ռումբոլդին (H. Rumbold) ներկայացրեց զինադադարի վերաբերյալ մի հուշագիր, որը սակայն Հայկական հարցի վերաբերյալ որեւէ առաջարկություն չէր պարունակում: Մյուս առաջարկություններում, ինչպես արքայազն Սաբահ-էդ-Դինինը (Sabah-ed-Din), խոսքն արեւելյան սահանգների՝ մինչև Տրապիզոն, ինքնավարության մասին էր²⁷¹:

Պատրիարք Գերմանոս Հինգերորդից (Germanos V.) հետո, որը պաշտոնանկ էր արվել թուրքերի նկատմամբ իր չափից ավելի մեծ զիջողականության պատճառով, Կոստանդնուպոլսում արքեպիսկոպոս Դորոթեոսը՝ (Dorotheos) հուլյներին ազատեց օսմանյան պետության հանդեպ ունեցած բոլոր պարտականություններից եւ պահանջեց քաղաքը միացնել Հունաստանին: Պաղեստինյան ճակատը կազմալուծվելուց հետո, թուրքական կառավարությունը բրիտանացիներին զինադադարի առաջարկ արեց: Թուրքական կողմից բանակցությունների ղեկավար Ռաուֆ բեյը (Raouf Bey) հարցրեց հայկական դիվանագիտական ներկայացուցչության անդամ Ալեքսանդր Խատիսյանին, թե՞ սա կցանկանար ուղեկցել իրեն, որպեսզի բրիտանացիները տեսնեն, որ թուրքերն ու հայերը հաշտ են: Հոկտեմբերի 30-ին, Լեմնոս (Lemnos) կղզու Մուդրոսի (Mudros) նավահանգստում, անգլիական մի ռազմական վրա, ադմիրալ Գոֆ Զալթորպը (Gough Calthorpe) եւ Ռաուֆ բեյը ստորագրեցին զինադադարի պայմանագիրը: Հայերի իրավունքների երաշխավորության մասին Մուդրոսում խոսք չի եղել: Թուրքերը պետք է խզեին իրենց հարաբերությունները Կենտրոնական պետությունների հետ: Հետագա համաձայնությունները կայացան ի վնաս հայերի. այլևս ոչ մի խոսք բռնագաղթվածների վերադարձի եւ հայկական վեց սահանգների մասին, ինչպես պահանջել էր Թոյնբեյը (Toynbee): Վերջինս հիասթափված էր, որովհետեւ այն կարծիքին էր, որ այժմ հայերը դրվել էին անբարենպաստ պայմանների մեջ: Այն տպավորությունն էր ստեղծվել, որ Անգլիան թուրքերին՝ որպես պարզեւ նավթային շրջաններից եւ Պաղեստինից հրաժարվելու դիմաց, Հայաստանում ազատ գործելու իրավունք էր ընձեռնել:

Անգլիացիներին առաջին հերթին հետաքրքրում էր Միջագետքում եւ Պա -

271 Nassibian (1985), 121f.

դեստինում իրենց նվաճումների ապահովումը, մի բան, որի մասին թուրքերի հետ համաձայնություն կար, ինչպես եւ Կիլիկիայի գրավման վերաբերյալ: Ռաուֆ բեյը դեմ չէր, որ անգլիացիները վերահսկեին Դարդանեւլի հրետանին. եթե հույները հարձակվեին, կարելի էր սպասել, որ Թուրքիայում հեղափոխություն տեղի կունենար, շեշտեց նա: Ինչ վերաբերում է Սիս, Չեյթուն, Այնթապ եւ Յաճն քաղաքների հանձնմանը, ապա նա կարողացավ այն կանխել, հիմնավորելով, որ այլապես կառավարությունը տապալվելու վտանգի առաջ պիտի կանգներ: Անգլիացիների համար կարելուրն այն էր, որ զինադադարը կնքվել էր առանց ամերիկացիների ու ֆրանսիացիների: Յետեւապես Մուդրոսը նաեւ հաղթանակ էր ֆրանսիայի նկատմամբ: Սակայն պետք է ընդունել, որ հիմնականում անգլիացիների շնորհիվ էր, որ թուրքերը պարտության մատնվեցին:

1918 թ. հոկտեմբերին, «իթթիհատի» (CUP) վերջին համագումարից հետո, երիտթուրքական Եռյակը՝ ճանաչվելով պարտության պատասխանատու, արձակվեց: Էնվերն ու Թալեաթը 1918 թ. նոյեմբերին գերմանական մի ռազմականավով փախուստի դիմեցին Գերմանիա: Նրանք 1919 թ. հուլիսին Ստամբուլում, այլ երիտթուրքերի հետ միասին, ի բացակայության մահվան դատապարտվեցին: Վերջին սուլթան Մեհմեդ Վեցերորդը, որը 1918 թ. հուլիսին հաջորդել էր եղբորը, պարտավորված էր ի կատար ածել հաղթանակած Անտանտի հրամանները: Բանակը պետք է զորացրվեր. 1919 թ. մարտի 3-ին սուլթանը «Մարդկության դեմ հանցանք» դատավճռով գործարկեց պատմության մեջ առաջին քրեական դատական ատյանը, որտեղ թուրք դատավորները վճիռ էին կայացնում թուրքական օրենքի համաձայն: 1921 թ. մարտի 15-ին Թալեաթ փաշան Բեռլինում սպանվեց հայ ուսանող Սողոմոն Թեհլերյանի կողմից, որն իր ամբողջ ընտանիքը կորցրել էր կոտորածի ժամանակ: Թեհլերյանը ազատ արձակվեց աղմկահարույց մի դատավարությամբ, քանի որ հիմքում հանցագործը իրական մեղավորը չէր:

1919 թ. սկսվեց վերելքը մի մարդու, որն ավելի ուշ պատմություն մտավ «Աթաթուրք» («թուրքերի հայր») անվամբ: 1915-ին Դարդանեւլի պաշտպանության ժամանակ հաղթող դուրս եկած գեներալ Մուստաֆա Զեմալ փաշան, անցյալում մասնակցել էր երիտթուրքերի խռովությանը, CUP-ի անդամ էր եւ 1917 թ. դեկտեմբերի 12-ին թագաժառանգ Վահդեդինի (Vahdedin) հետ Բադ Զրոյցնախում (Bad Kreuznach) այցելել էր կայսր Վիլհելմ Երկրորդին եւ նրա գեներալներ Յինդենբուրգին (Hindenburg) ու Լուդենդորֆին (Ludendorff): Ռազմական տեսուչ նշանակվելուց հետո, Զեմալը Անատոլիայում իր շուրջը համախմբեց ազգամուլական ընդդիմությանը: Երբ բրիտանացիները, ռուսները, ֆրանսիացիները, իտալացիներն ու հույները գրավեցին Անատոլիայի մեծ մասը, նա 1919 թ մայիսի 19-ին ապստամբության կոչ արեց զավթիչների դեմ: Իբրեւ ազատախոհ բարեփոխիչ, Զեմալը իսլամը որակեց որպես «անբա - րոյական մի բեղվիկի՝ Աստծո մասին անհեթեթ ռուսմունք» եւ «փտող դիակ, որ

թունավորում է մեր կյանքը»՝ դառնալով ազգային նոր շարժման կենտրոնական դեմքը: Այսուհանդերձ՝ 1923 թ. ապրիլի 24-ին թուրքական նոր հանրապետության պառլամենտը հիմնելուց հետո, նա դատապարտեց հայերի բնաջնջումը որպես «ամոթալի արարք», ընդ որում՝ որպես «անցյալի ամոթալի արարք» («maziye aid fazahat»): Սակայն նրա իշխանության օրոք պաշտոններ էին վարում նաեւ ցեղասպանության պարագլուխները: Նրա ազգային շարժումը գնալով ավելի թուլացրեց սուլթանական կառավարության ազդեցությունը: Էրզրումի եւ Սվազի համագումարներում (1919 թ. հուլիսի 23-ից մինչեւ օգոստոսի 7-ը եւ 1919 թ. սեպտեմբերի 4-ից մինչեւ 11-ը) Զեմալը Անկարայում ձեւավորեց նոր կառավարություն՝ այնպիսի պառլամենտով, որը նրան ընտրեց նախագահ: Այսպիսով ստեղծվեցին երկու կառավարություն, մեկը՝ Ստամբուլում դաշնակիցների հսկողության տակ, մյուսը՝ ազգայնական, որ համախմբված էր Զեմալ փաշայի շուրջ:

1919 թ. ապրիլին իտալացիները ափ դուրս եկան Անթալիայում եւ հին Եփեսոսի մոտակայքում, որպեսզի այնտեղ ապահովեն դաշնակիցների կողմից իրենց խոստացված ազդեցության ոլորտը: 1919 թ. մայիսին սուլթանի կառավարությունը Ստամբուլում կազմակերպեց պատերազմի հանցագործների իր առաջին դատավարությունը, որտեղ խոսքը, օրինակ, Տրապիզոնի կոտորածների մասին էր: Վարչապետ Դամատ Ֆերիտը (Damat Ferit) երիտթուրքերի ոճրագործությունները դատապարտեց 1918 թ. նոյեմբերի 8-ի սենատի նիստում. «Կատարված ոճիրներն աննախընթաց են, ոչ միայն օսմանյան, այլև ամբողջ մարդկության պատմության մեջ»²⁷²: 1919 թ. մայիսին Փարիզի հաշտության վեհաժողովում վարչապետը օսմանյան պատվիրակների ներկայությամբ մեկ ամգամ եւս ճանաչեց հանցագործությունները, ներողություն խնդրեց եւ հատկապես պախարակեց երիտթուրքերի կոմիտեի ղեկավարների ու անդամների կատարած բռնությունները: Ի վերջո, նա հանցագործությունների համար այնուամենայնիվ պատասխանատու համարեց երիտթուրքերին: Նա միակ թուրք քաղաքագետն է, որը երբեւէ Առաջին աշխարհամարտի ժամանակ կատարված կոտորածների հետ հստակորեն եւ հրապարակայնորեն ոչ մի առնչություն չուկեց ունենալ: 1919 թ. սեպտեմբերի 25-ին վարչապետ Զլեմենսոն (Clemenceau) պատասխանեց Դամատ Ֆերիտին. «Թուրքիան պետք է ընդունի իր հանցագործությունները. այն ընդունակ չէ ուրիշ ժողովուրդներ կառավարելու»²⁷³:

Բրիտանացիների հսկողության տակ գտնվող սուլթանական կառավարությունը Մուստաֆա Զեմալին նշանակեց հավատարմատար, որպեսզի դադարեցվեն Պոնտոսի հույների ու հայերի նկատմամբ սանձազերծված վայրա-

272 Fotiadis, in: Hofmann: *Verfolgung, Vertreibung...* (2003), 193.

273 Նույն տեղում, 193.

գությունները եւ զինաթափ արվեն Թոփալ Օսման փաշայի հրոսակախմբերը: Դրանով այժին դարձրին պարտիզայան: Թոփալ Օսմանի առաջին իսկ հան - դիպման ժամանակ ապագա «Աթաթուրքի» հետ՝ վերջինս ասաց. «Թո? դ որ պոնտացիներն ու հույները հեռանան: Ժամանակի ընթացքում, հենց ազդանշան ստանանք, որ նրանք գործում են օրենքի դեմ, մենք նրանց բոլորի հաշիվը կմաքրենք»: Խոսակցության վերջում Թոփալ Օսմանն ասաց. «Անհո? գ եղեք, իմ փաշա: Ես Պոնտոսի հույներին մի այնպիսի «խունկ» կմատուցեմ, որ նրանք իշամեղուների նման անձավներում կխեղդվեն»²⁷⁴: Մայիսին՝ Զեմալի հայտնության օրը, մինչեւ հիմա համարվում է թուրքական ազգային տոն: 1919 թ. սեպտեմբերի 11-ին Զեմալը հայտնեց Կոստանդնուպոլսի դաշնակիցներին, որ տեղի կառավարությունը չի ներկայացնում Թուրքիան եւ որ ինքն այն այլևս չի ճանաչում: Վերսկսվեցին քրիստոնյաների կոտորածները: 1919 թ. վերջին, ընտրություններում ազգայնամուլների հաղթանակից հետո, Զեմալն իր շտաբը Սվազից տեղափոխեց Անկարա: Դաշնակիցները հասկացան, որ միայն ռազմական զանգվածային ներդրման միջոցով ի վիճակի պիտի լինեին իրենց մտադրություններն իրականացնել եւ քրիստոնյաներին նոր հալածանքներից ու տեղահանումներից պաշտպանել: Երբ 1920 թ. ապրիլին Զեմալը Անկարայում «Ազգային մեծ ժողովի» նախագահ ընտրվեց, ակներեւ դարձավ, որ սուլթանը եւ Կոստանդնուպոլսի նրա կառավարությունը սոսկ դաշնակիցների անգոր խամաճիկներն էին:

274 Նույն տեղում, 196.

13. Մերի հաշտության պայմանագիրը (1920)

Երբ Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան 1916 թ. Սայքս-Փիքոթի (Sykes-Picot) գաղտնի համաձայնագրով բաժանեցին Օսմանյան կայսրության արաբական շրջանները, կայսրությունը հասել էր իր իշխանության անկման եզրին: Անտանտը շարունակ շեշտում էր Թուրքիային «պատժելու» կարելությունը՝ հայերի ու հույների ցեղասպանության համար: 1916 թ. դեկտեմբերի 18-ին դաշնակիցները՝ Ամերիկայի Նախագահ Վիլսոնի՝ հաշտություն կնքելու հնարավորության վերաբերյալ հարցին պատասխանեցին, որ պատերազմի կարելորագույն Նպատակներից մեկը ժողովուրդների ազատագրումն էր թուրքերի արյունառուշտ ճնշումից: Նույն կերպ արտահայտվեց Նաեւ Ֆրանսիայի արտաքին գործոց Նախարարը 1917 թ. հունվարի 10-ին, երբ ասաց, որ պատերազմի վերջնական Նպատակը ժողովուրդների ազատագրումն էր թուրքերի բարբարոս տիրապետությունից, որոնք արմատապես հեռացել են եվրոպական քաղաքակրթությունից²⁷⁵: Ստամբուլում դաշնակիցների գլխավոր հանձնակատար Վեբբը (Webb) 1919 թ. ապրիլի 4-ին հեռագրեց Փարիզյան հաշտության խորհրդաժողով, պահանջելով, որ թուրքերը պատժվեն հայերի կոտորածների համար: Նույն կերպ է արտահայտվել Նաեւ գլխավոր հանձնակատար Զալթհորպը (Calthorpe): Կատարելապես իշխանագուրկ սուլթանը պարտավոր էր հիմա գործի անցնել, եւ Նա գնեւրալ Մուստաֆա Զեմալ փաշային Նշանակեց ռազմական տեսուչ: 1919 թ. մարտի 8-ին ստեղծվեց հատուկ ռազմական դատարան: Այն ժամանակ, երբ Ստամբուլում ազատական կառավարությունը ջանում էր անցյալի հետ հաշվի Նստել եւ դաշնակիցների հետ համագործակցել, Զեմալ փաշան Անատոլիայում ձեւավորում էր ազգային շարժումը: Մինչ Նա հույների դեմ դիմադրություն էր Նախապատրաստում, սուլթանը Նրան պաշտոնանկ արեց՝ հայտարարելով, որ Նա ապստամբ է: Զեմալը Անատոլիայում կազմավորեց թուրքական ազգային իր շարժումը, որն այսօր դիտվում է որպես «Նոր Թուրքիայի» սկիզբը:

Մուստաֆա Զեմալը ամենեւին չէր ժխտում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ գործված ոճիրը: Նա միայն շեշտում էր, որ չի կարելի ամբողջ ազգին պատասխանատու դարձնել մի բանի համար, որ սոսկ մի քանիսի մեղքն էր: 1919 թ. հոկտեմբերի 21-ին Նա Ամասիայում դատապարտեց իթթիհատականներին, պահանջելով պատժել Նրանց: Նրանք, ովքեր մաս -

275 Taner Akcam: *Another History on Sèvres and Lausanne*, in: Kieser-Schaller (2003), 181-299.

նակցել էին ոճրագործություններին, պետք է բացառվեին ընտրություններից: Հարկ էր իրականացնել պատիժը, Փարիզյան բանակցություններում լավ արդյունքի հասնելու համար: Սակայն նա դեմ եղավ մեղավորներին միջազգային դատարանով պատժելուն: Միայն երբ Քեմալը տեսավ, որ դաշնակիցների միտքը շարունակ զբաղված էր Անատոլիան վերաբաժանելու խնդրով, չնայած թուրքերի պատրաստակամությանը՝ պատերազմի հանցագործների դատավարություններ երկրի ներսում անցկացնելու, նա այլևս հրաժարվեց դատավարություններին աջակցելուց: Միեւնույն ժամանակ, Քեմալը հզոր դիմադրություն հանդես բերեց Արեւելյան Անատոլիայի որոշ մասեր անկախ Հայաստանին զիջելու ձգտումներին:

1919-ի գարնանը արեւմտյան թերթերը լուրեր տարածեցին, ըստ որի CUP-ը դեռեւս ակտիվ է եւ ծրագրում է քրիստոնյաների նոր կոտորածներ: «Հուլյն երեխաներ սպանված Այդիւնում», «Հուլյների թուրքական ջարդեր», «Հուլյների խոշտանգումներ Թրակիայում», սրանք էին արեւմտյան թերթերում լուրերի խորագրերը: 1919-ի փետրվարին «Journal de Débats» թերթը գրեց. «Գյուղերում շարունակվում են քրիստոնյաների կոտորածները, խոշտանգումներն ու ամեն տեսակի բռնությունները»: Հաշտության պայմանագրի որոշումների հրապարակումից առաջ, 1919 թ. ապրիլին «Daily Mail» օրաթերթը մտահոգություն էր հայտնում, որ տեղի են ունենալու քրիստոնյաների նոր կոտորածներ: Երզրումի համագումարում որոշում ընդունվեց հարձակվել Հայաստանի Հանրապետության վրա, մուսուլման բնակչության օգնությամբ հայերին քշել Կովկաս եւ խափանել պետության հիմնադրումը, հաղորդում էր «Le Temps» թերթը 1919 թ. հուլիսի 17-ին: Բազմաթիվ հոդվածներ զգուշացնում էին, որ բռնկվելու էին քրիստոնյաների նորանոր կոտորածներ: Այդ պատճառով ասորի միաբան պատրիարք Եփրեմ Երկրորդ Ռախմանին (Ephraem II. Rachmani) 1919-ին իր նստավայրը տեղափոխեց Բեյրութ²⁷⁶:

Ազգային շարժման պարագլուխներն Անկարայում շատ լավ գիտեին, որ իրենց հաջողությունը հիմնականում պայմանավորված էր քրիստոնյաների հետ իրենց ունեցած վերաբերմունքով: Քեմալ փաշայի քարոզչական նախա-ծեռնություններից շատ տպավորիչ էր մի խոսակցություն, որ տեղի էր ունեցել 1919 թ. սեպտեմբերին անգլիացի գեներալ Հարբորդի (Harbord) հետ, երբ վերջինս ուսումնասիրում էր ամերիկյան առաջիկա մի մանդատի քաղաքական, ռազմական եւ ֆինանսական հայեցակետերը: Քեմալը հայտարարեց, որ ինքը նպատակ չունի ուժ գործադրելու ոչ մուսուլմանների հանդեպ: Նա հայտնեց, որ ուզում էր հրապարակել հայերին ուղղված մի կոչ, ըստ որի նրանք ապագայում կարող էին երկրում ապրել առանց որեւէ վախի: «Մենք հաշվի ենք առնում հայերի բնական իրավունքները»: Նա հայտարարեց, որ իթթիհատա -

276 Berthold Spuler: *Gegenwartslage der Ostkirchen*, 2. Aufl. Frankfurt 1968, 287.

կանների հետ որեւէ առնչություն չունի: «Ոչ մուսուլման բնակչության (հայեր, հույներ, հրեաներ եւ այլն) նկատմամբ, որոնց հետ միասին մենք երկար ժամանակ ապրել ենք, մենք որեւէ այլ կարծիք եւ զգացում չունենք. մենք սերտ կապվածություն ենք զգում նրաց հետ եւ դիտում նրանց որպէս մեզ համար - ժեք մարդկանց»: Ամերիկյան թերթերից մեկին տված հարցազրույցի ժամանակ նա ասաց. «Մենք զավթողական ծրագրեր չունենք: (...) Մենք երաշխավորում ենք, որ չեն լինելու հայերի նկատմամբ թուրքական դաժանություններ»²⁷⁷: 1918 թ. դեկտեմբերին ներքին գործոց նախարարությունում ստեղծվեց մի հանձնախումբ, որը ճշտելու էր սպանված հայերի թիվը: Ներքին գործոց նախարար Ջեմալը (Cemal) 1919 թ. մարտի 13-ին շրջանառության մեջ դրեց 800.000 թիվը²⁷⁸: Անշուշտ չի կարելի անտեսել, որ նման հայտարարությունները առաջին հերթին նպատակ ունեին՝ Փարիզյան հաշտության խորհրդաժողովը ի նպաստ իրենց տրամադրել: Իրականությունը, սակայն, ինչպես հաճախ է պատահում, այլ տեսք ուներ: Երբ Ջեմալը մեղադրվեց հայկական նոր կոտորած նյութելու մեջ, նա հայտարարեց. «Հայկական նախա - դեպը ամենանշանակալիցներից է, որի համար ամբողջ աշխարհը մեզ մեղադրում է: Հայկական բանակի դեմ որեւէ հաղթանակ կմեկնաբանվեր որպէս մեր բանակի ձեռնարկած նոր կոտորած, եւ քանի որ դա շատ վատ կլիներ մեզ համար, շարժումը պարտավոր է դա կանխել»²⁷⁹: Թե ինչ էր Ջեմալը իրականում մտածում, նախ երեւում է դրանից, որ պատերազմի հանցագործների մի մասը հետագայում «իր պետության մեջ» բարձր դիրքերի հասավ: Երբ բրիտանացիները 1920 թ. մարտին Ստամբուլում իրենց ներկայությունն ուժեղացրին, Ջեմալ փաշան Անկարայում հրավիրեց «Թուրքական ազգային մեծ ժողովը»: Ջեմալ փաշայի ազգային հակակառավարությունը՝ չնայած իր մենատիրական բնույթին, թուրքերից շատերի համար դարձավ ավելի սիրելի քան ազատական կառավարությունը:

Հաղթող պետությունների ներքին երկպառակությունը դյուրացրեց հույների առաջխաղացումը դեպի Թուրքիա: Անտանտի համաձայնությամբ 1919 թ. մայիսի 15-ին հույները գրավեցին գերազանցապես հույներով բնակեցված Չմյուռնիան. այդ ընթացքում տեղի ունեցան մուսուլմանների սպանություններ: Չերչիլը դա դիտարկեց որպէս անարդարություն եւ նկատեց, որ անարդարությունն այժմ փոխել է տեղերը: Հույները ծրագրեր էին մշակում Հյուսիսային Անատոլիայում հռչակելու «Պոնտոսի Հանրապետությունը»՝ Տրապիզոն կենտրոնով: Թուրքական պառլամենտում տեղի էին ունենում բուռն վիճաբանություններ, քանի որ հույն եւ հայ պատգամավորները ցանկանում էին

277 Akcam (2003), 292.

278 Նույն տեղում, 293.

279 Նույն տեղում, 294.

ցեղասպանությունը օրակարգի հարց դարձել: Եթե հույն եւ հայ պատգամավորները խոսում էին 550.000 սպանված հույների եւ մեկ միլիոն զոհված հայերի մասին, թուրք պատգամավորները խոսում էին ընդամենը 500-600 հազար զոհերի մասին²⁸⁰: Մինչ սուլթանի կառավարությունը ինչ-որ չափով գործում էր դաշնակիցների հսկողության տակ, Քեմալ փաշան Անատոլիայում ձեւավորում էր ազգային շարժում, որը պառլամենտում 1919 թ. դեկտեմբերի սկզբի ընտրությունների ժամանակ (որ բոյկոտել էին քրիստոնյաները) ձեռք բերեց ձայների մեծամասնություն, այսինքն՝ ձայների երկու երրորդը: Սա նշանակում էր վարչապետ Դամատ Ֆերիտ փաշայի ղեկավարությամբ ազատական ժամանակաշրջանի ավարտը. սկսած 1919 թ. մարտի 4-ից, վերջինս թուրքական կառավարության միակ ղեկավարն էր, որ փորձում էր հետամտել երիտթուրքերի պատերազմի հանցագործությունները դատավարությունների միջոցով, որոնց տեղի ունենալու դեպքում, Քեմալ փաշան նույնպես մահվան պիտի դատապարտվեր: Սակայն 1920 թ. օգոստոսին ազգային շարժման պահանջով դադարեցվեցին դատավարությունները: Այնուամենայնիվ, արեւմտյան կառավարությունների ներկայացուցիչների հետ խոսակցության ժամանակ Քեմալ փաշան եւս ընդունեց 800.000-ը՝ որպես սպանված հայերի թիվ եւ դատապարտեց նրանց սպանությունը²⁸¹: Ջարդերի հանցագործները պատասխանատվության չկանչվեցին, ինչպես օրինակ, Սյուբրյու Զայան (Sükrü Kaya), որը գերմանացի հյուպատոս Ռյուսլերին (Rösler) ասել էր. «Վերջնական արդյունքը պետք է լինի հայ ցեղի բնաջնջումը: Սա մուսուլմանների ու հայերի միջեւ մշտական կռիվն է, որն այժմ պետք է ավարտվի: Ըստ որում՝ ավելի թույլը պետք է անհետանա»: Սյուբրյու Զայան 1927-1938 թթ. եղել է Թուրքիայի ներքին գործոց նախարար²⁸²:

Անգլիացիները հապճեպ կնքեցին Մուդրոսի զինադադարը՝ ֆրանսիացիներին կանխելու նպատակով: Փաստաթուղթը ոչինչ չէր պարունակում թուրքական բանակի զինաթափման եւ հայկական հողերի ազատագրման մասին: Շատ հարցեր մնացել էին չպարզաբանված եւ սպասում էին հաշտության պայմանագրի: Կովկասում հանգրվանած հայ փախստականները չէին կարող իրենց հայրենիքը վերադառնալ: Անուշադրության էր մատնված նաեւ թուրքական հարեմներ տարված հայ կանանց վիճակը, ինչպես եւ բռնի իսլամացված հայ երեխաների ճակատագիրը: Լորդ Բրայսը զինադադարը բնութագրեց որպես «ճակատագրական սխալ», որը չի լուծարում թուրքական բանակը, սակայն անգլիացիներին պարզեւում է Մոսուլն ու Ալեքսանդրիան: Վճռորոշը անգլիացիների ազգային շահերն էին. թուրքական տիրապետու-

280 Akcam (1996), 87.

281 Նույն տեղում, 124.

282 Նույն տեղում, 134f.

թյան տակ գտնվող քրիստոնյաների ճակատագիրը նրանց համար նշանա - կություն չունեն։ Թուրքերը հավաքագրել էին արեւելյան վեց նահանգների քրդերին՝ փախստականների վերադարձը խափանելու համար։ Կիլիկիայում բրիտանացիների աչքի առաջ ժանդարմերիան սպառազինվում էր բանակա - յին զենքերով։ Թուրքական ռազմական ուժերը թալանում էին Երեւանի հան - րապետությունը, որին պատերազմում հաղթանակած կողմերը օժանդակու - թյուն չէին ցույց տալիս։ Ստորին պալատում Բալֆուրի արտահայտությունն այն մասին, որ Անգլիա?? ???????՝ հայերին կրկին չթողնելու որ ընկնեն թուրքական վատ կառավարչության տակ, բրիտանական քաղաքականու - թյան անկյունասյուներից մեկն է, այժմ չէր համապատասխանում իրականու - թյանը։

Փարիզի հաշտության բանակցությունների ժամանակ (1919/1920) Ամերի - կայի նախագահ Վիլսոնը հայերի ամենամանրամասնորէր բարեխոսն էր, որոնք իրենց անկախության հռչակումից հետո ներկայացուցիչ էին ուղարկել Փարիզ։ Հայերը Վիլսոնին մեծարեցին որպէս իրենց «Աստծո կողմից ուղարկված ազատարար» եւ նրա 14-րդ կետը բնութագրեցին որպէս «Սուրբ Գիրք»²⁸³։ Վիլ - սոնը խոսելով անգլիացիների՝ Պաղեստինի ու Իրաքի, իսկ ֆրանսիացիների՝ Սիրիայի ու Լիբանանի նկատմամբ ունեցած հավակնությունների մասին, ինչպէս նաեւ իտալացիների ձգտումների մասին Թուրքիայի հարավային ափերի ու Կիլիկիայի նկատմամբ, շեշտեց, որ Հայաստանին անհրաժեշտ էր տրամադրել նավահանգիստ Միջերկրական ծովի ափին՝ Կիլիկիայում, եւ որ այն պետք է դրվեր որեւէ մեծ տերության հովանավորության ներքո²⁸⁴։ «Մեծ քառյակի» խորհրդակցությունում արագ համաձայնության եկան այն մասին, որ թուրքերը պետք է հանձնեն Արաբիան, Հայաստանը, Միջագետքը, Սիրիան ու Պաղեստինը։ Հունաստանի վարչապետ Վենիզելոսը 1918 թ. դեկտեմբերի 30-ին պահանջեց Կոստանդնուպոլիսը, քանի որ այնտեղ ապրում էին 364.000 հույներ՝ 419.000 թուրքերի կողքին։ Անդրկովկասում Իտալիայի հովանավո - րությանը խոչնդոտելու նպատակով, Լւոյո Ջորջը մայիսին պաշտպանա - կան ճառ արտասանեց ավելի շուտ Ամերիկայի մանդատի օգտին։ Անգլիայի ներսում քննարկման կյուր դարձան ապագա Հայաստանի սահմանները։ Լորդ Քուրզոնը (Lord Curzon) կողմակից էր համեմատաբար փոքր, Ռոբերթ Սեսիլը (Robert Cecil)՝ ավելի մեծ Հայաստանի՝ ներառյալ Կիլիկիան։ Այնտեղի «վեց վիլայեթներում» 35 տոկոս կազմող հայերը բնակչության ամենամեծ խումբն էին։ Անգլիան, սակայն, մանդատն ուզում էր տալ ֆրանսիացիներին։ 1919 թ. փետրվարին Բրիտանիայի պատվիրակությունը առաջադրեց մեծ Հայաս - տանի ծրագիրը, որը ձգվելու էր մինչեւ Ալեքսանդրետ ու Մերսին, իսկ հյուսի -

283 Walworth (1986), 505.

284 Նույն տեղում, 488.

տում ընդգրկելու էր Սեւ ծովի ափին Տրապիզոնի մերձակա տարածաշրջանը: ԱՄՆ-ը ստանձնելու էր Հայաստանի խնամատարությունը: 1919-ի աշնանը պրոտեկտորատի թեման դրվեց քննարկման: Վիլսոնը նահանգապետի պաշտոնում տեսնում էր Հուվերին (Hoover): Ամերիկացիների կարծիքով Հայաստանը պետք է ունենար նվազագույնը 150.000-անոց արտասահմանյան զորախումբ, որպեսզի կարողանար գոյատևել Թուրքիայի ու Ադրբեջանի միջև: Երբ 1919 թ. օգոստոսին անգլիացիները որոշեցին իրենց զորքը հանել Անդրկովկասից, մուսուլմանների բռնություններից քրիստոնյաների պաշտպանության հարցը դարձավ հրատապ: Ֆրանսիայի վարչապետ Կլեմենսոն (Clemenceau) հանդես եկավ ընդդեմ Անգլիայի մեկուսի գործողություններից, սակայն ինքն էլ որեւէ լուծում չկարողացավ տալ: Օգոստոսի վերջերին նա հայտարարեց, որ Ֆրանսիան պատրաստ է 10.000 մարդ ուղարկել Կիլիկիա, բայց ոչ Հայաստան:

Ասորի քրիստոնյաները եւս մասնակցում էին Փարիզյան բանակցություններին: Արեւմտյան ասորիների պատրիարք Իգնատիոս Էլիաս Երրորդը (Ignatius Elisa III.) (1917-1932) 1919 թ. հանդիպեց վերջին սուլթան Մեհմեդ Վեցերորդին (Mehmed VI.) եւ ստացավ ֆիրման (հրովարտակ): Վերջինս 1919-ին եպիսկոպոս Եփրեմ Բարսաումային (Ephrem Barsauma) ուղարկեց Փարիզ՝ բանակցությունների²⁸⁵: Տիեզերական պատրիարքության փոխանորդ արքեպիսկոպոս Դորոթեոսը (Dorotheos) պահանջեց Կոստանդնուպոլսի միացումը Հունաստանին: Կաթողիկոս Շիմոն Զսաներորդը (Shimun XX.) իր քրոջը՝ Սուրմային (Surma), ուղարկեց Լոնդոն ներկայացնելու իր պահանջները գերագույն հանձնակատար Ա.Թ. Վիլսոնին: Կաթողիկոսը չէր ուզում, որ Հայկական հարցը խառնվեր «ասորականի» հետ: «Ասորիները», ինչպես այսուհետ կոչվում էր արեւելյան ասորի քրիստոնյաների քաղաքական շարժումը, ցանկանում էին ապրել առանձին երկրում՝ Բրիտանիայի հովանավորության ներքո եւ պահանջում էին, որ կաթողիկոսը ճանաչվեր որպես աշխարհիկ եւ հոգեւոր պետ²⁸⁶: Խարբերողի Ա.Կ. Յուսուֆը (A. K. Yoosuf) եւ ԱՄՆ-ում ասորիների նախագահ Յոել Է. Վերդան (Yoel E. Werda) մասնակցեցին Փարիզյան բանակցություններին, որտեղ ներկայացվում էր Սաիդ Նամիկի (Said Namik) եւ Ռուստամ Նեշիբի (Rustam Nedschib) «La Question assyro-chaldéenne devant la Conférence de la Paix» (Ասորա-քաղղեական հարցը հաշտության խորհրդաժողովի առաջ) աշխատությունը, որտեղ տրվում էր 1914 թ. «նեստորականների» դեմ պատերազմում՝ Թուրքիայում բնակվող 811.000 արեւելյան ասորիներից զոհվածների թիվը որպես 250.000: 1920-ին Պետրոս աղան Փարիզում ընտրվեց ասորի-քաղղեացիների ազգային կոմիտեի նախագահ:

285 Wilhelm Baum: "Ignatius Elias III., syrisch-orthodoxer Patriarch von Antiochien (1917-1932)", in: *Biographisch-Bibliographisches Kirchenlexikon*, Bd. 24, 2005, 885-888.

286 Yonan (1978), 41f.

Քանի որ քրիստոնյաները անձանք չէին կարող մասնակցել հաշտության խորհրդաժողովին, նրանք ներկայացրին իրենց հուշագրերը: Այդ ընթացքում նաեւ Հակարիի մարզը վերաբնակեցնելու փորձեր ձեռնարկվեցին:

Անգլիան պահանջում էր, որ մինչեւ իր Հայաստան գալը, ԱՄՆ-ը ֆինանսավորեր Հայաստանի ինչ-որ մի գոտում տեղակայված անգլիական գործի գոյատեւման ծախսերը: Սակայն ամերիկյան կոնգրեսը մերժեց դրա ֆինանսավորումը: Երբ մի հանձնախումբ հարցում անցկացրեց Կոստանդնուպոլսի հայերի շրջանում, վերջիններս հայտարարեցին, որ թուրքերը ունակ չէին նրանց կառավարելու եւ պահանջեցին խստագույն մանդատ: 1919 թ. մայիսի 6-ին Վիլսոնը մերժեց Թուրքիա գործ ուղարկելու Բրիտանիայի առաջարկը: Մայիսի 14-ին նա սենատին առաջարկ ներկայացրեց՝ ստանձնելու ամերիկյան մանդատը: Սակայն ամերիկացիները պատրաստ չէին իրենց վրա նման պատասխանատվություն վերցնելու: Երբ 1919 թ. հունիսի վերջին Վիլսոնը թողեց Փարիզը, հույսով էր, որ օգոստոսին կամ սեպտեմբերին խորհրդաժողովին պատասխան կտա, թե Ամերիկյան ստանձնելո՞ւ էր մանդատը²⁸⁷: Ամերիկյան հանձնախումբը՝ գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ դեպի Հայաստան ուղեւորվելիս, կանգ առավ Սվազում, որտեղ ամերիկացիները ուժեղ տպավորություն էին ստացել քեմալական նոր վարչակարգից: Հանձնախումբը եկավ այն եզրակացության, որ կոտորածներն սկսվել էին Կոստանդնուպոլսից, եւ որ անկարելի էր վստահ լինել, որ անկախ Հայաստանի պարագայում նոր ջարդեր չեն լինի. վերջում հանձնախումբը հակված էր մանդատի ընդունման օգտին: Սակայն Կոստանդնուպոլսում Ամերիկայի գերագույն հանձնակատար ադմիրալ Բրիսթոլը հայերի անկախության գաղափարին կողմնակից չէր: Ի վերջո, հայերի անկախության վերաբերյալ չիրականացավ ամերիկյան մանդատը, որը 1920 թ. հունիսին խորհրդաժողովը կտրականապես մերժեց:

Կովկասյան երիտասարդ հանրապետությունների դժվարությունն այն էր, որ նրանք միջազգայնորեն չէին ճանաչված: Փարիզում հայկական հանձնախմբի նախագահ Ավետիս Ահարոնյանը իզուր էր ճանաչում պահանջում: 1919 թ. վերջերին բոլշեիկներին հաջողվեց Կովկասի տարածաշրջանում ջախջախել իրենց հակառակորդին: Դրանով իսկ պետք էր սպասել, որ ռուսները ետ էին նվաճելու նաեւ անդրկովկասյան պետությունները: Հայաստանը՝ որպես այդ պետություններից ամենաթույլը՝ ամենափոքր ազդեցությունն ուներ: Հայերի համար բրիտանացիների անտարբերությունն իրենց նկատմամբ հատկապես այն պատճառով էր անհասկանալի, որ հայերը, ի տարբերություն վրացիների ու ադրբեջանցիների, պատերազմում

287 Anderson (1978), 361.

կմպել էին գերմանացիների ու թուրքերի դեմ: Երբ Թիֆլիսի ևահանգի Բոր-
չալուի գավառում վրացիների ու հայերի միջև տեղի ունեցան բախումներ,
որոնց հիմքում ընկած էր հայերի ինքրորոշման իրավունքը, անգլիացիները
վճռեցին վրացիների օգտին:

1919 թ. փետրվարի 18-ին անգլիացիները ներկայացրին մի առաջարկ,
ըստ որի Յայաստանն ընդգրկելու էր վեց ևահանգները, նախկին Ռուսահա-
յաստանը եւ Կիլիկիան²⁸⁸: Նրանք ուզում էին, որ Յայաստանի վրա հաստատ-
վեր ամերիկյան, եւ ոչ թե ֆրանսիական հովանավորություն: Չերչիլը, որպես
ռազմական նախարարությունում Բրիտանիայի պետքարտուղար, համոզված
էր, որ ռուսները քաղաքացիական պատերազմից հետո կվերադառնան Կով-
կաս: Ռազմավարական տեսակետից Յայաստանն Անդրկովկասում ամենա-
անկարելու պետությունն էր, քանի որ անգլիացիներին հետաքրքրող բնական
պաշարներ չունեւ, ինչպես, օրիինակ, Ադրբեջանը, որն ուներ նավթ: Այդ իսկ
պատճառով անգլիացիները շատ էին ուզում Էռնային Ղարաբաղ հայկական
մարզը, որը գրավել էր հայ գեներալ Անդրանիկը, միակցել Ադրբեջանին:
Նրանք կարգադրեցին, որ մարզը՝ մինչեւ Փարիզյան բանակցությունների
ավարտը, կառավարվի Ադրբեջանի կողմից: Սակայն այստեղ եւս՝ մինչ օրս
ձգվող վեճը լուծում չի ստացել: Մուղրոսի զինադադարի պայմանագրից հետո
Նախատեսված էր Կարսի մարզը մաքրել թուրքերից, 1919 թ. ապրիլի կեսերին
անգլիացի գեներալ Ֆորեստյեր-Ուոլկերը՝ (Forestier-Walker) թուրքերի երկա-
րատեւ դիմադրությունից հետո իրականացրեց տարիանումը եւ մարզը
հանձնեց Յայաստանին: Անգլիացիները նույն կերպ վարվեցին նաեւ մու-
սուլմանական մեծամասնություն ունեցող Նախիջեւանի հետ: Այնուամենայ-
նիվ, երիտասարդ Յայաստանի Յանրապետությունը մնաց թույլ, քանի որ
չունեւ միջազգային ճանաչում եւ իր տրամադրության տակ՝ բանակ:

Պատերազմական մեծ ծախսերի պատճառով Անգլիան կրճատեց իր բա-
նակը եւ մտածում էր Կովկասից ետ քաշվել: Ավանդաբար թուրքամետ անգ-
լիական բանակը չէր հետեւում կառավարության քաղաքականությանը եւ չէր
պաշտպանում հայերին թուրքերի հարձակումներից: 1919 թ. մայիսի վերջին
30 թուրք ներկայացուցիչներ կարողացան հանդես գալ Փարիզում հաշտու-
թյան վեհաժողովի «Մեծ խորհրդի» առաջ՝ մի արտոնություն, որը Գերմանիան
չստացավ: Թուրքերի կողմից զինադադարի խախտումը բնավ չպատժվեց:
Յատկապես, երբ Ռուսաստանում բոլշեւիկները պարտության մատնեցին
«սպիտակ գվարդիականներին», այն միտքն առաջացավ, որ գուցե
Թուրքիային պետք էր ուժեղացնել եւ օգտագործել որպես պատվար կոմու-
նիզմի դեմ: Երբ Նախագահ Վիլսոնը անգլիացի մի զինվորականի հարցրեց,
թե ինչքան զորք է հարկավոր Յայաստանի մանդատը ստանձնելու համար,

288 Nassibian (1985), 148-150.

վերջինս պատասխանեց. մինչեւ հինգ դիվիզիա: Սա անհանգստացրեց Նախագահին, որ վախենում էր կոնգրեսում մեծամասնության չհասնել²⁸⁹: Ազատական կուսակցության առաջնորդ Աքքվիթը՝ չնայած հայերի հանդեպ իր համակրանքին, մտահոգ էր, որ Անգլիայի համար մանդատի ստանձնումը կարող էր կործանարար լինել: 1919 թ. փետրվարին Իտալիան հայտարարեց, որ ինքը պատրաստ էր ուղարկել երկու դիվիզիա Կովկաս եւ մեկ գումարտակ Կոնյա: Արտաքին գործոց նախարար Տոմասո Տիտոնին (Tommaso Tittoni) հայտարարեց Բալֆուրին, որ Կովկասը պահելու համար անհրաժեշտ էր ունենալ առնվազն 40.000 մարդ, մի բան, որ Իտալիան չէր կարող հայթայթել: Կովկասից զորքը ետ քաշելու անգլիացիների որոշումը հայերի շրջանում մեծ մտահոգություն պատճառեց: 1919 թ. օգոստոսին «Բրիտանա-հայկական կոմիտեն» դիմեց թագավորին ու կառավարությանը, որպեսզի նրանք կանխեն թուրքական կոտորածները: ԱՄՆ-ում 1919 թ. մարտին նախագահ Վիլսոնին ուղղված նման մի խնդրագրի տակ ստորագրեց 40 նահանգապետ, վարժա - րանների եւ համալսարանների 250 նախագահ, 85 եպիսկոպոս եւ 20.000 քահանա: Կլեմենտնոս հայտարարեց, որ Ֆրանսիան կարող է ստանձնել Հայաստանի հովանավորությունը եւ ափ դուրս գալ Ալեքսանդրիայում: Սակայն վերջ ի վերջո Հայաստանը մնաց մենակ:

Վիլսոնը Փարիզում դժվարությամբ էր հասկանում հույն քաղաքագետ Վենիզելոսի գաղափարները Անատոլիայում թուրք մեծամասնության վրա հունական տիրապետություն ստեղծելու մասին: 1919 թ. հոկտեմբերին նա ընդգծեց, որ իր նպատակը Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համար լավ կառավարություն ապահովելն է: Հույների ափ դուրս գալը Չմյուռ - նիայում դժվարացնում էր հարցի լուծումը: Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը ջանում էր Վիլսոնին համոզել, որ Անատոլիային անհրաժեշտ էր ամերիկյան ավելի մեծ ներգրավվածություն: Նա նաեւ բացատրում էր իտալացի Օրլանդոյին, որ Իտալիան, չնայած Լոնդոնի պայմանագրին, հող չի ստանա տեղի բնակչության կամքին հակառակ: Նախքան Մուստաֆա Զեմալի Թուրքիայում ամուր թամբին նստելը եւ, բացառությամբ Կոստանդնուպոլսի, ամբողջ երկիրը կառավարելը, թուրք ներկայացուցիչները եւս դիմեցին Վիլսոնին խնդրանքով՝ պաշտպանել իրենց հույներից եւ առաջարկեցին Անատոլիայի համար ամերիկյան մանդատ ապահովել: Սակայն Վիլսոնը թույլ չտվեց իրեն ապակողմորոշել եւ նրանց պատասխանեց՝ մի՞թե թուրքերը կարծում էին, որ Փարիզում չգիտեն իրական պատմությունը: «Ես բավականին երկար եմ ուսումնասիրել թուրքական հարցը եւ եկել եմ այն եզրակացության, որ միակ ելքը թուրքերին Կոստանդնուպոլսից դուրս նետելն է»²⁹⁰: Նա ձգտում էր ԱՄՆ-ի համար միջնորդի դեր ապահովել, առանց սակայն Ազգերի ընկերակցության

289 Նույն տեղում, 168.

290 Walworth (1986), 495.

մանդատը ստանձնած լինելու: Յունիսի 27-ին «Գերագույն խորհուրդը» ընդհատեց խորհրդակցությունները Թուրքիայի մասին, մինչև որ որոշվի, թե ԱՄՆ-ը ստանձնելու է մանդատը: Վիլսոնը տարակուսում էր՝ արդյո՞ք իր երկիրը պատրաստ էր մանդատ ստանձնելու Փոքր Ասիայի եւ Հայաստանի նկատմամբ: Թուրք ազգայնամուլները, սակայն, խստագույնս մերժում էին որեւէ մանդատ: ԱՄՆ-ի հարաբերությունները թուրքերի հետ սառեցին. նրանք չմասնակցեցին 1920 թ. օգոստոսին Սեւրի հաշտության պայմանագրին: Վիլսոնի նման իդեալիստները չկարողացան ո՛չ Թուրքիայում «լավ կառավարություն» ստեղծել, ո՛չ էլ կասեցնել պատերազմը Յունաստանի եւ քեմալական Թուրքիայի միջեւ:

1920 թ. առաջին ամիսներին Փարիզում հաշտության բանակցությունները թուրքերի հետ ավարտական փուլում էին: 1920 թ. մարտի 16-ին բրիտանական զորքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը, որպեսզի ճնշեն ազգայնամուլական շարժումը: Փետրվարին եւ մարտին Լոնդոնում տեղի ունեցող մի խորհրդաժողովում Անգլիայի արտաքին գործոց նախարար լորդ Զերզոնը (Lord Curzon) հիշեցրեց, որ դաշնակիցները խոստացել էին ստեղծել անկախ Հայաստան: Իտալիայի վարչապետ Ֆրանչեսկո Ս. Նիտին (Francesco S. Nitti), ինչպես եւ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Ֆիլիպ Բերթելոն (Philippe Berthelot) հաստատեցին Զերզոնի ասածը: Ցանկություն կար հայերին հատուցել իրենց բոլոր տառապանքների համար: Զերզոնն ընդգծեց դրա հետ կապված դժվարությունները, քանի որ բոլոր հայերը կոտորածի էին ենթարկվել «Մեծ Հայքում»: Ապրիլին Սան Ռեմոյում շարունակվող բանակցությունների մի նիստում ճշգրտվեցին պայմանագրի հիմնական կետերը: Այնտեղ լորդ Զերզոնը բողոքեց, հիշեցնելով, որ Հայաստանի ազատությունը եղել է դաշնակիցների գլխավոր նպատակը եւ նրանց բարոյական պարտականությունը²⁹¹: Պահանջը առկա էր, որ Հայաստանը պահպանվեր որպես ազատ ու անկախ պետություն, սակայն չկար մեկը, որ պատրաստ լիներ հանուն դրա որեւէ բան զոհաբերելու: Ընևարկվեց նաեւ այն հարցը, թե ինչպես կարելի է զենք տեղափոխել Հայաստան եւ որպես նավահանգիստներ նկատի առնվեցին Տրապիզոնն ու Բաթումը: Զանի որ ցանկություն կար Հայաստանին թողնել Տրապիզոն նավահանգիստը, կարծում էին, որ Երզրումը եւս հայերին կմնա: Բերթելոն դրան համամիտ էր, թեւ հայերն Երզրումում մեծամասնություն չէին կազմում: Լլոյդ Ջորջը եւ Նիտին դեմ էին, որ հայերը Երզրումը ստանան, սակայն արտաքին գործոց նախարար Զերզոնը եւ Բերթելոն պնդեցին: Երբ բանը հասավ ֆինանսավորման հարցին եւ որոշվեց, որ հայերին անհրաժեշտ է 10 միլիոն ֆունտ, հաղթող պետությունները կրկին դիմեցին ԱՄՆ-ին: Լլոյդ Ջորջը ելույթ ունեցավ այն մասին, որ հայերն այժմ իրենք պետք է կռվեն

291 Nassibian (1985), 180.

իրենց երկրի համար: Նա անամոթաբար նկատեց՝ ով ուզում է ազգ լինել, պետք է կարողանա նաեւ իր երկրի համար կռվել: 1920 թ. ապրիլին Փարիզում «Գերագույն խորհուրդը» մեկ անգամ եւս խնդրանքով դիմեց ԱՄՆ-ին՝ ստանձնելու մանդատը հանուն մարդասիրության²⁹²: Ոչ մի պետություն պատրաստ չէր ընդունելու Հայաստանի մանդատը: ԱՄՆ-ը Գերմանիայի հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո, թողեց եվրոպական բեմը: Մոռացության մատնվեցին մեծ Հայաստանի մասին բոլոր մտահղացումները, թեեւ քննարկվեց այն հարցը, թե Երզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգների որ մասերն էին պատկանելու Հայաստանին: Կոչ արեցին ԱՄՆ-ին՝ ֆինանսական օգնություն ցույց տալ հայերին: Ապրիլի 26-ին Վիլսոնից պահանջեցին նշագրել Հայաստանի սահմանները: Այդ ընթացքում Փարիզ հասան սարսափելի լուրեր: 1920 թ. փետրվարին՝ Կիլիկիայում ֆրանսիացիների վրա քեմալականների մի հարձակման ժամանակ թուրքերը կոտորել էին 15.000–20.000 հայ, որոնք Միջագետքից վերադարձել էին իրենց հայրենիքը:

1920 թ. մայիսի 10-ին սուլթանական կառավարության ներկայացուցիչների առաջ դրվեց հաշտության պայմանագրի նախագիծը: 1920 թ. հունիսին ամերիկացիներն ի վերջո մերժեցին բոլոր առաջարկները: Հաշտության պայմանագիրը կնքվեց 1920 թ. օգոստոսի 10-ին Սեւրում²⁹³: Պայմանագրի մեջ ճանաչվում են Հայաստանի անկախությունն ու արեւելյան նահանգների միակցումը Հայաստանին. նախագահ Վիլսոնը հաստատել էր սահմանները: Կիլիկիան, Սիրիան ու Լիբանանը անցնում էին ֆրանսիացիների կառավարչության տակ: Համաձայն Սայքս-Փիքոթի պայմանագրի Անգլիան ստանում էր Իրաքն ու Պաղեստինը: Չմյուռնիայի շրջանը, թեեւ ձեւական մնում էր թուրքական, հինգ տարով դրվել էր հունական կառավարչության տակ. ժամկետի ավարտին ապագան որոշվելու էր հանրաքվեի միջոցով: Կրկին ուժի մեջ մտան 1914 թ. երիտթուրքերի կողմից չեղյալ համարված պարտությունները: 62-րդ հոդվածով երաշխավորվում էր ասորի-քաղղեացիների եւ մյուս փոքրամասնությունների պաշտպանությունն ու անվտանգությունը²⁹⁴: Կոստանդնուպոլսի ու Երեւանի կառավարությունները եւ Եվրոպայի հաղթած պետությունների, ինչպես նաեւ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի ներկայացուցիչները 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզում ստորագրեցին պայմանագիրը: Սակայն մեծագույն խնդիրն այն էր, որ սահմանները նախագահ Վիլսոնի կողմից հաստատվեցին 1920 թ. նոյեմբերի 22-ից ոչ առաջ. համաձայն դրան՝ 42.000 քառ. կմ Թուրքահայաստանից անցնելու էր Հայաս-

292 Նույն տեղում, 177.

293 Սեւրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները տե՛ս էջ 176–177:

294 Matuz (1990), 273f.

տաՎՆՏԻ Զանրապետությանը: Այդպիսով, Զայաստանը կունենար 68.500 քառ. կմ տարածք: Խնդրահարույց էր նաեւ այն, որ Զայաստանը դաշնակիցներից չստացավ բավականաչափ ֆինանսական ու ռազմական օգնություն, եւ որ պայմանագիրը երբեք չվավերացվեց Թուրքիայի կողմից:

Զաշտության պայմանագրով ամրագրված Զայաստանի 300 մղոն երկարությամբ ձգվող սահմանները՝ Վանա լճից մինչեւ Սեւ ծով, գտնվում էին ամբողջովին անպաշտպան վիճակում. Զայաստանն անզեն էր, իսկ Թուրքիան՝ զինված: Թուրքիայից Զայաստանին անցած մասում տեղակայված էր չորս հետեւակային գումարտակ՝ հարուստ ռազմամթերքով: Իսկ հայերի տրամադրության տակ կար ընդամենը 15.000 զինվոր՝ անբավարար զինամթերքով: Անգլիական գլխավոր շտաբը հայտարարեց, որ պայմանագրին հավանություն կտա միայն այն դեպքում, եթե ապահովվի զորքի անհրաժեշտ քանակը: Զեմալական հակակառավարությունը, որն արդեն փետրվարին ֆրանսիացիներին քշել էր Սարաշից, պայմանագիրը չճանաչեց: Ընդհակառակը, թուրքերը Զայաստանին կոր պատերազմ հայտարարեցին: Ֆրանսիայից մարշալ Ֆոշը (Foch) ծանուցեց, որ հաշտության պայմանագրի պահպանումը երաշխավորելու համար հարկավոր էր 27 գումարտակից կազմված բանակ: Իսկ Մուստաֆա Զեմալը 1920 թ. սեպտեմբերի 23-ին հարձակվեց Զայաստանի երիտասարդ պետության վրա:

Վինստոն Չերչիլը համաձայն չէր, որ 1919 թ. մայիսի 15-ին հույները ափ դուրս գային Չմյուռնիա: Զուլաստանի թագավոր Կոստանդին Առաջինը Վենիզելոսի այդ նախաձեռնությունը անվանեց «Վենիզելոսյան խելագարություն»: Երբ նա ափ է դուրս եկավ, մետրոպոլիտ Խրիստոսոմոսը նրան ողջունեց որպես խաչակիր²⁹⁵: Մի քանի օր անց Մուստաֆա Զեմալ եւ Իզմետ փաշա գեներալները դիմադրություն կազմակերպեցին: Մուստաֆա Զեմալը դաշնակցեց Լենինի հետ, որը պաշտպանում էր թուրքերի պայքարը իրենց թշնամիների դեմ: Զեմալականների «հակաիմպերիալիստական պատերազմը ուղեկցվում էր էթնիկ այլ խմբերի նկատմամբ ազգայնամոլների անողոք դաժանություններով»²⁹⁶: Զեմալականների պայքարն ուղղվում էր բոլոր նրանց դեմ, ովքեր չէին ուզում ընդունել իրենց ազգային-պետական միասնականության գաղափարը: Ընտրություններում Վենիզելոսի պարտությունից, 1920 թ. դեկտեմբերի 5-ի հանրաքվեից եւ Կոստանդին թագավորի վերադարձից հետո փոքրասիական արշավանքն ընդունվեց որպես արկածախնդրություն: Աթենքում իշխանության փոփոխության հետեւանքով թուլացավ նաեւ Զուլաստանի դիրքը արտաքին քաղաքականության մեջ: Փարիզն ու Լոնդոնը փաստորեն չեղյալ համարեցին Սեւրի պայմանագիրը, այնպես որ Զուլաստ-

295 R. Strothmann: “Heutiges Orientchristentum und Schicksal der Assyrer”, in: *Zeitschrift für Kirchengeschichte* 55, 1936, 17-82, hier 47.

296 Pavlos Tzermias: *Neugriechische Geschichte*. Tübingen 1986, 126.

տանը քեմալականների դեմ իր պատերազմում մնաց միայնակ: Ֆրանսիան ու Իտալիան աջակցում էին Աթաթուրքին, որին Անգլիան ու ԱՄՆ-ը ցանկանում էին ուժեղացնել որպես հակակշիռ բուլշեվիկյան Ռուսաստանի դեմ: Հետեւաբար, հունական դիրքորոշումը Փոքր Ասիայում այլեւս չունէր Ֆրանսիայի ու Իտալիայի աջակցությունը: Վենիզելոսի գեներալների փոխարինումը թագավորին հավատարիմ անփորձ սպաներով ավերիչ հետեւանքներ ունեցավ: Վենիզելոսը իր տապալումից հետո պաշտպանական ճառ արտասանեց հոգուտ նահանջի դեպի Չմյուռնիայի շրջանները: Հույն եւ հայ դիմադրական շարժման մարտիկները խմբավորվեցին 1920 թ. Նիկոմեդիայի, իսկ ավելի ուշ Չմյուռնիայի մոտ: Անկարայի վրա հարձակումից հետո հունական բանակը պարտություն կրեց Քեմալ փաշայի կողմից, իսկ 1921 թ.՝ երկու անգամ պարտվեց Իզմետ փաշայի կողմից Ինենյու (Inönü) վայրի մոտ, որի անունով էլ վերջինս կոչվեց հետագայում: 1921 թ. օգոստոսին Սակարիա գետի ափին Եսկիշեհիրի մոտ տեղի ունեցած ճակամարտից հետո, Անկարայի վրա հարձակումը ձախողվեց: 1922-ին թուրքերն անցան հարձակման: Թուրքերի համար դա ազգային պետության ստեղծման պայքար էր, իսկ հույների համար այդ արշավանքը անկախությունից ի վեր երկրի ամենամեծ աղետն էր: Մագնեզիայի եպիսկոպոսական եկեղեցին վերածվեց կառատան, իսկ Պերգամոնում երկու եկեղեցի վերածվել էր սպանված քրիստոնյաների ոսկորների պահեստի ու աշխատանոցի:

Չմյուռնիան գերազանցապես հունական քաղաք էր, թուրքերը անվանում էին «Գյավուր-Իզմիր» («անհավատ Չմյուռնիա»): Առնոլդ Թոյնբի (Arnold Toynbee) 1921 թ. Հունաստան եւ Թուրքիա կատարած ութամսյա ճանապարհորդությունից հետո գրում է, որ անգլիացիները պետք է թույլ տային հույներին գրավել Չմյուռնիան²⁹⁷: 1919 թ. մայիսին հունական զորքը մտավ Չմյուռնիա: Շուտով հռչակվեց նաեւ «Հոնիայի»՝ Չմյուռնիայի շրջակա մարզի, անկախությունը: 1922 թ. հուլիսի վերջին Հունաստանը հայտարարեց, որ գրավելու էր Կոստանդնուպոլիսը: Սա չէր համապասխանում արեւմտյան տերությունների հայեցակետին, որոնք ձգտում էին նեղուցների հսկողությանը: 1922 թ. օգոստոսին եւ սեպտեմբերին թուրքերը վերագրավեցին Չմյուռնիան: Հունական բանակը փախավ Հունաստան, իսկ հույն եւ հայ քաղաքացիները մնացին անպաշտպան թուրքերի դեմ, որոնք անողորմ կերպով կոտորեցին նրանց, այդ թվում եւ հույն մետրոպոլիտ Խրիստոստոմոսին (Chrysostomos): Միայն Չմյուռնիայում 100.000 հույն սպանվեց: Ծովափին կանգնած դաշնակիցների ռազմանավերը ոչինչ չարեցին քրիստոնյաներին օգնելու համար. նրանք կառչել էին իրենց «չեզոքությանը» եւ հաճախ փախստականներին չէին թողնում նույնիսկ իրենց նավերը բարձրանալ: 1922

297 Nassibian (1985), 198f.

թ. սեպտեմբերի 13-ին Չմյուռնիայի քրիստոնյաների թաղամասում ահաւոր հրդեհ բռնկվեց, իսկ թուրքական բանակը ոչինչ չձեռնարկելով հրդեհի դեմ, թույլ տվեց, որ Չմյուռնիան կրակի ճարակ դառնա: 1922-ի եղելությունները պատմության մեջ հայտնի են որպէս «Չմյուռնիայի աղետ»: Դրանով, 850 տարի թուրքական լծի տակ ապրած քրիստոնյա ժողովրդի պատմությունն ավարտվեց: Հայ բժիշկ Կարապետ Խաչերյանը, որն ականատեսը դարձավ 1922-ի Չմյուռնիայի աղետին, մանրամասնորեն նկարագրել է այդ օրերի իրադարձություններն իր օրագրում²⁹⁸:

1922 թ. հոկտեմբերի 11-ին Թուրքիան զինադադար կնքեց դաշնակից - ների հետ, բայց ոչ հույների: Այդ ժամանակ Փոքր Ասիայի մյուս բնակավայրերից հույները նույնպէս տեղահանվեցին, ինչպէս, օրինակ, Գյորեմեի շրջանից կապադովկիացի հույները եւ Պոնտոսի, Տրապիզոնի եւ արեւմտյան ափերի մնացած հույները: Միայն Կոստանդնուպոլսում բնակվող հույները զերծ մնացին տեղահանությունից: «Տիեզերական պատրիարքությունը» եւս հետագայում մնաց Կոստանդնուպոլսի Ֆանարում (Phanar), որն այժմ Ստամբուլում նաեւ պաշտոնապէս վերանվանվել է: Մինչ այդ պահպանված ուղղափառ եւ հայ եկեղեցիների մեծ մասը կամ ավերվել, կամ վերածվել է մզկիթի, ինչպէս, օրինակ, 730 տարի առաջ կառուցված եւ 1922 թ. թուրքերի Նիկիայում (այժմ՝ Իզնիկ) պայթեցրած Զիմեսիս (Koimesis) եկեղեցին²⁹⁹: Հունական բազմաթիվ տեղանունների վերանվանումը ծառայեց դրան, որ ջնջվեցին հույն ինքնության հնագույն հետքերը:

Հույն բանաստեղծ Իլիաս Վենեսիսը՝ (Էլիաս Մելիս 1904-1973) «Թիվ 31328. Անատոլիայում տառապանքի ուղիներով» աշխատության մեջ նկարագրում է, թե ինչպէս թուրքերը Անատոլիայի խորքերում բանեցրել են 18-45 տարեկան տղամարդկանց որպէս «ստրուկներ աշխատանքային գումարտակներում»³⁰⁰: «Խաղաղություն աստիկական ծովածոցում» եւ «Էոլյան հող» վեպերում քննարկվում է նույն թեման: «Էոլյան հողը» էպիկական ստեղծագործություն է վաղ մանկության մասին Անտոլիայի նահապետական մի կալվածքում, Էոլյան հողի կախարդանքի մեջ, մի համայնքում, որտեղ շփման մեջ էին արեւելյան ու արեւմտյան բարքերը: Խոսքը մի աշխարհի մասին է, որը լի է արկածներով, որսորդությամբ, մաքսանեւզ ուղեւորություններով, փոխուստներով եւ երագներով, որոնք «լողում էին Էգեյան ծովի վրայով»: Հեղինակի այս գլուխգործոցը հիշողությունների գիրք է, որը

298 Dora Sakayan: *An Armenian Doctor in Turkey*, Montreal 1997. (Բժիշկ Կ. Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» օրագրի բնագիրը (արեւմտահայերեն) հրատարակել է նրա թուրք Դոքա Սաքայանը 1995-ին, ապա վերահրատարակել յոթ օտար լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, հունարեն, իտալերեն, գերմաներեն, ռուսերեն եւ թուրքերեն), իսկ 2005-ին՝ նաև արեւելահայերենով:

299 Etienne Coche de la Ferté: *Byzantinische Kunst*, Freiburg-Basel-Wien 1982, 513.

300 Tzermias (1986), 129.

պարունակում է մեծ հոր խոսքերը. «Թուրքերը գալիս են: Նրանք ոչ մեկին կենդանի չեն թողնի» –, եւ ավարտվում է նրանով, որ հույները նա՛վ են բարձրանում Յունաստան մեկնելու: Վենեսիան ինքը երեխա ժամանակ իր ընտանիքի հետ ապրել է Արեւմտյան Անատոլիայում, որն անտիկ շրջանում Փոքր Ասիայի Եոլիա կոչվող երկրամասն էր: Նիկոս Կազանձակիսը (Nikos Kazantzakis) իր «Յունական կիրք» վեպում նկարագրում է Առաջին աշխարհամարտի ավարտին հույն փախստականների տառապանքի ուղիները Անատոլիայում, ինչպես նաեւ քարսրտությունը իրենց հայրենակիցների ու հոգեւորականների, որոնք չէին ուզում օգնել ամեն ինչ կորցրած մարդկանց: 1900 թ. Չմյուռնիայում ծնված, Նոբելյան մրցանակի դափնեկիր, վերելում հիշատակված Գյորգոս Սեֆերիսը (Giorgos Seferis) իր աշխատություններում նույնպես նկարագրում է իր հայրենակիցների կրած տառապանքները: Չքացել էր երազանքը Կոստանդնուպոլսի մասին, որը նույնիսկ 1453-ից հետո էլ մնաց հույների հոգեւոր եւ մշակութային ինքնության խորհրդանիշը: Այժմ կորստի էր մատնվել նաեւ Արեւելյան Թրակիան՝ Ադրիանուպոլսով (Էդիրնե), ինչպես եւ Իմբրոս ու Թենեդոս կղզիները: Փոքր Ասիայում մինչեւ 1922 թ. մոտ երկու միլիոն հույն ապրել էր շուրջ յոթ միլիոն թուրքի հետ. իսկ Չմյուռնիայի շրջանում եւ առափնյա մի քանի այլ քաղաքներում հույները կազմում մեծամասնություն էին կազմում³⁰¹:

301 Weithmann (1994), 218.

14. Քեմալականների Հաղթանակը (1920-1922)

Դեմիկիևի գլխավորած սպիտակգվարդիականների դեմ տարած բոլշեիկների հաղթանակից հետո միայն Անգլիան 1920 թ. հունվարին պատրաստ էր ճանաչելու Անդրկովկասյան հանրապետությունները: Վերջիններս հետագայում ծառայելու էին որպես պատվար բոլշեիզմի դեմ³⁰²: Սակայն այստեղ եւս որոշումները կիսատ էին մնում, որովհետեւ հաղթած երկրներ Անգլիան ու Ֆրանսիան պատրաստ չէին Յայաստանին ու Վրաստանին ռազմական օգնություն ցույց տալու: Անդրկովկասյան պետությունների անկախությունը պետք է նաեւ խանգարեր բոլշեիկների ու քեմալականների միջեւ դաշինքին: Անգլիացիներն ու ֆրանսիացիները չէին ենթադրում, որ Առաջին աշխարհամարտը «տանուլ տված» երկրներ Ռուսաստանը, Թուրքիան ու Գերմանիան շուտով իրար հետ կրկին համաձայնության էին գալու:

1920 թ. սեպտեմբերի 23-ից մինչեւ նոյեմբերի սկիզբն ընթացող քեմալականների գրոհին Յայաստանը չդիմացավ, քանի որ ոչ մի տեղից օգնություն չէր ստանում: Կարսի ու Արդահանի շրջաններից 60.000 թուրք հարձակվեցին Յայաստանի վրա: 1920 թ. սեպտեմբերի 30-ին ընկավ Կարսը, նոյեմբերին՝ Ալեքսանդրապոլը, որտեղ ողբում էին 60.000 սպանվածներին, 38.000 վիրավորներին ու 18.000 գերիներին:

1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի (հետագայում՝ Լենինական) հաշտության վիճահարույց պայմանագրով հայերը պետք է հրաժարվեին Սեւրի պայմանագրի որոշումներից: 1878 թ. Ռուսաստանին անցած Կարսի ու Արդահանի նահանգները վերադարձվեցին Թուրքիային: Յայաստանին մնաց միայն 27.000 կմ² տարածք եւ 1500 զինվոր, 20 գնդացիք եւ 8 թնդանոթ պահելու իրավունքը: Երեւանում թուրք կառավարչի պաշտոնը՝ այդ որոշման կատարման եւ ապրանքաշրջանառության վրա հսկելն էր³⁰³: Յայաստանը սրանով դառնում էր Թուրքիայի պրոտեկտորատը, իսկ նման պետությունը կենսունակ չէր կարող լինել: Հայերը ստիպված եղան օգնության կանչել ռուսներին: Յայաստանի ու Սովետի միջեւ 1920 թ. հոկտեմբերի 28-ի հաշտությունից հետո, Լենինը 1920 թ. նոյեմբերի 27-ին հրամանագրեց Յայաստանի խորհրդայնացումը: 1920 թ. դեկտեմբերի 2-ին դաշնակցական կառավարությունը հրաժարական տվեց: Ավարտվեց Յայաստանի Հանրապետության երկու տարվա անկախությունը: 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի

302 Nassibian (1985), 189.

303 Նույն տեղում, 219.

հաշտության պայմանագրով Խորհրդային Միությունը հրաժարվեց 1878 թ. նվաճած Կարսի ու Արդահանի շրջաններից: 80 տոկոսով հայկական մարզ Լեռնային Ղարաբաղը Սովետը կցեց Ադրբեջանին: Բրիտանացիներից ունեցած վախն ու Փարիզյան հաշտության պայմանագրի նկատմամբ թշնամությունը մերձեցրել էր բոլշևիկներին ու քեմալականներին: 1920 թ. մայիսին ձեռք բերվեցին կիսապաշտոնական հարաբերություններ: 1921 թ. փետրվարի 18-ի դաշնակցականների խռովությունից հետո, «Կարմիր բանակը» 1921 թ. ապրիլի 4-ին մտավ Երեւան:

Թուրքիայի հետ Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի հաշտության պայմանագրով Խորհրդային կառավարությունը հրաժարվեց Կարսի ու Արդահանի շրջաններից ի նպաստ Թուրքիայի: Բեւեռախույզ եւ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենը իր «Խաբված ժողովուրդ» գրքում ցավ է արտահայտում, որ մինչ այժմ հայերի հովանավորողներ համարվող տերությունները, ի վերջո օգնության չհասան նրանց ամենանեղ վիճակում եւ դեռ մեղադրեցին նրանց, որ հանձնվեցին Խորհրդային Միությանը: 1922-ին Նանսենը լրջորեն զբաղվեց նաեւ Թուրքիայից հույների տարհանման հարցերով: Խորհրդային Միությունում նույնպես անողոքաբար ճնշման էր ենթարկվում հայոց եկեղեցին, որն ավելի քան 1600 տարի պահպանել էր ժողովրդի մշակույթն ու լեզուն:

1921 թ. փետրվար/մարտ ամիսների լոնդոնյան հաշտության խորհրդածողով ներկայացավ թուրքական երկու պատվիրակություն: մեկը՝ Ստամբուլի կառավարության, իսկ մյուսը Անկարայի հակակառավարության կողմից՝ արտաքին գործոց նախարար Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ: Վերջինս հույներին առաջարկեց ստեղծել Չմյուննիայի ինքնավար մարզ՝ քրիստոնյա կուսակալով: Սակայն հաշտություն չկնքվեց Յունաստանի անգիջում դիրքորոշման պատճառով: Կոստանդնուպոլսի վրա հույների հարձակումը պատուհաս դարձավ անգլիացիների գլխին, որոնք դեռ իշխում էին Դարդանելում: Չմյուննիա քաղաքը պահանջում էր հունական կայազոր, սակայն պատրաստ էր նաեւ ընդունելու դաշնակիցների հսկողության տակ գտնվող ոստիկանություն: Ֆրանսիայի վարչապետ Բրիանդը (Briand) եւ Իտալիայի արտաքին գործոց նախարար Սֆորզան (Sforza) քննարկեցին հաշտության առանձին պայմանագիր: Ֆրանսիան 1921 թ. մարտին Թուրքիայի հետ կնքեց Անգորայի պայմանագիրը, որը հաշտության առանձին պայմանագիր էր եւ Կիլիկիան հանձնում էր քեմալականներին: Իտալիան, որը գրավել էր Անթալիան, իսկ Ֆրանսիան, որի ձեռքում էր Այնթապից դեպի Ուրֆա ու Մարդին ձգվող երկրամասը, մինչեւ 1921 թ. հոկտեմբերը ազատեցին այդ շրջաններն ու զիջեցին քեմալականներին: Ֆրանսիան 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում քեմալականների հետ դաշինք կնքեց³⁰⁴: Դրանով 1921 թ. հոկտեմբերի 20-ին

³⁰⁴ Anderson (1978), 370.

քեմալական կառավարությունը ճանաչվեց Ֆրանսիայի կողմից, որից հետո Կիլիկիայից 100.000 հայ ու ասորի քրիստոնյա փախան Սիրիա՝ Ֆրանսիական մանդատ ունեցող շրջան: Այժմ արդեն միայն Անգլիան էր, որ մտադրված էր շարունակել պայքարը քեմալականների դեմ: Չերչիլը ստորին պալատում կարծիք հայտնեց, որ Անգլիան Փոքր Ասիայում չպետք է խճճվի նոր արկածների մեջ³⁰⁵: 1922-ի ապրիլին Իտալիան հեռացավ Նաեւ Մեանդերտալից (Mäandertal), իսկ Ֆրանսիան՝ Դարդանելի ասիական ափերից: Նա հրաժարվեց Կիլիկիայից եւ կրկին բախտի քմահաճույքին թողեց հայերին, որոնք վստահելով ֆրանսիացիների ներկայությանը Կիլիկիայում, վերադարձել էին իրենց հայրենիքը:

1922 թ. փետրվարին եւ մարտին դաշնակիցները Փարիզում նոր բանակցությունների ժամանակ, վերանայելով Սեւրի պայմանագիրը, առաջարկեցին թուրքերին՝ Չմյուռնիային ու Արեւելյան Թրակիայի որոշ մասերին փոխանցել ինքնավարություն: Ազգերի ընկերակցության երկրորդ ժողովում Թուրքիան հանդես եկավ փոքրամասնությունների համար «ազգային օջախներ» ստեղծելու դեմ: 1922 թ. սեպտեմբերի 9-ի Չմյուռնիայի անկումից հետո, Յունաստանի դիրքերը թուլացան. այժմ Յունաստանը եւս պատրաստ էր հաշտություն կնքելու: 1922 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսի սուլթանական կառավարությունը լուծարվեց: Դաշնակիցների զորքերն այժմ մնացել էին միայն Կոստանդնուպոլսում եւ Նեղուցներում: Իտալիայում ֆաշիստական նոր կառավարությունը որոշեց վերջ դնել անատոլական կորստաբեր արկածին: Յույների պարտությունից հետո Լլոյո Ջորջը եւս հուսախաբվեց եւ 1922 թ. հոկտեմբերին Նահանջեց:

«Ազգային ազատագրական բանակը» 1922 թ. հոկտեմբերի 19-ին հանդիսավոր կերպով մտավ Ստամբուլ: Սուլթանությունը վերացվեց: Մեհմեդ Վեցերորդը բրիտանական ռազմանավով մեկընդմիջտ թողեց Թուրքիան: Նրան, որպես խալիֆա, հաջորդեց եղբայրը, մինչեւ 1924 թ., երբ խալիֆայությունը նույնպես վերացավ: Յույների ու հայերի հանդեպ քեմալականների հաղթանակները Նախադրյալ ստեղծեցին Սեւրի պայմանագրի վերանայման համար: 1922 թ. հոկտեմբերի 2-ին բրիտանական վերջին ջոկատները հեռացան Կոստանդնուպոլսից:

Հաշտության վերջին բանակցությունները սկսվեցին 1922 թ. նոյեմբերի 10-ին եւ կրկին ընդհատվեցին 1923 թ. փետրվարի 4-ին, որովհետեւ թուրքական պատվիրակության ղեկավար Իզմեթ փաշա Ինենյուն պահանջում էր՝ մինչեւ 1914 թ. ուժի մեջ գտնվող արտասահմանյան բոլոր կապիտուլացիաների վերացումը: Պետրոս աղան, որ պահպանում էր կապը Սիրիայի ու Լիբանանի հանձնակատար գեներալ Բուրոյի (Couraud) հետ, 1923 թ. փետրվարի 1-ին

305 Michael Neumann - Adrian Christian Neumann: *Die Türkei*, München 1990, 299.

հռչակեց «Ասորա-քաղդեական անկախ հանրապետություն», որը, սակայն, հնարավոր չէր լինի իրականացնել³⁰⁶: Անգլիայի պատվիրակ լորդ Զերգոնը ներկա չլինելով Երասրի քրիստոնյաների շահերը: «Ասորիների ազգային կոմիտեի» գլխավոր քարտուղար Գորեք դե Զերբորանը (J. Gorek de Kerboran) 1922 թ վերջին եւ 1923 թ. սկզբին հաշտության խորհրդաժողովի նախագահին հանձնեց բազմաթիվ հուշագրեր: Զերգոնը պաշտպանեց ասորի փախստականների վերադարձը Զակարիի տարածաշրջան: Թուրքիայի ներկայացուցիչը մերժեց, քանի որ ներումը չէր վերաբերում այն քաղաքացիներին, որոնք պատե թագավորը գտնվել էին Թուրքիայից դուրս եւ այդ պատճառով կորցրել էին թուրքահայ տակույությունը: Բացի դրանից, փոքր մասնությունների հովանավոր թուրքները մեծ տերությունների համար պատրվակ էր խառն վերաբերման հի ներքին գործերին: 1922 թ. դեկտեմբերի 13-ին Զերգոնը խորհրդաժողովին հիշեց հայերի դեմ գործված ոճրագործությունների մասին: Նա հարցրեց Իզմետ փաշա Ինենյունին, թե այդ ինչպե՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոնանոց հայ բնակչությունը հանկարծ նվազեց ու դարձավ 130.000 մարդ: «Նրանք սպանվեցին, կամ ինքնակամ թողեցին երկիրը: Ինչո՞ւ այժմ հաղորդում եմ ինչպե՞ս որ հայեր ապրում են աշխարհում որպես փախստական»³⁰⁷: Սակայն Զերգոնի ջանքերը մնացին անպտուղ, քանի որ միայն Անգլիան էր պաշտպանում հայերին, միևնույն ժամանակահատվածում Ֆրանսիան ու Իտալիան ընդհանրապես ներքին համաձայնության էին եկել: 1923 թ ապրիլին բանակցությունները վերադարձվեցին: Ասորիների հարցը քննարկվեց 1923 թ. մայիսի 19-ի, հունիսի 4-ի եւ հուլիսի 17-ի նիստերում: Զերգոնի արձագանքը և Անգլիայի ներկայացուցիչ սըր Ռոմբոլդը (Rumbold) ներկայացրեցին Երասրի քրիստոնյաների պահանջները: Լորդ Զերգոնը 1923 թ. հունվարի 23-ին խոսեց ասորիների մասին եւ պահանջեց երաշխիքներ նրանց կրոնի, լեզվի ու մշակույթի պահպանման համար: Թուրք պատվիրակ Իզմետ փաշա Ինենյունը մերժեց այդ պահանջը: Այսպիսով, հաշտության պայմանագրում փոքրամասն թուրքների իրավունքները ներկայացվեցին բավականին անողորմ ձևով: 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի հաշտությունն այլևս թելադրված հաշտություն չէր, այլ փոխզիջում, որը թուրքերին թողնում էր ամբողջ Փոքր Ասիան՝ Թուրքիա հա յս տանով, Կիլիկիայով եւ Զորխոստանով: Թեև բանակցությունների ընթացքում հնչում էին հայերի համար «ազգային օջախ ներքին» ստեղծելու առաջարկներ, սակայն որեւէ մեծ տերություն այլևս դա չըջրեց չէր պահանջում: Լոզանում ներկայացվեց ներքին իրավունքները վերստանձնելու հարցում, Մուստաֆա Զեմալն արդեն ռուսների օգնության կարիքը չէր զգում: Թուրքիան ետ ստացավ Թրակիան մինչեւ

306 Yonan (1978), 44.

307 Nassibian (1985), 235.

Մարիցա գետը, ինչպես նաև հունաբնակ Իմբրոս եւ Տենեդոս կղզիները: Համաձայնության եկան բնակչության երկկողմանի փոխանակման մասին, ըստ որի բացառություն էին կազմում միայն թուրքերը Արեւմտյան Թրակիայից եւ հույները՝ Կոստանդնուպոլսից, որն այժմ արդեն վերջնականապես ստացավ Ստամբուլ անունը: Լոզանի պայմանագրով Թուրքիան միջազգային հանրության կողմից ընդունվեց որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ պետություն: Լոզանի պայմանագիրը ստորագրվեց 1923 թ. հուլիսի 24-ին:

Թեեւ քրիստոնյաներին երաշխավորվում էր կրոնական ազատություն, ասորիներն այդ պայմանագրում պարզորոշ կերպով չէին հիշատակվում: Կրոնական ազատությունն ամրագրված էր 38-45 հոդվածներում: Պաշտպանության տակ էին անցնում նաև քրիստոնեական եկեղեցիներն ու հիմնարկությունները: Սակայն «կրոնական փոքրամասնությունների» իրավունքները ձեւակերպված էին բավական ընդհանուր եւ ոչ պարտավորեցնող լեզվով³⁰⁸: 40-րդ հոդվածը քրիստոնեաներին իրավունք էր տալիս սեփական դպրոցներ հիմնել եւ գործարկել, 41-րդ հոդվածը թույլ էր տալիս այդ դպրոցներում օգտագործել ազգային լեզուն: Սակայն պայմանագրում չէին թվարկվում այն փոքրամասնությունները, որոնց վրա տարածվում էին այդ իրավունքները: Պայմանագրի ընձեռած իրավունքներից կարող էին օգտվել հույները, հայերն ու հրեաները, բայց ոչ ասորի ուղղափառ քրիստոնյաները: 1923-ին այդ շրջանի ասորի ուղղափառ պատրիարք Էլիաս Երրորդ Շակիր Ալկանը (Elias III. Shakir Alkan) որոշեց, որ Նորաստեղծ Թուրքիայում ասորիների համար ավելի լավ էր ապրել սովորական քաղաքացու պես, քան թե աչքի ընկնել որպես փոքրամասնություն եւ վտանգի ենթարկվել: Դրանով ասորի քրիստոնյաները կորցրին սեփական դպրոցներ ունենալու հավակնությունը եւ մնացին թուրքական դպրոցների հույսին:

Ահա այս բոլոր համաձայնագրերը պետք է գտնվեին Նորաստեղծ Ազգերի ըկերակցության հովանու ներքո: Հայերն ու քրդերը ստիպված էին մոռանալ սեփական պետականությունն ունենալու մասին: Սրան հաջորդեց հույների գաղթը Էգեյականի ափերից, Պոնտոսից, Տրապիզոնից եւ Կապադովկիայից: Կեսարիայում Եֆթիմ (Eftim = Euthymios) քահանան փորձեց համայնքը փրկել կամավոր թուրքացումից եւ առաջադրեց իրեն՝ որպես պետական հակապատրիարք. սակայն շատ քիչ քրիստոնյաներ հետևեցին նրա օրինակին³⁰⁹:

308 Լոզանի պայմանագրի փոքրամասնություններին վերաբերող հոդվածները տե՛ս էջ 178-181:

309 Strothmann (1936), 48.

15. Քրիստոնյաների վիճակը Թուրքիայում մինչև Կիպրոսի պատերազմը (1923-1974)

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո հույն ուղղափառ պատրիարքությունը մնացել էր առանց պատրիարքի: 1921-ին Մելետիոս Չորրորդ Մետաքսակիսը (Meletios IV. Metaxakis) Անգլիայի օժանդակությամբ կարողացավ անցնել իր պաշտոնին: 1919 թ. Յալկի կղզու վրա գտնվող քահանայական սեմինարիան ստացավ ակադեմիայի աստիճան: 1920 թ Տիեզերական պատրիարքությունը, Ազգերի ընկերակցության հիմնադրումից հետո, բոլոր քրիստոնեական եկեղեցիներին հղեց շրջաբերական՝ առաջարկելով հիմնել եկեղեցիների դաշինք եւ ընդունել միասնական օրացույց³¹⁰: Լոզանի հաշտությամբ պատրիարքությունը ճանաչման արժանացավ. միաժամանակ սահմանվեց, որ պատրիարքը պետք է լիներ թրքահպատակ եւ պաշտոնն ստանար ընտրությամբ: Պատրիարքն, իհարկե, ի վիճակի չէր 1923 թ. Անկարա փոխադրված օտարատյաց կառավարության օրոք քրիստոնյաներին գործուն պաշտպանություն ցույց տալ: 1925-ին Կոստանդին Վեցերորդ պատրիարքը, որն ընտրվել էր առանց թուրքերի թույլտվության, արտաքսվեց: Աշխարհամարտի ավարտից հետո, գնալով ավելի նվազում էր ուղղափառ եկեղեցու հավատացյալների թիվը: 1927 թ. Թուրքիայում դեռեւս կար 257.000 քրիստոնյա, որի մոտ 10 տոկոսը ասորի քրիստոնյաներն էին³¹¹: Էֆթիմ Առաջինը (Eftim I.)՝ թուրքախոս ուղղափառների «պարագլուխը», որը կոչ էր անում երես թեքել Տիեզերական պատրիարքությունից, օգտագործում էր Թուրքիայում հույների դժվար կացությունը՝ պատրիարքությանը ճնշման տակ դնելու համար: Սկսած 1921-ից նա Թուրքիայի ուղղափառությունը կազմավորեց որպես «Քաթա». 1963-ին նրան հետեւեց որդին՝ Էֆթիմ Երկրորդը (Eftim II.), այնուհետեւ վերջինիս եղբայրը՝ Սելչուկ Էրեներոլը (Selcuk Erenerol): Այդ «եկեղեցին» ոչ մի տեղ չճանաչվեց, ոչ էլ «եկեղեցիների Տիեզերական կորիզի», ոչ էլ Վատիկանի կողմից: Թուրքիայի համար, սակայն, այն դարձավ կրոնական քաղաքականության պատրաստակամ մի գործիք, ինչպես, օրինակ, 1974-ին թուրքերի՝ Կիպրոս ներխուժելու հավանություն տալու դեպքում: Վանա լճում Աղթամարի Յայոց փոքրիկ կաթողիկոսությունը՝ երկու եպիսկոպոսով եւ 100.000 հավատացյալներով, 1914 թ. արդեն չկար: Թուրքիայի արեւելքում

310 Gregorios Larentzakis: “Das Ökumenische Patriarchat von Konstantinopel im Dienste der kirchlichen Einheit und der Vereinigung Europas”, in: KNA ÖKI 27, 27.6.1985, 5-11.

311 Yonan (1978), 110; Strothmann (1936), 48, (*այստեղ սրվում է գոհերի թիվը*. 110.000 հույներ եւ 70.000 հայեր):

մինչև վերջերս պահպանվել էին ասորի ուղղափառ եկեղեցու կողմնակիցներ եւ Յռոմի հետ միաբան քաղղեացիներ:

Քրիստոնեական մյուս եկեղեցիների վիճակը ավելի լավ չէր: «Յակոբիկների» պատրիարք Իգնատիոս Էլիաս Երրորդը (Ignatius Elias III.) 1922-ին քաղաքացիական պատերազմի ժամանակ մի քանի ամիս անցկացրեց Երուսաղեմում, ապա այցելեց Մուստաֆա Զեմալ փաշային եւ մասնակցեց Ազգային մեծ խորհրդի բացմանը: Ասորի քրիստոնյաների մեծ մասը 1922-ին եւ 1924-ին փախստականների երկու մեծ ալիքով թողեցին Թուրքիան եւ մեկնեցին ֆրանսիական մանդատ ունեցող Սիրիա, որտեղ Կամիշլիի ու Յալթալը դարձան նրանց կենտրոնները: 1923 թ. մայիսին պատրիարքը վերադարձավ Մարդին եւ վերջին անգամ լինելով, բնակվեց Անանիասի վանքում (Դեիր ալ-Չաֆարանում) Deir al-Zafaran): Սակայն 1924-ին նա իր նստավայրը փոխադրեց Սիրիա՝ Յոմ: Նույն տարին քրիստոնյաների վերջին բեկորները հեռացան Եդեսիայից եւ գնացին Սիրիա: Եդեսիայի հայոց Մայր տաճարը՝ հնագույն եկեղեցիներից մեկը, նախ վերածվեց հրշեջ կայանի, ապա՝ մզկիթի: Իգնատիոս Էլիաս Երրորդի մահից հետո, եպիսկոպոս Եփրեմ Առաջին Բարսաուման (Ephrem I. Barsauma), որն արդեն փարիզյան բանակցությունների ընթացքում «հակոբիկների» շարքերն էր անցել, Կերալայում (Kerala) ընտրվեց նոր պատրիարք: Մար Յոհաննան Դոլաբանին (Mar Yohannan Dolabani)՝ 1946-ին մետրոպոլիտ նշանակված Մարդինի եպիսկոպոսը, հիմնեց «Մագալտա դ-հեկմատա» (Magalta d-hekmata) ամսագիրը եւ հեղինակեց բազմաթիվ երկեր: Արեւմտյան ասորիների եկեղեցին, Լոզանի հաշտությունից հետո, Թուրքիայում հազիվ կարողացավ պահպանել երկու՝ Մարդինի եւ Տուրաբդինի եպիսկոպոսությունները եւ Մոր Գաբրիել (Quartamin), Մոր Մալկե (Mor Malke), Մոր Աբրահամ (Mor Abraham)՝ Միդիատի (Mydiat) մոտ, եւ Սալահի Մոր Յակոբ (Mor Jakob von Salah) վանքերը: Դիարբեքիում գտնվում է Մարիամի եկեղեցին, նախկինում եպիսկոպոսանիստ, որն առիթի դեպքում պատրիարքներին ծառայում էր որպես ամառային նստավայր: Տուրաբդինի շրջանը 1923-ից հետո ընկավ անախորժությունների մեջ, երբ քրդերը՝ իրենց ցանկացած ինքնավարությունը չստանալով, խռովություններ սկսեցին: Այդ ընթացքում բազմաթիվ քրիստոնյաներ Տուրաբդինից մեկնեցին Ստամբուլ, որտեղ հույներն ու հայերը մեծ գաղութներ էին հիմնել: Այսօր նրանք Թուրքիայում հայտնի են «Սյուրյանի» (Süryani) անվամբ: Նրանցից մոտ 20.000 մինչև այսօր ապրում են Թուրքիայում, կեսը՝ Ստամբուլում: Դեիր ալ-Չաֆարան վանքը, ինչպես եւ քրդերի գրավումից հետո 1970-ին վերաբնակեցված Մոր Գաբրիել (Զվարտամին) վանքը, 4-րդ դարից մինչև օրս մնում է ասորի քրիստոնյաների կենտրոնը Թուրքիայում, նույնիսկ այն բանից հետո, որ թուրքական կառավարությունը վանքի ճեմարանը փակեց: 1915 թ. կառավարության հրամանով վանքի բոլոր բնակիչները սպանվել էին քրդերի կողմից, որոնք Մոր Գաբրիելը պահեցին մինչև 1960 թ.: Սաբո Գյունես (Sabo Günes) արքայազն օրոք հնարավորություն

ստեղծվեց 1956-ից սկսել նորոգման աշխատանքները: Այսօր վանքում եպիսկոպոսի հետ ապրում են երկու վանական, 15 կույս եւ մոտ 40 աշակերտ, որոնք, սակայն, ցերեկը պարտավոր են հաճախել Միդիատի (Midyat) պետական դպրոցը:

1924 թ. մայիսի 19-ից մինչեւ հունիսի 6-ը Կոստանդնուպոլսի խորհրդածրոզվում քննարկվեցին Թուրքիայի ու Իրաքի միջեւ վերջնական սահմանները: Քանի որ հաստատուն սահմաններ չկային, 1922-ից բազմաթիվ «լեռնաբնակ նեստորականներ» վերադարձան իրենց հայրենիքը՝ Չակարի: Նրանցից մոտ 8000-ը մինչեւ 1923 թ. դեռ ապրում էր այնտեղ: Այդ պատճառով անգլիացիները ջանում էին, որ Իրաքի սահմանները գծվեին ոչ ի նպաստ Թուրքիայի: Անգլիացի դիվանագետ Փերսի Զոկսը (Percy Cox) փորձում էր բրիտանական զավթողական ձգտումները ներկայացնել արեւելյան ասորի քրիստոնյաների միջոցով: Լոզանում Իզմեթ փաշա Ինենյուի դիրքորոշման հակառակ, թուրք դեսպանորդ Ֆեթի բեյը (Fethi Bey) հայտարարեց, որ նեստորականները առանց այլեւայլի կարող են վերադառնալ իրենց հայրենիքը: Ի վերջո բանակցությունները ընդհատվեցին եւ վերսկսվեցին Ազգերի ընկերակցության 30-րդ նստաշրջանում՝ 1924 թ. օգոստոսի 8-ից հոկտեմբերի 3-ը: Երբ անգլիացիները հայտարարեցին, որ խոսքը ոչ մեկին չպատկանող Չակարիի շրջանի մասին է, թուրքերը բոլորին փաստի առաջ կանգնեցրին՝ թալանելով եւ այրելով մինչ այդ նեստորականների (արեւելյան ասորիների) վերակառուցած գյուղերը³¹²: Նեստորականները վերջնականապես հեռացան իրենց հայրենիքից ու բնակություն հաստատեցին Ամերիկայում եւ Յուսիսային Սիրիայում, որտեղ արեւմտյան ասորի բազմաթիվ փախստականներ թուրքական սահմանի մյուս կողմում կառուցել էին նոր հայրենիք: Ազգերի ընկերակցության 35-րդ նստաշրջանում 1925 թ. սեպտեմբերին հանձնախումբը հայտարարեց, որ Չակարիի շրջանը վեջնականապես պատկանում էր Թուրքիային, իսկ նեստորականներին խորհուրդ տրվեց ընդունել Ֆեթի բեյի առաջարկը եւ վերադառնալ իրենց հայրենիքը: Ստեղծվեց հետազոտական մի հանձնախումբ՝ գեներալ Լայդոների (Laidoner) գլխավորությամբ:

1925 թ. դեկտեմբերի 10-ին հանձնախումբը ներկայացրեց մի զեկույց, որտեղ նկարագրվում էր, թե ինչպես 3000 քաղղեացի ասորիներ թուրքերից փախել են Իրաք, եւ թե ինչ բիրտ մեթոներով էին թուրքերն իրագործում տեղահանությունը: Դրանով, Թուրքիայում փաստորեն վերացվեց արեւելյան ասորիների եկեղեցին, որն այնուհետեւ հզորացավ աքսորում: Այսպես, Նյու Յորքի արեւմուտքում՝ Նյու Ջերսիում (New Jersey) եւ Մասսաչուսեթսի Վորցեստեր քաղաքում (Worcester, Massachusetts) եպիսկոպոս (հետագայում պատրիարք) Մոր Սեվերիուս Եփրեմը 1927 թ. օծեց երկու ասորի եկեղեցի ԱՄՆ-ում:

312 Yonan (1978), 47.

1924 թ. դպրոցական համակարգի միասնականացմամբ ոչ թուրքական մասնավոր դպրոցները դրվեցին պետական հսկողության տակ, չնայած Լոզանի պայմանագրի 40 եւ 41-րդ հոդվածներով ճանաչվել էր փոքրամասնությունների՝ սեփական դպրոցներ պահելու իրավունքը: Որպես «ոչ մուսուլման փոքրամասնություններ» թուրքերը նշում էին միայն հայերին եւ հույներին, բայց ոչ ասորիներին: 1934-ին քրիստոնյաների դեմ օրենք հրատարակվեց, որով արգելվեց եկեղեցուց դուրս կրոնական զգեստ կրել: 1935 թ. փետրվարի 8-ին պառլամենտի 399 ընտրված անդամների թվում կային երկու ուղղափառ եւ մեկական հրեա ու հայ պատգամավոր³¹³: 1948 թ. դպրոցներում մտցվեց իսլամական կրոնի դասավանդում, իսկ քրիստոնեական կրոնի դասավանդում գոյություն չունեւ: Թուրքիայի կրթության նախարար Նեք դետ Ուգուրը (Nec det Ugur) Մարդիկի նահանգապետին հղած գաղտնի գրությամբ Դեիր ալ-Չաֆարանի քահանայական սեմինարիայում արգելեց ուսուցումը, իսկ 1979 թ. փետրվարի 2-ին նաեւ՝ Սոր Գաբրիել վանքում³¹⁴: 1982 թ. նույնիսկ որոշում ընդունվեց, որ քրիստոնյա աշակերտները պետք է մասնակցեն մուսուլմանական կրոնի դասերին³¹⁵: Մինչեւ 1940-ական թթ. սկիզբը քրիստոնյաները զինվորական ծառայության փոխարեն պետք է կատարեին աշխատանքային ծառայություն: Իսկ այսօր քրիստոնյաները պարտավոր են զինվորական ծառայություն կատարել հեռավոր շրջաններում եւ բանակում ենթարկվում են խտրականության: Չինվորական ծառայության կանոնադրության համաձայն քրիստոնյան իրավունք չունեւ սպա դառնալու, քանի որ նա թլփատված չէր: Չինվորական ծառայության ժամանակ քրիստոնյաներին ստիպողաբար թլփատում էին: Պետական բարձր ծառայությունները, ինչպես ոստիկանությունը կամ արդարադատությունը, նրանց առաջ փակ էին: 1956 թ. սահմանադրությունը վերանայելուց հետո, եկեղեցապատկան հողամասերը հայտարարվեցին լքյալ կալվածքներ: Եթե ծխական եկեղեցում այլեւս քահանա չկար, ունեցվածքն անցնում էր պետական գանձարանին (վակըֆ): Աշխարհակա - նացման սկզբունքի հիման վրա արգելվեց կրոնական նպատակներ հետա - պընդող միությունների հիմնումը:

Քեմալական Թուրքիան եւս, Ասիայում թուրք ցեղի առաջնության մասին իր տեսությամբ, ֆաշիստական եւ աուտորիտար համակարգ էր, իր բոլոր արդիականացումներով հանդերձ, որոնց կյանքի էր կոչել նրա հիմնադիրը: Պատմության մեջ սա միակ ֆաշիստական շարժումը չէր: Արուֆ Յիտլերը, որը ճանաչում էր Թուրքիայում նախկին հյուպատոս Շոյքերին, տեղյակ էր 1915 թ. կոտորածներից, որոնց մասին նա մասնավորապես արտահայտվել է 1931

313 Strothmann (1936), 48.

314 Rabo (2005), 9.

315 Gabriel Rabo: *Die Aramäer unter der türkisch-islamischen Herrschaft*, in: www.user.gwdg.de.

թ. մի հարցազրույցի ժամանակ: Հիտլերի առաջին փոխկանցլեր Ֆրանց ֆոն Փապենը (Franz von Pappen), 1933-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպանը, հայտարարել էր, որ հենց մերժումն այն ամենի, ինչ թուրքական չէ, պատճառ հանդիսացավ, որ քեմալական համակարգը օրինակ դառնա Գերմանիայի համար³¹⁶: Իսկ Հիտլերն անձամբ՝ 1939 թ. օգոստոսի 22-ին, Երկրորդ աշխարհամարտի բռնկումից առաջ, Վերմախտի սպաների հետ մի հանդիպման ժամանակ ասել է. «Ո՞վ է այսօր խոսում հայերի ցեղասպանության մասին»³¹⁷: Հիտլերը շարունակեց այն, ինչը Թալեաթն ու «Երիտթուրքերը» 1915 եւ 1916 թթ. դրսեւորել էին՝ գաղափարա-ցեղապաշտական պատճառներից բխող ամբողջատիրական հավակնություններ, որոնք ներառում են ցեղասպանություն: Եւ այսօր դա իրավացիորեն աշխարհով մեկ որակվում է որպես ցեղասպանություն:

Թուրքիան իր տարածքների ընդարձակման վերջին հնարավորությունն ստացավ 1939 թ., երբ Ֆրանսիան Թուրքիային զիջեց Իսկենդերուն սանջակը՝ Անթակիայով (Անտիոք) հանդերձ, որպեսզի շահի Թուրքիային որպես զինակից նացիստական Գերմանիայի դեմ: Դրա հետեւանքով 14.000 հայ կրկին ընկավ է թուրքական տիրապետության տակ: Շատերը հեռացան իրենց հայրենիքից եւ հիմնեցին նոր գյուղեր, ինչպես Անճարը (Anjar)՝ Լիբանանի Բեքայի (Beeka) հովտում, որտեղ այսօր էլ ապրում է 2400 հայ, եւ Զեսաբը (Kessab)՝ Սիրիայում: Միայն Հաթայ (Hatay) գավառի հարավում, Մուսա լեռան հարավային ստորոտին գտնվող Վազըֆ (Vakifli) գյուղի հայերը, եւ մի խումբ էլ Անթաքիայի (Անտիոք) հայերից, մնացին իրենց հայրենիքում: Վազըֆում մինչեւ օրս էլ կա 38 տուն հայ բնակիչ, որոնք զբաղվում են ցիտրուսային մրգերի մշակությամբ: Ամենամյա ուխտագնացությունը դեպի Մուսա լեռան վրա գտնվող Մարիամ եկեղեցին դժվար կասեցնի հայերի ուձացումը, քանի որ ըստ սահմանադրության 42-րդ հոդվածի, որը ուժի մեջ է մտցրել թուրքական զինվորականությունը 1982-ին, Թուրքիայում ուսուցումը տարվում է միայն թուրքերենով:

1923-ին Մուստաֆա Զեմալի հիմնած «Աթաթուրք» ժողովրդական կուսակցությունը մինչեւ 1946 թ. միակ թույլատրված կուսակցությունն էր: Միայն Աթաթուրքի հետևորդ Ինենյուն էր, որ 1946 թ. թույլատրեց ընդհանուր ընտրական իրավունք ու բազմակուսակցություն: Թուրքական պատմագրությունը՝ հետեւելով պատմաբան Էսատ Ուրասին (Esat Uras), որը 1951 թ. հրատարակ էր հանել իր ստվարածավալ աշխատությունը Հայկական հարցի մասին (անգլերեն հրատարակությունը՝ The Armenians in History and the Armenian Question, Istanbul 1988), մինչ օրս ժխտում է իրողությունները: Թուրք պատ -

316 Kieser-Schaller (2003), 60

317 Wolfgang Gust: Die Verdrängung des Völkermords an den Armeniern. Ein Signal für die Shoah, in: Kieser-Schaller (2003), 463-480, hier 476f.

մաբանները միայն աստիճանաբար ըմբռնեցին, որ ընդունելով Աթաթուրքի ներկայացրած պատմության աղավաղումները, ինչպես օրինակ, որ իբր թուրքերն են Փոքր Ասիայի բնիկները, եւ կամ որ իբր «տեղահանումները» եղել են միայն հայերի՝ թուրքերի հանդեպ իրագործած ջարդերի հետեւանքը, նրանք դուրս են մնում միջազգայնորեն համաձայնեցված պատմական հետազոտությունների շրջանակից: Թուրքական պատմագրության համար ճանապարհը դեպի Եվրոպա եւ միջազգային բանավեճը երկար է լինելու: Թուրքերը դեռ շատ անելիք ունեն, նախքան իրենց տեղը եվրոպական հասարակության մեջ գտնելը:

1960, 1970 եւ 1980 թթ. զինվորականությունը խռովություն բարձրացրեց եւ նշանակեց առտորիտար կառավարություններ: Յույն ուղղափառ պատրիարքությունը մտաց Ստամբուլի Ֆանարում (Ֆեներ) (Phanar/Fener), հարկային պաշտոնյաների եւ պերճախոս դիվանագետների (Fanarioten) թաղամասում: Այնտեղ 1881 թ. կառուցված հունական համալսարանը մինչեւ օրս իր դրոշմն է թողել թաղամասի վրա: Երբ պատրիարքը 1586 թ. հարկադրված հանձնեց Պամակարիստոս (Pammakaristos) վանքը (այժմ՝ Ֆեթիե Չամիի - Fethiye Camii), 15 տարի անց Ֆանարը դարձավ Տիեզարական պատրիարքության նստավայրը: 1720 թ. կառուցված Սուրբ Գեորգի (Hagios Georgios) եկեղեցու մեջ գտնվում է 11-րդ դարի Սուրբ Առաջնորդող Աստվածածնի (Theotokos Hodegetria) ձեռնակիր սրբապատկերը: 1941 թ. կայծակի հարվածից ավերվեց Ֆանարի եկեղեցին: 1989-ին հանդիսավորությամբ բացվեց նորոգված կառույցը: Թուրքիայում բնակվող հույներին թուրքերը տալիս են «ռում», իսկ նրանց լեզվին՝ «ռումշա» անունը: Այսօր Ֆանարին պատկանում է 58 եկեղեցի՝ 19 սեփական դպրոցներով, բազմաթիվ մանկատներ ու մի հիվանդանոց: Ստամբուլում 1925-ից լույս են տեսնում հունական «Ապոյեմմատինի» (Apo-yevmatini) թերթն ու «Իհո» (Iho) ամսագիրը: 1922 թ. Ստամբուլում դեռեւս ապրում էին 280.000 հույներ, որոնցից միայն 111.200 հոգի մնալու իրավունք ստացավ³¹⁸, իսկ մնացածին հարկադրեցին արտագաղթել Յունաստան:

1960 թ. տեղի ունեցավ դիվանագիտական հարաբերությունների հաստատում Վատիկանի ու Թուրքիայի միջեւ: Մինչեւ 1971 թ. Թուրքիայում ուղղափառ եկեղեցին կարողացավ պահպանել աստվածաբանական ճեմարանը Յալկի կղզու վրա, որն ի վերջո փակվեց պետության կողմից: Այնուհետեւ՝ դպրոցի նախկին գործունեությունը վերականգնելու բոլոր փորձերը ձախողվել են: Այսպիսով, քահանաների պատրաստության հարցը դժվարացավ, քանի որ քահանաներն իրենց կրթությունը պետք է ստացած լինեն Թուրքիայում: Թուրքիայի չորս եպարքոսության կողքին՝ պատրիարքությանը ենթարկվում

318 Faruk Sen (Hg.): Das ethnische und religiöse Mosaik der Türkei und seine Reflexionen auf Deutschland, Münster 1998, 61.

են նաեւ Կրետեն, Ռոդոսը, Դոդեկանեսի կղզիները եւ Աթոսը: Ուղղափառ պատրիարքությունը 1966-ից ժնեւի մոտակայքում գտնվող Չամբեսի (Chambésy) վայրում ունի ուսումնական մի կենտրոն: 1948 թ. պատրիարքությունը Աթենագորաս Առաջինի (Athenagoras I.) (1948-1972) գլխավորությամբ Եկեղեցիների Տիեզերական Խորհրդի հիմնադիր անդամ էր:

Աթենագորաս Առաջինը իրավամբ համարվում է «20-րդ դարի ուղղափառության մեծագույն անհատականությունը»³¹⁹: 1931-ին նա դարձավ ուղղափառների արքեպիսկոպոսը ԱՄՆ-ում, որտեղ 1948 թ. ընտրապայքարի մեջ մտավ հոգուտ իր բարեկամ Յարրի Ս. Թրումանի, որը որպես նախագահ իր հերթին թափ հաղորդեց պատրիարքի նրա թեկնածությանն ու ընտրությանը: Աթենագորասն իր պաշտոնավարման առաջին թռիչքը կատարեց նախագահի ինքնաթիռով: Երկար տարիներ մնալով Արեւմուտքում, նա ձեռք էր բերել մեծ հեռատեսություն եւ մեծ ընդունելություն գտավ նաեւ Թուրքիայում, չնայած որ թրքահպատակ չէր: Ընտրվելուց հետո, նա պաշտոնական այցով գնաց Թուրքիա՝ պետության նախագահ Իսենյուլի մոտ: Սա Տիեզերական որբէ պատրիարքի առաջին այցն էր Անկարայի կառավարություն: 1959-ին՝ երկար տարիներից հետո, առաջին անգամ լինելով, պատրիարքը թողնում էր Ֆանարը: Աթենագորասը այցելեց Երուսաղեմ, Կահիրե, Ալեքսանդրիա, Բեյրութ ու Դամասկոս: Նա կապեր հաստատեց Յովաննես Զսաներեքերորդ պապի հետ եւ ընթացք տվեց տիեզերական երկխոսություններին: 1961 թ. տեղի ունեցավ համայն ուղղափառների առաջին խորհրդածողովը: Ասորի եւ ուղղափառ պատրիարքների միջեւ երկար դարերի թշնամությունից հետո Յակոբ Երրորդ Սեւերուսը (Jakob III. Severus) 1963-ին այցելեց Ֆանար: Դրանով մի կողմ երկխոսության սկիզբ դրվեց ուղղափառների ու «հակոբիկների» միջեւ:³²⁰ Ռոդոսի համայն ուղղափառների խորհրդածողովում եկեղեցիները որոշում ընդունեցին հավասար հարթության վրա երկխոսություն սկսել Յոնի հետ: 1964 թ. հունվարի 6-ին Աթենագորասը Երուսաղեմում հանդիպեց Պողոս Վեցերորդ (Paul VI.) պապին եւ կաթոլիկ եկեղեցու հետ հաշտեցման ճանապարհի հարթեց: 1965 թ. դեկտեմբերի 7-ին եկեղեցիների պարագլուխները՝ բանադրանքը (եկեղեցու հաղորդության մերժումը) հայտարարեցին անցյալի պատմություն³²¹: 1967 թ. հուլիսի 27-ին Պողոս Վեցերորդը այցելեց Ստամբուլի Տիեզերական պատրիարքին, որը պատասխան այց կատարեց 1967 թ. հոկտեմբերի 28-ին: 1979 թ. Յովաննես Պողոս Երկրորդ (Johannes Paul II.) պապը այցելեց Ստամբուլ Դիմիտրիոս Առաջին (Dimitrios I.) պատրիարքին: 1980 թ.

319 Étienne Fouilloux: “Die Atempause (1939-1958)”, in: *Geschichte des Christentums*, Bd. 12: *Erster und zweiter Weltkrieg. Demokratien und totalitäre Systeme* (1914-1958), Freiburg-Basel Wien 1992, 1023.

320 Spuler (1968), 285.

321 Dietmar W. Winkler – Klaus Augustin: *Die Ostkirchen*, Graz 1997, 29.

Պատմոսում եւ Ռողոսում սկսվեց պաշտոնական երկխոսություն Յոմփ եւ Կոստանդնուպոլսի միջեւ³²²: 1987 թ. դեկտեմբերին պատրիարք Դիմիտրիոսը (Dimitrios) այցելեց Յոմփ Յովհաննես Պողոս Երկրորդ պապին: Նրա հետևորդ Բարդուղիմեոս Առաջինը (Bartolomaios I.) 1994 թ. ապրիլի 19-ին ելույթ ունեցավ Շթրասբուրգում Եվրապաառլամենտի առաջ, որտեղ շեշտեց. «Մենք ծառայում ենք 17 հարյուրամյա մի ավանդության, որի ընթացքում հոգ ենք տարել եվրոպական մշակույթի միասնության ու պահպանման համար ու պայքարել հանուն դրա: Նոր Յոմփի (Կոստանդնուպոլսի) հարգարժան պատրիարքությանը, ինչպես նաև եվրոպական մյուս բեւեռին՝ Յին Յոմփին, բախտ չի վիճակվել այդ միասնությունը տեսանելի դարձնել: Դա մեզ մեծ վիշտ է պատճառում: (...) Չնայած եվրոպական պատմության հիմնարար բոլոր հեղաշրջումներին, Յին եւ Նոր Յոմփը առաջվա նման Եվրոպայի մշակույթի միասնության սյուններն են»³²³: Երկրորդ աշխարհամարտից հետո, Տիեզերական պատրիարքության դիրքն աշխարհում ավելի հզորացավ:

Յուլյերի թիվը Թուրքիայում 1922-ից ի վեր մշտապես նվազում է: 1930-ական թթ. Աթաթուրքը ջանում էր Թուրքիան հաշտեցնել հույների հետ: Ավելի ուշ լարումն ուժեղացավ Կիպրոսի շուրջ վեճի պատճառով: Սալոնիկում Աթաթուրքի հայրական տան ռմբակոծման եւ դրան հասցված վնասից հետո, որը վերագրվեց հույներին, իսկ իրականում թուրքական գաղտնի ծառայությունների ձեռքի գործն էր, 1955 թ. սեպտեմբերի 6-7 տեղի ունեցան «Istanbuler Kristallnacht»³²⁴ ջարդարար հարձակումներ հույների վրա, որոնք խըմբերով լքեցին Թուրքիան: Այդ օրերին ավերվեց 80 եկեղեցուց 73-ը, 26 հունական եւ 8 հայկական դպրոց, 5 սպորտային ակումբ, 4348 խանութ, 27 դեղատուն եւ 110 ռեստորան, սրճարան եւ հյուրանոց, որոնք պատկանում էին հույներին, զոհվեծ 16 եւ վիրավորվեց 32 հոգի, իսկ Նյութական վնասը կազմում էր 270-360 միլիոն դոլար³²⁵: Լքվեցին բազմաթիվ եկեղեցիներ ու տներ, ավելի քան 100.000 հույն գաղթեց Յունաստան: Սեփականության հարցը մինչեւ օրս լուծված չէ: Յուլյերի թիվը Ստամբուլում նվազել է 50-60 հազարի: Պատրիարքությունն էլ հազիվ փրկվեց արտաքսվելուց, շնորհիվ Աթենագորասի՝ Թուրքիայի հանդեպ ունեցած նկիրվածության, որի համար

322 Grigorios Larentzakis: “10 Jahre offizieller Dialog zwischen orthodoxer und katholischer Kirche – Eine Bilanz”, in: *Pro Oriente*, Innsbruck-Wien 1994, 46-77.

323 Orthodoxes Forum 8, 1994, 239f, մեջբերում բառ: Gregorios Larentzakis: “Das einheitliche Imperium Romanum und die polyzentrische Struktur der Kirche innerhalb des Imperiums”, in: *Grazer Theol. Studien* 21, 1996, 50-77, hier 72f.

324 “Kristallnacht”, այսինքն “կոտորած ապակիների գիշեր” արտահայտությունը պատմականորեն վերաբերում է նացիստական Գերմանիայում եւ Ավստրիայում տեղի ունեցած՝ 1938 թ. նոյեմբերին՝ Հրեաների վրա անավոր Հարձակումներին: Այստեղ՝ Համեմատություն Հույների վրա 1955 թ. ստամբուլյան Հարձակումների հետ:

325 Genocide against the Bulgarian, Greek, Armenian, Cypriot and Kurdish People, Sofia, o.J., 19.

հույները հիասթափված էին նրանից: Տասու Բուլմետիսի (Thasos Boulmetis) «Դարչին եւ համեմ» (Zimt und Koriander) ֆիլմը (2003) ներկայացնում է 1955-ի իրադարձությունները՝ հաշվի առնելով երկու կողմի տեսակետները: Ֆիլմը ցույց է տալիս, որ թուրքերի ու քրիստոնյաների միջեւ բախումն աստիճանաբար մշակվել է տարբեր հարթություններում: 1963-ին Կիպրոսի ճգնաժամի հետեւանքով տեղի ունեցավ հարաբերությունների հետագա սրում: 12.000 հույն արտաքսվեց պետական դավաճանության եւ Թուրքիայի հանդեպ անհավատարմության մեղադրանքով: 50-ամյա տարելիցի կապակցությամբ թուրքական «Ռադիկալ» թերթը հաղորդեց, որ ժամանակը եկել է, որ այս սխալները «պատմականորեն վերանայվեն»: Այսօր մոտ 3.500 հույն դեռեւս ապրում է Թուրքիայում, որից 2.500-ը՝ Ստամբուլում եւ մոտ 500-ը՝ Մարմարա ծովի հշխանական կղզիների վրա:

Ստամբուլի Հայոց պատրիարքարանը պահպանվում է մինչեւ օրս: Նրան ենթակա է 35 եկեղեցի: Այսօր հայերի թիվը պաշտոնապես մոտ 70.000 է, որի մեծ մասն ապրում է Ստամբուլում: Հայաբնակ են նաեւ վերոհիշյալ հայկական Վազըֆ գյուղը՝ Մուսա լեռան փեշերին, Իսկենդերումի մոտ: Հայ առաքելական եկեղեցին, որը 1903 թ. ուներ մոտ 1000 դպրոց, այսօր պահում է 21 դպրոց եւ մեկ հիվանդանոց: Մոտ 3500 հայ պատկանում է «Հայ կաթոլիկ եկեղեցուն», որը Ստամբուլում իր տրամադրության տակ ունի երեքից ավելի եկեղեցի, ինչպես նաեւ սեփական դպրոցներ եւ ընկերային հիմնարկներ: Նախկին հայկական բնակավայրերում պետք է որ դեռ մնացած լինեն մոտ 150.000 հայեր, որոնք բացահայտորեն չեն խոստովանում իրենց ազգային պատկանելությունը³²⁶: Հրատարակվում է նաեւ երեք սեփական շաբաթաթերթ, դրանցից «Ժամանակը», որը Թուրքիայում 1908-ից ի վեր պահպանված ամենահին թերթն է, եւ «Մարմարան» լույս են տեսնում հայերեն, իսկ «Ակոսը»՝ երկու լեզվով՝ հայերեն եւ թուրքերեն: Դրանք տեղեկություններ են հաղորդում նաեւ Հայաստանի ու հայկական Սփյուռքի մասին:

Թուրքիայի Հաթայ գավառում եւ մերձակա մեծ քաղաքներ Իսկենդերու-նում եւ Ադանայում ապրում է մոտ 7000 քրիստոնյա արաբ: Երբ Հաթայ գավառը 1938 թ. անցավ Թուրքիային, այդտեղից շատ քրիստոնյաներ գաղթեցին Լիբանան ու Սիրիա, նաեւ՝ ԱՄՆ, Կանադա, Արգենտինա ու Վենեսուելա: Այդ «մելքիտները» ենթարկվում էին Անտիոքի պատրիարքությանը, որի նստավայրն այսօր Դամասկոսում է: Մելքիտները Թուրքիայում պաշտոնապես իբրեւ փոքրամասնություն չեն ճանաչվում: Արաբերենով գրքեր ու թերթեր չեն հրատարակվում, արաբերենը դպրոցներում չի դասավանդվում:

326 Jasmine Dum-Tragut: Verstreutes Volk und ferne Heimat, in: „...Aber unvergänglich sind wir wie unsere Berge“. Armenien, hg. v. Erich Renhart u. Jasmine Dum-Dragnet, Graz-Wien 1997, 53-61, hier 5.

16. Կիպրոսի կոնֆլիկտից մինչև քրիստոնյաների վիճակն այսօրվա Թուրքիայում

Կիպրոսի անկախությունից հետո (1960) 1974-ին տեղի ունեցավ հունա-կիպրական ազգային գվարդիայի խռովություն, իսկ այնուհետև Թուրքիայի կողմից կղզու հյուսիսային մասի գրավում: Թուրքերը զավթեցին կղզու 37 տոկոսը եւ հռչակեցին «Հյուսիսային Կիպրոսի Հանրապետությունը», որը միջազգային ճանաչում չստացավ: Դրան հաջորդեցին հայկական գաղտնի շարժման՝ ԱՍԱԼԱ-յի (Հայաստանի ազատագրման հայկական բանակ) ահաբեկչական մահափորձերը: Կիպրոսի հարցը մինչ օրս լուծում չի ստացել, մի բան, որ խորացնում է լարվածությունը Թուրքիայում ապրող քրիստոնյաների ու մուսուլմանների միջև:

Տուրաբդինում (Մարդինի գավառ) քրդերի բախումը թուրքական պետու-թյան հետ եւ բանակի ու Քրդական աշխատավորական կուսակցության (PKK = Partiya Karkerên Kurdistan) միջև պայքարը 1970-ական թթ., հանգեցրին բազմաթիվ ասորի քրիստոնյաների արտագաղթին Գերմանիա, Շվեդիա եւ Նիդերլանդները: Ասորական թեմը ԱՄՆ-ում եւ Կանադայում³²⁷ ընդգրկում է մոտ 100.000 հավատացյալ: 1976 թ. փետրվարի 26-ին շվեդական կառավարությունը Թուրքիայից արտագաղթած 8000 ասորիներին տվեց մշտական բնակության արտոնություն: Նրանց մեծ մասը ապրում են in Ստոկհոլմի մոտ Չոդերտեյեում (Södertälje), որտեղ յուրային մի եպիսկոպոս սպասարկում է Սկանդինավիայի մոտ 25.000 ասորիների: Մոտավորապես 150 ընտանիք՝ 700 անդամներով տեղափոխվեց Ավստրիա, որտեղ 1977 թ. նրանց դիմավորեց պատրիարք Մար Իգնատիոս Յակոբ Երրորդը (Mar Ignatius Jakob III.)³²⁸: Գերմանիա կատարած իր այցի ժամանակ պատրիարքը վանական Իսա Յուլիոս Յեշու Չիչեքին (Isa Julius Yeshu Cicek) նշանակեց Եվրոպայում պատրիարքի տեղապահ: Ավելի ուշ Չիչեքը դարձավ եպիսկոպոս: Նա հիմնեց Բարհեբրեուս (Barhebräus) հրատարակչությունը Նիդերլանդների Լանե Գլոսեր (Lane Glosser) բնակավայրում, որտեղ 1981-ին կառուցվեց նաեւ ասորական Սոր Եփրեմ վանքը: Արեւմտյան սփյուռքում գործող 67 եկեղեցի-ներից ու վանքերից 51-ը կառուցվել է եպիսկոպոս Չիչեքի շնորհիվ: 1981 թ. «ասորի ուղղափառ եկեղեցին», ինչպես իրենց անվանում են հակոբիկները, Նիդերլանդներում ճանաչվեց որպես կրոնական համայնք: Ասորի քրիստո-

327 Aydin (1990),138.

328 Yonan (1978), 209

նյաները մուտք գործեցին նաեւ Շվեյցարիա եւ Յունաստան: Նախկին լարվա - ծություններն այստեղ եւս առկա էին: Բելգիայի հույն ուղղափառ եկեղեցին փորձում էր խանգարել ասորի ուղղափառ եկեղեցուն՝ գրանցվելու որպէս «ուղղափառ»: Այսօր Թուրքիայում դեռեւս գոյություն ունի երեք ասորի ուղղափառ եպիսկոպոսանիստ. Ստամբուլում, որտեղ ապրում են 15.000 «ասորիներ», Մարդին/Դեյր ալ-Զաֆարանում եւ Միդիատ/Տուրաբոքիում: Հռոմի հետ միաբան քաղղեացիների, ասորիների, հայերի եւ լատինների թիվը կազմում է մոտ 20.000:

1960-ականներից տիեզերական շարժման շնորհիվ կատարվեց Թուրքիայում բնակվող քրիստոնյաների պատմության ու մշակույթի առավել գործուն հետազոտություն, ինչպէս նաեւ բարեգործական ծրագրերի զարգացման հետեւանքով՝ բարեգործական միջոցառումների ընդլայնում: Դրա մասին 1984-ին Յելգա Անշյուցը (Helga Anschütz), որը 1965-ից աշխատում է Տուրաբոքիում, հրատարակել է հիմնարար մի մենագրություն³²⁹: Նրա ղեկավարած «Մոր Գաբրիել» ընկերությունը, որն ուներ իր սեփական ամսագիրը, Ռայնբեկում (Reinbek) տասնամյակներ ի վեր օգնում է Տուրաբոքիի քրիստոնյաներին: Իր լրագրողական գործունեության եւ բազմաթիվ փաստագրական ֆիլմերի միջոցով ընկերությունը նպաստել է տեղի մշակույթի վավերագրմանը:

1972 թ. Մայնցում վերահիմնադրվեց գործունեությունը վաղուց դադարեցրած «Գերմանա-հայկական ընկերությունը»: Ավստրիայի Լինց քաղաքից ???????? Հանս Հոլլերվեգերը (Hans Hollerweger) հիմնեց «Նախաձեռնություն Զրիստոնյա Արեւելք» ընկերությունը եւ տարիներ շարունակ հավաքեց նվիրատվություններ, որոնց հասույթով բարելավեց Տուրաբոքիի ենթակառուցվածքը եւ նպաստեց փախստականների վերադարձին իրենց հին բնակավայրերը: Տուրաբոքիի մասին նրա եռալեզվյա գիրքը կամուրջ հանդիսացավ վտարանդիների ու բնօրրանում մնացած քրիստոնյաների միջեւ³³⁰:

Թուրքիայում քրիստոնյաները մինչեւ օրս պետության հսկողության տակ են: Լսվում են նույնիսկ քահանաների հեռախոսները: Բոհթանի (Bohtan) բարձրավանդակում մի երկվեցյակ գյուղեր նախկինում պատկանում էին Հռոմի հետ միաբան քաղղեական եկեղեցուն: Նրանք պահել են իրենց կենտրոնական ասորական բարբառը, սակայն չունեն ոչ է կեղեցիներ, ոչ էլ քահանաներ: Նրանց հոգեւոր սպասարկումը կատարում են Տուրաբոքիի քահանաները, որոնք տարին մեկ կամ երկու անգամ դժվարին ճանապարհորդությունն են կատարում՝ այնտեղ հասնելու համար: Դժվարություն է հարու-

329 Helga Anschütz: *Die syrischen Christen vom Tur Abdin. Eine altchristliche Bevölkerungsgruppe zwischen Beharrung, Stagnation und Auflösung*, (1984) ND Würzburg 1985

330 Hans Hollerweger: *Lebendiges Kulturerbe. Living Cultural Heritage. Canli Kültür Mirasi*, Linz 1999.

ցում նաեւ մշակութային արժեքների ապահովման հարցը: 1832-ին աստվածաբան Սաութգեյթը՝ (Southgate) Դեյր ալ-Չաֆարան վանքում հայտնաբերեց «ասորական ամենամեծ գրադարանը, որտեղ պահպանվել էին գրքեր՝ 12 լեզուններով»: 1840-ից հետո Բուջերը (Budger) այստեղ գտավ ավելի քան 100 ձեռագրեր, որոնք վերաբերում են 1000-ական թթ., իսկ ասորագետ Չախաուն (Sachau) 1880-ական թթ. հայտնաբերեց մագաղաթյա միայն 15-20 գիրք գրված 900-ական թթ. առաջ³³¹: 2004-ին Դեյր ալ-Չաֆարան վանքն այցելեց Ուելսի (Wales) արքայազն Չարլզը: Այսօր նոր արբահայր-եպիսկոպոս Ֆիլոկսենոս Սալիբա Օզմենը (Filoksenos Saliba Ozmen) ջանում է մուսուլմանների շրջապատում եւս հետաքրքրություն ու հասկացողություն արթնացնել վանքի նկատմամբ, ուր այցելության են գալիս նաեւ բազմաթիվ մուսուլմաններ: Պետության նախագահ Սուլեյման Դեմիրելին մտքերի փոխանակության համար ընդունել է եպիսկոպոսներ Տիմոթեոսին (Timotheos) Տուրաբդիկից եւ Ֆիլոկսենոս Յուսուֆ Չեթինին (Filoksenos Yusuf Cetin): Ստամբուլի ասորի քրիստոնյաներին սպասարկում է եպիսկոպոս Ֆիլոկսենոսը, հայերին՝ պատրիարք Մեսրոպը, որը վերջերս վարչապետ Ռեջեպ Թայյիպ Էրդողանի (Recep Tayyip Erdogan) հետ բացեց առաջին հայկական թանգարանը Թուրքիայում: Մոր Գաբրիել (Զվարտամին) վանքը 1974-ից գտնվում է արբահայր-արքեպիսկոպոս Տիմոթեոս Ակտասի (Timotheos Aktas) ենթակայության տակ: Գերմանիայի Հոֆգայզմար (Hofgeismar) բնակավայրում գտնվող Ավետարանական ակադեմիան 1997 թ. կազմակերպեց իր հիմնադրման (397 թ.) 1600-ամյակին նվիրված հանդիսություն: Հարաբալեից (Harabale) հարավ ընկած Մոր Մալկե (Mor Malke) վանքը եւս բազմիցս ավերվել է, վերջին անգամ 1981-ին՝ քրդերի կողմից: Սալահի (Salah) Մոր Յակուբ (Mor Jakob) վանքն՝ իր 7-13-րդ դարերի արձանագրություններով, մինչեւ 1966 թ. մեծապես ավերված էր: Միդիատի ծայրամասում գտնվող Մոր Աբրահամ (Mor Abraham) վանքում մնացել են միայն մի քանի վանականներ: Արվեստի գործերից ու ձեռագրերից շատ քիչ բան է պահպանվել այս վանքերում: Վախից, որ պետությունը իրեն ցից ձեռագրերը կխլի, վանականները դրանք չեն սիրում ցույց տալ օտարներին: Ասորի քրիստոնյաների սեփականություն հանդիսացող ձեռագրերից ամենաարժեքավորն են Մարդինի Դիոսկորոս Թեոդորոսի (Dioskoros Theodoros) (13-րդ դար) եւ Հահի (Hah) ավետարանները, երկուսն էլ զարդարված ճոխ մանրանկարներով: Սոսկ 14 հոկոբիկյան ձեռագրեր, որոնց մեծ մասը ստեղծվել է Մարդինի գավառում, գտնվում են Գերմանիայում³³²: Նկատի ունենալով արձանագրություններին, եկեղեցիներին եւ այլ արժեքներին այսօր էլ սպառնացող վտանգը՝ նշանակալից պետք է համարել Տուրաբդիկի

331 Anschütz (1985), 157

332 Julius Assfalg: *Syrische Handschriften*, (= Verzeichnis der orientalischen Handschriften in Deutschland 5), Wiesbaden 1963, XIII.

վաղ պատմությանը նվիրված Անդրու Պալմերի (Andrew Palmer) ուսումնասիրությունը³³³: Թուրքիայում այսօր էլ քրիստոնյաները չունեն հին գրադարանների բեկորները պահպանելու ապահով մի վայր, որն ազատ լիներ պետության տնօրինումից:

Թուրքիայի քրիստոնյաների համար մինչև օրս մեծագույն մտահոգություն է ազգային դպրոցների անկախության բացակայությունը: 1978 թ. Ստամբուլի Հայոց պատրիարք Շնորհք Գալստյանը պատրաստեց Հայ եկեղեցու վիճակի մասին տարեկան հաշվետվություն, որը մարտի 29-ին հանձնվեց վարչապետ Էջեփտին: Այն պարունակում էր բողոքի 22 կետեր, որոնք հատկապես վերաբերում էին դպրոցական համակարգին: Էջեփտը խոստացավ բողոքը քննել, սակայն ոչինչ չփոխվեց: Երբ 1981 թ. հայերն ու հույն ուղղափառները՝ խոշոր նվիրատվությամբ եւ հուշատախտակի տեղադրմամբ մասնակցում էին Աթաթուրքի ծննդյան 100-ամյակին, հայ պատրիարքը՝ օգտագործելով դրամի հանձնման առիթը, ակնարկեց ազգային դպրոցում ճնշում գործադրելու քաղաքականության մասին: Օրինակ, որ Անկարան հաճախ մինչև մեկ տարի ձգում է ուսուցիչների ու դպրոցի տնօրենների իրենց պաշտոնում հաստատվելու գործընթացը³³⁴: Նույն դժգոհությունը հայտնեցին հույն ուղղափառ եւ արեւմտյան ասորիների եկեղեցիները: Այստեղից էլ քրիստոնյաների սպասումները Եվրամիության բանակցություններից, որոնց նպատակն էր ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որպեսզի պահպանվեին Լոզանի պայմանագրով հաստատված փոքրամասնությունների իրավունքները:

Հռոմի հետ միաբան քրիստոնյաների վիճակը Թուրքիայում փոքր-ինչ ավելի լավ է, քանի որ Թուրքիայում պապը շատ ավելի մեծ հարգանք է վայելում, քան Արեւելքի պատրիարքները: Կաթոլիկ եկեղեցին Ստամբուլում եւ Իզմիրում ունի երկու եպիսկոպոսություն՝ մոտավորապես 12.000 հավատացյալներով, որոնցից գրեթե 8000-ը Ստամբուլում է ապրում³³⁵: 1975-ին մոտավորապես 50 քահանայի եւ 150 մայրապետների խնամակալության տակ գտնվում էր 11 գիմնազիա (հինգը տղաների՝ 3000 աշակերտով, վեցը աղջիկների՝ 2000 աշակերտուհիներով): Դպրոցներն ու հիվանդանոցները գտնվում են Ստամբուլում եւ Իզմիրում: Ստամբուլի հայ կաթոլիկ եկեղեցին գլխավորում է մի հայ արքեպիսկոպոս՝ չորս ծովուով եւ մոտ 8000 հավատացյալով: Հռոմի հետ միաբան ասորիներին Ստամբուլում ծառայում է մի առաջնորդական տեղապահ: 1975 թ. երկրի հարավարեւելքում ապրում էին մոտ 4000 հա-

333 Andrew Palmer: *Monk and mason on the Tigris Frontier. The early history of Tur Abdin*, Cambridge-London 1990.

334 Tessa Hofmann: *Armenien. Völkermord. Vertreibung. Exil* (1987), 74-83 u. 111.

335 Xavier Jacob: "Das Christentum in der heutigen Türkei", in: *Stimmen der Zeit*, April 1974, 237-336. Barbara Coudenhove-Kalergi: Die Türkei lesen, in: *Der Standard*, 5.9.2005, 23.

վատացյալներ, որոնցից շատերը ցանկանում էին արտագաղթել: Ահա այս վիճակի մասին Դիարբեքիրում ծառայող քահանա Յուսուֆի եզրահանգումը. «Մենք այստեղ այլևս ապագա չունենք»: Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում եւ Տարսնում կան նաեւ բողոքական եկեղեցիներ՝ իրենց դպրոցներով. դրանց թվում են նաեւ ավետարանական եկեղեցիներ՝ հայոց լեզվով եւ հայկական ծագումով: Այս եկեղեցիները նույնպես գոյատևում են ամենից առաջ Եվրոպայից եւ ԱՄՆ-ից ստացվող նվիրատվություններով. այստեղ դեռ-եւս շարունակվում է 19-րդ դարից սկիզբ առած բողոքական միսիոներության ազդեցությունը:

Թուրքական իշխանությունների՝ 19-րդ եւ 20-րդ դարերի կոտորածների համառ ժխտումը աշխարհի բազմաթիվ պետություններում առաջ բերեց գո-հերի հետ համերաշխության այլք: Այստեղ առաջին հերթին կարելի է հիշատակել ԱՄՆ-ին, Մեծ Բրիտանիային ու Շվեյցարիային, բայց նաեւ Գերմանիային, որտեղ այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են Յալլեի Յոհաննես Լեփսիուսի արխիվը, կամ Բոխումի Ռուր-Յամալսարանում Սփյուռքի եւ Ցեղա-սպանության հետազոտությունների ինստիտուտը, որի տնօրեն Միհրան Դաբաղը՝ ինքն էլ լինելով վերապրողների զավակ, 1988-ից մինչեւ 1996 թթ. հարցազրույցներ է վարել եւ փաստագրել 1915 թ. կոտորածները վերապրած 140 անձանց հետ: 1987-ին Եվրոպական պառլամենտը 1915-17 թթ. կոտորածները ճանաչեց որպես ցեղասպանություն: Դա չկասեցրեց Անկարայի համալ-սարանի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչին՝ թուրք պատմա-բան Թյուրքկայա Աթայովին (Türkkaya Ataöv), հանդես գալու հրապարակումներով, որոնց մեջ հայերի նկատմամբ իրագործված միջոցառումները ներկայացվում են որպես օսմանյան պետության անվտանգության համար նախազգուշական միջոցառումներ:

Վերջին տարիներին Թուրքիայում պաշտոնական քաղաքականության սահմանափակության կողքին նկատվում են առաջընթացի որոշ նշաններ: Թաներ Աքչամի (Taner Akcam) «Հայաստանը եւ ցեղասպանությունը» գիրքը (1996) առաջին օրինակն է այն բանի, որ թուրք պատմաբաններն այլևս միացյալ ուժերով չեն պաշտպանում կոտորածների ժխտման պետական պաշտոնական գաղափարախոսությունը: 1997 թ. Հայաստանի գծով փորձա-գետ դ-ր Յիվմար Զայգերին ցմահ արգելվեց մուտքը թուրքական արխիվները: 2000 թ. դեկտեմբերի 21-ին Դիարբեքիրում պետական անվտանգության դա-տարանի երկրորդ ատյանում սկսվեց երկրորդ դատավարությունը ընդդեմ ասորի ուղղափառ քահանա Յուսուֆ Ակբուլուտի (Yussuf Akbulut): Նա կանգ-նած էր դատարանի առաջ «ժողովրդին հրահրելու» մեղադրանքով: 2000 թ. հոկտեմբերին «Յուրիյեթ» թերթի երկու լրագրողների մոտ նրա՝ մտերմաբար արտահայտած կարծիքը Թուրքիայում 1915 թ. հայերի ու ասորիների ցեղաս-պանության մասին, հրապարակվեց «Դավաճանը մեր մեջ» խորագրի տակ: Լրագրողները՝ առանց նրա գիտության տեսագրել էին նրա խոսակցությունը

եւ ուղարկել թուրքական հեռուստատեսություն: Նա մեղադրվեց թուրքական քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով, քանի որ «ժողովրդին բացահայտող և րեն ատելության էր հրահրել՝ խտրականություն դնելով մարզերի, դասակարգերի, ցեղերի եւ կրոնների միջեւ»: Դրա համար նախատեսվում է մինչեւ հինգ տարվա ազատազրկման խիստ պատիժ: Թուրքական քրեական օրենսգրքի հիշյալ 312-րդ հոդվածը հուսալի միջոց է կանխելու թուրքերի պատմության մութ էջերի բացահայտումը եւ հատկապես հայերի հանդեպ ցեղասպանության քննարկումը: Միջազգային հանրության բողոքներից հետո միայն, քահանա Ակբուլուտի դեմ 312-րդ հոդվածով առաջադրած ցեղային ատելության հրահրում մեղադրանքը 2001 թ. ապրիլի 5-ին՝ երրորդ ունկնդրումից հետո, հանվեց: Դատավորի համար վճռորոշ հանգամանքը եղել է այն, որ մեղադրյալը իր կարծիքն արտահայտել էր ոչ թե հրապարակայնորեն, այլ մասնավոր զրույցի ժամանակ: Մի այլ տեղում Դիարբեքիի Ս. Մարիամ եկեղեցու քահանան քարոզի ծամանակ դժգոհել էր, որ աշխարհը շարունակ խոսում է միայն հայերի, սակայն ոչ մի անգամ՝ ասորիների կոտորածների մասին: Ի վերջո, միջազգային հանրության, եւ հատկապես Շվեդիայի օժանդակության շնորհիվ է, որ քահանան ազատ արձակվեց:

Պատրիարք Դիմիտրիոս Առաջինից (Dimitrios I.) եւ Բարդուղիմեոսից (Bartholomaios) սույն գրքի հեղինակը տեղեկացավ Յալկիի քահանայական սեմինարիայի վերաբացման համար նրանց՝ մինչ օրս իզուր թափած ջանքերի մասին: Դեյր ալ-Չաֆարանի եւ Մոր Գաբրիելի վանքերի հեռախոսագրույցները գաղտնալսվում են առաջվա պես: 2003 թ. ապրիլի 14-ին Թուրքիայի կրթության նախարարությունը դպրոցի տնօրեններին հրահանագեց՝ պարտավորեցնել թուրքական բոլոր տարրական եւ միջնակարգ դպրոցների աշակերտներին՝ հերքել հայերի բնաջնջման փաստը: 2005 թ. գրող Օրհան Փամուկը մեղադրվեց «թրքայնության հրապարակային նվաստացման» մեջ, քանի որ նա մատնանշել էր հայերի կոտորածները: Շվեյցարական «Թագեսանցայգեր» (Tagesanzeiger) օրաթերթին տված հարցազրույցի ժամանակ նա ասել էր. «Այստեղ սպանվել են 30.000 քուրդ եւ մեկ միլիոն հայ, եւ գրեթե ոչ ոք չի համարձակվում հիշատակել դրա մասին: Ուրեմն, այդ ես եմ անում: Եւ դրա համար նրանք ատում են ինձ»³³⁶: Իրենց հայրենիքը՝ Տուրաբդիի Կաֆրո (Kafro) բնակավայրը վերադառնալ ցանկացող 70 փախստականների տունդարձը հետաձգվեց՝ 2005 թ. հունիսին այնտեղ տեղի ունեցած ռմբակոցումից հետո³³⁷:

Կարելուր եւ դեռեւս չլուծված խնդիր է մնում եկեղեցական սեփականության հարցը: «Հիմնադրամների» վրա սահմանված է պետական հսկողություն: Եթե վանահայրերից մեկը ուզում է նորոգել վանական մի շենք,

336 Barbara Coudenhova-Kalergi: Die Türkei lesen., in: Der Standart, 5.9.2005, 23.

337 Neue Züricher Zeitung, Nr. 213 v. 14.6.2005, 6.

պետական «կառավարիչը» պետք է իր համաձայնությունը տա եւ գործի մասին բանակցի իշխանությունների հետ: 1970-ական թթ. սկզբին Թուրքիան սկսեց բռնագրավել քրիստոնյաների՝ նվիրատվություններից առաջացած ունեցվածքը: Դրան նպաստեց Կիպրոսի հարցի շուրջ թուրք-հունական լարվածությունը: Այդ շրջանից մինչ օրս չկարգավորված քաղաքականության գոհերը ոչ մուսուլմանական 170 հիմնադրամներն էին: Ինչ բռնագրավվում էր, անդամնալիորեն կորչում էր: Այս իրավիճակը ավելի քիչ էր վերաբերում ասորի քրիստոնյաներին քան «Լոզանյան փոքրամասնությունների» (հայերին, հույներին եւ հրեաներին): Այսպես, Ստամբուլում արեւմտյան ասորիներն իրենց Մերիեմանա Զիլիսեսի (Meryemana Kilisesi) եպիսկոպոսական եկեղեցու կողքին ունեն երկու հողամաս. մեկի վրա կանգնած է եկեղեցին, որը կառուցվել է 1849 թ., մյուսը կից հողամասն է: Մնացած ողջ անշարժ գույքը, թեեւ համայնքին է պատկանում, գրանցված է մասնավոր մարդկանց անուններով: Անշարժ գույք, որ ժառանգաբար է անցնում եկեղեցիներին, գոնե 60-ական թվականներից ի վեր, խելացի նախատեսմամբ, այլեւս չեն կտակվում եկեղեցական տարբեր հիմնադրամների վրա:

Ավելի վատ վիճակում է Տուրաբդիսի՝ նվիրատվությունների միջոցով գոյացած եկեղեցական սեփականությունների հարցը: Վերջին ժամանակներս Յայոց պատրիարքարանը, ինչպես եւ ասորի ուղղափառ համայնքը, հանդես բերեցին նախաձեռնություն՝ հիմնադրամների օրենքը նորոգելու ուղղությամբ: Ասորի ուղղափառ համայնքի մի քանի անդամներ օրինագիծ մշակեցին եւ այն ուղարկեցին Անկարա՝ 20 պատգամավորի: Դրա նպատակն էր՝ վերացնել 1935 թ. օրենքը եւ նորովի կանոնադրել սեփականության ձեռք բերումը ոչ մուսուլմանական հիմնադրամների միջոցով: Օրինագիծն առաջարկում է հնարավորություն ստեղծել, որպեսզի հին հիմնադրամները նորերին փոխանցվեն եւ ընդունվեն որպես սեփականություն: Համայնքի ներկայացուցիչների պահանջով, նվիրատվությունների մասին գործող օրենքը պետք է վերանայվեր Եվրամիության հետ համաձայնեցված: Ի վերջո, Յայոց պատրիարքարանի առաջարկությունների հիման վրա, պառլամենտը ներկայացրեց իր ուրույն նախնական օրինագիծը: Այս հարցը քննարկվում է նաեւ թուրքական մամուլում: Շատեր են արտահայտվում հիմնադրամների հարցի բարելավման օգտին: Սակայն աջակողմյան պահպանողական կուսակցության (DYP) փոխնախագահ Ջասան Էքինջին (Hasan Ekinçi) առարկեց, ասելով, որ քրիստոնյա փոքրամասնությունները սպառնալիք են ազգային անվտանգությանը: Այդ պատճառով նրանք չպետք է օգտվեն նույն իրավունքներից, ինչ մուսուլման թուրքերը:

Այնուամենայնիվ Թուրքիան այսօր պետք է նկատի ունենա, որ աշխարհն իրեն դիմադրություն է ցույց տալիս: Այսպես, 2005 թ. ամռանը Շվեյցարիայում կարճ ժամանակով ձերբակալվեց թուրքական մի կուսակցության առաջնորդ՝ «ցեղասպանության ժխտման» մեղադրանքով, քանի որ դա Շվեյցարիայում

պատժելի արարք է: Եվրամիության ընդլայնման հանձնակատար Օլլի Ռեհն (Olli Rehn) 2005 թ. վկայագրեց, որ Թուրքիայում չկա իսկական կրոնական ազատություն: Այդ հարցը քննարկվում է «Քրիստոնյաները Թուրքիայում» ֆիլմում: 24 պետություններ, այդ թվում Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան եւ Նիդերլանդները, բայց ոչ ԱՄՆ-ը եւ Իսրայելը, արդեն դատապարտել են հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությունը: 2002 թ. մարտի 15-ին Ավստրիայի ազգային խորհրդում «Կանաչները»՝ 1915-1917 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայ ժողովրդի կոտորածները ներկայացրին հանձնաժողովին, դատապարտելով դրանք որպես ցեղասպանություն: Սակայն այդ նախաձեռնությունը կառավարական անդամների մեծամասնության կողմից հավանության չարժանացավ: Դա տեղի ունեցավ արտաքին գործոց նախարար Բենիթա Ֆերերո-Վալդների (Benita Ferrero-Waldner) միջամտության շնորհիվ, որը նախապատվություն տվեց պետության տնտեսական շահերին, եւ որին միացան Ավստրիայի ժողովրդական (ÖVP=Österreichische Volkspartei) եւ Ավստրիայի ազատական կուսակցությունները (FPÖ = (Österreichische Freiheitspartei): Երբ գերմանական Բրանդեբուրգ երկրամասը որոշում ընդունեց հայկական կոտորածներն ընդգրկել պատմության դասավանդման ծրագրերի մեջ, Գերմանիայում թուրք դեսպան Իրտեմչելիքի (Irtemçelik) խիստ դիմադրությանը հանդիպեց: Իսկ միջազգային անվանի թուրք գիտնականների՝ 2005 թ. մայիսի 25-27 Ստամբուլում անցկացվող «Օսմանյան հայերը կայսրության փլուզման շրջանում» վերնագրով գիտաժողովը կասեցվեց Թուրքիայի արդարադատության նախարար Ջեմիլ Չիչեքի (Cemil Çiçek) կողմից, այն անվանարկելով որպես «դաշույնի հարված թուրք ազգի թիկունքին», իսկ գիտնականներին՝ որպես «դավաճաններ»: Հայերի տեղահանումների 90-րդ տարեվիցի կապակցությամբ Գերմանիայի բունդեսթագը՝ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (SPD), Քրիստոնեա-դեմոկրատական միությունը (CDU/CSU), Կանաչների միությունը (Die Grünen) եւ Գերմանիայի Ազատ Դեմոկրատական կուսակցությունը (FDP) բանաձեւ ընդունեց, որը վկայակոչում է Յոհաննես Լեփսիոսի թափած ջանքերը եւ ավելի քան մեկ միլիոն գոհերի անունից Գերմանիային պարտավորեցնում է՝ մասնակցություն բերել թուրքերի ու հայերի հաշտեցման գործընթացին: Սա Գերմանիայի՝ անցյալը դիմագրավելու ուղղությամբ կատարած առաջին երկշոտ քայլն էր:

«Հայկական հարցի վերաբերյալ պատմագրությունը Թուրքիայում գրեթե բացառապես վերապահված է հեղինակների, որոնց ջանքերն ուղղված են օսմանա-թուրքական պետության պաշտպանությանը եւ հաճախ աշխատում են պետության պատվերով: Թվում է, թե ոմանք չունեն որեւէ հետաքրքրություն այնպիսի հարցերի նկատմամբ, ինչպիսիք են՝ աշխարհում խաղաղության կամ ժողովուրդների փոխըմբռման ապահովումը եւ կամ ճշմարտության հայտնագործումը: Այն գիտնականները, որոնք խույս են տալիս պաշտոնա-

կան պատմագրության ասպարեզից, ակնհայտորեն չեն ցանկանում այրել իրենց ձեռքերը՝ այդ հարցին դիպչելով»³³⁸: Սակայն նաեւ Թուրքիային է վերաբերում փիլիսոփա Ֆրիդրիխ Փաուլսենի նախազգուշացումը. «Ով արգելք է հանդիսանում լուսավորությանը, նա կրկնակի կտուժի»: Եվրոպան խարըսխ ըված է ֆրանսիական հեղափոխության նվաճումների վրա, ինչպիսիք են ազատությունը, հավասարությունն ու եղբայրությունը, ինչպես նաեւ բանականության ու անաչառ գիտության առաջնությունը: Եվրոպայում ազգերի միջեւ ատելության եւ ցեղային գերազանցության մոլուցքի դարաշրջանն ավարտված է: Բոլոր ազգերը պետք է իրենց պատմության մեջ գործած հանցանքներն ընդունեն եւ լրջորեն խորհեն դրանց մասին: Բարդուղիմեոս պատրիարքը՝ 300 միլիոն ուղղափառ քրիստոնյաների պարագլուխը, հրավիրեց Բենեդիկտոս Տասնվեցերորդ պապին ուղղափառների տոնին: Թուրքական կառավարությունը փորձեց խանգարել, քանի որ պատրիարքին համարում է ոչ թե ուղղափառության առաջնորդը, այլ պարզապես միայն՝ Ստամբուլում ընդամենը 3000-ի հասցված հույն հավատացյալների փոքրամասնության հովվապետը³³⁹: Հատկանշական է, որ դեռեւս 2005 թ. սեպտեմբերի 23-ին թուրքական վարչական մի դատարան արգելեց Ստամբուլում Հայկական հարցին նվիրված գիտաժողովի անցկացումը, որտեղ պատմաբաններ Հալիլ Բերքայն (Halil Berkay) ու Թաներ Աքչամը (Taner Akcam) ներկայացնելու էին պետական գաղափարախոսությունից տարբերվող՝ ցեղասպանության վերաբերյալ իրենց տեսակետները: Եվրախորհրդի հանձնաժողովը իրավամբ դա որակեց որպես սադրանք³⁴⁰: Միեւնույն է, դրանով հարցը չլուծվեց, քանի որ գիտաժողովը, ի վերջո, տեղի ունեցավ՝ Բողազիչի (Bogazici) եւ Սաբանչըի (Sabanci) համալսարաններից տեղափոխվելով Բիլգի (Bilgi) համալսարանը: Աճպարարությամբ հնարավոր չէ նման հարցեր լուծել: Բոլոր արգելքներով հանդերձ տեղի ունեցած այդ խորհրդաժողովը շրջադարձային կետ հանդիսացավ Թուրքիայի պատմության մեջ: Սեպտեմբերի 23-ին Եվրոպական պառլամենտը Շտրասբուրգում հավանություն տվեց Թուրքիայի հետ սկսելու անդամակցության բանակցությունները, պայմանով, որ Թուրքիան ճանաչի Կիպրոսն ու հայերի ցեղասպանությունը: 2005 թ. հոկտեմբերի 3-ին սկսվում են Եվրախորհրդի անդամակցության բանակցությունները Թուրքիայի հետ: Մնում է հուսալ, որ եվրոպական պետությունները կստորադասեն ոչ միայն տնտեսական ու ռազմական շահերը, այլև կպահանջեն թուրքերի բացատրությունները՝ հույն, հայ եւ ասորի քրիստոնյաների կոտորածների կապակցությամբ: Եվրոպայի համար անփոխարինելի արժեքներից են կրոնի,

338 Verheij (1999), 92.

339 Neue Züricher Zeitung, Nr. 217 v. 17./18.9.2005, 3.

340 Neue Züricher Zeitung, Nr. 223 v. 24./25.9.2005, 3.

ժողովների եւ կարծիքի անսահմանափակ ազատությունը, ամեն կարգի դպրոցների արտոնությունն ու նրանց նյութական օժանդակությունը, բոլոր արխիվների բացումը միջազգային հետազոտությունների համար, գողացված եկեղեցական մշակութային ունեցվածքի վերադարձը եւ դրա պաշտպանությունը (կադաստրում ամրագրված՝ սրբազան սպասք, ձեռագրեր ու գրադարաններ ունենալու իրավունք), ինչպես նաեւ փոքրամասնությունների համապարփակ պաշտպանությունը: Եվրոպան սխալ կվարվեր, եթե շեղումներ կատարեր քաղաքակրթության իր դիրքերից: Եվրոպացիների հրապարակային բանավեճը Թուրքիայի հետ կարող է սկսվել:

----- «» -----

ՍԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

10 օգոստոսի, 1920 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԸ

Հոդված 88.

Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, ինչպես այդ արդեն արել են դաշնակից տերությունները:

Հոդված 89.

Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանագծումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը, և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ:

Հոդված 90.

Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ նահանգների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր իսկ հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և

իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների նկատմամբ, այս պահից սկսած կկիրառվեն նաև այդ տարածքի նկատմամբ:

Հայաստանի ինքնավարությանը հանձնվող տարածքի կապակցությամբ Հայաստանի վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, ինչպես նաև Հայաստանի ձեռք բերելիք իրավունքների բնույթը կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Առաջիկա համաձայնագրերը կկարգավորեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Պայմանագրով և որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տարածքի փոխանցման կապակցությամբ:

Հոդված 91.

Եթե 89-րդ հոդվածում նշված տարածքի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա՝ Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգիռ պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին:

(Թարգմանությունը ռուսերենից)

ԼՈՂԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (21.7.1923) 111 ՀԱՏՎԱԾԸ
փոքրամասնությունների պաշտպանության մասին.

Հոդված 37

Թուրքիան պարտավորվում է 38-44 հոդվածներում ամրագրված պայմանները ճանաչել որպես հիմնական օրենք. որեւէ օրենք, որոշում կամ պաշտոնական գործողություն իրավունք չունեն խաթարելու կամ զանցառելու այդ պայմանները:

Հոդված 38

Թուրքիան պարտավորվում է երաշխավորել Թուրքիայի բոլոր բնակիչների կյանքի ու ազատության լիակատար պաշտպանությունը՝ առանց սահմանազատելու նրանց ծագումը, ազգությունը, լեզուն, ցեղը կամ կրոնը: Թուրքիայի բոլոր բնակիչները իրավունք ունեն՝ ընկերային թե՛ անհատական կարգով, ազատ տեղաշարժի, հետեւելու որեւէ դավանանքի կրոնական ազատ ծեսերի, քանի դրանք չեն հակասում հասարակական կարգին ու բարքերին: Ոչ մուսուլման փոքրամասնություններին տրվում է ազատ տեղաշարժի ու արտագաղթի կատարյալ իրավունք, որը կիրառելի է՝ ամբողջովին կամ մասնակիորեն, բոլոր թուրքահպատակների նկատմամբ, հաշվի առնելով թուրքական կառավարության ազգային անվտանգությունը կամ հասարակական կարգի պահպանումը:

Հոդված 39

Ոչ մուսուլմանական փոքրամասնություններին պատկանող թուրքահպատակները պետք է օգտվեն քաղաքացիական ու քաղաքական նույն իրավունքներից, ինչ մուսուլմանները: Թուրքիայի բոլոր բնակիչները, առանց կրոնական խտրության, օրենքի առաջ պետք է լինեն իրավահավասար: Կրոնի, հավատի կամ դավանանքի տարբերությունները չպետք է անդրադառնան որեւէ թուրք քաղաքացու արտոնությունների վրա՝ լինի դա քաղաքացիական թե՛ քաղաքական իրավունքների հարցում, կամ օրինակ, հասարակական պաշտոններ, գործառնություններ ու պարգեւադրումներ ստանալու, կամ մասնագիտություններ ու արհեստներ կիրառելու հարցում: Ոչ մի սահմանափակում չպետք դրվի որեւէ թուրքահպատակի վրա՝ գործածելու իր լեզուն անմիջական հաղորդակցման մեջ, առետրի ժամանակ, կրոնական արարողություններում, մամուլում, ամեն տեսակի հրատարակություններում կամ հասարակական հավաքներում: Առանց անտեսելու պետական պաշտոնական լեզվի առկայությունը, թուրքերենին չտիրապետող քաղաքացիներին

պետք է հնարավորություն տրվի՝ դատարաններում օգտվելու իրենց սեփական լեզվի բանավոր խոսքից:

Հոդված 40

Ոչ մուսուլմանական փոքրամասնություններին պատկանող թուրքահպատակները պետք է, մյուս թուրք քաղաքացիների նման, արժանանան նույն վերաբերմունքին ու պաշտպանությանը, ինչպես օրենքի առաջ, այնպես էլ իրականության մեջ: Նրանք հատկապես պետք է իրավասու լինեն իրենց սեփական ծախսով կառուցելու, կառավարելու եւ վերահսկելու կրոնական ու ընկերային հիմնարկություններ, ինչպես դպրոցներ եւ այլ ուսումնական հաստատություններ՝ իրավունք ունենալով կիրառելու սեփական լեզուն եւ ազատորեն գործադրելու սեփական կրոնը:

Հոդված 41

Հանրակրթական ուսուցման բնագավառում թուրքական կառավարությունը երաշխավորելու է, որ այն քաղաքներում ու մարզերում, որտեղ ապրում է ոչ մուսուլմանների որոշակի քանակություն, ստեղծվեն առավել պատշաճ պայմաններ տարրական դպրոցներ հիմնելու համար, որտեղ երեխաների դպրոցական ուսուցումը կընթանա սեփական լեզվով: Այս որոշումը, սակայն, չպետք է խոչենդոտի թուրքական կառավարությանը, որ թուրքերենի ուսուցումը տվյալ դպրոցներում դարձնի պարտադիր: Այն քաղաքներում ու մարզերում, որտեղ ոչ մուսուլմանական փոքրամասնություններին պատկանող թուրքահպատակները մեծ թիվ են կազմում, վերջիններիս պետք է տրվի երաշխավորություն, որ նրանք հավասարապես կօգտվեն հանրային միջոցներից, որոնք պետության, համայնքի կամ այլ նյութական հատկացումների կողմից տրվում են ուսումնական, կրոնական կամ բարեգործական նպատակների համար: Տվյալ գումարները պետք է վճարվեն համապատասխան հաստատությունների եւ հիմնարկությունների իրավասու ներկայացուցիչներին:

Հոդված 42

Թուրքական կառավարությունը պարտավորվում է ոչ մուսուլմանական փոքրամասնությունների վերաբերյալ միջոցառումներ ձեռնարկելու, որ նրանք կարգավորեն իրենց ընտանեկան իրավունքը կամ անձնական կարգավիճակը՝ տվյալ փոքրամասնության սովորույթների համաձայն: Այդ միջոցառումները պետք է մշակվեն հատուկ հանձնախմբերի կողմից, որոնք կազմվելու են թուրքական կառավարության եւ համապատասխան փոքրամասնության հավասար թվով ներկայացուցիչներից: Տարակարծությունների դեպքում՝ թուրքական կառավարության եւ Ազգերի ընկերակցության խորհրդի

համաձայնությամբ կնշանակվի միջևորդ դատավոր, որը կընտրվի եվրոպացի իրավագետներից: Թուրքական կառավարությունը պարտավորվում է երաշխավորել վերը նշված փոքրամասնությունների եկեղեցիների, սինագոգների, գերեզմանատների եւ կրոնական այլ հաստատությունների կատարյալ պաշտպանությունը: Ամբողջական լիազորություն եւ միջոցներ են տրամադրվելու կրոնական հաստատություններին, ինչպես նաեւ ներկայումս Թուրքիայում գոյություն ունեցող նշված փոքրամասնությունների կրոնական ու բարեգործական հիմնարկություններին. թուրքական կառավարությունը չի մերժելու, որ կրոնական ու բարեգործական նոր հիմնարկություններ ստեղծվեն, այլ ապահովելու է նրանց՝ նման կարգի մասնավոր հիմնարկություններին տրամադրվող բոլոր երաշխավորություններով:

Հոդված 43

Ոչ մուսուլմանական փոքրամասնություններին պատկանող թուրքահպատակներին չպետք է պարտադրել արարքներ, որոնք դեմ են նրանց հավատին կամ կրոնական սովորույթներին. նրանք չպետք է տուժեն, եթե հրաժարվեն շաբաթվա իրենց հանգստյան օրը դատարան ներկայանալ կամ գործարք կնքել: Սակայն այս պայմանը չպետք է վերոհիշյալ թուրքահպատակներին ազատի նման պարտականություններից, որոնք ենթարկվում են բոլոր թուրքահպատակները՝ հանուն հասարակական կարգի պահպանման:

Հոդված 44

Քանի որ այս բաժնին նախորդող հոդվածները վերաբերում են Թուրքիայի ոչ մուսուլմանական ազգերին, Թուրքիան համամիտ է, որ այս որոշումները ներկայանան որպես միջազգային պարտավորություններ եւ գտնվեն Ազգերի ընկերակցության երաշխավորության ներքո: Նրանք փոփոխման ենթակա չեն առանց Ազգերի ընկերակցության մեծամասնության համաձայնության: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան եւ Ճապոնիան սույնով հայտարարում են՝ չվերապահել իրենց համաձայնությունը այդ հոդվածների որեւէ փոփոխության դեպքում, եթե դա ընդունելի է Ազգերի ընկերակցության մեծամասնության համար: Թուրքիան համաձայնվում է, որ Ազգերի ընկերակցության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի Ազգերի ընկերակցությանը ներկայացնել այս պարտականությունների անտեսման հետեւանքով առաջացած որեւէ խախտում կամ վտանգ, եւ որ Խորհուրդը նման դեպքում իրավունք ունի հավուր պատշաճի միջոցներ ձեռք առնելու ու ցուցումներ տալու: Թուրքիան համաձայնվում է նաեւ, որ թուրքական կառավարության եւ պայմանագիրը ստորագրող մյուս պետություններից յուրաքանչյուրի կամ Ազգերի ընկերակցության անդամ այլ պետությունների միջեւ որեւէ տարակարծություն՝ այդ հոդվածներում արծարծվող իրավական հարցերի կամ փաստերի կապակ-

ցությամբ, պետք է դառնա միջազգային բնույթի քննարկման առարկա ըստ Ազգերի ընկերակցության որոշումների 14-րդ հոդվածի: Թուրքական կառավարությունը սույնով հավանություն է տալիս, որ նման վիճելի հարցեր, եթե պահանջի մյուս կուսակցությունը, ներկայացվեն միջազգային դատարան: Դատական այդ ատյանի վճիռը լինելու է վերջնական եւ ուժի մեջ է մտնելու որպես 13-րդ հոդվածի վճիռ:

Յոթված 45

Տվյալ բաժնում՝ Թուրքիայի ոչ մուսուլմանական փոքրամասնությունների նվերաբերող իրավունքները հավասարապես կիրառելի են Յունաստանի տարածքում ապրող մուսուլմանական փոքրամասնությունների նկատմամբ:

(Թարգմանությունը անգլերենից, տե՛ս Official English text printed and published by His Majesty's Stationery Office, London 1923)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեպի Թուրքիա, Հայաստան եւ Վրաստան կատարած բազմաթիվ ուղևորություններիս ընթացքում առիթ եմ ունեցել հանդիպելու արեւելյան եկեղեցիների՝ մի շարք ակնառու անհատականությունների՝ Տիեզերական պատրիարք Դիմիտրիոս Առաջինից եւ Բարդուղիմեոսից մինչեւ Մարդինի ու Տուրաբդինի տարբեր եպիսկոպոսների եւ Դիարբեքիի ասորի ուղղափառ քահանային: Բոլորին շնորհակալ եմ՝ ինձ տրված տեղեկությունների համար: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում բարեկամիս՝ պրոֆ. Գրիգորիոս Լարինձակիսին Գրաց (Graz) քաղաքից, որն ինձ ուսուցանել է ուղղափառ աստվածաբանություն եւ օգնել մոտիկից ծանոթանալու քրիստոնեության բազմակենտրոն զարգացումներին: Պրոֆ. դ-ր Հանս Հոլբրվեգերին երախտապարտ եմ ուսումնական ուղևորությանս համար Տուրաբդին, որի ժամանակ ինձ հնարավորություն ընձեռվեց բնակվելու Դեիր ալ-Չաֆարան ու Մոր Գաբրիել վանքերում եւ մասնակցելու այնտեղի կյանքին: Շնորհակալ եմ նաեւ դ-ր Թեսա Հոֆմանին, որի միջոցով գրքիս համար ձեռք բերեցի 1915 թ. հայկական կոտորածները պատկերող կարեւոր լուսանկարներ, այդ թվում նկարահանված Արմին Թ. Վեզների կողմից: Լուսանկարներ հայթայթեցին նաեւ Հայր Ներսեսը՝ Վիեննայի Մխիթարյան վանքից եւ հայ առաքելական եկեղեցու արքեպիսկոպոս դ-ր Մեսրոպ Գրիգորյանը, որոնց մեծապես շնորհակալ եմ: Վերջինիս պարտական եմ նաեւ Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանի գանձարանից ձեռք բերված նկարների տպագրության թույլտվություն ձեռք բերելու համար: (...) Հայերի պատմությանը վերաբերող անթիվ նյութերի համար երախտապարտ եմ աշխատակցիս՝ պրոֆ. Էրիխ Ռենհարթին (Erich Renhart), ինչպես նաեւ պրոֆ. Հերման Գոլցին (Hermann Goltz):

Վիլիելմ Բասում

Գրականություն

The Armenian Genocide, vol. 2, ed. by Artem Ohandjanian, München 1988

Assfalg Julius: *Syrische Handschriften*, (=Verzeichnis der orientalischen Handschriften in Deutschland 5), Wiesbaden 1963

Bernhard Fürst von Bülow: *Denkwürdigkeiten*, Berlin 1930

Büsching Anton Friedrich: *Neue Erdbeschreibung von Asia*, Schaffhausen 1769

Die diplomatischen Akten des Auswärtigen Amtes 1871-1914, hrsg. v. Bernhard Schwertfeger, Bd. 2: 1890-1899, Berlin 1924

Die große Politik der europäischen Kabinette 1871-1914, Bd. 10, Berlin 1927 (Das türkische Problem 1895)

Botschafter Paul Graf von Hatzfeldt: “Nachgelassene Papiere 1838-1901”, ed. by Gerhard Ebel, Bd. 2 (= Deutsche Geschichtsquellen des 19. u. 20. Jahrhunderts 51/2), Boppard 1976

Fiey Jean Maurice Fiey: *Pour un Oriens Christianus Novus. Répertoire des Diocèses syriaques orientaux et occidentaux*, (= Beirut Texts and Studies 49), Beirut 1993

“Die Verfolgung und Vernichtung der Syro-Aramäer im Tur Abdin 1915, gesammelt von Erzpriester Sleman Henno von Arkah”, übersetzt v. Amill Gorgis u. Georg Toro. (Manuskript)

Gust Wolfgang (Hg.): *Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes*, Springe 2005

Herzl Theodor: *Zionistisches Tagebuch 1895-1899*, ed. by Johannes Wachten u. Chaya Harel, (= Briefe u. Tagebücher 2), Berlin-Frankfurt 1983

Theodor Herzl: *Briefe Anfang Mai 1895 – Anfang Dezember 1898*, ed. by Barbara Schäfer, (= Briefe u. Tagebücher 4), Frankfurt-Berlin 1990

Kazantzakis Nikos: *Griechische Passion*, Reinbek 1981

Lange Reinhold: *Imperium zwischen Morgen und Abend. Die Geschichte von Byzanz in Dokumenten*, Recklinghausen 1972

M. P.V.: “Documents sur les événements de Mardine (1915-20)”, in : *Studia Orientalia Christiana Collectanea*, vol. 29/30, 1998, 5-220 a. Autres documents sur les événements de Mardine, vol. 35/36, 2002/03, 33-87

Mschiho Namam Abed: *Vergossenes Blut. Geschichten der Greuel, die an den Christen in der Türkei verübt wurden*, Glane/Losser 1999

Morgenthau Henry: *Ambassador Morgenthau's Story*, Detroit 2003

Niebuhr Carsten: *Entdeckungen im Orient 1761-1767 (1774)*, Stuttgart 1973

Enea Silvio Piccolomini (Pius II.): “Beschreibung Asiens”, ed. by Wilhelm Baum, Klagenfurt 2005.

Sachau Eduard: *Kurzes Verzeichnis der Sachau'schen Sammlung syrischer Handschriften*, Berlin 1885

Schweiger Salomon: “Zum Hofe des türkischen Sultan”, ed. by Heid. Stein, Leipzig 1986

The Treaties of Peace 1919-1923, vol. 2, (= Carnegie Endowment for International Peace), New York 1924

Venesis Elias: *Äolische Erde*, Mainz 1969

Wendebourg Dorothea (Hg.): *Reformation und Orthodoxie: Der ökumenische Briefwechsel zwischen der Leitung der württembergischen Landeskirche und Patriarch Jeremias II. in den Jahren 1573-1581*, Göttingen 1986

CD-ROM: *Armenian genozide 1915-1923 Ite CJSC*, BazmaWeb Studio 2005

Երկրորդական գրականություն

Adanir Fikret: *Die makedonische Frage. Ihre Entstehung und Entwicklung bis 1908*, Wiesbaden 1979

Adorno Theodor W.: “Erziehung nach Auschwitz”, in: *Erziehung zur Mündigkeit*, Frankfurt 1970, 88-104,

Akcam Taner: *Armenien und der Völkermord. Die Istanbul Prozesse und die türkische Nationalbewegung*, Hamburg 1996

Akcam Taner: “Another History on Sèvres and Lausanne”, in: Kieser-Schaller (2003), 281-299

Anderson M.S.: *The Eastern Question 1774-1923. A Study in International Relations*, London 1978

Anschütz Helga: *Die syrischen Christen vom Tur Abdin. Eine altchristliche Bevölkerungsgruppe zwischen Beharrung, Stagnation und Auflösung*, Würzburg 1985

Armstrong Karen: *Jerusalem – die Heilige Stadt*, München 1999

Assfalg Julius u. Krüger Paul: *Kleines Wörterbuch des christlichen Orients*, Wiesbaden 1975

Atiya Aziz S.: *Kreuzfahrer und Kaufleute. Die Begegnung von Christentum und Islam*, Stuttgart 1964

Atiya Aziz S.: *A History of Eastern Christianity*, London 1968

- Aydin Hanna: *Die syrisch-orthodoxe Kirche von Antiochien*, Losser 1990
- Aziz Namu: *Kurdistan. Menschen, Geschichte, Kultur*, Nürnberg 1992
- Badger George Percy: *The Nestorians*, 2 volumes (1852) ND London 1987
- Bauer Elisabeth: *Armenien*, Luzern 1977
- Baum Wilhelm: *Die Verwandlungen des Mythos vom Reich des Priesterkönigs Johannes*, Klagenfurt 1999
- Baum Wilhelm – Winkler Dietmar W.: *Die Apostolische Kirche des Ostens. Geschichte der sogenannten Nestorianer*, Klagenfurt 2000
- Baum Wilhelm: “Die sogenannten „Nestorianer“ im Zeitalter der Osmanen”, in: *Zwischen Euphrat und Tigris*, (= Wiener Offene Orientalistik 3), Wien 2004, 229-245
- Baum Wilhelm: “Ignatius Elias III., syrisch-orthodoxer Patriarch von Antiochien (1917-1932)”, in: *Biographisch-Bibliographisches Kirchenlexikon*, Bd. 24, 2005, 885-888.
- Baum Wilhelm: “Hethum I., König von Armenien (1226-1269)”, in: *Biographisches-Bibliographisches Kirchenlexikon* (im Druck)
- de Bernières Louis: *Traum aus Stein und Federn*, Frankfurt 2006
- Bcheiry Iskandar: “A list of the Syrian orthodox Patriarchs between 16th and 18th century”, in: *Parole de l' Orient* 29, 2004, 211-261
- Betts Robert Brenton: *Christians in the Arab East*, Athen, 2.Aufl., 1978
- Bihl Wolfdieter: *Österreich-Ungarn und die Friedensschlüsse von Brest-Litowsk*, Wien-Köln-Graz 1970
- Bihl Wolfdieter: *Die Kaukasuspolitik der Mittelmächte II: Die Zeit der versuchten kaukasischen Staatlichkeit (1917-1918)*, Wien-Köln-Weimar 1992
- Binswanger Karl: *Untersuchungen zum Status der Nichtmuslime im Osmanischen Reich des 16. Jahrhunderts mit einer Neudefinition des Begriffs „Dhimma“*, München 1977
- Brentjes Burchard: *Drei Jahrtausende Armenien*, Wien-München, 2. ed., 1976
- Bozarslan Hamit: *Histoire de la Turquie contemporaine. La Découverte*, Paris 2004
- Briquel-Chatonnet Francois: “Note sur l' histoire du monastère de Saint-Gabriel de Quartamin”, in: *Le Museion* 98, 1985, 95-102
- Braude Benjamin u. Lewis Bernard: *Christians and Jews in the Ottoman Empire. The Functioning of a Plural Society, vol. 1: The Central Lands*, New York-London 1982
- Brockelmann Carl: *Geschichte der islamischen Völker*, München-Berlin 1943
- Budger George Percy: *The Nestorians and their Rituals*, vol. 1 (1852),

ND London 1987

Buschhausen Heide u. Helmut: *Armenische Handschriften der Mechtaristen-Congregation in Wien*, Wien, 2. Aufl. 1981

Cahen Claude: *Der Islam I*, (= Fischer Weltgeschichte 14), Frankfurt 1968

The Cambridge History of Iran, ed. by J. A. Boyle, vol. 5, Cambridge 1968

Canard M.: "Cilicia", in: *Encyclopaedy of Islam*, vol. 2, 1991, 34-39

Cardini Franco: *Europa und der Islam. Geschichte eines Missverständnisses*, München 2000

Coakley F. F.: *The Church of England and the Church of the East. A History of the Archbishop of Canterbury's Assyrian Mission*, Oxford 1992

Coche Coche de la Ferté Etienne: *Byzantinische Kunst*, Freiburg-Basel-Wien 1982

Dalrymple William: *From the Holy Mountain. A Journey in the Shadow of Byzantium*, London 1997

Davison Roderic H., "Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality in the Nineteenth Century", in: *American Historical Review* 59 (1953-54), S. 844-864

Davison Roderic H.: "The Ottoman Empire at the Congress of Berlin", in: *Der Berliner Kongress. Die Politik der Großmächte und das Problem der Modernisierung in Südosteuropa in der 2. Hälfte des 19. Jahrhunderts*, Wiesbaden 1982, 205-223

Ducellier Alain: *Chrétiens d' Orient et Islam au Moyen Âge VIIe – XVe siècle*, Paris 1996

Dum-Tragut Jasmine: "Verstreutes Volk und ferne Heimat", in: „...Aber unvergänglich sind wir wie unsere Berge. Armenien“, ed. by Erich Renhart u. Jasmine Dum-Dragnet, Graz-Wien 1997, 53-61

Duval Rubens: *Histoire de Édesse (Urfa)*, (1892) ND Amsterdam 1975

Engels W.: "Tübingen und Byzanz. Die erste offizielle Auseinandersetzung zwischen Protestantismus und Ostkirche im 16. Jahrhundert", in: *Kyrios* 5, 1940/41, 240-287

Fernau Friedrich Wilhelm: *Patriarchen am Goldenen Horn. Gegenwart und Tradition des orthodoxen Orients*, Opladen 1967

Fiey Jean-Maurice: *Nisibe métropole syriaque orientale et ses suffragants des origines à nos jours*, (= CSCO 388, Subsidia 54), Louvain 1977

Fiey Jean-Maurice: "Dioceses et évêques syriaques occidentaux du Tur Abdin après le XIIIe siècle", in: *Parole de l' Orient* 10, 1981, 257-284

Fischer Weltgeschichte, Bd. 13 : Byzanz, ed. by Franz Georg Mayer,

Frankfurt 1973

Fotiadis Konstantin: "Der Völkermord an den Griechen des Pontos", in: Tessa Hofmann: *Verfolgung, Vertreibung...* (2004), 185-219

Fulton L. Bruce: "France and the End of the Ottoman Empire", in: *The Great Powers and the End of the Ottoman Empire*, London-Boston-Sydney 1984, 141-171

Genocide against the Bulgarian, Greek, Armenian, Cypriot and Kurdish people, Sofia o.J.

Geschichte des Christentums, Bd. 12: *Erster und zweiter Weltkrieg. Demokratien und totalitäre Systeme (1914-1958)*, Freiburg-Basel Wien 1992 u. Bd. 13: *Krisen und Erneuerung (1958-2000)*, 2002

Gillman Ian u. Klimkeit Hans-Joachim: *Christians in Asia before 1500*, Ann Arbor 1999

Gold aus Armenien. Ausstellungskatalog Pro Oriente, Wien o.J.

Goltz Hermann (Hg.): „Wenn dieser Brief veröffentlicht würde und er in türkische Hände fiel...“. Vier Schreiben von Jakob Künzler aus Urfa und Basel, in: Kieser Hans Lukas (Hg.): *Die Armenische Frage und die Schweiz (1896-1923)*. La question arménienne et la Suisse (1896-1923), Zürich 1999, 343-354

Gill Joseph: *Konstanz-Basel-Florenz* (= Geschichte der ökumenischen Konzilien 9), Mainz 1967

Goltz Hermann: *Der gerettete Schatz der Armenier aus Kilikien*, Wiesbaden 2000

Gorgis Amill: "Der Völkermord an den Syro-Aramäern", in: Tessa Hofmann: *Verfolgung, Vertreibung...* (2004), 111-120.

Gronau Dietrich: *Mustafa Kemal Atatürk oder die Geburt der Republik*, Frankfurt 1994

Grulich Rudolf: *Konstantinopel. Ein Reiseführer für Christen*, Ulm 1998

Gust Wolfgang: *Der Völkermord an den Armeniern*, München-Wien 1993

Gust Wolfgang: "Die Verdrängung des Völkermords an den Armeniern. Ein Signal für die Shoah", in: *Kieser-Schaller* (2003), 463-480

Hacisalihoglu Mehmet: *Die Jungtürken und die mazedonische Frage (1890-1918)*, München 2003

Hage Wolfgang: *Die syrisch-jakobitische Kirche in frühislamischer Zeit*, Wiesbaden 1966

Halfter Peter: *Das Papsttum und die Armenier im frühen und hohen Mittelalter*, Köln-Weimar-Wien 1996

Handbuch der Orientalistik, 1. Abteilung, Bd. 7: *Armenisch und Kauka -*

sische Sprachen, ed. V. Bertold Spuler, Leiden-Köln 1963

Hasking Geoffrey: *Russia. People and Empire 1552-1917*, London 1997

Hassiotis Ioannis K.: “The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)”, in: *The Armenian Genocide*, ed. by Richard G. Hovannisian, New York 1992, 129-151.

Helmrath Johannes: “Pius II. und die Türken”, in: *Europa und die Türken in der Renaissance*, ed. by Bodo Guthmüller u. Wilhelm Kühlmann, Tübingen 2000, 79-137

Heyer Friedrich (Ed.): *Die Kirche Armeniens*, (= Die Kirchen der Welt 18), Stuttgart 1978

Hofmann Tessa: “Deutsche Quellen und Augenzeugenberichte zum Völkermord an den Armeniern 1915/16”, in: *Das Verbrechen des Schweigens*, ed. by Tessa Hofmann, (= Progom-Taschenbücher 1012), Wien 1984, 92-119

Hofmann Tessa (Hg.): *Der Völkermord an den Armeniern vor Gericht, Der Prozeß Talaat Pascha*, (Berlin 1921), ND Göttingen 1985

Hofmann Tessa u. Koutcharian Gerayer (Hg.): *Armenien. Völkermord. Vertreibung. Exil. 1979-1987. Neun Jahre Menschenrechtsarbeit für die Armenier – neun Jahre Berichterstattung über einen verleugneten Völkermord*, Göttingen-Wien 1987

Hofmann Tessa: *Annäherung an Armenien*, München 1997

Hofmann, Tessa: “Die Situation der Armenischen Minderheit in der Republik Türkei. In: Koexistenz und Konfrontation; Beiträge zur jüngeren Geschichte und Gegenwartslage der orientalischen Christen”, ed. by Martin Tamcke. Münster- Hamburg- London 2003. (Studien zur Orientalischen Kirchengeschichte 28), 231-302

Hofmann Tessa (Hg.): *Verfolgung, Vertreibung und Vernichtung der Christen im Osmanischen Reich 1912-1922*, (= Studien zur Syrischen Kirchengeschichte 32), Münster 2004

Hofmann Tessa: “Mit einer Stimme sprechen – Gegen Völkermord”, in: Tessa Hofmann (Hg.): *Verfolgung, Vertreibung...* (2004), 9-51

Hofmann Tessa (Hg.): *Das Verbrechen des Schweigens. Die Verhandlungen des türkischen Völkermords an den Armeniern vor dem ständigen Tribunal der Völker* (= Progom-Taschenbücher 1012), Wien 1984

Hollerweger Hans: *Lebendiges Kulturerbe. Living Cultural Heritage. Canli Kültür Mirasi*, Linz 1999

Honigmann Ernest: *Le couvent de Barsauma et le Patriarcat Jacobite d'antiochie et de Syrie*, (= CSCO 146, Subsidia 7), Louvain 1954

Hourani Albert: “Sulaiman al-Bustani und die Ilias”, in: *Der Islam im*

europäischen Denken, Frankfurt 1994, 215-232

Hovannisian Richard G.: *Die armenische Frage (1878-1913)*, in: *Das Verbrechen des Schweigens*, hg. V. Tessa Hofmann, (= Progam-Taschenbücher 1012), Wien 1984, 13-37.

Hovannisian Richard G.: *Armenian People from ancient to modern times, vol. 2: Foreign dominion to statehood: The fifteenth century to the twentieth century*, New York 2004

Hütteroth Wolf-Dieter u. Höhfeld Volker: *Türkei*, Darmstadt 2002

Inglisian Vahan: "Die armenische Literatur", in: *Handbuch der Orientalistik I/7*, Leiden-Köln 1963, 157-272

Jacob Havier: "Das Christentum in der heutigen Türkei", in: *Stimmen der Zeit*, April 1975, 237-247

Jorga Nicolae: *Geschichte des Osmanischen Reiches*, Bd. 3: bis 1640; Bd. 4: bis 1774; Bd. 5: bis 1912, ND Frankfurt 1990

Joseph John: *The Modern Assyrians of the Middle East. Encounters with Western Christian Missions, Archaeologists & Colonial Powers*, Leiden-Boston-Köln 2000

Jung Peter: *Der k.u.k. Wüstenkrieg. Österreich-Ungarn im Vorderen Orient 1915-1918*, Graz-Wien-Köln 1992

Kaiser Hilmar: "A Scene from the Inferno. The Armenians of Erzerum and the Genocide 1915-1916", in: *Kieser-Schaller* (2003), 129-186

Kawerau Peter: *Die jakobitische Kirche im Zeitalter der syrischen Renaissance*, Berlin 1960

Kennedy Paul M.: *The Realities behind Diplomacy: Background Influences on British External Policy 1865-1980*, London-Boston-Sydney 1981

Kent Marian (Hg.): *The Great Powers and the End of the Ottoman Empire*, London-Boston-Sydney 1984

Khoury Adel Theodor: *Der theologische Streit der Byzantiner mit dem Islam*, Paderborn 1969

Kieser Hans Lukas (Hg.): *Die Armenische Frage und die Schweiz (1896-1923). La question arménienne et la Suisse (1896-1923)*, Zürich 1999

Kieser Hans-Lukas u. Schaller Dominik: *Der Völkermord an den Armeniern und die Shoah. The Armenian Genocide and the Shoah*, 2. Aufl. Zürich 2003

Kouymjian Dickran: "Die Zerstörung armenischer Kulturdenkmäler – eine Fortsetzung der türkischen Völkermordpolitik", in: *Das Verbrechen des Schweigens*, ed. by Tessa Hofmann, (= Progam-Taschenbücher 1012), Wien 1984, 155-162

Koutcharian Gerayer: "Der Völkermord an den Armeniern (1915-

- 1917)”, in: Tessa Hofmann: *Verfolgung, Vertreibung...* 2004, 55-75
- Kreiser Klaus u. Neumann Christoph K.: *Kleine Geschichte der Türkei*, Stuttgart 2003
- Krikorian Mesrob: “Der Genozid. Völkermord an den Armeniern”, in: „...*Aber unvergänglich sind wir wie unsere Berge*“. Armenien, hg. v. Erich Renhart u. Jasmine Dum-Dragnet, Graz-Wien 1997, 46-52
- Kühl Henriette: Leon V. v. *Kleinarmenien. Ein Leben zwischen Orient und Okzident im Zeichen der Kreuzzugsbewegung Ende des 14. Jahrhunderts*, (= Europäische Hochschulschriften 893), Frankfurt 2000
- Künzler Jakob: *Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918)*, 2. Aufl. , Zürich 2004
- Kurkjian Vahan M.: *A History of Armenia*, New York, 2. ed. 1959
- Kyriakos Diomedes A.: *Geschichte der Orientalischen Kirchen von 1453-1898*, ND Hildesheim 1975
- De Lacy O’ Leary: *How Greek science passed to the Arabs*, 2. ed. Delhi 2001
- Larentzakis Gregorios: “Das Ökumenische Patriarchat von Konstantinopel im Dienste der kirchlichen Einheit und der Vereinigung Europas”, in: KNA ÖKI 27, 27.6.1985, 5-11
- Larentzakis Grigorios: “10 Jahre offizieller Dialog zwischen orthodoxer und katholischer Kirche – Eine Bilanz”, in: *Pro Oriente*, Innsbruck-Wien 1994,46-77
- Larentzakis Gregorios: “Das einheitliche Imperium Romanum und die polyzentrische Struktur der Kirche innerhalb des Imperiums”, in: *Grazer Theol. Studien* 21, 1996, 50-77
- Lehmann-Haupt Carl Friedrich: *Armenien einst und jetzt*, Berlin 1910
- Lenkefeld Karin: “*Solange noch ein Weg ist...*” *Die Kurden zwischen Verfolgung und Widerstand*, Göttingen 1996
- Lilie Ralph-Johannes: *Byzanz. Geschichte des oströmischen Reiches 326-1453*, München, 2.Ed. , 2001
- Majoros Ferenc u. Rill Bernd: *Das Osmanische Reich 1300-1922*, Wiesbaden 2004
- Mango Andrew: *Atatürk*, London (1999), Repr. 2002
- Mansfield Peter: *A History of the Middle East*, 2. ed. by Nicolas Pelham, New York-London 2003
- Mayer Hans Eberhard: *Geschichte der Kreuzzüge*, Stuttgart-Berlin-Köln, 8.Aufl., 1995
- Matuz Josef: *Das Osmanische Reich. Grundlinien seiner Geschichte*, Darmstadt, 2. Aufl. , 1990

- Maurois André: *Die Geschichte Englands*, Wien-Leipzig 1937
- Melson Robert F.: *Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago 1992
- Moosa Matti: *The Maronites in History*, Piscataway 2005
- Mouawad Ray Jabre: "The Kurds and their Christians neighbours. The case of the orthodox Syrians", in: *Parole de l' Orient* 17, 1992, 127-141
- De Murat Jean: *The Great Exstirpation of Hellenism and Christianity in Asia Minor*, Miami 1999
- Nagel Tilman: *Staat und Glaubensgemeinschaft im Islam*, Bd. 2, Zürich-München 1981
- Nassibian Akaby: *Britain and the Armenian Question 1915-1923*, London-New York 1984
- Nerval Gerard de: *Reise in den Orient*, München o.J.,
- Neumann Michael u. Adrian Christian Neumann: *Die Türkei*, München 1990
- Norwich John Julius: *Byzanz*, 3 vol., Düsseldorf-München 1998
- Odenthal Johannes: *Istanbul, Bursa und Edirne*, Köln 2. Ed. ,1992
- Ohandjanian Artem: *Armenien. Der verschwiegene Völkermord*, Wien-Köln-Graz 1989
- Ostrogorsky Georg: *Geschichte des byzantinischen Staates*, ND München 1975
- Pacini Andrea: *Comunità cristiane nell' Islam arabo. La sfida del futuro*, Torino 1996
- Palmer Alan: *Kaiser Wilhelm II. Glanz und Ende der preußischen Dynastie*, Wien-München-Zürich 1982
- Palmer Alan: *Glanz und Niedergang der Diplomatie. Die Geheimpolitik der europäischen Kanzleien vom Wiener Kongress bis zum Ausbruch des Ersten Weltkrieges*, Düsseldorf 1986
- Palmer Alan: *Verfall und Untergang des Osmanischen Reiches*, München-Leipzig 1994
- Palmer Andrew: *Monk and Mason on the Tigris Frontier. The Early History of Tur Abdin*, Cambridge-London 1990
- Panova Sneschka: *Die Juden zwischen Toleranz und Völkerrecht im Osmanischen Reich*, Frankfurt-Berlin-Bern 1997
- Pastor, Ludwig von: *Geschichte der Päpste*, Bd. 9, 11. Aufl., 13/1, 9. Aufl. ; 14/1, 8. Aufl.; 15, 8. ed.; 16/3, 8. Aufl. , Freiburg-Rom 1955
- Pfeffermann Hans: *Die Zusammenarbeit der Renaissancepäpsten mit den Türken*, Winterthur 1946

Pomiankowski Joseph: *Der Zusammenbruch des Ottomanischen Reiches. Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges*, Zürich-Leipzig-Wien 1928

Propyläen Kunstgeschichte, Bd. 3: "Byzanz und der christliche Osten", ed. by Wolfgang Fritz Volbach a. Jacqueline Lafontaine-Dosogne, Berlin 1968

Rabo Gabriel: "Die Aramäer unter der türkisch-islamischen Herrschaft", in: www.user.gwdg.de

Rabo Gabriel: "1600-jähriges Jubiläum des Klosters Mor Gabriel", in: Gouden Hoorn, Tijdschrift over Byzantium (www.isidore-of-seville.com/goudenhoorn)

Rabo Gabriel: "Die Gründung der syrisch-orthodoxen Kirche in der Diaspora". Vortrag, gehalten am 26.5.2005 in türkischer Sprache auf dem Syrer-Symposium der Bilgi Universität in Istanbul (Manuskript)

Rahn Markus: *Die Entstehung des armenischen Patriarchats von Konstantinopel*, (= Studien zur Orientalischen Kirchengeschichte 20), Münster – Hamburg London 2002

Rall Hans: *Wilhelm II. Eine Biographie*, Graz-Wien-Köln 1995

Redgate Anne Elizabeth: *The Armenians*, Oxford 2000

Reid James J.: *Crisis of the Ottoman Empire. Prelude to Collapse 1839-1878*, Stuttgart 2000

von Rimscha Hans: *Geschichte Russlands*, 2. Aufl., Darmstadt 1970

Runciman Steven: *Die Eroberung von Konstantinopel 1453*, München 1977

Runciman Steven: *A History of the Crusades*, vol. 3: *The Kingdom of Acre* (1951), Cambridge ND 1996

Sahinter Menfer: *Kemalismus. Ursprung, Wirkung und Aktualität*, Hückelhofen 1997

Sakayan Dora, *An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian: My Smyrna Ordeal in 1922*, Montreal 1997

Schaller Dominik J.: "Die Rezeption des Völkermordes an den Armeniern in Deutschland 1915-1945", in: Kieser-Schaller (2003), 517-556

Schmidt-Häuer Christian: "Wer am Leben blieb, wurde nackt gelassen". Zeit-Dossier Völkermord (www.zeit.de/2005/13/Armenier)

Segal J.B.: *Edessa. "The blessed City"* (1970) ND Piscataway 2001

Sen Faruk (Hg.): *Das ethnische und religiöse Mosaik der Türkei und seine Reflexionen auf Deutschland*, Münster 1998

Sherrard Philip: *Byzanz. Kaisertum zwischen Europa und Asien*, Reinbek 1975

Silbernagl Isidor: *Verfassung und gegenwärtiger Bestand sämtlicher*

Kirchen des Orients, Landshut 1865

Spuler Bertold: *Gegenwartslage der Ostkirchen*, 2. Aufl. , Frankfurt 1968,

Stacton David: *Der schwarze Dienstag. Der Fall von Byzanz*, Wien-Hamburg 1967

Stierlein Henri: *Byzantinischer Orient. Von Konstantinopel bis Armenien und von Syrien bis Äthiopien*, Stuttgart-Zürich 1996

Tamcke Martin: *Armin T. Wegner und die Armenier*, (= Studien zur Orientalischen Kirchengeschichte 2, Münster-Hamburg-Berlin 1996

Ternon Yves: *Tabu Armenien. Geschichte eines Völkermords*, Frankfurt-Berlin 1977, 2.Ed. 1981

Thierry Jean-Michel: *Armenische Kunst*, Freiburg-Basel-Wien 1988

Toynbee, Arnold J. & Lord Bryce: *Armenian Atrocities. The Murder of A Nation and A Speech by Lord Bryce*, London-New York-Toronto 1915

Tuchmann Barbara: *Bibel und Schwert. Palästina und der Westen vom frühen Mittelalter bis zur Balfour-Declaration*, Frankfurt 1983

Tzermias Pavlos: *Neugriechische Geschichte*, Tübingen 1986

Tsirkinidis Harry: "Der Völkermord an den Griechen Kleinasiens (1914-1923)", in: Tessa Hofmann (Ed.): *Verfolgung, Vertreibung...* (2004), 135-176

Verheij Jelle: "Die armenischen Massaker von 1894-1896", in: Kieser Hans Lukas (Ed.): *Die Armenische Frage und die Schweiz (1896-1923). La question arménienne et la Suisse (1896-1923)*, Zürich 1999, 69-129

Vööbus Arthur: *History of Ascetism in the Orient*, vol. 2, (= CSCO 197, Subsidia 17), Louvain 1960

Walker Christopher J.: *Armenia. The Survival of a Nation*, London 1980, 38

Walworth Arthur: *Wilson and his Peacemakers. American Diplomacy and the Paris Peace Conference, 1919*, London 1986

Weithmann Michael W.: *Griechenland. Vom Frühmittelalter bis zur Gegenwart*, Regensburg 1994

Werner Ernst: *Die Geburt einer Großmacht. Die Osmanen*, Weimar 1985

Winkler Dietmar W. – Augustin Klaus: *Die Ostkirchen*, Graz 1997

Wirth Peter: *Grundzüge der byzantinischen Geschichte*, Darmstadt, 3. ed., 1997

Wurmbrand Max – Roth Cecil: *Das Volk der Juden. 4000 Jahre Kampf ums Überleben*, Wiesbaden 1989

Ye'or Bat: *Der Niedergang des orientalischen Christentums unter dem Islam. 7.-20. Jahrhundert*, Gräfelding 2002

Yonan Gabriele: *Ein vergessener Holocaust: Die Vernichtung der christ-*

lichen Assyrer in der Türkei (= Progom 148/149), Göttingen 1989

Yonan Gabriele: *Assyrer heute. Kultur, Sprache, Nationalbewegung der aramäisch sprechenden Christen im Nahen Osten*, (= Progom 59), Hamburg-Wien 1978

Zürcher Erik Jan: *Turkey. A modern history*, London, 3. Ed. , 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք հեղինակի եւ գրքի մասին (Դորա Սաքայան)	5
Նախաբան (Վիլիելմ Բաում)	7
1. Փոքր Ասիայի գրավումը մուսուլմանների կողմից	9
2. Դիմի համակարգը և ջիհադը	13
3. Թուրքերը	16
4. Բյուզանդական կայսրության վերջին փուլը	22
5. Զրիստոնյաները թուրքական միլեթ համակարգում	25
6. Զրիստոնյաները 17 և 18-րդ դարերի ուղեգրություններում	40
7. Զրիստոնյաների վիճակը Տանզիմատ դարաշրջանում՝ սկսած 1839 թ-ից ..	43
8. 1895/96 թվականների կոտորածները և «երիտթուրքերի» մուտքը	57
9. Զրիստոնյաների կոտորածները Առաջին աշխարհամարտի ժամանակ ..	75
10. Արևմտյան աշխարհի արձագանքները	104
11. Հույների տեղահանումները մինչև պատերազմի վերջը	116
12. Զրիստոնյաների վիճակը Թուրքիայում Առաջին աշխարհամարտի վերջում (1917-1918)	123
13. Սելրի հաշտության պայմանագիրը (1920)	138
14. Զեմալականների հաղթանակը (1920-1922)	153
15. Զրիստոնյաների վիճակը Թուրքիայում մինչև Կիպրոսի պատերազմը	158
16. Կիպրոսի կոնֆլիկտից մինչև քրիստոնյաների վիճակն այսօրվա Թուրքիայում	167
Վիլիելմ Բաումի շնորհակալական խոսքը	183
Լուսանկարներ.....	185
Գրականություն	207

